ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ

ԳՏԻՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿ ՔՈ ԱՆԱՊԱՏՈՒՄ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ»
DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Թանկագի՛ն Ընկեր,

Երբ մենք բախվում ենք դժվարին փորձությունների և մարտահրավերների, հեշտ է մոռանալ Աստծո խոստումների մասին: Ես գրել եմ այս գիրքը ձեզ խրախուսելու համար. ամեն մի փուլ մեր կյանքում ունի նպատակ, նույնիսկ՝ անապատը:

Անապատային փուլերում է, որ Աստված փափկեցնում է մեր սիրտը և ձևավորում է մեր բնավորությունը՝ պատրաստելով մեզ այն մեծ ծրագրերին, որոնք Նա որոշել է մեզ համար: Միգուցե թվա, թե Աստված լուռ է, և Նրա ներկայությունը հեռու է ձեզնից, սակայն Աստված չի թողել ձեզ. Նա աշխատանք է կատարում ձեր մեջ: Կարդալով այս գիրքը՝ կտեսնեք, որ առաջխաղացումը գալիս է այն ժամանակ, երբ դուք բարեհաջող անցնում եք ձեր անապատը:

Այս գիրքը նվեր է ձեզ: Ազատորեն կիսվե՛ք այս նյութով այլ հավատացյալների հետ, որոնց անհրաժեշտ է այս խրախուսական ուղերձը: Նույնպես, այցելե՛ք CloudLibrary.org կայքը՝ ներբեռնելու և ուսումնասիրելու համար բազմաթիվ այլ կյանք փոխող նյութեր ձեր լեզվով:

Աղոթում եմ, որ դուք անցնեք ձեր անապատային ընթացքը և ստանաք Նրա զորության և իշխանության ավելի մեծ չափ, լցվեք գթասրտությամբ և ավելի լավ ճանաչեք Նրա ձայնը: Աղոթում եմ, որ ինչպես ոսկին է մաքրվում կրակի մեջ, այնպես էլ ձեր անապատային ընթացքը մաքուր ոսկու պես դարձնի ձեզ:

Մշտապես հիշե՛ք Նրա խոստումները և գնացե՛ք մինչև վերջ:

Եղե՛ք օրհնված:

Ջոն

Ջոն Բիվեր
JohnBevere@ymail.com

CloudLibrary.org

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ

ԳՏԻՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿ ՔՈ ԱՆԱՊԱՏՈՒՄ

ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ

ԳՏԻՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՆՊԱՏԱԿ ՔՈ
ԱՆԱՊԱՏՈՒՄ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

God Where Are You? by John Bevere, Armenian
© 2019 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as God Where Are You?
Additional resources in Armenian by John Bevere are available for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: JohnBevere@ymail.com

«Աստվա՛ծ, որտե՞ղ ես», Ջոն Բիվեր, հայերենով
© 2019 Messenger International
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «God Where Are You?» վերնագրով
Ջոն Բիվերի այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք անվճար ներբեռնել www. CloudLibrary.org կայքում
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ vii

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1 «ՈՐՏԵ՞Ղ ԵՍ ԴՈՒ» 5

2 ԼԱՎ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ 17

3 ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԱՊԱՏԸ 29

4 ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 41

5 ՆՈՐ ԳԻՆԻ 55

6 ԵՐԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԸ 71

7 ԱՍՏԾՈ ԳԵՐԱԶԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ 83

8 ԼԱ՛Վ ԿԱՌՈՒՑԵՔ 101

9 ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ 117

10 ՁՈՒՐ՝ ԱՆԱՊԱՏՈՒՄ 131

11 ՊԱՏՐԱՍՏԵ՛Ք ՏԻՐՈՋ ՃԱՆԱՊԱՐՀԸ 145

12 ՀԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ 163

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ 183

ՀԱՎԵԼՎԱԾ 191

ՆԱԽԱԲԱՆ

«Որովհետև Տերը պիտի մխիթարի Սիոնին, պիտի մխիթարի նրա բոլոր ավերակները և նրա անապատը դրախտի նման պիտի շինի և նրա ամայի տեղը՝ Տիրոջ պարտեզի պես: Ցնծություն և բերկրություն պիտի գտնվի նրանում, գովասանություն և օրհներգության ձայն»:

– Եսայի 51.3

Ես սիրում եմ Եսայու գիրքը. նա իմ ամենասիրելի մարգարեն է Հին կտակարանում: Այս խոսքում Եսային այլաբանություններ է օգտագործում, որպեսզի հավաստիացնի մեզ, որ Աստված ձգտում է վերածել մեր կյանքի անպտուղ բնագավառները կենարար պարտեզների: Այս խոսքերը հայտնում են, որ ամայի անապատի չորացած հողը, ըստ էության, մեր վերափոխման խթանն է: Երբ այն, ինչ եղել է անցյալում, հեռացվում է մեզնից, մենք հայտնություն ենք ստանում այն մասին, ինչ լինելու է ապագայում: Մեր Հայրն անցկացնում է մեզ այս *պատրաստության փուլով,* որպեսզի հասնենք Իր խոստումներին:

Ես պատիվ եմ ունեցել լինելու ամուսնուս կողքին, երբ մենք անցնում էինք հիասթափության անապատներով, որոնցում հուսալքության ավազաբլուրները սպառնում էին ծածկել մեզ: Ես հետևում էի, թե ինչպես էր նա աղոթում, խորհում և աղաղակում. «Աստվա՛ծ, որտե՞ղ ես»:

Մենք արթուն էինք մնում գրեթե ամեն գիշեր՝ մտածելով, թե ո՞րն էր մեր սխալը: Միգուցե մենք սայթաքել էինք, իսկ միգուցե այնպիսի սխալ էինք գործել, որը կարելի էր ուղղել:

Ամեն օր Զոնը դուրս էր գալիս տանից վաղ առավոտյան՝ մինչև արևածագը, որպեսզի լսեր և պատասխաններ փնտրեր... հուսալով, որ այդ օրը պարզություն և փոփոխություն կբերեր: Ես անհան-

գիստ սպասում էի նրա վերադարձին: Երբ նա տուն էր գալիս, մեր որդիներն արդեն արթուն էին:

- Դու լսեցի՞ր ինչ-որ բան, - շշնջում էի ես: Ձոնը տարուբերում էր գլուխը: Տխրությունը համակում էր իմ սիրտը և մթագնեցնում էր իմ հույսը:

Միգուցե մենք խելագա՞ր էինք: Մենք իսկապե՞ս լսել էինք Աստծո ձայնը: Մի՞թե դա հնարավոր էր: Եթե Աստված էր առաջնորդել մեզ այստեղ, ինչո՞ւ էր Նա լռում մեր նեղության մեջ:

Այո՛, ես տրտնջացել եմ անապատում:

Երանի՜ այդ ժամանակ ես իմանայի այն, ինչ գիտեմ հիմա: Ես կանցնեի անապատն ավելի թեթև սրտով և հավատքով լցված քայլերով: Կհասկանայի, որ այդ ընթացքում ես մաքրվում և պատրաստվում էի:

Այս ամենի լույսի ներքո, կարծում եմ, այս գիրքն ուղեցույց է, և շատ առումներով, նվեր է: Ընդունե՛ք անապատի դասերը, և ձեր կյանքի հաջորդ փուլում դրանք լավ ծառայություն կմատուցեն ձեզ:

Բարձրացրե՛ք ձեր գլուխը. դուք մենա՛կ չեք:

— Լիզա Բիվեր
Հանրաճանաչ հեղինակ՝ ըստ *«Նյու Յորք թայմս» ամսագրի*
«Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության համահիմնադիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս գիրքը պատմում է իմ անապատային ընթացքի, ինչպես նաև շատերի նմանատիպ փորձառության մասին: Ես դեռ չեմ «հասել», և ո՛չ էլ ստացել եմ այն, ինչ Աստված պատրաստել է ինձ համար, բայց աղոթում եմ, որ այս էջերում դուք գտնեք անհրաժեշտ ուժ և համարձակություն, որպեսզի հաստատակամորեն գնաք դեպի ձեր կոչումն Աստծո մեջ:

Ես չեմ պնդում, որ այս գիրքը սպառիչ կամ ներառական ուսումնասիրություն է: Այս մասին կարելի է գրել շատ ավելին: Այնուամենայնիվ, գրքում կիսվում եմ իմ սրտից՝ անդրադառնալով անապատային ժամանակահատվածի գլխավոր կողմերին: Գրքի նպատակն է ծանոթացնել ձեզ այս թեմային՝ թույլ տալով Սուրբ Հոգուն անձնավորել այս ուղերձը և կիրառել այն ձեր կյանքում:

Այս գիրքը խոսում է այն մասին, թե ինչ *է* անապատը և ինչ այն *չէ:* Այստեղ խոսվում է անապատի նպատակի և օգտի մասին: Իմ աղոթքն է, որ գրքում ներկայացված օրինակների, նկարագրությունների և խրատների միջոցով դուք հասկանաք, թե ինչպես իմաստությամբ վարվեք անապատում:

Ինչպես արդեն նշեցի, գրքում կտեսնեք շատ օրինակներ իմ կյանքից, որոնք տեղի են ունեցել իմ առաջին երկու ծառայողական նշանակումների ժամանակ: Առաջինը Տեխաս նահանգի Դալլաս քաղաքում էր, որտեղ չորս ու կես տարի ծառայեցի իմ հովվին և նրա հյուրերին: Իմ անապատային փուլն այդ նշանակման վերջին տասնութ ամիսների ընթացքում էր: Հաջորդ անապատային փուլն իմ երկրորդ նշանակման ժամանակ էր. ես երիտասարդական ծառայության հովիվ էի Ֆլորիդայում գտնվող մի եկեղեցում երկուս ու կես տարի: Այս երկրորդ անապատի համեմատ, իմ առաջին անապատը Դալլասում զբոսախնջույք թվաց ինձ: Տարօրինակ է, բայց այդ սաստիկ անապատային փորձառությունը նույնպես տեղի ունեցավ այդ նշանակման վերջին տասնութ ամիսների ընթացքում:

Մի՞թե իմ կյանքում չեն եղել այլ անապատային փուլեր: Իհարկե եղել են, բայց երբ դրանք սկսվեցին, ես արդեն շատ ավելի լավ էի հասկանում դրանց բնույթը: Որպես արդյունք՝ ես շարունակ չէի աղաղակում. «Աստվա՛ծ, ի՞նչ է կատարվում», կամ «Աստվա՛ծ, որտե՞ղ ես»: Ես այնքան բան էի սովորել նախորդ փուլերում, որ գիտեի, թե ինչ էր կատարվում և ինչպես էր պետք վարվել այդ իրավիճակներում:

Ես զրուցել եմ բազմաթիվ տղամարդկանց և կանանց հետ, որոնք գտնվում են այս փուլում: Որպես կանոն, նրանք խոսում են իրենց շփոթմունքի և հիասթափության մասին: Շատերը չեն էլ պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում: Վերջերս կինս՝ Լիզան, և ես երկու հաղորդում ձայնագրեցինք այս մասին, և արձագանքն այս թեմային շատ ավելի լայն էր, քան մենք երբևէ ստացել էինք: Դա դրդեց ինձ վերանայել իմ կողմից գրված առաջին գիրքը, որը սկզբնապես հրատարակվել էր *«Հաղթանակ անապատում»* վերնագրով:

Ես գրել էի այդ գիրքը գրեթե երեսուն տարի առաջ: Ուշադրությամբ կարդալով՝ հասկացա, որ այն մարգարեական ուղերձ էր ուշ 1980-ական և վաղ 1990-ական թվականների համար: Այնպես որ, իմ խմբագիրը և ես առանձնացրինք այդ գրքից անժամանակյա ճշմարտությունները, ավելացրինք բազմաթիվ սկզբունքներ, որոնք քաղել էի վերջին երեսուն տարվա ընթացքում, և լիովին նոր գիրք գրեցինք: Այնպես որ, սա վերանայված գիրք չէ, այլ՝ լիովին նոր ուղերձ: Համոզված եմ, որ այն գիրքը, որն այժմ ձեր ձեռքում է, անժամանակյա ուղերձ է, որը կօգնի թե՛ այսօր, թե՛ գալիք սերունդներում ապրող մարդկանց անցնել կյանքի այս կարևոր փուլը:

Գրված է. «Ամեն բանի ժամանակ կա, և ժամանակ՝ երկնքի տակ ամբողջ ձեռնարկության» (Ժողովող 3.1): Մեր կյանքը բաժանված է փուլերի, և ամեն մեկն ունի հատուկ նպատակ: Կարևոր է հասկանալ ամեն փուլի նպատակը՝ դրանում ճիշտ վարվելու համար: Հետաքրքիր կլիներ, եթե ձմեռային սպորտային հագուստով մի մարդ ճոպանուղի նստեր և սար բարձրանար՝ սնոուբորդի բոլոր պարագաներով, և իջնելով ճոպանուղուց՝ երեսնիվայր ընկներ՝ սահելու փոխարեն: Ինչո՞ւ, քանի որ նա բարձրացել էր ամռանը, երբ սարի վրա ձյուն չկա: Նրա գործողություններն արդյունավետ կլինեին ձմռանը, սակայն

դրանք կործանարար հետևանքներ ունեցան նրա ներկա փուլում:

Գրքում ես ցանկանում եմ սովորեցնել այս կարևոր փուլի մասին, որը նախատեսված է էտվելու և մեր ուժերն ավելացնելու համար: Այն ունի մեկ նպատակ՝ *պատրաստել* մեզ: Դուք անմիջապես կնկատեք, որ ես շատ եմ խոսում ծառայության մասին: Յուրաքանչյուրս կանչված է որևէ ոլորտում՝ գործարար, կրթական, առողջապահության, պետական կառավարման և այլն: Իմ կոչումը ծառայության հինգ պարգևներն են. այնպես որ, իմ պատմություններն այդ մասին են: Այնուամենայնիվ, դուք կարող եք կիրառել այս գրքի սկզբունքները ցանկացած ոլորտում, որտեղ Աստված կանչել է ձեզ: Գործարար ոլորտում կանչված մարդիկ պետք է որոշ ժամանակ պատրաստվեն իրենց կոչման համար նույն կերպով, ինչպես և Ավետարանի ծառայողները: Սա վերաբերում է կյանքի բոլոր ոլորտներին:

Եվս մեկ բան. ես ընդգրկել եմ լրացուցիչ բաժիններ, որոնք կոչվում են՝ «Ինչպե՞ս անցնել անապատը»: Դրանցում կան սեղմ, առանձին խորհուրդներ և խրախուսական խոսքեր, որոնք կօգնեն հնարավորինս արդյունավետ դարձնել ձեր անապատային ընթացքը: Հուսով եմ՝ այս ուղերձը հստակություն կբերի ձեր կյանքում, որպեսզի դուք վնաս չկրեք անապատի մասին անտեղյակ լինելու պատճառով, ինչպես դա տեղի ունեցավ ինձ հետ, և կխրախուսի ձեզ շարունակ ձգտել միակ Անձնավորությանը, Ով կարող է բավականություն տալ մեզ:

Անկեղծորեն՝
Ջոն Բիվեր,
Հունվար 2019

1

«ՈՐՏԵ՞Ղ ԵՍ ԴՈՒ»

«Երբ մենք անվրդով դիմանում ենք չորությանը և ամայությանը, մենք վկայում ենք, որ սիրում ենք Աստծուն, բայց երբ Նա այցելում է մեզ Իր ներկայության քաղցրությամբ, Նա վկայում է, որ սիրում է մեզ»:

– Մադամ Գիյոն / ժաննա-Մարիա Բուվյե դե լա Մոտտ-Գիյոն

«Ահա գնում եմ դեպի արևելք, և Նա չկա, և դեպի արևմուտք, և Նրան չեմ նշմարում: Դեպի հյուսիս՝ Իր գործողության մեջ, և չեմ իմանում. հարավում է ծածկվում, և ես Նրան չեմ տեսնում»:

– Հոբ 23.8,9

Ես բարկացած էի բոլորի վրա և նույնիսկ չգիտեի՝ ինչու:

Թվում էր՝ ոչինչ չէր ստացվում:

Մեր առաջնեկը՝ Էդիսոնը, տասնութ ամսեկան էր, և ես անհամբեր էի նրա հանդեպ:

Ես բղավում էի կնոջս՝ Լիզայի վրա:

Ես հիասթափվել էի իմ հովվից:

Ես բարկացած էի այն մարդկանց վրա, որոնց հետ աշխատում էի:

Եթե անկեղծորեն խոստովանեմ, հավանաբար, նաև հիասթափված էի Աստծուց և բարկացած էի Նրա վրա: Ես տրտնջում էի.

«Ի՞նչ ես Դու անում»:

«Ինչո՞ւ Դու չես գործում իմ կյանքում»:

«Որտե՞ղ է այն խոստումների իրականացումը, որոնք Դու տվել ես ինձ»:

«Ինչո՞ւ ոչինչ չի ստացվում»:

«Ինչո՞ւ Դու չես խոսում ինձ հետ»:

Ես կրկին ու կրկին փնթփնթում էի՝ արտահայտելով իմ դժգոհությունը. «Որտե՞ղ ես Դու»:

Ձեր կյանքում եղե՞լ է այնպիսի ժամանակ, երբ թվում էր՝ Տերն այնքա՛ն մոտ էր, որ բավական էր միայն շշնջալ Նրա անունը, և դուք *անմիջապես* զգում էիք Նրա ներկայությունը և լսում էիք Նրա պատասխանը:

Այնուամենայնիվ, եկավ մի ժամանակ, երբ դուք շարունակ դիմում էիք Նրան, բայց ոչ մի պատասխան չէիք ստանում: Թվում էր՝ Նա լիովին անհայտացել էր ձեր կյանքից: Միգուցե հիմա այդպիսի վիճակում

եք և ցանկանում եք գոչել այդ լռության մեջ՝ տալով նույն հարցը, որը ես էի տալիս. «Աստվա՛ծ, որտե՞ղ ես»:

Ես անապատում էի, բայց չգիտեի այդ մասին: Ապրում էի Տեխաս նահանգի Դալլաս քաղաքում և համարում էի ինձ Հիսուսի բարի հետևորդ, որի մասին Աստված մոռացել էր: Կարճ ժամանակ էր, ինչ քրիստոնյա էի դարձել, և կարծում եմ՝ դա իմ առաջին իրական անապատային փորձառությունն էր:

Մինչ այդ բավական էր կանչել, և Տերն անմիջապես պատասխանում էր: Ես հիշում եմ, որ Նա արագորեն պատասխանում էր նույնիսկ իմ ամենաանհեթեթ խնդրանքներին: Նրա ներկայությունն այնքա՛ն մոտ էր, այնքա՛ն ակնհայտ էր, և այնքա՛ն ուժգին էր: Այնպես որ, ես չէի հասկանում, թե ինչ էր կատարվում: Ամեն օր ծնկաչոք հարցնում էի Նրան. «Աստվա՛ծ, ի՞նչ է կատարվում: Դու ասես միլիոնավոր կիլոմետրերով հեռու լինես ինձնից»:

Ես շարունակ վերանայում էի իմ կյանքը՝ հարցնելով. «Ի՞նչ սարսափելի մեղք եմ գործել»:

Իհարկե, ինչպես և յուրաքանչյուրն այս աշխարհում, ես ժամանակ առ ժամանակ սայթաքում էի և մեղանչում, բայց նույնպես արագորեն ապաշխարում էի՝ խնդրելով Հիսուսի ներումը: Որքանով ես գիտեի, իմ կյանքում չկար շարունակական և միտումնավոր մեղք:

Ամեն օր այդ չորության ընթացքում ես հարցնում էի. «Աստվա՛ծ, ինչո՞ւ Դու այլևս չես խոսում ինձ հետ»:

Հազիվ թե ինձ կարելի լիներ համեմատել Աստվածաշնչի մեծագույն հերոսներից մեկի՝ Հոբի հետ, բայց իմ արձագանքը մասամբ նման էր նրա արձագանքին: Հոբի խոսքերը, որոնք մի ժամանակ օտար էին թվում ինձ, այժմ հասկանալի էին դառնում: Այդ գրքի խոսքերից մի քանիսը շատ դիպուկ էին նկարագրում անապատում թողնված լինելու զգացումը, որը ես ունեի:

«Ահա գնում եմ դեպի արևելք, և Նա չկա,
և դեպի արևմուտք, և Նրան չեմ նշմարում:
Դեպի հյուսիս՝ Իր գործողության մեջ, և չեմ իմանում.
հարավում է ծածկվում, և ես Նրան չեմ տեսնում»:
Հոբ 23.8,9

Ես շարունակ աղոթում էի, բայց թվում էր՝ երկինքը պղնձի պես ամուր էր:

Այդ ժամանակ Տերը ցույց տվեց ինձ, որ քրիստոնեական կյանքում կան զուգահեռներ երեխայի աճի հետ: Ես հոգևոր մանուկ էի, բայց այժմ անցում էի կատարում դեպի նոր փուլ: Այդ ընթացքում ես տեսնում էի դա բնական օրինակով: Էդիսոնը մոտավորապես տասնութ ամսեկան էր: Լիզան հրաշալի մայր էր, և երբ Էդիսոնը լաց էր լինում, նա անմիջապես մոտենում և խնամում էր նրան: Նա մի ակնթարթում հայտնվում էր մոր գրկում և կերակրվում էր՝ ստանալով սնուցում և մխիթարություն:

Բայց Էդիսոնը, ինչպես և ամեն երեխա, պետք է մեծանար և, ի վերջո, հասներ հասունության: Եկավ ժամանակը, երբ մեր բոլոր որդիները (մենք չորս որդի ունենք) պետք է ինքնուրույն սնվեին: Աստվա՛ծ իմ, ինչպիսի՜ խառնաշփոթ էր սկսվում այդ ժամանակ: Ես գիտեմ, որ հասկանում եք ինձ: Երբ նրանք փորձում էին ինքնուրույն ուտել, կերակուրի կեսը թափվում էր կերակրման աթոռի և հատակի վրա:

Երեխաներն այնքա՛ն են հուսահատվում, որ առաջվա պես *չեք* կերակրում իրենց, բայց դուք դադարում եք կերակրել նրանց, քանի որ դուք պատասխանատու մայր կամ հայր եք: Երբ մեր որդիները թափում էին ուտելիքն իրենց շուրջը, մենք ուզում էինք անմիջապես մոտենալ և կերակրել նրանց, բայց գիտեինք, որ դա կխանգարեր նրանց զարգացմանը: Մենք թույլ էինք տալիս մեր որդիներին մեծանալ: Ոչ մի դեպքում չէինք ուզում գդալով կերակրել նրանցից որևէ մեկին մինչև տասնութ տարեկանը:

Երբ նորածինները մեծանում են, նրանց խնամքի ձևը փոխվում է՝ նրանց աճը և զարգացումը խրախուսելու համար: Աստված վարվում է մեզ հետ նման կերպով, որպեսզի մենք հոգևորապես զարգանանք և հասունանանք: Վերստին ծնված և Սուրբ Հոգով լցված ժամանակ Նա պատասխանում է ամեն անգամ, երբ կանչում ենք Նրան: Բայց որոշ ժամանակ անց (և հուսով եմ՝ մենք կմեծանանք միայն կաթին կարոտ լինելու վիճակից, Եբր. 5.12) Աստված թույլ է տալիս մեզ անցնել այնպիսի փուլերով, որոնցում Նա անմիջապես չի պատասխանում մեր ամեն կանչին: Պատճառն այն է, որ Նա ցանկանում է օգնել մեզ աճել և հասունանալ:

Երբ Տերն օգնեց ինձ հասկանալ, որ հոգևոր հասունության ընթացքը

նման է այն ընթացքին, որը յուրաքանչյուրը պետք է անցնի՝ մանկությունից մինչև չափահաս տարիքը, ես սկսեցի ավելի շատ մտածել այդ մասին և հարցրի ինձ. *«Միգուցե ես սխալվո՞ւմ էի: Հնարավո՞ր է, որ այն, ինչով անցնում եմ, պատիժ չէ Տիրոջից: Հնարավո՞ր է, որ ես տարվել եմ անապատ, որ ինչ-որ բան սովորեմ, որ աճ ունենամ, ինչի շնորհիվ ես ավելի արդյունավետ կերպով կհետևեմ և կծառայեմ Հիսուսին»:*

Այդ ժամանակ ես հիշեցի, որ նույնը տեղի ունեցավ Հիսուսի հետ: Գրեթե անմիջապես այն բանից հետո, երբ Հովհաննեսը մկրտեց Նրան, և Նրա Հայրը գովեց Նրան, Սուրբ Հոգին անապատ տարավ Հիսուսին: Հիսուսը կշտամբանք չէր ստանում և, անկասկած, ոչ մի մեղք չէր գործել:

Այնպես որ, այն ընթացքում, երբ լցված էի բարկությամբ և ինքնախղճահարությամբ, ի վերջո, մտածեցի. *«Հնարավո՞ր է, որ անապատն այնքան էլ սարսափելի չէ, որքան ես եմ սարսափելի դարձնում»:*

Ինչպե՞ս ընկալել անապատը

Եթե մենք պետք է նմանվենք Հիսուսին, մեր բնավորությունը պետք է զարգանա: Եվ, ըստ էության, անապատն այն վայրն է, որն Աստված ընտրել է այդ նպատակի համար: Հաճախ, երբ մենք անապատում ենք, թվում է՝ Աստված միլիոնավոր կիլոմետրերով հեռու է մեզնից, և Նրա խոստումները դատարկ են: Բայց դա պարզապես տպավորություն է, ոչ թե իրականությունը: Իրականում, Նա շատ մոտ է մեզ, քանի որ խոստացել է երբեք չթողնել և չլքել (տե՛ս Եբր. 13.5):

Անապատով անցնելը այնպիսի փուլ է, որտեղ, թվում է, ձեր ընթացքը հակառակ է ձեր երազանքներին և այն խոստումներին, որոնք, ինչպես դուք վստահաբար գիտեք, Նա տվել է ձեզ: Անապատում դուք չեք զգում հոգևոր աճ և առաջընթաց: Իրականում, կարող է թվալ, թե դուք նույնիսկ հետընթաց եք ապրում: Թվում է՝ Նրա ներկայությունը պակասում է, ոչ թե ավելանում: Նույնիսկ կարող է այնպիսի զգացողություն առաջանալ, որ դուք չսիրված և անտեսված եք, սակայն դա ճիշտ չէ:

Անկասկած, անապատն այն վայրն է, որտեղ հայտնվելու են Քրիստոսի բոլոր անկեղծ հետևորդները, թեև այնտեղ դուք կարող եք խիստ միայնակ զգալ ձեզ: Ճշմարտությունն այն է, որ անա-

պատն անհրաժեշտ է Աստծո յուրաքանչյուր զավակին: Իրականում, Հիսուսի ողջամիտ և հասուն աշակերտը դառնալու համար դուք, միգուցե, մի քանի անգամ անցնեք անապատով:

Երանի՜ ես կարողանայի կարճուղի կամ զարտուղի ցույց տալ ձեզ քարտեզի վրա, որպեսզի չհայտնվեիք այդ ամայի վայրում, բայց նման բան չկա: Եվ, իմ ընկե՛ր, դա շատ լավ է, քանի որ մեր ընթացքն անապատում և այդ փուլն ընդունելը անհրաժեշտ է, եթե ցանկանում ենք հասնել մեր խոստման երկրին:

Ի՞նչ է անապատը

Գոհությո՛ւն Աստծուն, մեզնից շատերը ստիպված չեն ֆիզիկապես գոյատևել անբերրի վայրում՝ իրական անապատում, որտեղ գրեթե ջուր չկա և շատ դժվար է ապաստան գտնել: Ցերեկը շոգ է, իսկ գիշերը՝ ցուրտ, և մենք միայնակ, ծարավ և քաղցած ենք: Ի լրումն այդ ամենի, մենք կորած ենք և չգիտենք, թե ինչպես դուրս գալ այդտեղից: Միգուցե մենք չենք եղել այդպիսի վայրում, սակայն ունեցել ենք անապատային *զգացմունքներ:* Այս գրքում ես կպատմեմ մի քանի կարևոր իրադարձություններ իմ անապատային փորձառությունից. իմ կյանքում եղել են մի շարք նման իրադարձություններ, և դրանցից ոչ մեկը հաճելի չի եղել:

Բարի լուրն այն է, որ անապատը չպետք է բացասական ընթացք լինի, եթե մենք պատրաստ ենք հնազանդվել Աստծուն: Ես գիտեմ, որ սա անտրամաբանական է թվում, բայց անապատի նպատակը դրական է՝ մարզել, մաքրել, զորացնել և պատրաստել մեզ Նրա Հոգու նոր շարժման համար, որի արդյունքում մենք ավելի պտղաբեր կդառնանք:

Անապատում հայտնվելուն պես շատերն անգիտակցաբար խուճապի են մատնվում և սկսում են անխոհեմ վարվել: Առանց հասկանալու՝ նրանք ձգտում են սխալ բաների և սխալ քայլերի են դիմում: Դրա օրինակը կարող է լինել աշխատավայրի կտրուկ փոփոխությունը, մի եկեղեցուց մյուսը գնալը և ցանկացած արմատական փոփոխություն, որը, նրանց կարծիքով, կարող է երջանիկ դարձնել իրենց կամ վերականգնել իրենց սովորական վիճակը: Օրինակ, ամուրիները կարող են անխոհեմաբար նոր հարաբերություն սկսել՝ ցավոտ բաժանումից հետո:

Եթե դուք փորձեք ելք գտնել մինչև հասկանալը, թե ինչու է Աստված բերել ձեզ այդ չորության վայրը, որտեղ գտնվում եք, դուք ակամա կերկարաձգեք ձեր ժամանակն անապատում: Արդյունքում կարող եք կրել ավելի շատ նեղություններ, հիասթափություններ և նույնիսկ պարտություններ, քանի որ դուք չեք հասկանում այն փուլը և վայրը, որոնց մեջ Աստված առաջնորդել է ձեզ:

Սա տեղի ունեցավ Իսրայելի զավակների հետ, որոնք անցկացրին անապատում քառասուն տարի: Նրանք չհասկացան, թե ինչ էր կատարվում իրենց հետ, և արդյունքում մի ամբողջ սերունդ դարձավ ոչ հարմար՝ Խոստման երկիրը ժառանգելու համար: Որքա՜ն ողբերգական է: Աստված անապատ տարավ նրանց՝ փորձելու, մարզելու և պատրաստելու համար, որպեսզի դարձներ զորավոր և պատերազմող մարդիկ, որոնք կկարողանային տիրանալ Աստծուց ստացած խոստմանը՝ իրենց նոր հայրենիքին: Դրա փոխարեն, Իսրայելի զավակները սխալմամբ դիտարկեցին անապատը որպես պատիժ և սկսեցին շարունակ տրտնջալ, բողոքել և ցանկանալ:

Երբ ժամանակն էր, որ նրանք հեռանային անապատից և տիրանային Խոստման երկրին, նրանց լրտեսները վերադարձան և հետախուզական ճեպազրույց անցկացրին, որի արդյունքում ժողովուրդը լսեց տրտնջացողների և բողոքողների վատ լուրը: Նրանք պետք է ընտրեին Աստծո խոստումների, կարողության ու մարդկային պատկերացումների և անկարողության միջև, և որոշեցին հավատալ մարդկանց, ոչ թե Աստծուն: Նրանք ընդունեցին այն սուտը, որ իրենք պարտվելու են և չեն ստանալու իրենց կաթ ու մեղր բխեցնող երկիրը: Նրանք չարակամորեն վարվեցին՝ Աստծո բնավորությունը և հատկանիշները չճանաչելու պատճառով:

Աստված ծավալուն պատասխան տվեց նրանց, որի իմաստը հետևյալն էր. «Վարվե՛ք՝ ինչպես ուզում եք»: Այն կարճատև անապատային ընթացքը, որը պետք է տևեր մեկ տարի, տևեց մինչև նրանց կյանքի ավարտը:

Զգո՛ւյշ եղեք: Մենք չենք ցանկանա, որ մեր կենսագրության մեջ գրված լինի նման որոշման մասին: Բայց մենք կարող ենք սովորել նրանց սխալներից, և Պողոս առաքյալը խոսում է այս մասին. «Այս բաները կատարվեցին նրանց հետ՝ որպես օրինակներ, և գրվեցին՝ մեզ խրատելու համար» (Ա Կորնթացիների 10.11, CSB):

Եթե մենք սովորենք ճանաչել անապատային փորձառությունը՝ դրանում հայտնվելուն պես, մեր ատամները կրճտացնելու և տրտնջալու փոխարեն շնորհակալ կլինենք՝ իմանալով, որ դրան հետևում է նոր հասունության, զորության, օրհնությունների, հնարավորությունների և կատարված խոստումների «երկիրը»: Արդյունքում այդ դժվարին շրջանն այնքան էլ դժվարին չի թվա, և մենք կհամաձայնենք Հակոբոսի հետ.

> «Երբ բախվում եք ամեն տեսակի նեղությունների, համարե՛ք դա հնարավորություն մեծ ուրախության համար... որովհետև երբ ձեր համբերությունը (կամ՝ դիմացկունությունը) ամբողջովին կատարելագործվի, դուք լիարժեք և ամբողջական կլինեք և ոչ մի բանի կարիք չեք ունենա» (Հակոբոս 1.2,4, NLT):

Արդյո՞ք անապատում հայտնվելը նշանակում է, որ ես լրջորեն ձախողվել եմ

Լա՛վ հարց է:

Հայտնվելով անապատում՝ շատերիս համար տրամաբանական է թվում հարցնելը. «Ո՞րն է իմ սխալը: Ի՞նչ եմ արել, որ այդքան զայրացրել եմ Աստծուն»: Սա սխալ պատկերացում է անապատի նշանակության կամ նպատակի մասին:

Աստվածաշնչում և ամբողջ պատմության ընթացքում և՛ տղամարդիկ, և՛ կանայք հասկացել են, որ անապատում իրենք պատրաստվել են, որպեսզի մուտք գործեն այն կոչման մեջ, որն Աստված տվել է իրենց: Այնպես որ, անապատը չի նշանակում, որ Աստված մերժում է ձեզ. այն պատրաստվելու վայր է:

Իհարկե, ես կարծում եմ, որ հնարավոր է հայտնվել անապատային իրավիճակում սխալ որոշումների պատճառով: Ճշմարտությունն այն է, որ անկախ այն բանից, թե որքան ենք արդեն նմանվել Հիսուսին, մենք դեռ պետք է պայքարենք մեղքի դեմ, և դեռ կարող ենք ձախողվել: Այնպես որ, մենք կարող ենք լուրջ խնդիրներ ունենալ, եթե կայաց-

Ինչպե՞ս անցնել անապատը

#1 Հասկացե՛ք ձեր ժամանակը

Գրեթե բոլորս զարմանում ենք՝ հայտնվելով անապատում: Աստված այնքա՜ն բարի է, և մենք սովորում ենք Նրա օրհնություններին, ներկայությանը և խոստումներին: Մենք պարզապես չենք սպասում, որ այդ լավ ժամանակն ավարտվելու է, բայց մի օր գիտակցում ենք, որ ինչ-որ բան փոխվել է: Այնպես որ, խուճապի մատնվելու փոխարեն, կարևոր է վերանայել ստեղծված իրավիճակը: Դուք պետք է հասկանաք, թե ինչով եք անցնում, քանի որ եթե չհասկանաք, թե կյանքի որ փուլում և որտեղ եք գտնվում, ձեր արձագանքը սխալ կլինի:

Սա կարելի է համեմատել հարավային Ֆլորիդայի արևային կլիմայից դեպի հյուսիս՝ Կանադա տեղափոխվելու հետ: Երբ ձմեռ է գալիս, և ջերմաստիճանն իջնում է զրոյից ցածր, արժե իմանալ, որ առանց վերարկուի չեք կարող դուրս գալ տանից:

Նույն սկզբունքը վերաբերում է անապատին: Եթե դուք ուշադրություն չեք դարձնում այն նշաններին, որոնք ցույց են տալիս, որ դուք ամայի վայրում եք, դուք կարող եք մեծ հիասթափություն ապրել և միգուցե այնպիսի սխալ գործել, որը հետագայում թանկ կնստի ձեզ վրա: Հին կտակարանում գրված է, որ Իսաքարի որդիները «հասկանում էին ժամանակները և գիտեին, թե ինչ պետք է աներ Իսրայելը» (Ա Մնացորդաց 12.32, NET):

Երբ դուք հասկանաք, որ հայտնվել եք անապատում, նույնպես և կիմանաք, թե ինչ անեք:

նենք սխալ որոշում կամ մի շարք ոչ այնքան ճիշտ որոշումներ:

Այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ մենք ունենք ներող Աստված և մեծ Քահանայապետ, որը հասկանում է մեր տկարությունները: Այնպես որ, մեր խնդիրներից կամ մեր մեղավորությամբ առաջացած անապատից դուրս գալու համար առաջին հերթին պետք է դիմենք մեր սիրող Հորը. «Հա՛յր, ես մեղանչել եմ. ես _____ եմ

(լրացրե՛ք բաց թողնված բառը): Խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ: Ես ապաշխարում եմ այս մեղքից և այժմ, Քո շնորհքով, կսկսեմ այլ կերպ ապրել»:

Իմ ասելիքն այն է, որ նույնիսկ եթե դուք հայտնվել եք անջրդի վայրում՝ ձեր սխալների պատճառով, շտկե՛ք ձեր հարաբերությունները Տիրոջ հետ, թո՛ւյլ տվեք, որ Նա ավարտի այն, ինչ ցանկանում է սովորեցնել ձեզ, և առաջ շարժվեք՝ հնարավորինս շուտ դուրս գալով անապատից: Իհարկե, ժամանակը կախված է Նրանից: Սաղմոսերգուն գրում է. «Իմ ժամանակը Քո ձեռքում է» (Սաղմոս 31.15):

Եվ նույնիսկ հաշվի առնելով այս ամենը՝ ամենայն հավանականությամբ, դուք գտնվում եք անապատում, քանի որ ներկայումս Աստված ցանկանում է, որ դուք հենց այդտեղ լինեք: Դուք չեք հայտնվել այս դժվարությունների մեջ ձեր սխալների պատճառով: Ես գիտեմ, որ ինչ-որ առումով դա է՛լ ավելի է բարդացնում իրավիճակը: Այս գիրքը գրելու հիմնական նպատակներից մեկն է օգնել ձեզ, որ հասկանաք, թե ինչպես է Աստված դիտարկում անապատը, և որքան է Նա ցանկանում օգտագործել այն, որպեսզի օգնի մեզ աճել և ավելի նմանվել Հիսուսին:

Գոյություն ունի ևս մեկ ճշմարտություն, որը պետք է պարզորեն հասկանալ. Աստված չի բերել ձեզ անապատ, որպեսզի թողնի սատանայի հնարներին և մոռանա ձեր մասին: Մինչև որ Ելիցին մասնակցած երկրորդ սերնդին թույլ տրվեց մտնել Խոստման երկիր, Աստված հիշեցրեց նրանց.

> «Եվ հիշի՛ր այն ամբողջ ճանապարհը, որ քո Տեր Աստված այս քառասուն տարում քեզ ման ածեց անապատի մեջ, որ քեզ խոնարհեցնի՝ քեզ փորձելու և սրտիդ միջինը իմանալու համար, թե արդյո՞ք Նրա պատվիրանները կպահես» (Երկրորդ Օրինաց 8.2):

Այսպիսով, թեև Իսրայելցիները լրջորեն ձախողվել էին և չափազանց երկար էին մնացել անապատում՝ իրենց անմտության, ապստամբության և ապերախտության պատճառով, Աստված փոխելու էր դա՝ բարուն վերածելով: Նա միշտ այսպես է վարվում, և ես այնքա՛ն ուրախ եմ դրա համար: Մի՞թե դուք ուրախ չեք:

Մի՛ ունեցեք սխալ պատկերացում անապատի մասին: Աստված չի դադարում գործել մեր կյանքում, միայն որովհետև մենք այնտեղ ենք. Նա *անցկացնում է* մեզ անապատով: Առանց Նրա՝ մենք երբեք դուրս

չէինք գա այնտեղից: Ավելին՝ անապատն այնպիսի վայր չէ, որտեղ Նա նստեցնում է մեզ պահեստային նստարանին, մինչև ցանկանա գործածել: Մեր գթասիրտ Հայրն այդպես չի վարվում: Ընդհակառակը՝ Նա զորավոր կերպով գործում է մեր կյանքում այդ ժամանակ և այդ վայրում:

Ասում են՝ «Անտառը չի երևում ծառերի պատճառով»: Գրեթե նույնը կարելի է ասել անապատի մասին. դուք չեք նկատում, որ Աստված գործում է, երբ գտնվում եք Նրա գործունեության կենտրոնում:

Մենք պետք է պարզորեն նշենք ևս մեկ ճշմարտություն. անապատը պարտության վայր չէ, գոնե՝ ոչ նրանց համար, ովքեր հնազանդ են Աստծուն: Հիսուսն անապատում էր քառասուն օր շարունակ՝ քաղցից թուլացած, առանց որևէ մեկի, ումից Նա կարող էր ապավինություն և խրախուսանք ստանալ, առանց մարմնի խնամքի և գերբնական դրսևորումների, երբ սատանան հարձակվեց Նրա վրա: Հիսուսը պարտության մատնեց նրան Տիրոջ Խոսքով: Անապատն այն վայրը չէ, որտեղ Աստծո զավակները պարտվում են. «Բայց գոհություն լինի Աստծուն, Ով մշտապես առաջնորդում է մեզ հաղթական շքերթով Քրիստոսում... » (Բ Կորնթացիների 2.14, NET):

Երբ Իսրայելի ժողովուրդը բնակվում էր անապատում, այնտեղ ապրող ազգերն ասպատակում էին նրանց, և Տերը պատվիրում էր Իսրայելին հակահարված տալ: Իսրայելի զավակները պարտության մատնեցին Ամորհացիներին (տե՛ս Թվոց 21.21-25), Մադիանացիներին (տե՛ս Թվոց 31.1-11) և Բասանի ժողովրդին (տե՛ս Թվոց 21.33-35): Եթե Աստված կամենար, որ նրանք պարտություն կրեին, Նա չէր պատվիրի նրանց պաշտպանել իրենց դիրքերը: Թեև անապատը չպետք է պարտության վայր լիներ, այնուամենայնիվ, ժողովրդի մեծ մասը մահացավ՝ առանց Խոստման երկիր մտնելու: Դա ոչ թե Աստծո կամքն էր, այլ նրանց անհնազանդության ցավալի հետևանքը:

Հուսով եմ՝ դուք համոզվեցիք ձեր սրտում, որ անապատում հայտնվելու պատճառն Աստծո դժգոհությունը կամ պատիժը չէ: Անապատն այնպիսի վայր չէ, որտեղ Աստված լքում է ձեզ և մոռանում ձեր մասին: Նույնպես, անապատն այնպիսի վայր չէ, որտեղ մենք գետնին ենք ընկնում՝ ընդունելով մեր պարտությունը:

Աստված պատրաստվում է ինչ-որ բարի բան անել

Անապատային ընթացքը նշաններ, օրհնություններ, առատություն և հրաշքներ փնտրելու ժամանակ չէ: Այն Աստծո սիրտը փնտրելու ժամանակ է, քանի որ դա կձևավորի ձեր բնավորությունը և կավելացնի ձեր ուժը: Այն ձեր տեսողությունը պահպանելու ժամանակ է: Հակառակ դեպքում, եթե մենք պարզորեն չտեսնենք Աստծո խոստումները մեր սրտում, այդ ընթացքը վհատեցնող կթվա և տրտունջ կառաջացնի:

Եթե դուք հասկանաք, թե որտեղ եք գտնվում, կսկսեք տեսնել ձեր ապագան: Այդ դեպքում, դուք կկարողանաք տեսնել Աստծո ձեռքը, նույնիսկ եթե չեք զգում Նրա հպումը: Ժամանակն է, որ ձեր սերը Նրա հանդեպ հասունանա, որպեսզի դադարեք հարցնել. «Ի՞նչ է Նա անելու ինձ համար», այլ՝ հարցնեք. «Ի՞նչ է Նա ցանկանում, որ ես անեմ»:

Ավելի վաղ ես հիշատակեցի այն հիասթափությունը, որն արտահայտեց հին ժամանակների սուրբ Հոբը՝ այն, որ նա չէր հասկանում, թե ինչ էր անում Աստված: Որ կողմ էլ դառնար, նա չէր գտնում Աստծուն: Եթե Հոբի վերլուծությունն ավարտվեր դրանով, դա խիստ ընկճվածություն կառաջացներ նրա մոտ: Բայց Հոբը չհուսահատվեց և չհանձնվեց. նա շարունակեց՝ հավատքի և հույսի խոսքեր ասելով.

> «Սակայն Նա գիտի իմ ճանապարհը. ինձ փորձելիս՝ ես ոսկու նման դուրս կգամ» (Հոբ 23.10):

Ինչպիսի՜ տպավորիչ հայտնություն: Որքան էլ ջանք անենք՝ հասկանալու համար, թե ուր է Աստված տանում մեզ, Նա է, որ գիտի ճանապարհը: Մենք կարող ենք լիովին վստահել Նրան, քանի որ, ինչպես գրում է Պողոս առաքյալը. «Ես լիովին համոզված եմ, որ Նա, Ով սկսեց շնորհքի այս փառավոր արտահայտումը ձեզանում, հավատարմորեն կշարունակի ձեր հասունացման ընթացքը՝ Իր հետ ձեր միության միջոցով, և կավարտի այն» (Փիլիպեցիների 1.6, ՏՊՏ):

Եվ մենք գիտենք, որ սա ճշմարիտ է... նույնիսկ՝ անապատում:

2

ԼԱՎ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Երբ քրիստոնյաները բախվում են հակառակության փոթորիկներին, նրանք կարող են բարձրանալ՝ ավելի մեծ գեղեցկությամբ: Նրանք նման են լեռնաշղթաների վրա աճող ծառերի, որոնք թեև ծեծված են քամիներից, սակայն ամենաամուր փայտն ունեն»:

– Բիլլի Գրեհեմ

«Եվ Հիսուսը՝ Սուրբ Հոգով լցված... Հոգով տարվեց անապատ»:

– Ղուկաս 4.1

Բարի գալո՛ւստ անապատ: Դուք զարմացա՞ծ եք նման ուրախ ողջույնից: Սովորաբար մենք չենք համարում, որ հոգևոր անապատում մնալը լավ է, սակայն պետք է իմանաք, որ մեր սիրելի Հայրը բարձր է գնահատում նման վայրերը, և ներկայումս դուք լավ ընկերակցության մեջ եք:

Եթե կարծում եք, որ լավ կլինի, որ չհայտնվեք անապատում ձեր հավատքի ընթացքի մեջ, ես կոչ եմ անում վերանայել ձեր կարծիքը: Ճշմարտությունն այն է, որ անապատում մենք գտնում ենք անթիվ սրբերի ոտնահետքեր, որոնք բավականին ժամանակ են անցկացրել այնտեղ, և նույնիսկ՝ Աստծո Որդու ոտնահետքերը:

Այլ կերպ ասած՝ երբ անապատում ենք, մենք լավ ընկերակցության մեջ ենք... և միայնակ չենք:

Խնդրում եմ, չմեղադրեք ինձ հայտնի անուններով ձեզ տպավորելու փորձի մեջ, բայց անապատում բնակվողների ցուցակն իրականում տպավորիչ է:

Իհարկե, ես արդեն հիշատակեցի Հոբին, ով, համաձայն Աստվածաշնչի, «բոլոր արևելցիներից մեծ էր» (Հոբ 1.3): Նա կորցրեց ամեն ինչ՝ իր ունեցվածքը, երեխաներին, առողջությունը և կնոջ աջակցությունը: Թեև Հոբը հիանալի և արդար մարդ էր, նրա մտերիմ ընկերները մեղադրեցին նրան ծածուկ մեղքի մեջ: Հոբն այնքա՛ն էր ընկճվել իր անապատում, որ, ինչպես ինքն էր մտածում, ավելի լավ կլիներ՝ ընդհանրապես ծնված չլիներ:

Երբ անապատում եք, դուք քայլում եք Աբրահամի անցած տեղե-

րով: Աստված պատվիրեց Ուր քաղաքում ապրող այդ հարուստ մարդուն, ով հարմարավետ կյանք էր վարում, թողնել ամեն ինչ և սկսել մի ընթացք՝ նոր խոստման երկիր գտնելու համար: Աբրահամի հետ էր նաև Սառան, որը քայլ առ քայլ հետևում էր նրան: Նրանց կյանքի մեծ մասն անցավ անապատներում:

Մովսեսը նույնպես քաջ ծանոթ էր անապատին: Նա մեծացել էր փարավոնի արքունիքում՝ արքայազնի պես, բայց մի եգիպտացու սպանելուց հետո հայտնվեց անապատում, որտեղ քառասուն տարի ոչխար էր արածեցնում: Հենց այդտեղ Աստված հայտնվեց Մովսեսին՝ վառվող մորենու մեջ.

> «Եվ Մովսեսը Մադիամի քրմի՝ իր աներոջ Հոթորի հոտն արածեցնում էր: Եվ հոտը անապատի ետևը քշելով՝ Աստծո Քորեբ սարը եկավ: Եվ Տիրոջ հրեշտակը կրակի բոցով երևաց նրան մորենու միջից: Եվ նա տեսավ, որ ահա մորենին կրակով վառվում էր, բայց մորենին չէր սպառվում: Եվ Մովսեսն ասաց. «Մեկ դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը, թե ինչո՞ւ համար մորենին չի այրվում»: Եվ Տերը տեսավ, որ նա դարձավ տեսնելու, և Աստված մորենու միջից կանչեց նրան և ասաց. «Մովսե՛ս, Մովսե՛ս»: Եվ նա ասաց. «Ահա՛ ես»» (Ելից 3.1-4):

Դրանից հետո, ինչպես գիտենք, Մովսեսը վերադարձավ Եգիպտոս և դուրս հանեց իր ժողովրդին այնտեղից... իհարկե՝ դեպի անապատ:

Անապատում դուք հանդիպում եք Հովսեփին՝ իր հոր սիրելի որդուն, ով փոսը նետվեց իր եղբայրների կողմից, իսկ հետո վաճառվեց ստրկության և տարվեց Եգիպտոս: Ավելի ուշ նա բանտարկվեց՝ մեղադրվելով մի հանցանքի մեջ, որը չէր գործել: Այնուհետև փարավոնի բանտում Աստված հայտնվեց Հովսեփին, և նա սկսեց մեկնել հացթուխի ու մատռվակի երազները: Այդ փորձառությունն անգիտակցաբար պատրաստեց նրան անձամբ փարավոնի երազը մեկնելուն:

Անապատում էր նաև Դավիթ թագավորը: Սամուելը մարգարեացավ, որ նա լինելու է հաջորդ թագավորը, և կարճ ժամանակ անց Դավիթն արդեն պատրաստվում էր գահին՝ ապրելով քարանձավներում

և թափառելով անապատներում: Այնտեղ Աստված հայտնվեց Դավթին՝ որպես նրա Հովիվը, Զորությունը, Վահանը և Ամրոցը:

Հովհաննես Մկրտիչը կանչված էր մեծ մարգարե լինելու համար. նրա հայրը պատմել էր նրան այն տեսիլքը, որի միջոցով դա իմացվել էր: Այնուամենայնիվ, Աստված հայտնվեց Հովհաննեսին անապատում, ոչ թե աստվածաշնչյան դպրոցում: Նա ապրում էր Հրեաստանի անապատում, կենդանիների կաշվից կարված հանդերձ էր կրում և սնվում էր միջատներով: Ղուկաս 3.2,3-ում գրված է. «Աստծո Խոսքը եղավ Զաքարիայի որդի Հովհաննեսին անապատում: Եվ նա եկավ Հորդանանի բոլոր կողմերը՝ ապաշխարության մկրտությունը քարոզելով մեղքերի թողության համար»:

Արաբիայի անապատում էր, որ Աստված հայտնեց Պողոս առաքյալին այն առեղծվածները, որոնք կազմելու էին Նոր կտակարանի զգալի մասը: Նա գրում է, որ Աստծո նպատակն էր, «որ Իր Որդուն ինձնով հայտնի, որ Նրան հեթանոսների մեջ ավետարանեմ: Այդ ժամանակ իսկույն մարմնի և արյան հետ խորհուրդ չարեցի, և ո՛չ էլ գնացի Երուսաղեմ՝ նրանց մոտ, որ ինձնից առաջ առաքյալներ էին, այլ գնացի Արաբիա...» (Գաղատացիների 1.16,17):

Որտե՞ղ էր Հովհաննես առաքյալը, երբ նա ստացավ *Հիսուս Քրիստոսի Հայտնությունը:*

> «Ես՝ Հովհաննեսս, ձեր եղբայրն եմ և գործակիցը չարչարանքի մեջ և Աստծո թագավորության մեջ և այն համբերատար տոկունության մեջ, որին Հիսուսը կանչում է մեզ: Ես արտաքսվեցի Պատմոս կղզի՝ Աստծո Խոսքը քարոզելու և Հիսուսի մասին ունեցած իմ վկայության համար» (Հայտնություն 1.9, NLT):

Պատմոսն ամայի կղզի էր և կատարյալ վայր՝ անապատային փորձառության համար:

Ամենակարևորը՝ ձեզ ուղեկցում է Հիսուսը, Ով, հրապարակավ ստանալով Իր Հոր օրհնությունը և Սուրբ Հոգուն, աստվածային առաջնորդությամբ տարվեց անապատ՝ սատանայի գայթակղություններին բախվելու համար:

Ես նկատել եմ, որ հաճախ հենց այսպես է լինում. Աստված ցույց է տալիս մեզ մեծ բաներ, որոնք Նա մտադրվում է իրագործել մեր միջոցով ապագայում, իսկ հետո տանում է ուղիղ դեպի անապատ, որպեսզի պատրաստի մեզ:

Եթե անապատն անհրաժեշտ էր ակնառու սրբերին և մեր Տեր Հիսուսին, ես կարող եմ ընդունել այն գաղափարը, որ լավ կլինի որոշ ժամանակ անցկացնեմ այնտեղ, թեև, անկասկած, կցանկանայի, որ լիներ ավելի հեշտ ճանապարհ: Անապատն այն վայրն է, որտեղ Աստված փորձում է, խոնարհեցնում, զորացնում և մաքրում է մեզ: Հենց այդտեղ է Նրա աստվածային բնավորությունը ձևավորվում մեզանում: Անապատը պատրաստության վայր է՝ Նրա Արքայության մեջ պտղաբեր աշխատանք կատարելու համար:

Ամենաոգեշնչող իրողությունն անապատում այն է, որ այնտեղ Աստված նորովի է հայտնվում: Եսայի մարգարեն գրում է.

> «Որովհետև Տերը պիտի մխիթարի Սիոնին, պիտի մխիթարի նրա բոլոր ավերակները և նրա անապատը դրախտի նման պիտի շինի և նրա ամայի տեղը՝ Տիրոջ պարտեզի պես: Ցնծություն և բերկրություն պիտի գտնվի նրանում, գովասանություն և օրհներգության ձայն» (Եսայի 51.3):

Դրախտը կամ Եդեմի պարտեզն այն վայրն էր, որտեղ Աստված հայտնում էր Իրեն Ադամին, և նրանք շփվում էին:

Անապատում դուք քաղց ու ծարավ եք զգում Տիրոջ հանդեպ. դուք նեղության մեջ եք և ավելի ջանասիրաբար եք փնտրում Նրան: Այնպես որ, երբ Աստված որոշի հայտնել Իրեն, նման վիճակում դուք ավելի հեշտորեն կկարողանաք շրջվել այս կյանքի երևույթներից և ուղղել ձեր հայացքը Նրան: Եթե մենք արձագանքենք Աստծո կանչին, մեր կյանքում կլինի այսպիսի փորձառություն: Անապատում է, որ Տերը նորովի հայտնում է Իրեն: Եսայի 45.15-ում գրված է. «Հիրավի Դու ծածկապատված Աստված ես, ո՛վ Իսրայելի Փրկիչ Աստված»: Նա ծածկում է Իրեն այն մարդկանցից, ովքեր փափագում են Իրեն, որպեսզի ավելի մեծ քաղց առաջացնի մտերիմ շփման բերկրանքի հանդեպ: Տերը նույնպես ծածկում է Իրեն այն մարդկանցից, ովքեր

Ինչպե՞ս անցնել անապատը

#2 Որքան էլ միայնակ զգաք, Աստված ներկա է

Հաճախ մեր անապատային փորձառության կարևոր կողմերից մեկն այն է, որ Աստված կարծես լիովին բացակայում է մեր կյանքից: Այնպիսի տպավորություն է, որ Նա միլիոնավոր կիլոմետրերով հեռու է, երբ մենք ամենից շատ ենք զգում Նրա ներկայության կարիքը:

Կարևոր է, որ հասկանաք Աստծո ներկայության երկու դրսևորումները: Առաջինը հիմնված է հետևյալ աստվածաշնչյան խոսքի վրա. «Չե՛մ թողնի քեզ և երեսից չե՛մ գցի» (Եբրայեցիների 13.5): Սա Աստծո ամենագոյությունն է: Դավիթ թագավորը խոսում է այս մասին. «Եթե վերանամ երկինքը, Դու այնտեղ ես, և եթե դժոխքը փաթաթվեմ, ահա Դու այնտեղ ես» (Սաղմոս 139.8): Եթե հավատում եք Աստվածաշնչին և վստահում եք Աստծուն, դուք գիտեք, որ անկախ ձեր զգացմունքներից և իրավիճակներից՝ Աստված ձեզ հետ է:

Աստծո ներկայության մյուս դրսևորումը, որը բոլորս քաղց չեն զգում Իր հանդեպ, քանի որ Նա ոչ մի դեպքում թույլ չի տա, որ Իրեն վերաբերվեն ոչ պատշաճ կամ սովորականի պես:

Քաղց Աստծո հանդեպ

Աստված կհայտնի Իրեն այն մարդկանց, ովքեր ամբողջ սրտով փնտրում են Իրեն:

Հիշեք՝ Աստված ասաց, որ Նա անապատ տարավ Իսրայելի զավակներին՝ նրանց խոնարհեցնելու և քաղց առաջացնելու համար: Այնուամենայնիվ, փոխարենը Աստծո հանդեպ քաղց զգալը, ինչպես Հեսուն, նրանք սկսեցին ցանկանալ այն ամենը, ինչ Տերը հեռացրել էր իրենցից: Եվ երբ Աստված եկավ, որ հայտներ Իրեն, ինչպես որ հայտ-

սիրում ենք, և որը նույնպես քրիստոնեական կյանքի մասն է, Նրա հայտնված ներկայությունն է: «Հայտնելը» նշանակում է տեսանելի դարձնել անտեսանելին, լսելի դարձնել անլսելին և իմանալի դարձնել անիմանալին: Մենք վերապրում ենք այն, երբ Աստված հայտնում է Իրեն մեր ֆիզիկական զգայարաններին: Հրաշալի է վայելել այսպիսի հանդիպում Աստծո հետ, որը կարող է տեղի ունենալ երկրպագության կամ անձնական աղոթքի մեջ, անտառային զբոսանքի ժամանակ, առօրյա գործերի ընթացքում և միգուցե անթիվ այլ կերպերով:

Այնպես որ, եթե դուք հոգևոր քաղց և ծարավ եք զգում անապատում, և Աստված չի օրհնում ձեզ Իր զարմանալի և հափշտակիչ ներկայությամբ, պարզապես հանդարտվեք և *ապավինեք Նրա խոստումներին*, որոնցից գլխավորը հետևյալն է. «Չե՛մ թողնի քեզ և երեսից չե՛մ զցի»: Այն, որ մենք ցնծում ենք Նրանով՝ չզգալով Նրա հայտնված ներկայությունը, շատ ավելի արտահայտիչ կերպով է ցույց տալիս մեր անսպառ սերը Նրա հանդեպ:

նել էր Մովսեսին, նրանք չցանկացան հանդիպել Նրան: Փաստորեն, նրանք մերժեցին Աստծուն: Երկրորդ Օրինաց գրքում գրված է.

«Եվ եղավ, երբ որ լսեցիք այն ձայնը խավարի միջից, սարը կրակով վառված ժամանակ, ինձ մոտ եկաք դուք, այսինքն՝ ձեր ցեղերի բոլոր գլխավորները և ձեր ծերերը, և ասացիք. «Ահա մեր Տեր Աստված մեզ ցույց է տալիս Իր փառքը և մեծությունը, և Նրա ձայնը լսում ենք կրակի միջից: Այսօր տեսանք, որ Աստված մարդու հետ խոսեց, և մարդը ողջ մնաց: Եվ հիմա ինչո՞ւ մեռնենք (որովհետև այս մեծ կրակը մեզ սպառելու է). եթե մեր Տեր Աստծո ձայնը կրկին լսելու լինենք, կմեռնենք: Որովհետև ամեն մարմնից ո՞վ է նա, որ կրակի մի-

> ջից խոսող կենդանի Աստծո ձայնը մեզ պես լսեց և ողջ մնաց: Դո՛ւ մոտ գնա և լսի՛ր ամենը, ինչ որ մեր Տեր Աստված ասում է, և դու ասա մեզ՝ ինչ որ մեր Տեր Աստված քեզ հետ խոսի. մենք կլսենք և կկատարենք»» (5.23-27):

Կրկին, Աստված ցանկանում էր հայտնել Իրեն անապատում գտնվող ժողովրդին, ինչպես որ հայտնել էր Իրեն Մովսեսին, բայց ժողովուրդը խուսափեց այդ հանդիպումից և խնդրեց Մովսեսին. «Դո՛ւ մոտ գնա և լսի՛ր ամենը, ինչ որ մեր Տեր Աստված ասում է, և ասա մեզ՝ ինչ որ մեր Տեր Աստված քեզ հետ խոսի. մենք կլսենք և կկատարենք»:

Ցավոք, ժողովուրդն այդպես էլ *չճանաչեց* Աստծուն: Իսրայելի զավակներն ընդամենը *գիտեին* Նրա մասին: Այդ պատճառով, նրանք այդպես էլ չկարողացան կատարել այն, ինչ Նա պատվիրում էր: Նրան չճանաչելու պատճառով նրանք այդպես էլ չտեսան այն երկիրը, որը խոստացվել էր իրենց, և մահացան անապատում:

Աստված անապատ է տանում մեզ, ինչպես որ տարավ Հովհաննեսին, Մովսեսին, Դավթին, Հովսեփին, Պողոսին և մյուսներին, որպեսզի փորձի և իմանա՝ արդյոք մենք քաղց կզգանք Ի՞ր հանդեպ, թե՞ այն հարմարավետության և հաճույքների, որոնցից զրկվել ենք: Հակոբոսը գրում է.

> «Խնդրում եք և չեք առնում, որովհետև չար կերպով եք խնդրում, որ ձեր ցանկություններում վատնեք: Շնացողնե՛ր, չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ: Արդ, ով որ կարողանա աշխարհին բարեկամ լինել, իր անձն Աստծո թշնամի կանի: Կամ թե կարծում եք՝ Սուրբ գիրքը պարա՞պ տեղն է ասում. «Նախանձով փափագում է Հոգին, որ բնակված է մեզանում»: Բայց ավելի շնորհք է տալիս: Նրա համար ասում է. «Աստված ամբարտավաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս»: Արդ հնազանդվե՛ք Աստծուն, հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզնից: Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Սրբե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտերը մաքրե՛ք, ո՛վ երկմիտներ» (Հակոբոս 4.3-8):

Երբ մենք մոտենանք Աստծուն՝ փնտրելով Նրան մեր ամբողջ սրտով, Նա կմոտենա մեզ: Իսրայելի զավակներն ավելի հետաքրքրված էին իրենց ցանկություններով (կրքերով), քան Աստծո ցանկություններով: Նրանք շնացողներ էին և ձգտում էին այն հարմարավետությանը և ապահովությանը, որոնք այս աշխարհի ճանապարհները կարող էին տալ: Նրանք շատ արագ մոռացան, որ այս աշխարհի ճոխությունը և հարստությունը չփրկեցին եգիպտացիներին և նրանց բանակը:

Աստված ասում է, որ Իրեն մոտենալու համար մենք պետք է երկու բան անենք: Առաջինը՝ մաքրենք մեր ձեռքերը: Երկրորդ Կորնթացիների 7.1-ում գրված է. «Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելինե՛ր, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով»: Մեղքը բաժանում է մեզ Աստծուց. «Այլ՝ ձեր անօրինություններն են բաժանում ձեր և ձեր Աստծո մեջտեղը, և ձեր մեղքերը ծածկեցին Նրա երեսը ձեզնից, որ չլսի» (Եսայի 59.2):

Երկրորդը՝ մաքրենք մեր սրտերը: Հակոբոսը գրում է. «Ձեր սրտերը մաքրե՛ք, ո՛վ երկմիտներ» (4.8): Երկմիտ մարդիկ տատանվում են մե՛րթ դեպի Հոգին, մե՛րթ դեպի մարմինը: Նրանց միտքը և սիրտը հաստատված չեն Աստծո կամքի վրա: Կողոսացիների 3.1-3-ում գրված է. «Ուրեմն, եթե դուք հարություն առաք Քրիստոսի հետ, ձգտե՛ք այն բաներին, որոնք վերևում են, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում: Հաստատե՛ք ձեր միտքն այն բաների վրա, որոնք երկնքում են, ոչ թե այն բաների, որոնք այս երկրի վրա են» (NKJV):

Ձեր սիրտը հաստատված է այն բաների վրա, որոնց դուք ջանասիրաբար ձգտում եք: Գլխավոր բառն այս հատվածում *«հաստատել»* բառն է: Երբ կինը գանգրացնում է մազերը, դրանք ենթարկվում են փոփոխության՝ քիմիական ազդեցության միջոցով: Նրա մազերը գանգուր են դառնում, քանի որ ամեն մազափունջ հարդարվում է այդ կերպով: Դուք կարող եք քաշել մի մազափունջ և ուղղել, բայց երբ բաց թողնեք, այն կրկին կվերադառնա իր հարդարման ձևին:

Մարդիկ կարող են եկեղեցի հաճախել, երգել փառաբանության խմբում և մասնակցել քրիստոնեական միջոցառումների, բայց որտե՞ղ

է նրանց միտքը, երբ նրանք զբաղված չեն «քրիստոնեական» գործունեությամբ. այնտեղ, որտեղ այն հաստատված է: Հենց որ մարդը հեռանում է եկեղեցու շենքից կամ քրիստոնեական մթնոլորտից, նրա միտքը վերադառնում է այն բանին, ինչի վրա այն հաստատված է՝ նման գանգրացված մազափնջի, որը վերադառնում է իր հարդարված ձևին, երբ բաց եք թողնում այն:

Ես զրուցել եմ մեր երկրում եկեղեցի հաճախող շատ մարդկանց հետ, ովքեր փառաբանության երգեր են երգում, նշումներ են կատարում իրենց հեռախոսներում քարոզների ժամանակ և նույնիսկ ժամանակ են հատկացնում եկեղեցու տարատեսակ ծառայությունների համար: Իհարկե, այդ ամենը վատ չէ, սակայն երբ նրանք չեն մասնակցում եկեղեցական հավաքույթներին և կամավորական ծառայություններին, նրանք խոսում են միայն փողի, պրոֆեսիոնալ սպորտի, հագուստի, սոցիալական ցանցերում ներկայացված նորույթների, նախասիրությունների, հակառակ սեռի, սնունդի, գնումների, նախընտրելի հեռախոսային հավելվածների և այլ աշխարհիկ թեմաների մասին: Նրանք պայծառանում են, երբ խոսում են այդ թեմաներով, սակայն Աստվածաշունչ կարդալը, աղոթելը, մարդկանց ծառայելը և նույնիսկ եկեղեցի հաճախելը այնպիսի բաներ են, որոնք անում են պարտավորված:

Երբ տղամարդը սիրահարվում է որևէ կնոջ, նշանվում է և պատրաստվում է ամուսնանալ, կարիք չկա ասել նրան, որ նա պետք է մտածի այդ կնոջ մասին և շփվի նրա հետ: Այդ կինը մշտապես նրա մտքում է, և նրա ձայնի երանգը փոխվում է ամեն անգամ, երբ արտասանում է այդ կնոջ անունը: Պատճառն այն է, որ նրա սերը կամ սիրտը հաստատված է այդ կնոջ վրա: Նա երկմիտ չէ, չի մտածում այլ կանանց մասին. նա սիրահարվա՛ծ է:

Սաղմոս 16.8-ում Դավիթն ասում է. «Ես Տիրոջը դրի իմ առջև ամեն ժամանակ»: Նա չէր երկմտում: Նրա սիրտը մաքուր էր: Նրա սրտում չկային այնպիսի բաներ, որոնք նա սիրում էր ավելի, քան Տիրոջը: Նրա սերը Տիրոջ հանդեպ մթագնեցնում էր ցանկացած բարի բան, որն այս աշխարհը կարող է առաջարկել: Այն բաները, որոնք մենք սիրում ենք, որոնց մենք հավանություն ենք տալիս և վստահում ենք ավելի, քան

Հիսուսին, կոչվում են կուռքեր: Դավիթը գրում է.

> «Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի Նրա սրբության տեղում: Նա, ով սուրբ է ձեռքով և անարատ՝ սրտով, ով իր անձն անիրավության չի տալիս և երդում չի անում նենգությամբ» (Սաղմոս 24.3,4):

Սուրբ սիրտ ունեցող մարդը նա է, ով սիրում է, հավանություն է տալիս և վստահում է Հիսուսին ավելի, քան ցանկացած այլ բանի: Մատթեոս 10.37-ում Հիսուսն ասում է. «Ով հորը կամ մորը Ինձնից ավելի է սիրում, նա Ինձ արժանի չէ, և ով որդուն կամ աղջկան Ինձնից ավելի է սիրում, նա Ինձ արժանի չէ»:

Անապատում լինելու ժամանակ եկեք չլինենք Իսրայելի զավակների պես, որոնք այնքա՜ն էին սիրում իրենց երկրային կյանքը, որ բաց թողեցին Աստծուն ճանաչելու հնարավորությունը:

Եսայի 35.1,2-ում գրված է.

> «Անապատն ու չոր երկիրը կուրախանան,
> և կցնծա ամային ու կծաղկի շուշանի պես:
> Կբացվի, կծաղկի և կցնծա՝ ցնծալով և բարձրաձայն երգելով.
> Լիբանանի փառքը նրան կտրվի՝
> Կարմեղոսի և Սարոնի վայելչությունը.
> Նրանք կտեսնեն Տիրոջ փառքը,
> մեր Աստծո վայելչությունը»:

Տիրոջ փառքը հայտնվում է հենց անապատում:

Եկեք միանանք բոլոր ակնառու սրբերին, որոնք ապրել են մեզնից առաջ: Եկեք մոտենանք Աստծուն մաքուր ձեռքերով և սրտով, ինչպես Դավիթը, Մովսեսը, Պողոսը, Հովսեփը և Աստծո այլ նշանավոր ծառայողներ՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք:

3

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԱՊԱՏԸ

«Մտովի վերհիշեք ձեր բոլոր փորձառությունները: Մտածե՛ք այն մասին, թե ինչպես է Տերն առաջնորդել ձեզ անապատում և կերակրել ու հագցրել ամեն օր: Ինչպես է Աստված դիմացել ձեր անբարոյացակամությանը և հանդուրժել ձեր բոլոր տրտունջները և ձգտումները դեպի «Եգիպտոսի զգայական հաճույքները»: Մտածե՛ք այն մասին, որ Տիրոջ շնորհքը բավական է եղել ձեզ համար ձեր բոլոր նեղությունների մեջ»:

— Չարլզ Հ. Սփերջեն

«Քո Տեր Աստված... քեզ ման ածեց անապատի մեջ, որ քեզ խոնարհեցնի՝ քեզ փորձելու և սրտիդ միջինը իմանալու համար...»:

— Երկրորդ Օրինաց 8.2

Առաջին անգամ հայտնվելով անապատում՝ ես անասելի ցնցում ապրեցի: Անկեղծ ասած, Քրիստոսին հետևելու իմ առաջին երկու տարին նման էր երկարաձգված մեղրամսի: Լիզան և ես բնակություն էինք հաստատել Տեխաս նահանգի Դալլաս քաղաքում, և որոշ ժամանակ որպես ինժեներ աշխատելուց հետո ես աշխատանքի անցա մեր եկեղեցում: Ծառայում էի իմ հովվին և նրա կնոջը և ընդունում էի մեր մեծ եկեղեցու հյուր-քարոզիչներին: Ինչպիսի՜ ուրախություն: Ես կարծում էի, թե հայտնվել էի Երկնքում: Հյուրընկալում էի երկիր մոլորակի վրա ապրող մեծագույն ծառայողներին, քանի որ մեր եկեղեցին ամենահայտնի եկեղեցիներից մեկն էր ամբողջ Ամերիկայում:

Երբ այդ ակնառու համազգային և միջազգային առաջնորդները ժամանում էին օդանավակայան, ես դիմավորում էի նրանց և մեքենայով տանում եկեղեցի կամ այն վայրը, որտեղ հյուրընկալվելու էին: Նրանց այցելությունների ընթացքում ուղեկցում էի մեքենայով այնտեղ, որտեղ պետք է լինեին, և ճաշում էի նրանց հետ: Ես երկար ժամեր էի անցկացնում մեր սերնդի մեծագույն ծառայողների հետ: Իմ առաջին տարիներն այդ պաշտոնում աներևակայելի և կյանքով լեցուն էին:

Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց իմ կյանքում դժվարություններ սկսվեցին. շա՜տ մեծ դժվարություններ: Այդ ժամանակ ես չգիտեի, որ անապատ էի գնում, քանի որ Աստված չէր հայտնել դա ինձ: Անապատն այն վայրն է, որտեղ Աստված պատրաստում է մեզ: Անապատում ձևավորվում է մեր բնավորությունը և ամրանում է մեր հավատքը: Այն *անհրաժեշտ* է մեզ:

Պատկերացրեք հետևյալը. դուք իսրայելցի եք, որը ամբողջ կյանքում ստրուկ է եղել և միայն վերջերս է ազատություն ստացել: Քիչ առաջ ունեցաք խիստ սարսափազդու, բայց տպավորիչ մի վերապրում. դուք անցաք ծովի փոթորկոտ և ալեծուփ ջրերից կազմված երկու պատերի միջով՝ ապահով ու չոր վիճակում հասնելով մյուս ափը: Դուք ետ նայեցիք և տեսաք, որ նույն պատերը, որոնք պաշտպանում էին ձեզ, թափվեցին ձեր թշնամիների վրա: Ձեզ կեղեքողները հավիտյան կործանվեցին: Դուք ուրախությամբ տոնեցիք և պարեցիք Աստծո փառավոր ազատագրման շնորհիվ: Դուք անպարտելի եք զգում ձեզ, քանի որ գիտեք, որ Աստված ձեր կողմից է: Դուք այլևս չեք կասկածի նրա զորությանը և հավատարմությանը:

Բայց այժմ ամեն ինչ այլ է: Մի քանի օր է անցել, և դուք հոգնած եք, ծարավ եք և տանջվում եք շոգից: Դուք «խոստման երկրի» սահմանին չեք. փոխարենը՝ աննպատակ թափառում եք օձերով և կարիճներով լի անապատում: Դուք այլևս չեք պարում Տիրոջ համար՝ երգելով, որ կառքն ու ձիավորը նետվեցին ծովը, այլ բողոքում եք ձեր առաջնորդին՝ ասելով. «Ինչո՞ւ հանեցիր մեզ Եգիպտոսից. որ ծարավի մատնես և սպանե՞ս մեզ, մեր երեխաներին և մեր անասուններին»:

Այժմ խոսենք ձեր մասին: Մի՞թե դուք հավատում եք, որ Աստված զորավոր կերպով ազատեց ձեզ թշնամու ձեռքից, միայն որպեսզի անապատում մատներ աննպատակ և անորոշ դեգերումների շփոթմունքի և լռության: Մի՞թե դա էր Նրա նպատակը: Իհարկե՝ ո՛չ: Պարզապես անհրաժեշտ է, որ դուք անցնեք անապատով, որպեսզի հասնեք այն վայրը, որը խոստացվել է ձեզ:

Տերն առաջնորդում է ձեզ այնպես, ինչպես առաջնորդում էր Իսրայելի զավակներին՝ Եգիպտոսից դեպի անապատ: Ձեզ անապատ է տարել ոչ թե սատանան, այլ՝ Աստված: Եվ Նա ունի նպատակ ու գերբնական ծրագիր այդ չորության փուլի համար: Սկզբում Նա խոնարհեցնում է մեզ, իսկ հետո՝ փորձում: Նա այդպես է վարվում, որպեսզի մենք իմանանք, թե *իրականում* ինչ կա մեր սրտում:

Ինչպե՞ս է Նա խոնարհեցնում մեզ: «Եվ քեզ խոնարհեցրեց և սոված պահեց և մանանա ուտեցրեց» (Երկրորդ Օրինաց 8.3): Նա խոնարհեցրեց իսրայելցիներին՝ թույլ տալով, որ նրանք սովեին, բայց

համաձայն հաջորդ պնդման՝ Նա կերակրեց նրանց մանանայով: Այս պնդումները հակասական են թվում: Ինչպե՞ս Նա կարող էր սոված պահել նրանց և միաժամանակ կերակրել մանանայով:

Մանանան լավագույն կերակուրն է, որը մարդը կարող է ուտել. այն հրեշտակների սննդակարգի մի մասն է: Եղիան ուժ ստացավ քառասուն օր քայլելու համար՝ ընդամենը դրանից պատրաստված երկու շոթ ուտելով, իսկ իսրայելցիներն առատորեն ստանում էին այն: Նրանք մանանայի նոր բաժին էին ստանում երկնքից շաբաթը վեց օր, իսկ վեցերորդ օրվա առավոտյան հավաքած մանանան հրաշքով պահվում էր մինչև յոթերորդ օրվա ավարտը: Նրանք նույնիսկ մեկ անգամ չմնացին առանց կերակուրի՝ սկսած այն օրվանից, երբ Աստված տվեց նրանց մանանան, մինչև այն օրը, երբ նրանք բանակ դրեցին Խոստման երկրում:

Այդ դեպքում, ինչո՞ւ Աստված ասաց. «Ես սոված պահեցի ձեզ»: Ինչպիսի՞ սովի մասին է Նա խոսում: Որպեսզի հասկանաք դա, պատկերացրեք նրանց վիճակը: Ենթադրենք, ձեր նախաճաշը բաղկացած է ընդամենը մի բոքոն հացից, և ամեն երեկո ձեր ընթրիքը կրկին բաղկացած է մի բոքոն հացից: Դուք չունեք կարագ, գետնանուշի կարագ, դոնդող, երշիկեղեն և ձկնեղեն. *միայն հաց:* Եվ նրանք այդպես էին սնվում ոչ թե մի քանի օր, այլ՝ *քառասուն տարի:*

Երբ ես երիտասարդական ծառայության հովիվ էի, հիսունվեց երիտասարդի հետ գնացինք Տրինիդադ՝ ութօրյա միսիոներական ճանապարհորդության: Մեր կերակուրը պատրաստվում էր այն եկեղեցում, որտեղ մենք էինք, և այդ մարդիկ շատ հյուրասեր էին: Այնուամենայնիվ, ամեն օր հավի միս էինք ուտում: Նրանք պատրաստում էին այն տարբեր ձևերով և մատուցում էին բրնձով և բանջարեղենով, բայց *մենք մշտապես հավի միս էինք ուտում:*

Ութ օր հավի միս ուտելուց հետո մենք այլ ուտելիքի պահանջ էինք զգում: Տուն վերադառնալով՝ մեր խմբի երիտասարդներից մեկը հարցրեց իր մորը, թե ինչ էին նրանք ուտելու ընթրիքին, և մայրը պատասխանեց. «Հավի միս»: Լսելով դա՝ նա ճչաց, իսկ հետո սկսեց խնդրել իր մորը համբուրգեր գնել իր համար:

Տրինիդադում, ընդամենը ութ օր անց, մենք ծածուկ տրտնջում

էինք. կարո՞ղ եք պատկերացնել քառասուն տարին: Ոչ թե չորս տարի, այլ՝ *քառասուն* տարի՝ միևնույն ուտելիքով: Աստված չէր տալիս նրանց այն, ինչ ցանկանում էր նրանց ախորժակը, այլ այն, ինչի կարիքը նրանք իրականում ունեին, որպեսզի ողջ ու առողջ լինեին:

Ուրիշ ի՞նչն էր նրանց հանգամանքներում դրդում նրանց քաղց զգալ, այսինքն՝ ձգտել այն բաներին, որոնք իրենք չունեին: Կարդալով այս պատմությունը՝ մեզ համար խիստ ուշագրավ կթվա, որ նրանց հագուստը և կոշիկները չէին մաշվում. ինչպիսի՜ խնայողություն ընտանեկան բյուջեի համար: Սակայն դուք կուզեի՞ք կրել նույն հագուստը քառասուն տարի շարունակ: Որքա՜ն ձանձրալի է: Ոչ մի գնում հանրախանութներից և նորաոճ հագուստի ոչ մի առցանց պատվեր. միևնույն շագանակագույն սանդալների զույգը՝ քառասուն տարի շարունակ:

Այո՛, նրանց հիմնական կարիքները լրացված էին. նրանք պաշտպանված էին շոգից և ցրտից, սակայն նրանց կյանքում չկային շատ բաներ, ինչ նրանք ցանկանում էին:

Նույնպես, մտածե՛ք այն միապաղաղ բնատեսարանի մասին, որը նրանց առջև էր ամեն օր՝ ոչ թե մի քանի շաբաթ, այլ՝ *քառասուն տարի:* Մի՞թե մենք կուզեինք տեսնել նույն կակտուսները, ճահճային եղեգները և չորացած գետինը և զրկված լինեինք հանդարտ վտակներից, փարթամ անտառներից և գեղեցիկ խաղողի այգիներից: Մի՞թե մենք կուզեինք ամեն օր միայն անապատ տեսնել:

Նրանք ունեին այն, ինչ անհրաժեշտ էր իրենց, ոչ թե այն, ինչ իրենք ցանկանում էին: Այս ամենի լույսի ներքո կրկին կարդանք այս հատվածը.

> «Եվ քեզ խոնարհեցրեց և սոված պահեց և մանանա ուտեցրեց, որ ո՛չ դու էիր ճանաչում, և ո՛չ քո հայրերը, որ քեզ իմացնի, թե ոչ միայն հացով կապրի մարդ, այլ մարդը Տիրոջ բերանից դուրս եկած ամեն բանով (կամ՝ խոսքով) կապրի» (Երկրորդ Օրինաց 8.3):

Աստված քաղց առաջացրեց՝ հեռացնելով այն, ինչը կգոհացներ նրանց մարմնի ցանկությունները և ձգտումները, սակայն շարունակեց հոգալ նրանց հիմնական կարիքները: Եվ այդ քաղցը փորձում էր

նրանց. Աստված կամենում էր տեսնել՝ արդյո՞ք նրանք ձգտում էին Իրեն, թե՞ այն ամենին, ինչը թողել էին: Արդյո՞ք նրանք կփնտրեին Իրեն, թե՞ այն ամենը, ինչին ձգտում էր իրենց մարմինը: Արդյոք նրանք քաղց ու ծարավ կուսենային արդարության՞ հանդեպ, թե՞ հարմարավետության և հաճույքների: Ցավոք, իսրայելցիների սրտերը հաստատված չէին միակ Անձնավորության վրա, Ով կարող էր հագեցնել իրենց, և նրանք չանցան իրենց փորձությունը:

«Եվ նրանց միջի խառնիճաղանջ բազմությունը (կամ՝ օտարականների խառնամբոխը) շատ ցանկացավ, և Իսրայելի

Ինչպե՞ս անցնել անապատը

#3 Հակառակվե՛ք ձեր խնդիրներն անձամբ լուծելու գայթակղությանը

Անապատում ինքնուրույն և գործունյա մարդկանց ամենամեծ գայթակղություններից մեկն ինչ-որ բան ձեռնարկելն է: Երբ թվում է, թե Տերը միլիոնավոր կիլոմետրերով հեռու է մեզնից, երբ Աստծո թագավորության համար ինչ-որ բան անելու նույնիսկ համեստ փորձերը ձախողվում են, երբ ժամեր տևող աղոթքը միայն ծնկների ցավ է առաջացնում, մենք, հուսահատությունից դրդված, կարող ենք անել՝ ինչ ասես, որպեսզի ինչ-որ բան տեղի ունենա: Դա վատ միտք է: Անապատում, ըստ էության, շատ բան տեղի չի ունենում. այնտեղ կա միայն մի քիչ ջուր և ձանձրալի սննդակարգ: Այդ ամայության մեջ մենք սովորում ենք, որ կյանքը շատ ավելին է, քան այն, ինչ ունենք, և այն, ինչ անում ենք: Կյանքի իմաստը Նրան մտերմորեն ճանաչելն ու ամեն օր Նրա ցանկությունները կատարելն է:

Իմ անապատներից մեկում ամեն օրը մեկ շաբաթ էր թվում, և ամեն շաբաթը՝ մեկ ամիս, քանի որ ես ունեի

> որդիներն էլ դարձյալ լաց եղան և ասացին. «Ո՞վ միս կտա մեզ ուտելու: Մենք հիշում ենք Եգիպտոսի մեջ մեր ձրի կերած ձկները, վարունգները և սեխերը և պրասները և սոխերը և սխտորները: Եվ հիմա մեր անձը չորացել է. ամենևին մի բան չկա: Միայն այդ մանանայի վրա են մեր աչքերը» (Թվոց 11.4-6):

Նրանք հիշում էին այն, ինչ թողել էին Եգիպտոսում: Նույնիսկ Եգիպտոսի կեղեքիչ ստրկությունն ավելի գերադասելի էր թվում, քան այն ամայի վայրը, որտեղ Աստված տարել էր նրանց: Նրանք սկսեցին տրտնջալ և բողոքել՝ լաց լինելով մսի համար: Աստված լսեց նրանց լացը.

> սահմանափակ տեսողություն և գրեթե ոչ մի փափագ ու ձգտում: Չնայած դրան՝ պետք է շարունակեի իմ ընթացքը: Ես պետք է շարունակեի առաջ գնալ, շարունակեի վերցնել իմ սրտում պահված Աստծո Խոսքից, շարունակեի լավագույնս ծառայել, շարունակեի ներկա լինել հավաքույթներին և զգուշանալ, որ անհամբերությունից դրդված որևէ անխոհեմ արարք չգործեի: Ես պետք է շարունակ հիշեցնեի ինձ, որ ես այնտեղ էի, որտեղ Աստված կամենում էր, որ լինեի: Նա ժամանակ չէր վատնում, և Նա կատարելու էր Իր խոստումները:
>
> Եվ իհարկե, անապատն այնպիսի վայր չէ, որտեղ դուք պետք է փորձեք առաջխաղացում ստանալ: Հիշեք՝ դուք մաքրվում և պատրաստվում եք: Այնպես որ, դուք պետք է ջանասեր ու հաստատուն լինեք և հակառակվեք մեղանչելու ցանկացած գայթակղությանը:
>
> Գտնվելով այն ճանապարհի վրա, որը Տերը կառուցում է անապատում՝ մշտապես գնացե՛ք Նրան համընթաց: Ոչ մի դեպքում մի՛ որոշեք առաջ անցնել Նրանից՝ կարծելով թե Նա չափազանց դանդաղ է շարժվում:

«Եվ կերան և խիստ կշտացան, և իրենց ցանկությունը տվեց նրանց... Եվ Նա նրանց տվեց իրենց ուզածը (միս, այսինքն՝ լորամարգիներ) և վատուժություն ուղարկեց նրանց անձերին» (Սաղմոս 78.29, 106.15):

Նրանք ստացան այն, ինչ ուզում էին, բայց թանկ վճարեցին դրա համար: Այդ մսի պատճառով նրանց անձերը տկարացան, և այդ տկարությունը թույլ չտվեց նրանց հարատևել և անցնել իրենց փորձությունը: Արդյունքում նրանք այդպես էլ մուտք չգործեցին Խոստման երկիր: Մեղքն այն չէր, որ նրանք միս էին խնդրում. մեղքը նրանց խնդրանքի դրդապատճառն էր: Այն արտահայտում էր նրանց սրտի դժգոհությունն Աստծո հանդեպ, ինչպես նաև՝ Նրա առաջնորդության և մատակարարման մեթոդների հանդեպ: Այն նույնպես ցույց էր տալիս նրանց սաստիկ ցանկությունը այն կյանքի հանդեպ, որը նրանք թողել էին Եգիպտոսում: Նրանք միայն հիշում էին այդ կյանքի հաճելի կողմերը և մոռանում էին, որ իրենք ապրում էին ստրկության մեջ:

Սա սթափեցնող դաս է բոլորիս համար: Եթե մենք փնտրում ենք միայն խոստումները, և ոչ՝ Խոստացողին, մեր ուժը բավական չի լինի մեր կյանքի անապատների համար: Մենք անխուսափելիորեն կհիշենք հին բարի օրերը, որոնք, ճշմարտության տեսանկյունից, բոլորովին բարի չէին, այլ՝ ստրկության օրեր էին:

Այլ բան է փնտրել Տիրոջը այն պատճառով, թե ինչ Նա կարող է *անել ձեզ համար* կամ ինչ Նա կարող է *տալ ձեզ,* և այլ բան է փնտրել Տիրոջը այն պատճառով, թե *Ով է Նա:* Առաջին տարբերակը շահադիտական է, և ձեր եսասիրական դրդապատճառները լավագույն դեպքում կհանգեցնեն Աստծո հետ ոչ հասուն հարաբերության: Այնուամենայնիվ, եթե մենք ձգտենք ճանաչել Նրան, դա կձևավորի ամուր փոխհարաբերություն, որը բոլորս ենք ցանկանում:

Սուրբ սակավություն

Ինչպես կարելի է ակնկալել, անջրդի անապատում ապրելը ենթադրում է միջոցների սակավություն: Այդ ընթացքում դուք ստանում

եք այն, ինչ անհրաժեշտ է ձեզ՝ զգացմունքորեն, ֆիզիկապես և նյութապես, ոչ թե այն, ինչ դուք ցանկանում եք: Աստված խոստացել է հոգալ մեր հիմնական կարիքները. այնպես որ, անապատում Նա տալիս է մեր հանապազօրյա հացը, ոչ թե ամեն ինչի առատություն:

Ամերիկայում, երբ կյանքը բարեկեցիկ է, մենք ասում ենք, որ խոզի մսի ընտիր կտորներ ենք ուտում: Անապատում չկա խոզի մսի նույնիսկ մեկ կտոր: Եվ այս փորձառությունը կարող է ընդգրկել տարբեր տեսակի զրկանքներ: Այս ընթացքում դուք ստանում եք այն հասարակական կյանքը, որի կարիքն ունեք, ոչ թե այն, որը դուք ցանկանում եք: Անապատում Աստված գիտի, թե ինչ է անհրաժեշտ ձեր հոգևոր կյանքում, և միգուցե դա այն չէ, ինչը, ձեր կարծիքով, անհրաժեշտ է ձեզ: Այս ընթացքում Նա հոգում է մեր կարիքները, ոչ թե կատարում է մեր ցանկությունները:

Անապատի նպատակն է մաքրել և զորացնել մեզ: Մենք պետք է ձգտենք Նրա *սրտին*, ոչ թե Նրա *մատակարարմանը:* Եվ դրանից հետո, երբ հայտնվենք առատության մեջ, մենք չենք մոռանա, որ մեր Տեր Աստված է առատություն տալիս մեզ, որպեսզի հաստատի Իր ուխտը (տե՛ս Երկր. Օր. 8.2-18):

Գոյություն ունի մի հիմնարար խնդիր. այն, թե ինչպես ենք *մենք* սահմանում կարիքները և ցանկությունները, չի համապատասխանում իրականությանը: Մենք «կարիքներ» ենք անվանում մեր ցանկությունները, այնինչ՝ այդպես չէ: Միգուցե հավատացյալների մեծ մասը դեռ պետք է հասկանա, թե ինչ նկատի ուներ Պողոսը՝ ասելով.

> «Ոչ թե, որ ակնարկում եմ, որ ինչ-որ անձնական կարիք ունեի, քանի որ ես սովորել եմ գոհ լինել (ունենալ բավականություն՝ այն աստիճան, որ անհանգիստ կամ խռովված չեմ), ինչ վիճակում էլ լինեմ: Ես գիտեմ, թե ինչպես ապրել պակասությամբ և խոնարհ կերպով՝ նեղ հանգամանքներում, և ինչպես վայելել լիությունը և առատություն ունենալ: Ես սովորել եմ ցանկացած հանգամանքներում ցանկացած իրավիճակի բախվելու գաղտնիքը՝ թե՛ կուշտ լինելով, թե՛ քաղցած մնալով, թե՛ ունենալով բավականություն և ավելցուկ, թե՛ չունենալով ոչինչ և լինելով կարիքի մեջ: Ես ուժ ունեմ ամեն ինչի համար Քրիստոսում, Ով զորացնում է ինձ» (Փիլիպեցիների 4.11-13, AMPC):

Քրիստոսի զորությամբ Պողոսը սովորեց, որ չորության ժամանակ ինքը կարող էր նույնքան գոհունակ լինել, որքան առատության ժամանակ: Թվում է, թե մենք՝ Արևմուտքի եկեղեցու հավատացյալներս, չենք սովորել գոհունակ լինել, քանի որ, ցավոք, ովքեր ապրում են առատության մեջ, նույնքան դժգոհ են, որքան կարիքի մեջ ապրող մարդիկ: Եթե մենք չունենք այն ամենը, ինչը, մեր կարծիքով, պետք է ունենանք, մենք զրկված ենք համարում մեզ: Մենք դատում ենք մարդկանց հավատքի և հոգևոր վիճակի մասին նրանց ունեցվածքով, հաջողությամբ և սոցիալական կարգավիճակով, այնինչ պետք է գնահատենք նրանց բնավորությունը և հավատքի չափը:

Իսրայելի զավակները հեռացան Եգիպտոսից մեծ ավարով՝ արծաթե և ոսկե իրերով և գեղեցիկ հանդերձներով, որոնք նրանք վերցրին՝ կողոպտելով եգիպտացիներին: Սակայն նրանք կուռք կառուցեցին անապատում այդ թանկարժեք մետաղներով, իսկ հետո հագան իրենց գեղեցիկ հանդերձները և պարեցին դրա առջև: Ակնհայտ է, որ այդ ունեցվածքը չէր նշանակում, որ նրանք աստվածապաշտ էին, այլ նույնիսկ՝ հակառակը: Միայն երկու մարդ, որոնք դուրս եկան Եգիպտոսից, ունեին այնպիսի բնավորություն, որը թույլ տվեց նրանց մուտք գործել Խոստման երկիր: Միայն Հեսուն և Քաղեբը մուտք գործեցին այդտեղ, քանի որ նրանցում այլ հոգի կար. նրանք ամբողջ սրտով հետևում էին Աստծուն (տե՛ս Թվոց 14.24):

Մեր արժեհամակարգը խեղաթյուրված է, եթե մենք գնահատում ենք մեկս մյուսին ըստ մեր ունեցվածքի, ոչ թե ըստ մեր ինքնության:

Մյուս կողմից, հաճախ, երբ քրիստոնյաները հասնում են ֆինանսական առատության, ղեկավարող դիրք են զբաղեցնում կամ ազդեցություն են ձեռք բերում, նրանք համարում են, որ դրանով Աստված թույլ է տալիս իրենց անել այն, ինչ իրենք ցանկանում են: Նրանք ձեռք են բերում այն, ինչ ուզում են՝ ծախսելով իրենց փողն իրենց ցանկությունների վրա, կամ օգտագործում են իրենց դիրքը և պաշտոնն իրենց շահերի համար: Հաճախ նման համոզմունքներ ունեցողներն այն մարդիկ են, որոնք իմաստությամբ չեն վարվել չորության ժամանակ: Իրականում, ֆինանսական օրհնությունը և ավելի մեծ իշխանությունը պետք է դրդեն մեզ է՛լ ավելի կախված

լինել Աստծուց՝ Նրա նպատակներին և առաջնորդությանը հետևելու համար:

Մտածե՛ք այն մասին, թե ինչ դիրքորոշում ուներ Հիսուսն Իր ծառայության մեջ: Նա չուներ եսասիրական դրդապատճառներ: Նա վերցրեց Իր վրա մեր մեղքը, հիվանդությունը և մահապատիժը: Գնահատեց մեր բարեկեցությունն ավելի բարձր, քան Իրենը, թեև Նա երբեք մեղք չէր գործել: Նրա կյանքի և ծառայության նպատակը ոչ թե շահամոլությունն էր, այլ՝ անձնազոհությունը: Ուրանալով Իր Անձը՝ Նա տվեց մեզ մեծագույն պարգևը՝ հավիտենական կյանքը:

Աստված նման հասուն բնավորություն է ձևավորում մեր մեջ, երբ մենք անապատում ենք: Անապատն այն վայրն է, որտեղ հասունանում է Հոգու պտուղը: Երբ մենք ոռոգվում ենք Նրա ջրերով, այսինքն՝ Նրան ճանաչելու սաստիկ ցանկությամբ, մենք սովորում ենք վարվել այնպես, ինչպես Նա է վարվում:

4

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Պարզապես ապշեցուցիչ է, թե որքա՜ն դժվարություններ են հարթվում՝ առանց որևէ ջանքի, երբ կարգավորվում է մարդու ներքին կյանքը»:

– Է. Ու. Թոզեր

«Եթե սիրում եք Ինձ, դուք կհնազանդվեք Իմ պատվիրաններին»:

– Հովհաննես 14.15, (NET)

Ի՞նչ է փնտրում Աստված Իր համար՝ մեզ անապատ տանելով: Մենք խոսեցինք մեր առավելությունների մասին և կշարունակենք բացահայտել ավելին, սակայն կա՞ արդյոք ինչ-որ բան անապատում նաև Աստծո համար: Այո՛, միանշանակ: Նա ցանկանում է զարգացնել մեր հարաբերությունների մակարդակը: Նա փափագում է, որ մենք մտերմորեն հաղորդակցվենք Իր հետ: Ցավոք, մեզնից շատերը հակված են շահագործել մեր հարաբերությունները մեր Տիրոջ հետ և թույլ տալ, որ մեր սերը Նրա հանդեպ սառչի:

Երբ ես նշանված էի Լիզայի հետ, մինչև ականջներիս ծայրը սիրահարված էի նրան: Ես մշտապես մտածում էի նրա մասին: Ես անում էի ամեն ինչ, որպեսզի հնարավորինս շատ ժամանակ անցկացնեի նրա հետ: Եթե Լիզային ինչ-որ բան էր պետք լինում, անկախ այն բանից, թե ինչով էի զբաղված՝ ես սլանում էի դեպի իմ մեքենան և գտնում դա նրա համար:

Հիշում եմ՝ մեկ անգամ մենք մոտավորապես հինգ ժամ միասին էինք նրա ծնողների տանը: Ես դժկամորեն հեռացա: Հազիվ էի տուն հասել, երբ իմ հեռախոսը զանգեց: Լիզան էր: Նա ասաց իր քաղցր և հմայիչ ձայնով.

- Սիրելի՛ս, դու մոռացել ես բաճկոնդ մեր տանը:

Դա ասես երաժշտություն լիներ ականջներիս: Առանց վարանելու՝ ես խանդավառությամբ պատասխանեցի.

- Այդ դեպքում, ես ստիպված եմ վերադառնալ և վերցնել այն:

Ես այդպես էլ արեցի, և մենք ևս երեքից չորս ժամ միասին անցկացրինք. դա հրաշալի օր էր:

Այդ օրերին, եթե նա զանգահարեր ինձ գիշերվա կեսին և ասեր. «Սիրելի՛ս, պաղպաղակ եմ ուզում», ես ուրախությամբ կպատասխանեի. «Ընդամենը տասը րոպե, և ես այդտեղ կլինեմ: Իսկ ինչպիսի՞ համով պաղպաղակ ես ուզում»: Ես փնտրում էի ժամանակ և պատրվակ՝ նրա հետ լինելու համար: Քանի որ ես անչափ սիրում էի նրան, ուրախությամբ էի կատարում այն, ինչ նա ցանկանում էր: Ես չէի անում այդ ամենը, որպեսզի *ապացուցեի* նրան իմ սերը. ես անում էի դա, որովհետև *սիրում էի* նրան:

Կարիք չկար, որ ստիպեի ինձ՝ մարդկանց հետ խոսել Լիզայի մասին... ես գովերգում էի նրան բոլորի ներկայությամբ, ովքեր պատրաստ էին լսել: Եթե խոսակցության նյութը որևէ մեկի հետ սպառվում էր, առանց որևէ դժվարության՝ ես սկսում էի խոսել Լիզայի և մեր գալիք ամուսնության մասին: Ես սիրահարվա՛ծ էի:

Մեր ամուսնությունից ընդամենը մի քանի տարի անց իմ ուշադրությունը կենտրոնացավ այլ բաների վրա, որոնց թվում էին սպորտը, շփումն ընկերների հետ և հատկապես՝ ծառայությունը: Այժմ ինձ համար ծանծրալի էր Լիզայի հետ որակյալ ժամանակ անցկացնելը կամ նրա հետ ինչ-որ բան անելը: Ես այնքան էլ շատ չէի մտածում Լիզայի մասին: Նա նվերներ էր ստանում միայն Սուրբ ծննդյանը, մեր ամուսնության տարեդարձին և իր ծննդյան օրը, և դա նույնիսկ մի փոքր դժկամությամբ էի անում: Մեկ անգամ Վալենտինի օրը ես նույնիսկ մոռացա նվեր գնել նրա համար: Նա խիստ վշտացել էր: Ես կարող էի միայն ներողություն խնդրել: Ամենացավալին այն էր, որ ես այնքան հասուն չէի, որ հասկանայի մեր ամուսնության «եղանակները» ցույց տվող նշանները: Մեր միջև լարվածություն էր առաջանում. իմ առաջին սերը մահանում էր:

Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ, ի վերջո, Աստված գրավեց իմ ուշադրությունը և փոխեց իմ սիրտը: Նա թույլ տվեց ինձ տեսնել, թե որքան եսասեր էի դարձել: Իր ողորմությամբ, Նա կրկին բոցավառեց մեր սիրո կրակը և բժշկեց մեր ամուսնությունը:

Նմանատիպ բան կարող է տեղի ունենալ մեր և Աստծո հարաբերությունների մեջ: Քրիստոսի հետևորդներից շատերը հասնում են որևէ հարմարավետության գոտու կամ բարձրակետի, որտեղ նրանք այլևս

ոչնչի չեն ձգտում, այլ միայն պահպանում են իրենց ձեռքբերումները: Նրանք այլևս չեն փափագում Աստծուն: Նրանք որոշում են իրենց հոգևոր չափանիշները՝ համեմատելով իրենց այլ մարդկանց հետ կամ կատարելով այն, ինչ բավական են համարում: Նրանք այլևս չեն ձգտում խորապես և անձնապես ճանաչել Աստծուն: Պարզապես կենտրոնանում են ամենօրյա գործերի, հաջողության ձգտելու և այս կյանքի հոգսերի վրա: Նրանք սկսում են փնտրել Աստծուն ոչ թե Նրան ճանաչելու, այլ օրհնություններ ստանալու համար: Նրանք հետզհետե սկսում են մոլորվել իրենց սրտերում՝ շրջվելով Աստծուց դեպի իրենց անձը: Միգուցե նրանք շարունակում են «քրիստոնեական» հարաբերություններ պահպանել մարդկանց հետ և կառուցել իրենց համբավն ու դիրքը եկեղեցում, բայց այլևս չեն փափագում Նրան, Ով կյանք է տալիս իրենց:

Երբ մենք ժամանակ ենք տրամադրում աղոթքին՝ փնտրելով շահ և օրհնություններ Աստծուց, ոչ թե ձգտելով մտերիմ շփման Նրա հետ, մենք հեշտորեն մոլորվում ենք: Եկեք անկեղծ լինենք. մենք խրախուսում ենք ինքներս մեզ՝ աղոթքին ժամանակ տրամադրելու համար, սակայն, եթե կարողանայինք նայել մեր աղոթքներին Նրա տեսանկյունից, կհասկանայինք, որ փորձում ենք օգտագործել Նրան: Մենք փոքրացնում ենք Աստծուն՝ դարձնելով Նրան օգնության աղբյուր մեր կարիքի ժամանակ: Բայց Նա այնքան է սիրում մեզ, որ թույլ չի տա խաբված մնալ: Նա կանի մեզ համար նույնը, ինչ որ արեց Հիսուսին փնտրող բազմության համար.

> «Հետևյալ օրը այն ժողովուրդը... տեսավ, որ Հիսուսն այնտեղ չէ, և ո՛չ էլ Նրա աշակերտները, իրենք էլ նավերը մտան և եկան Կափառնայում՝ Հիսուսին որոնելով: Եվ երբ որ Նրան ծովի այն կողմը գտան, ասացին. «Ռաբբի՛, ե՞րբ եկար այստեղ»: Հիսուսը պատասխանեց նրանց և ասաց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ. դուք Ինձ որոնում եք ոչ թե նրա համար, որ նշաններ տեսաք, բայց որ հացից կերաք և կշտացաք»» (Հովհաննես 6.22-26):

Հիսուսը գիտի մեր գործերի իրական դրդապատճառները: Երբ բազմությունները եկան՝ *փնտրելով Նրան,* Նա տեսավ, որ նրանք

ավելի շատ հետաքրքրված էին այլ օրհնությամբ (անվճար ճաշով), քան նշանները տեսնելով և հասկանալով: Նշանն ուղղորդում կամ տեղեկացնում է. այն չի մատնանշում ինքն իրեն: Հիսուսը գիտեր, որ այդ բազմությունն իրականում չէր հետևում Իրեն այն պատճառով, որ Իր գործած նշանները հայտնել էին նրանց, թե ով էր Ինքը. նրանք հետևում էին Իրեն՝ պարզապես կուշտ լինելու համար:

Դուք ճանաչո՞ւմ եք այնպիսի մարդու, որը կապ է հաստատում ձեզ հետ, երբ կարիք է ունենում կամ ինչ-որ բան է ցանկանում ձեզնից: Կամ՝ ձեր կյանքում եղե՞լ է այնպիսի մարդ, որը, թվում է, ուզում էր դառնալ ձեր ընկերը, սակայն որոշ ժամանակ անց պարզվում է, որ նա ընդամենը փորձում էր ինչ-որ բան ստանալ ձեզնից՝ ազդեցություն, փող կամ այլ նյութական բան: Նա ճշմարտապես մտահոգված չէր ձեզնով և չէր սիրում ձեզ. պարզապես որոշ ժամանակով դուք ծառայում էիք նրա նպատակներին: Նման կերպով շահագործվելը *ցավոտ* է:

Նման եսակենտրոն դիրքորոշումը թափանցել է մեր հասարակության մեջ, ինչպես նաև՝ Քրիստոսի մարմնի մեջ: Շատերը եկեղեցում դժգոհ են. նրանց սերը Հիսուսի հանդեպ սառչել է: Նրանք ծառայում են Աստծուն անձնական շահի համար, ոչ թե Նրա հանդեպ ունեցած ջերմեռանդ սիրուց դրդված: Եվ քանի դեռ Աստված կատարում է նրանց *ցանկությունները*, նրանք երջանիկ են և ոգեշնչված են Նրանով: Այնուամենայնիվ, երբ նեղություններ են գալիս, և կյանքը դժվարանում է, նրանց սրտի դրդապատճառներն ի հայտ են գալիս:

Երբ մարդը կենտրոնացած է *իր* վրա, տրտունջն անխուսափելի է: Ինչո՞ւ: Քանի որ, վերջին հաշվով, մենք բախվելու ենք նեղությունների և դժվարությունների: Եվ հենց դա տեղի ունենա, կսկսվի տրտունջը՝ բորբոքված եսասիրությունից: Տրտունջը կշարունակվի այնքան ժամանակ, որքան կտևի դժվարությունը: Մենք տեսնում ենք սա Իսրայելի զավակների կյանքում: Երբ Տերն ազատեց նրանց Եգիպտոսի զարհուրանքներից, որոնք կրում էին փարավոնի իշխանության ներքո, ժողովուրդը ցնծաց.

> «Եվ Ահարոնի քույր Մարիամ մարգարեուհին թմբուկը ձեռքն առավ, և բոլոր կանայք թմբուկներով և պարերով նրա ետևից

դուրս եկան: Եվ Մարիամը պատասխանեց նրանց. «Երգե՛ք Տիրոջը, որովհետև փառքով փառավորված է. ձին ու ձիավորը ծովը գցեց»» (Ելից 15.20,21):

Ժողովրդի երջանկությանը չափ չկար: Նրանք անսահմանորեն տպավորված էին, որ Աստված՝ Իր մեծությամբ, հրաշագործ զորությամբ և բարությամբ, ազատեց նրանց իրենց ստրկացնող ժողովրդից: Այնուամենայնիվ, ընդամենը երեք օր անց, երբ նրանք հասան Սուր անապատի դառը ջրերին, սկսվեց տրտունջը. «Ի՞նչ խմենք» (Ելից 15.24): Ըստ էության, տրտունջն անիմաստ էր: Մի՞թե նույն Աստված, որը կարճ ժամանակ առաջ կիսեց Կարմիր ծովը, չէր կարող խմելու ջուր տալ իրենց: Մի՞թե Մովսեսը նույն հերոսական առաջնորդը չէր, ինչ երեք օր առաջ:

Աստված իրոք «անուշացրեց դառը ջրերը», բայց այդ հրաշքը նույնպես արագորեն մոռացվեց: Մի քանի օր անց ժողովուրդը շարունակեց տրտնջալ, այս անգամ՝ կերակուրի համար: Նրանք փնթփնթում էին. «Մենք ավելի լավ էինք ապրում մինչև այն ժամանակը, երբ Աստված ազատեց մեզ»: Իսկապե՞ս: Մի՞թե աղյուսներ պատրաստելը և իրենց մեջքին պահապանների մտրակները զգալն ավելի լավ էր:

«Եվ Իսրայելի որդիների ամբողջ ժողովքն անապատում Մովսեսի և Ահարոնի դեմ տրտունջ արին: Եվ Իսրայելի որդիներն ասացին նրանց. «Երանի՜ թե Տիրոջ ձեռքով մեռած լինեինք Եգիպտոսի երկրում, երբ որ մսի կաթսաների մոտ նստած էինք և կուշտ հաց էինք ուտում» (Ելից 16.2,3):

Ծանր և չոր ժամանակներում տրտունջը սովորաբար ուղղված է լինում առաջնորդներին, ընտանիքի անդամներին, ընկերներին, թշնամիներին և նույնիսկ՝ կառավարությանը: Մեզնից շատերը (վախի պատճառով) երբեք չեն ասում, որ Աստված է մեր խնդիրների պատճառը: Նույն կերպով, իսրայելցիները տրտնջում էին Մովսեսի և Ահարոնի դեմ, բայց, անկասկած, նրանք մտածում էին. «*Տերը հուսախաբ արեց մեզ»:* Մովսեսը հասկացավ դա և բացահայտ ասաց նրանց. «Ձեր տրտունջը մեր դեմ չէ, այլ՝ Տիրոջ դեմ» (Ելից 16.8):

Անապատը հայտնում է մեր սրտի դրդապատճառները՝ դրանք

Ինչպե՞ս անցնել անապատը

#4 Հստակեցրե՛ք ձեր ծրագրերը

Իմ վաղ անապատային փորձառություններից մեկի ընթացքում ինձ համար շատ դժվար էր դրական վերաբերմունք պահպանելը, քանի որ այնպիսի տպավորություն էր, որ ոչինչ չէր փոխվելու: Ինձ անհանգստացնում էր ոչ այնքան սպասելը, որքան այն ցավը, որը զգում էի սպասման ընթացքում: Ես պարզապես հոգնել էի մի վրդովեցուցիչ հանգամանքից, որը, թվում էր, թույլ չէր տալիս ինձ իրագործել այն երազանքը, որը ստացել էի Աստծուց՝ շրջիկ քարոզչի ծառայություն սկսելը: Տերն ասել էր ինձ, որ Նա օգտագործում էր այդ անապատը՝ ինձ մաքրելու համար: Բայց մեկ անգամ, երբ կրկին աղաչում էի Տիրոջը բացատրել, թե ինչու էր այդ «անապատային ընթացքն այդքան երկար տևում», Տերը հիշեցրեց. «Ես ուզում եմ տեսնել՝ դու ծառայում ես Ի՞նձ, թե՞ քո երազանքին»:

Դա լրջորեն գրավեց իմ ուշադրությունը: Ես պետք է ավելի շատ մտորեի և աղոթեի, որպեսզի հասկանայի՝ արդյո՞ք ցանկանում էի իրագործել իմ նվիրական երազանքը՝ տարածել Ավետարանը աշխարհով մեկ, թե՞ ես ունեի ավելի ազնիվ նպատակ՝ հնազանդ կերպով վստահել Աստծուն և սպասել, որ Նա խոսեր և շարժվեր իմ կյանքում: Միայն այդ դեպքում իմ ցանկությունները կհամապատասխանեին Նրա ցանկություններին:

Այսպիսով, իմ խորհուրդը հետևյալն է. թույլ մի՛ տվեք, որ Աստծուց տրված հրաշալի երազանքը դառնա ձեզ համար ավելի առաջնահերթ, քան Աստծո ներկայության մեջ ապրելը և միայն ձեր Հոր ցանկությունները կատարելը:

եսակենտրո՞ն են, թե՞ *անձնուրաց:* Խնդրե՛ք Սուրբ Հոգուն ցույց տալ, թե ինչ է իրականում տեղի ունենում ձեր սրտում: Որո՞նք են ձեր շարժառիթները: Ինչպիսի՞ դիրքորոշումներ կամ վարքագծեր են ստրկացված պահում ձեզ ձեր «Եգիպտոսում» կամ դրդում ձեզ տրտնջալ ձեր անապատում: Ապագայում հաջողության հասնելու համար անչափ կարևոր է, որ ազնվություն ցուցաբերեք և բաց լինեք Նրա սիրառատ շտկման համար:

Գոյություն ունի բարի լուր յուրաքանչյուրիս համար. ոչինչ չի արգելում մեզ ապաշխարել և փոխել մեր սրտի դիրքը: Մեկ ակնթարթում մենք կարող ենք վերջ տալ տրտունջին և վերադառնալ Աստծո հետ շփմանը՝ դադարելով դիտարկել Նրան ընդամենը որպես ինչ-որ բան ստանալու միջոց:

Այսպիսով, Աստված կարող է ուղարկել մեզ անապատ՝ սիրուց դրդված:

Աստված ավելին է, քան ինչ-որ բանաձև

Քանի որ Իսրայելի զավակները չէին ձգտում Աստծուն, նրանք չգիտեին Նրա ճանապարհները: Նրանք ոգեշնչվում էին Աստծո զորավոր գործերով, բայց երբ Նրա գերբնական զորությունը չէր հայտնվում, հեռանում էին Նրանից: Երբ Մովսեսը սարի վրա էր, նրանք հեռացան և սկսեցին խաղալ: Նրանք բավարարվում էին ընդամենը փրկության առավելություններով և չէին ձգտում մտերմորեն ճանաչել և վերապրել Աստծուն:

Մեկ օր, անապատում, Աստված հանձնարարեց Մովսեսին գնալ ժողովրդի մոտ և պատվիրել, որ նրանք սրբվեն, քանի որ Ինքն իջնելու էր Սինա սարի վրա, որպեսզի խոսեր նրանց հետ, ինչպես որ դրանից առաջ խոսել էր Մովսեսի հետ: Այնուամենայնիվ, երբ այդ օրը եկավ, և Տերը հայտնվեց Իր վեհաշուք փառքով ու մեծությամբ, ժողովուրդը չկարողացավ դիմանալ դրան.

> «Եվ ամբողջ ժողովուրդը տեսնում էր որոտումները և կայծակները և փողի ձայնը և սարի ծխելը: Եվ ժողովուրդը

տեսավ և ետ քաշվեց ու հեռու կանգնեց և ասաց Մովսեսին. «Դո՛ւ խոսիր մեզ հետ, և մենք կլսենք, բայց Աստված թող չխոսի մեզ հետ, որ չմեռնենք»» (Ելից 20.18,19):

Նրանք աղաչում էին Մովսեսին. «Խոսի՛ր Աստծո հետ մեր փոխարեն, ասա՛ մեզ այն, ինչ Նա պատվիրում է, և մենք կկատարենք» (շրջասություն)՝ կրկին ցույց տալով, որ իրենք եսասիրաբար ցանկանում էին օգուտ ստանալ Աստծուց՝ առանց Նրա հետ *շփման:* Միգուցե նրանք բարի դրդապատճառներ ունեին (նրանք ցանկանում էին պահել Աստծո Խոսքը), սակայն առանց Աստծո հետ մտերիմ *շփման* ՝ նրանք չէին կարողանա հարատևել դրանում:

Իսրայելցիները ցանկանում էին ստանալ պատասխաններ իրենց խնդիրներին, ոչ թե փոխհարաբերություն ունենալ: Եվ ի՞նչ տեղի ունեցավ: Աստված տվեց նրանց Տասը պատվիրանները: Այնուամենայնիվ, դա նույնպես չլուծեց խնդիրը: Ամեն սերունդ կրկին ու կրկին ապացուցում էր, որ մարդիկ անկարող էին պահել այդ պատվիրանները:

Իսկ ի՞նչ կարող ենք ասել մեր սերնդի մասին: Քանի՞սն են այսօր փորձում պահել Աստծո ճանապարհները՝ լավագույն մտադրություններ ունենալով: Մենք ուխտեր ենք անում և խոստումներ ենք տալիս, բայց չենք կատարում, մինչև որ դրանց բեռն այնքան է ծանրանում մեզ վրա, որ հազիվ ենք կարողանում բարձրացնել մեր ձայնն աղոթքի ժամանակ: Մենք կարող ենք լսել որևէ հովվի, մեր կողակցին, ընկերոջը կամ որևէ նախընտրելի բլոգերի՝ հույս ունենալով յուրացնել այն փորձառությունը, որը նրանք ձեռք են բերել՝ փնտրելով Աստծուն, և դրանով բարելավել մեր հարաբերություններն Աստծո հետ: Նման Իսրայելի զավակներին՝ մենք փորձում ենք պահել Աստծո Խոսքը կամ Նրա պատվիրանները՝ առանց Նրա հետ կենդանի և անձնական շփման: Հովհաննես 14.21-ում Հիսուսն ասում է. «Ով որ Իմ պատվիրաններն ունի և դրանք պահում է, նա է Ինձ սիրողը: Եվ Ինձ սիրողն Իմ Հորից կսիրվի, և Ես կսիրեմ Նրան և Ինձ կհայտնեմ Նրան»:

Ես կարդում էի այս խոսքը՝ մտածելով, որ Տերը նկատի ունի. «Ձո՛ն, եթե պահես Իմ պատվիրանները, դու կապացուցես, որ սիրում ես Ինձ»: Մեկ անգամ Տերը պատվիրեց ինձ կրկին կարդալ այս խոս-

քը: Երբ կարդացի, Նա ասաց. «Դու դեռ չես հասկանում, թե ինչ եմ Ես ասում. կրկի՛ն կարդա»: Դա կրկնվեց այնքան, մինչև որ կարդացի այդ խոսքը ինը, թե տասն անգամ:

Ի վերջո, ես բացականչեցի. «Տե՛ր, ների՛ր իմ անմտությունը. ցո՛ւյց տուր ինձ, թե ինչ ես Դու ասում»:

> «Ձո՛ն, Ես չեմ ասում, որ պահելով Իմ պատվիրանները՝ կապացուցես, որ սիրում ես Ինձ, - ասաց Նա: - Ես արդեն գիտեմ՝ սիրո՞ւմ ես Ինձ, թե՞ ոչ: Ես նկատի ունեմ, որ եթե մարդը մինչև ականջները սիրահարվի Ինձ, նա Իմ պատվիրանները պահելու կարողություն կստանա»:

Ես հասկացա՛: Այս խոսքը *շփման* մասին է, ոչ թե *օրենքի:* Ես դիտարկում էի այն որպես պատվիրան կամ օրենք, բայց Աստված ցույց տվեց, որ այն *շփման* կարևորության մասին է:

- Աստծուն անկարելի է ճանաչել կանոնների և դրույթների միջոցով:
- Աստծուն անկարելի է գտնել մեթոդների միջոցով:
- Սուրբ, Ամենակարող Աստծուն անկարելի է փոքրացնել՝ վերածելով ինչ-որ բանաձևի:

Այնուամենայնիվ, մեզնից շատերն այսպես են մտածում Տիրոջ մասին: Մենք փոխարինում ենք շփումն Աստծո հետ «օրենքներով և բանաձևերով», օրինակ՝ յոթ քայլ դեպի երջանիկ կյանք, փրկության ծրագիրը՝ բաղկացած չորս կետից, հաջողակ հարաբերությունների հինգ կողմերը, ստուգված միջոց՝ աղոթքի պատասխան ստանալու համար: Մենք երևակայում ենք, որ Աստված սահմանափակված է խոստումների տուփի մեջ, որից կարելի է վերցնել առանձին խոստումներ՝ ըստ անհրաժեշտության: Եթե մարդիկ այս կերպով են մոտենում Աստծուն, արժե՞ զարմանալ, որ նրանք չեն կարողանում հաղթահարել մեղքը:

Աստված ինքնակատարելագործման նորագույն բանաձևը չէ: Նա կենդանի Աստված է, Ով բնակվում է Իր զավակների՝ ձեր և իմ ներսում: Նա ցանկանում է ճանաչել մեզ և ներգրավված լինել մեր ամբողջ

կյանքի և մեր բոլոր գործերի մեջ: Նրա նպատակը մտերիմ շփումն է: Հաշվի առնելով, որ մարդիկ հակված են թույլ տալ, որ իրենց սերը սառչի, դուք կարող եք հասկանալ, թե ինչու Հիսուսն ասաց.

> «Բայց քեզ դեմ այս ունեմ, որ քո առաջին սերը թողել ես: Արդ հիշի՛ր, թե որտեղից վայր ընկար, և զղջա և առաջին գործերն արա: Ապա թե ոչ, կգամ շուտով քեզ մոտ և քո ճրագակալը կշարժեմ տեղից, եթե չապաշխարես» (Հայտնություն 2.4,5):

Ի հակադրություն իսրայելցիներին՝ Մովսեսը չէր բավարարվում Աստծուն հեռվից երկրպագելով: Տեսնելով Աստծո ներկայության հայտնվելը՝ Նա չընկրկեց, այլ՝ մոտեցավ: Ելից 20.21-ում գրված է. «Եվ ժողովուրդը հեռու կանգնեց, և Մովսեսը մոտեցավ այն թանձր խավարին, ուր որ Աստված էր»: Թեև Մովսեսն ուներ մեծ իշխանություն և ազդեցություն, թեև նա երեք միլիոն մարդու առաջնորդ էր, թեև նա մասնակցություն էր ունեցել Հին կտակարանի ամենաապշեցուցիչ հրաշքներին, նա գիտեր, որ այդ ամենը երբեք չէին կարող գոհացնել իրեն: Կարդացե՛ք նրա աղոթքն այն բանից հետո, երբ նա վերապրում էր բոլոր այդ զարմանալի նշանները և հրաշքները.

> «Եվ հիմա աղաչում եմ, եթե Քո առջև շնորհք գտա, խնդրո՛ւմ եմ, ինձ իմացրու Քո ճանապարհները, որ ճանաչեմ Քեզ, որ Քո առջև շնորհք գտնեմ... Եթե Քո երեսը (կամ՝ ներկայությունը) մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի՛ հանիր... Աղաչո՛ւմ եմ, Քո փառքը ցո՛ւյց տուր ինձ» (Ելից 33.13-18):

Աստված ուշագրավ առաջարկ արեց Մովսեսին: Նա գտնվում էր անջրդի անապատում, և Աստված պատվիրեց նրան պատրաստել ժողովրդին և Խոստման երկիր տանել: Նա նույնիսկ առաջարկեց ուղարկել ընտիր հրեշտակի, որն ապահով տեղ կհասցներ նրանց: Նա հիշեցրեց Մովսեսին, թե որքան լավն էր այդ երկիրը. այն կաթ ու մեղր էր բխեցնում և առատ էր գեղեցիկ բնատեսարաններով, պարտեզներով և մրգաստաններով: Այնուամենայնիվ, Աստված ասաց, որ Ինքը չէր գնալու նրանց հետ: Հենց որ Մովսեսը լսեց դա, նա մերժեց Աստծո

առատաձեռն առաջարկը: Ըստ էության, նա հայտարարեց. «Ես գերադասում եմ ունենալ Քո ներկայությունը՝ առանց Քո խոստումների, քան Քո խոստումները՝ առանց Քո ներկայության»: Համոզված եմ՝ Աստծուն հաճելի էր, որ Մովսեսն այդ կերպով փափագում էր Իրեն:

Մովսեսը ցանկանում էր շատ ավելին, և նա համարձակ խնդրեց. «Խնդրո՛ւմ եմ, ինձ իմացրու Քո ճանապարհները, որ ճանաչեմ Քեզ» (Ելից 33.13): Որպեսզի ճանաչենք Աստծուն, մենք պետք է ճանաչենք Նրա *ճանապարհները:* Նա հայտնում է Իր ճանապարհները նրանց, ովքեր ձգտում են ճանաչել Իր սիրտը, ոչ թե միայն Իր զորությունը և մատակարարումը: Նրա սիրտը ճանաչող մարդիկ գործելու են Նրա զորությամբ: «...բայց այն մարդիկ, որոնք իրապես ճանաչում են իրենց Աստծուն, կզորանան և սխրանքներ կգործեն» (Դանիել 11.32, KJV):

Երբ սկսեցի ծառայել Աստծուն, ամեն առավոտ մոտավորապես երկու ժամ աղոթում էի: Իմ աղոթքները գրեթե այսպիսին էին. «Աստվա՛ծ, գործածի՛ր ինձ՝ մարդկանց փրկելու համար, գործածի՛ր ինձ՝ հիվանդներին բժշկելու համար, գործածի՛ր ինձ՝ դևեր հանելու համար»: Ես շարունակ կրկնում էի նույն աղոթքը՝ տարբեր բառերով: Թվում էր՝ իմ աղոթքներն անձնազոհ էին, և ես աղաղակում էի Աստծուն՝ ազդեցիկ ծառայություն ունենալու համար:

Եվ մեկ օր Տերը խոսեց ինձ հետ. «Որդի՛ս, քո աղոթքները եսակենտրոն են և չեն դիպչում նշանակետին»: Ես հանկարծակիի եկա Նրա խոսքերից:

> «Դու ցանկանում ես այդ բաները, բայց ո՞րն է քո դրդապատճառը, - հարցրեց Նա: - Ես միայն լսում եմ քեզնից՝ գործածի՛ր ինձ... Քո աղոթքի կենտրոնում դու ես: Ես չեմ ստեղծել քեզ, որպեսզի շահես մարդկանց, դևեր հանես և բժշկես հիվանդներին: Ես ստեղծել եմ քեզ մտերիմ շփման համար. դա՛ է քո նպատակը»:

Դա հանկարծակիի բերեց ինձ: Դրանից հետո Նա ասաց մի բան, ինչը երբեք չեմ մոռանա. *«Հուդան ազատագրում էր մարդկանց և բժշկում էր հիվանդներին. նա անում էր այդ ամենը Հիսուսի անունով»:* Այո՛, ուղարկելով տասներկուսին՝ Հիսուսն ուղարկեց բոլորին, ինչպես

նաև՝ Հուդային, որը հետագայում դավաճանեց Նրան: Ես կենտրոնացած էի սխալ բաների վրա: Աստծո նպատակը մեզ համար, այսինքն՝ Նրա երկնային մրցանակը՝ *Հիսուս Քրիստոսին ճանաչելն* է (տե՛ս Փիլիպ. 3.10):

Դրանից մի քանի տարի անց Լիզան աղոթում էր գրեթե նույն կերպով՝ պատրաստվելով մի հավաքույթի: Այդ օրը նա և Տերը զրուցեցին: Նա ասաց.

«Լի՛զա, ես չեմ օգտագործում մարդկանց. Ես օծում եմ նրանց, Ես բժշկում եմ նրանց, Ես փոխում եմ նրանց, Ես վերափոխում եմ նրանց՝ ըստ Իմ պատկերի, բայց չեմ օգտագործում մարդկանց»: Նա շարունակեց. «Լի՛զա, քո ընկերներից որևէ մեկը երբևէ օգտագործե՞լ է քեզ»:

«Այո՛», - պատասխանեց նա:

«Ինչպե՞ս էիր զգում քեզ», - հարցրեց Տերը:

«Ասես ինձ դավաճանել էին»:

Տերը շարունակեց. «Շատ ծառայողներ աղաղակել են դեպի Ինձ, միայն որպեսզի գործածեմ իրենց. «Գործածի՛ր ինձ՝ բժշկելու համար, ազդեցություն թողնելու համար, փրկելու համար»: Ես պատասխանեցի նրանց՝ շարունակ հուսալով, որ նրանք կնվիրեին Ինձ իրենց սիրտը, սակայն նրանք չափազանց զբաղված էին ծառայությամբ՝ Ինձ նվիրվելու համար: Նրանք այդպես էլ չցանկացան սովորել Իմ ճանապարհները և արդյունքում օգտագործեցին Իմ պարգևը՝ իրենց թագավորությունը կառուցելու համար: Երբ նեղություններ եկան, նրանք սկսեցին աղաղակել դեպի Ինձ և վիրավորվեցին, երբ չպատասխանեցի նրանց աղոթքներին իրենց ուզած ժամանակ և իրենց ուզած կերպով: Նրանք օգտագործված զգացին իրենց և բարկացան Ինձ վրա: Այդպիսի ծառայողներն ընկան, քանի որ չէին ճանաչում Ինձ»:

Ի՞նչ կասեիք այն կնոջ մասին, որը միայն ձգտում է երեխաներ ունենալ իր ամուսնուց և հետաքրքրված չէ նրան անձնապես ճանաչելով: Պատկերացրեք, որ նա ընկնում է իր ամուսնու ոտքերի մոտ և բացականչում. «Ո՛վ իմ ամուսին, խնդրո՛ւմ եմ, գործածի՛ր ինձ, որպեսզի ես երեխաներ ունենամ քեզ համար: Խնդրո՛ւմ եմ, խնդրո՛ւմ եմ, տո՛ւր ինձ երեխաներ. եթե ոչ, ես կմահանամ»: Դա անհեթեթ է թվում, սակայն մենք վարվում ենք նույն կերպով, երբ աղաղակում ենք Աստծուն՝

խնդրելով, որ Նա «գործածի մեզ՝ մարդկանց փրկելու համար», այնինչ մենք ինքներս գրեթե չենք շփվում Նրա հետ: Երբ մենք մտերմանանք Աստծո հետ, երեխաները կծնվեն՝ նման այն բանին, ինչ տեղի է ունենում, երբ կինը մտերմորեն շփվում է իր ամուսնու հետ:

Այսպիսով, իսրայելցիների ձգտումները ճիշտ չէին: Նրանք ձգտում էին *արարված* բաներին, ոչ թե *Արարչին:* Եվ մենք գիտենք, թե ինչ տեղի ունեցավ: Փոխարենը անապատը դառնար նրանց պատրաստման վայրը՝ տալով նրանց իմաստություն և ուժ առջևում եղող մարտահրավերների համար, այն դարձավ ունայնության երկիր և, ի վերջո, կլանեց մի ամբողջ սերնդի: Ինչպիսի՜ վատնում՝ այն դեպքում, երբ նրանք կարող էին լինել Խոստման երկրում:

Ինչպիսի՜ դաս բոլորիս համար: Մենք պետք է պատրաստակամորեն ընդունենք մեր անապատային ընթացքը այս փառավոր մտերմության ճանապարհին:

5

ՆՈՐ ԳԻՆԻ

«Թող որ մենք լինենք անոթներ Քո նոր Գինու համար, որը նորոգում է ամեն ինչ»:

– Եփրեմ Ասորի

«Առաջինները մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում. հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաև մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր»:

– Եսայի 43.18,19

Մենք պետք է պատրաստակամորեն ընդունենք փոփոխությունները, որպեսզի ավելի մտերմորեն ճանաչենք Աստծուն: Եվ չկա ավելի լավ վայր՝ փոփոխություն վերապրելու համար, քան անապատը: Այս ամայի և լքված թվացող վայրում մենք ականատես կլինենք Նրա Հոգու թարմ շարժմանը:

Կա մի հարց, որն առաջանում է շատերի մոտ. *«Ինչո՞ւ են պահանջվում դժվարին կամ չոր ժամանակներ՝ փոփոխություն բերելու համար»:* Այս գլխում մենք կփորձենք պատասխանել այս հարցին:

Երբ ես անցա իմ դժվարին անապատային ընթացքը, որը տևեց տասնութ ամիս, ես նշանակվեցի երիտասարդական հովիվ Ֆլորիդայում գտնվող մի եկեղեցում (դա տարիներ առաջ էր): Այդ ժամանակ այն ամենաարագ աճող եկեղեցիներից մեկն էր ԱՄՆ-ում, և ես մի փոքր անվստահ էի, քանի որ չունեի երիտասարդական ծառայության հովվի փորձ: Այնուամենայնիվ, գիտեի, որ Աստված էր ուղարկել ինձ, և եթե ես ջանասիրաբար փնտրեի Նրան, ամեն ինչ լավ կլիներ:

Այդ երիտասարդական ծառայությունը կառուցված էր ավանդական ձևով, ըստ որի երիտասարդները ներգրավված էին բազմաթիվ հետաքրքիր զբաղմունքների մեջ: Ցավոք, այդ ծառայության մեջ ընդգրկված երիտասարդների մեծ մասը հոգևոր աճ չուներ: Նրանցից շատերն անկանոն կյանք էին վարում: Երբ ես ստանձնեցի ծառայությունը, զգացի, որ Սուրբ Հոգին ասաց. «Դու պետք է քարոզես ապաշխարության, սրբության, հնազանդության և Աստծո իշխանության մասին»: Ես սկսեցի քարոզել և սովորեցնել այդ մասին, և ժամանակի

ընթացքում այդ ծառայության մեջ շրջադարձային փոփոխություն տեղի ունեցավ:

Արդյունքները զարմանալի էին: Երիտասարդների թիվը եռապատկվեց մի քանի ամսում: Բազմաթիվ հանցագործ խմբերի անդամներ, այլ կրոնների հետևորդներ և Աստծուց հեռու գտնվող երիտասարդներ ընդունում էին Հիսուսին: Երիտասարդներից շատերը, որոնք նախկինում նահանջել էին, բռնկվեցին այդ կրակով: Բոլորս վայելում էինք Աստծո առատ ներկայությունը, և մեր սերը Նրա հանդեպ շարունակ ավելանում էր: Աստված մեծապես օրհնում էր մեզ և մեր աշխատանքը:

Ես նոր էի դուրս եկել իմ առաջին անապատից, որն անցել էի Դալլաս քաղաքում, և կարծում էի, որ իմ անապատային փորձառությունը մեկընդմիշտ ավարտված էր: Այժմ ես իմ կոչման մեջ էի և քարոզում էի Ավետարանը: Ես այսպես էի մտածում. քանի որ Հիսուսը միայն մեկ անգամ էր անցել անապատով, ես նույնպես պետք է լինեի անապատում միայն մեկ անգամ: Ես խիստ սխալվում էի: Պետք է է՛լ ավելի մաքրվեի և զորանայի և իմանայի ավելին անապատային ընթացքի մասին: Եվ հաջորդ անապատը, որը սպասում էր ինձ, այնպիսին էր, որի համեմատ նախորդը նման էր մանկական խաղի:

Սուրբ Հոգին բազմաթիվ նորարարական գաղափարներ էր տալիս մեր ծառայողական թիմին: Սա տեղի է ունենում, երբ Երկնքից նոր գինի է տրվում, երբ մենք «ուղարկվում ենք Աստծուց» անապատային պատրաստության շրջանից հետո: Նա սովորեցնում է մեզ արդյունավետ և պտղաբեր լինել, ինչպես որ սովորեցնում էր Մովսեսին, Դավթին, Հովսեփին և այլոց:

Մեր երիտասարդական ծառայությունն իսկապես գերբնականորեն աճում էր: Այնուամենայնիվ, թեև մենք հաջողության էինք հասել, ես սաստիկ բեռ էի զգում, որը վերաբերում էր ոչ միայն մեր տեղական խմբին: Ես զգում էի, որ մենք պետք է հասնեինք կենտրոնական Ֆլորիդայի բոլոր երիտասարդներին: Այնպես որ, աղոթքի ժամանակ մի միտք ծագեց. *«Ի՞նչ կլինի, եթե մենք հեռարձակենք երիտասարդական ծառայությունը հեռուստատեսությամբ»:* Այդ ժամանակ՝ 1980-ականների կեսերին, դա մարդկանց հասնելու լավագույն միջոցն էր: Չկար

ո՛չ ինտերնետ, ո՛չ սոցիալական ցանցեր, ո՛չ «YouTube», ո՛չ սմարթֆոններ՝ ոչինչ: Ես իմացա, որ մեր տեղական հեռուստակայաններից մեկը հասանելի էր չորս միլիոն պոտենցիալ հեռուստադիտողի: Զարմանալիորեն, այն ազատ եթերաժամ ուներ երեկոյան ժամը 10:00-ին: Ես գիտեի, որ դա լավ ժամ էր՝ երիտասարդներին «որսալու» համար:

Այդ մասին պատմեցի մեր ավագ հովվին, և նա ասաց, որ եկեղեցին չունի միջոցներ դրա համար: Ես հարցրի՝ կարո՞ղ եմ կոչ անել մեր երիտասարդներին գումար հանգանակել՝ հեռուստատեսային հաղորդում հովանավորելու համար: Նա համաձայնեց, և ես ներկայացրի երիտասարդներին տեսիլքն այն մասին, թե ինչպես մենք կարող էինք հասնել ամբողջ Կենտրոնական Ֆլորիդայի երիտասարդներին, որոնք կախված էին թմրադեղերից, ալկոհոլից, ինչպես նաև շատ այլ խնդիրներ ունեին: Երիտասարդներն ընդունեցին այդ տեսիլքը և խոստացան նվիրաբերել այն գումարներից, որոնք նրանք վաստակում էին մասնակի դրույքով աշխատանքների միջոցով՝ որպես թերթեր ցրողներ, արագ սննդի կետերում և խանութներում որպես վաճառողներ և այլն: Արդյունքում մենք հանգանակեցինք բավականաչափ գումար՝ խոստումների տեսքով, որպեսզի ամեն շաբաթ երեկոյան հեռարձակվեինք հեռուստատեսությամբ:

Մեր ավագ հովիվը զարմացավ՝ հասկանալով, որ դա Աստծո գործն էր: Դա նոր գինու հետևանքն էր. չլսված բան էր, որ որևէ եկեղեցու երիտասարդական ծառայությունը հեռարձակվեր հեռուստատեսությամբ, շաբաթ երեկոյան, ժամը 10:00-ին: Բայց ամեն ինչ ստացվեց: Շուտով մենք ունեցանք երիտասարդների առատ հունձք, որոնք չէին լսի Ավետարանը, եթե մենք ընդունած չլինեինք «նոր գինին»: Երիտասարդականի հովվի ծառայությունը թողնելուց շատ տարիներ անց ես դեռ լսում էի վկայություններ այն մասին, որ մարդկանց կյանքերը փոխվել էին այդ հեռուստատեսային հաղորդման միջոցով, որը մենք անվանեցինք «Կրակոտ երիտասարդություն»:

Փոփոխությունը լավ է

Շուտով կվերադառնանք երիտասարդական ծառայությանը: Բայց մինչ այդ խոսենք այն մասին, թե ինչ է նոր գինին և ինչու է այն կարևոր:

Այն փոփոխությունը, որին Աստված դրդում է մեզ, որպես կանոն, հեշտ չէ, սակայն միշտ դրական է և պտղաբեր: Հաճախ մենք հակառակվում ենք փոփոխությանը, քանի որ այն ազդում է մեր հարմարավետության վրա: Կարելի է ասել, որ մենք բաղկացած ենք մեր սովորություններից: Հենց որ դրանք արմատավորվում են մեզանում, փոփոխելն անհարմարություն է պատճառում մեզ: Բայց որպեսզի ավելի արդյունավետ կառուցենք Աստծո արքայությունը, մենք պետք է բաց լինենք փոփոխության համար:

Եթե մենք մեծացել ենք հավատացյալ ընտանիքում, մեր հավատքի գործելակերպը, սովորությունները և ավանդությունները ձևավորվել են վաղ տարիքից և խորապես արմատավորված են մեզանում: Իհարկե, բոլոր ավանդությունները չէ, որ սխալ են, բայց երբ մարդիկ ինչ-որ բան են անում՝ ելնելով միայն ավանդույթից, ոչ թե իրենց սրտից, նշանակում է՝ նրանց աստվածապաշտությունը բաղկացած է անկյանք գործերից:

Իրականում, այդ գործերը կարող են նույնիսկ վերածվել կրոնական ամրության: Այն մարդը, որը հետադիմել է՝ կրոնական դառնալով, ունի աստվածապաշտության կերպարանք և ընդունում է այն ամենը, ինչ Աստված *անում էր* անցյալում, սակայն հակառակվում է այն ամենին, ինչ Նա *անում է* ներկայում:

Հիսուսի օրերում ապրող փարիսեցիները և այլ կրոնական առաջնորդներ այսպիսին էին: Նրանք պարծենում էին՝ ասելով, որ իրենք Աբրահամի զավակներն էին, ուխտի որդիներն էին և Մովսեսի աշակերտներն էին: Նրանք ընդունում էին այն ամենը, ինչ Աստված արել էր, սակայն հակառակվում էին Աստծո Որդուն, Ով կանգնած էր իրենց միջև: Նրանք նախանձավոր էին իրենց ավանդությների և իրենց պաշտամունքի ձևի համար: Այդ պատճառով, նրանք հակառակվեցին, երբ Հիսուսը եկավ՝ մարտահրավեր նետելով բոլոր բնագավառներին, որոնցում իրենք հարմարավետություն և կայունություն ունեին: Հիսուսը հստակ ցույց տվեց, որ Աստված չէր հարմարվելու նրանց պայմաններին... նրա՛նք պետք է հարմարվեին Աստծո պայմաններին: Նրանք ընդդիմացան այդ փոփոխությանը և կառչած մնացին իրենց ավանդություններից:

Կրոնական մարդկանց մոտ էլիտար դիրքորոշում է ձևավորվում. «Աստված գործելու է միայն մեր միջոցով և միայն ըստ մեր չափանիշ-

ների»: Այդ դիրքորոշումն առաջացնում է նախապաշարմունք, և եթե դրան վերջ չտրվի, նաև՝ ատելություն և դավաճանություն: Սա տեղի ունեցավ Հիսուսի օրերում և տեղի է ունեցել եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում:

Որպեսզի փոխվենք և անցում կատարենք փառքի մի մակարդակից մյուսը, մենք պետք է ցանկանանք թողնել մեր հարմարավետությունը և գնալ այն ճանապարհով, որով Աստծո Հոգին առաջնորդում է մեզ: Հաճախ այդ ճանապարհը կանցկացնի մեզ անապատով, որում Աստված նոր կյանք կբխեցնի:

Այս հաջորդականությունը պարզորեն երևում է Հովհաննես Մկրտչի կյանքում: Նրա հայրը քահանա էր, և մի ժամանակ նույնիսկ քահանայապետ էր: Հովհաննեսը պետք է քահանա դառնար՝ իր հոր նման: Եվ քահանա դառնալու համար նա պետք է կրթություն ստանար Երուսաղեմում՝ Գամաղիել անունով հայտնի ուսուցչի մոտ: Բայց մեկ օր Տիրոջ Հոգին անապատ կանչեց նրան: Որքան ավելի էր Հովհաննեսն աղոթում, այնքան անապատ գնալու ներքին մղումն ուժգնանում էր: Համոզված եմ, որ նրա ներսում պայքար էր, և միգուցե նա մտածում էր.

«Իմ բոլոր ընկերները, որոնց հետ ես մեծացել եմ, «Աստվածաշնչյան դպրոց» են գնում: Նրանք վկայականներ կստանան և կդառնան ընդունված առաջնորդներ:

Նրանք կծեռնադրվեն և կկարողանան քարոզել երկրի բոլոր ժողովարաններում: Ի՞նչ կմտածեն նրանք իմ մասին: Ինչպե՞ս ես կկատարեմ իմ կոչումը, եթե չգնամ «Աստվածաշնչյան դպրոց»:

Ես գիտեմ, որ իմ կյանքում կանչ կա: Հայրս ասել է ինձ, որ մի հրեշտակապետ ազդարարել է իմ ծննդյան մասին և ասել, որ ես ծառայող կլինեմ: Բայց եթե ես անապատ գնամ, ոչ ոք այդպես էլ չի իմանա, թե ով եմ: Ինձ երբեք չեն հրավիրի քարոզելու»:

Այնուամենայնիվ, քանի որ անապատ գնալու կանչը վառվում էր իր ներսում, Հովհաննեսն անտեսեց իր միտքը ռմբակոծող հարցերը: Նա որոշեց հետևել Հոգուն՝ անապատ գնալով: Նրա մասին գրված է. «Եվ երեխան աճում և զորանում էր հոգով և անապատներում էր, մինչև այն օրը, որ նա երևաց Իսրայելին» (Ղուկաս 1.80): Հետաքրքրական է, որ Հովհաննեսը սկսեց իր անապատային պատրաստությունը,

երբ դեռ երեխա էր: Տարիներ շարունակ նա պատրաստվեց մի ծառայության համար, որը տևեց ընդամենը վեց ամիս: Այնուամենայնիվ,

Ինչպե՞ս անցնել անապատը

#5 Ապրե՛ք վրանում. տուն մի՛ կառուցեք

Երբեք մի՛ մոռացեք, որ անապատը ժամանակավոր է, և դուք պարզապես անցնում եք դրանով: Այնպես որ, մինչ անապատում եք, ապրեք վրանում, և ոչ մի դեպքում տուն մի՛ կառուցեք:

Թեև իսրայելցիները տասնյակ տարիներ անցկացրին՝ դեգերելով անապատում, Աստված չէր ծրագրել դա: Նա չպատվիրեց նրանց գտնել լավագույն վայրն անապատում, բնակվել այնտեղ և տներ կառուցել՝ համակերպվելով այն իրականության հետ, որը, թվում էր, չէր փոխվելու: Ո՛չ, նրանք ապրում էին վրաններում՝ մշտապես պատրաստ հավաքելու իրենց իրերը և տեղափոխվելու, երբ ամպը սկսում էր շարժվել: Անապատը մշտապես նախատեսված է եղել որպես ժամանակավոր բնակավայր, ոչ թե նպատակավայր: Աստված երբեք չասաց. «Անապատն այնքան էլ վատ տեղ չէ: Ո՞ւմ է պետք Խոստման երկիրը: Եկեք հիմքեր փորենք և ամուր տներ կառուցենք ձեզ և Ինձ համար»: Նույնիսկ Աստված բնակվեց վրանում անապատն անցնելու ամբողջ ընթացքում:

Ճամբարելը կարող է զվարճալի և նույնիսկ հաճելի լինել կարճ ժամանակով, բայց մեզնից շատերը գերադասում են հեռանալ բացօթյա տարածքներից և ապրել իսկական տան մեջ: Մի՛ ապակողմնորոշվեք և մի՛ կառուցեք ձեր հիմքն անապատում: Ամեն ժամանակ պատրաստ եղեք հավաքել ձեր իրերը, շարժվել առաջ և, ի վերջո, դնել ձեր հին վրանը պահեստանոցում:

Հիսուսն ասաց, որ նա «կնոջից ծնված» մեծագույն մարգարեն էր:

Սուրբ գիրքը լռում է այն մասին, թե որքան ժամանակ է Հովհաննեսն անցկացրել անապատում, քանի՛ անապատներ է նա անցել և ինչպիսի՛ ծանր պայմաններում է եղել: Ղուկաս 3.2-ում գրված է. «Աննայի և Կայիափայի քահանայապետության օրերում Աստծո Խոսքը եղավ Զաքարիայի որդի Հովհաննեսին անապատում»: Ուշագրավ է, որ մինչ Աննան և Կայիափան գործում էին Աստծուց օտարացած և կրոնական դարձած համակարգում, խստաշունչ և անջրդի վայրերում մի նոր անոթ էր ձևավորվում: Հենց այդտեղ էր հայտնվելու նոր գինին:

Աստված պատրաստեց Հովհաննեսին անապատում, ոչ թե իր օրերում ընդունված «Աստվածաշնչյան դպրոցում»: Ամբողջ Հրեաստանից և Երուսաղեմից հոծ բազմություններ էին գալիս՝ լսելու Տիրոջ Խոսքը, որ Հովհաննեսը խոսում էր անապատում: Հոգու թարմ քամին սկսել էր փչել. հոսում էր նոր գինին, բայց այն *անապատում* էր, ոչ թե *կրոնական հաստատություններում:* Այն մարդիկ, ովքեր հոգնել էին կրոնական կեղծավորությունից և ավանդույթներից, ովքեր սրտանց ցանկանում էին փոխվել, գնացին Հովհաննեսի մոտ՝ պատրաստվելով Աստծո Որդու հայտնվելուն:

Դրանից կարճ ժամանակ անց եկավ Հիսուսը, որպեսզի մկրտվեր Հովհաննեսի կողմից Հորդանան գետում: Թեև Հովհաննեսը զգում էր, որ անարժան էր Նրան մկրտելու համար, Հիսուսը պնդեց, որ նա աներ դա: Անհրաժեշտ էր, որ Հիսուսի ծառայությունը ծնունդ առներ այն բանից, ինչ Աստծո Հոգին անում էր երկրի վրա այդ ժամանակ: Դրանից հետո Հիսուսը լցվեց Հոգով և անմիջապես տարվեց անապատ:

Աստվածաշունչը պարզորեն նշում է, որ երբ Հիսուսը տարվեց անապատ, Նա *լցված* էր Հոգով, բայց քառասուն օր տևող փորձություններից հետո վերադարձավ անապատից Հոգու *զորությամբ:* Այժմ Նա սպառազինված էր, որպեսզի կատարեր այն ծառայությունը, որի համար եկել էր: Հովհաննես Մկրտչի ծառայությունից ընդամենը մի քանի ամիս անց անապատից ծագեց ևս մեկ նոր բան՝ Հիսուս Քրիստոսի ծառայությունը:

Նոր տիկեր

Կարճ ժամանակ անց, այն բանից հետո, երբ Հիսուսը սկսեց Իր ծառայությունը, մենք կարդում ենք. «Նրանք էլ ասացին Նրան. «Ինչո՞ւ Հովհաննեսի աշակերտները ստեպ ծոմ են պահում և աղոթքներ են անում, նույնպես էլ փարիսեցիները, իսկ Քո աշակերտները ուտում են և խմում»» (Ղուկաս 5.33): Առաջին հարցը, որը պետք է տանք, հետևյալն է. ովքե՞ր են «նրանք»: Մենք գտնում ենք պատասխանը Մատթեոսի Ավետարանում. «Այն ժամանակ Հովհաննեսի աշակերտները Նրա (Հիսուսի) մոտ եկան և ասացին...» (9.14): Տարիներ շարունակ ես կարծում էի, որ այս հարցը տվեցին փարիսեցիները, բայց երբ իմացա, որ այն տվողները Հովհաննես Մկրտչի աշակերտներն էին, ես տեսա այս հատվածը բոլորովին այլ լույսի ներքո: Նրանք բարկացած էին, քանի որ իրենք հաճախ էին ծոմ պահում ուտելիքից և ժամեր շարունակ աղոթում էին, իսկ Հիսուսի աշակերտներն այդպես չէին վարվում: Հովհաննեսի հետևորդները մեծ զոհեր էին անում, սակայն ամբողջ ուշադրությունն ուղղված էր Հիսուսի աշակերտներին:

Այն միջոցներից մեկը, որոնցով Սուրբ Հոգին շարժվում էր Հովհաննես Մկրտչի օրերում, տևական ծոմերն էին: Այնուամենայնիվ, Հովհաննեսի աշակերտներն անցում չկատարեցին Հովհաննեսի ծառայության ձևից դեպի այն, ինչ Աստծո Հոգին անում է *հիմա:* Նրանք համոզված էին, որ այդ ժամանակվա հոգևոր պտուղն առաջացել էր իրենց ծառայության և երկրպագության արդյունքում: Նրանք մեծ գին էին վճարել՝ Հովհաննես Մկրտչին հետևելու համար: Նրանք թողել էին իրենց ընտանիքները, ապրում էին անապատում և սնվում էին միջատներով, իսկ այժմ նրանց առաջնորդը բանտում էր: Նոր Ծառայողի աշակերտները չէին «խաղում իրենց կանոններով»: Հովհաննեսի թիմը վիրավորված էր և կանգնած էր կրոնական դառնալու վտանգի առջև:

Հիշեք՝ կրոնական հոգիները մշտապես հարում են այն ամենին, ինչ Աստված *արել է* անցյալում, սակայն ընդդիմանում են այն ամենին, ինչ Նա *անում է* հիմա: Հնարավոր է, որ Հովհաննեսի հետևորդները սկսել էին ավելի շատ շեշտադրել իրենց առաջնորդին հավատարիմ լինելը և նրա հետևորդներին հատուկ վարք ունենալը, քան այն, ինչ Աստված ասում և անում էր *հիմա:* Նրանք այլևս կենտրոնացած չէին

Աստծո սրտի վրա: Այժմ նրանք կենտրոնացած էին այն *ձևի* վրա, որը մի ժամանակ կարող էր առաջնորդել դեպի Աստծո սիրտը:

Հպարտությունը և վիրավորանքը գլուխ բարձրացրին: Հովհաննեսի հետ եղող մարդիկ ներդրել էին այդ ծառայության մեջ իրենց ժամանակը և, հավանաբար, ֆինանսական միջոցները: Այժմ այն ամենը, ինչ նրանք արել էին, ինչին սատարում էին և ինչ ձեռք էին բերել, վտանգված էր: Այնպես որ, նրանք մեկուսացան և ընդդիմացան փոփոխությանը, թեև նրանց առաջնորդը Հիսուսի մասին հայտարարեց. «Նրան պետք է աճել, և ինձ՝ փոքրանալ» (Հովհաննես 3.30):

Ահա թե ինչ պատասխանեց Հիսուսը նրանց. «Նա էլ ասաց նրանց. «Մի՞թե կարող եք հարսանիքի տղաներին, քանի որ փեսան նրանց հետ է, ծոմ պահել տալ» (Ղուկաս 5.34): Նա բացահայտեց նրանց կրոնական վարքը՝ ասելով. «Ինչո՞ւ նրանք պետք է ծոմեր պահեն, եթե Աստծո Որդին նրանց հետ է: Եթե նրանք ինչ-որ բան ուզեն Աստծուց, կարող են գալ Ինձ մոտ» (շրջասություն): Կրոնական մտածելակերպը դրդել էր նրանց հավատալ, որ իրենք պետք է վաստակեին Աստծո բարեհաճությունը ծոմերով և այլ կրոնական գործերով: Ծոմը նրանց համար Աստծո մոտ մուտք գործելու միջոց էր, որը, իրենց կարծիքով, բարձրացնում էր իրենց այլ մարդկանցից, որոնք ծոմ չէին պահում (և չէին օգտագործում իրենց մյուս մեթոդները): Այդ կերպով հպարտությունը թափանցեց նրանց կյանք: Նրանց ծառայության ձևը դարձավ ավելի կարևոր, քան դրա սկզբնական պտուղը:

Թեև կերակուրից ծոմ վերցնելու մեջ օգուտ կա, դրա նպատակն Աստծուն շահարկելը չէ, այլ՝ Նրա ձայնն ավելի պարզորեն լսելը: Ուրեմն, ինչո՞ւ աշակերտները պետք է ծոմ պահեին՝ Աստծո ձայնը լսելու համար, երբ Նա իրենց կողքին էր: Կրկին կարդացեք Ղուկաս 5.34,35-ը. «Մի՞թե կարող եք հարսանիքի տղաներին, քանի որ փեսան նրանց հետ է, ծոմ պահել տալ: Բայց օրեր կգան, երբ որ փեսան վեր կառնվի նրանցից. ապա այն օրերում ծոմ կպահեն»:

Նա չասաց, որ այդ օրերում նրանք *միգուցե* ծոմ պահեն: Նա ասաց, որ նրանք *անպայման* ծոմ կպահեն: Այդ մարդիկ խոսում էին միայն կերակուրից ծոմ վերցնելու մասին, իսկ Հիսուսն այլ ծոմ նկատի ուներ: Ուշադրություն դարձրեք, որ այդ ծոմը լինելու է այն օրերին, երբ Փե-

սան վեր կառնվի նրանցից: Դա ծոմ է Նրա հայտնված ներկայությունից, ոչ թե պարզապես ուտելիքից: Մենք գիտենք այս մասին, քանի որ Նա բացատրեց սա մի առակով: Հիշեք, որ անապատը կարելի է սահմանել նաև որպես Աստծո հայտնված ներկայության բացակայություն:

Կարդանք այն առակը, որը Նա օգտագործեց՝ Իր ասածը բացատրելու համար.

> «Եվ ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի: Ապա թե ոչ, նոր գինին տիկերը կպատռի, ինքն էլ կթափվի, տիկերն էլ կկորչեն» (Ղուկաս 5.37):

Աստվածաշնչում գինին Աստծո ներկայության խորհրդանիշն է: Պողոսը գրում է Եփեսացիների 5.18-ում. «Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, այլ՝ լցվե՛ք Հոգով»:

Մենք պետք է լցվենք գինով՝ Աստծո ներկայությամբ: Նոր գինին Նրա Հոգու նոր շարժումն է:

Թույլ տվեք ևս մեկ անգամ կարճ անդրադառնալ այս կարևոր հարցին: Հիշո՞ւմ եք, թե որքան հրաշալի էր, երբ դուք նոր էիք լցվել Հոգով: Աստծո ներկայությունը քաղցր և զորավոր էր: Ամեն անգամ, երբ աղոթում էիք, Նրա ներկայությունն անմիջապես հայտնվում էր, և դուք զգում էիք այն ամբողջ օրվա ընթացքում: Երբեմն եկեղեցում դուք պարզապես նստած լաց էիք լինում, քանի որ Նա այնքա՜ն մոտ էր ձեզ:

Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց սկսում եք նկատել, որ այդքան հեշտորեն չեք զգում Նրա ներկայությունը: Դուք շարունակում եք աղոթել՝ ինչպես միշտ, սակայն ձեզ մոտ հարց է առաջանում. *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»:* Դուք անապատո՛ւմ եք:

Այդ անապատը կամ ծոմն Աստծո ներկայությունից հատուկ պատճառ ունի: Աստված պատրաստում է ձեզ՝ նոր տիկ լինելու համար: Դուք չեք կարող լցնել նոր գինին՝ Աստծո Հոգու նոր շարժումը, հին տիկերի մեջ:

Հիսուսի օրերում օգտագործվող գինու տիկերը պատրաստվում էին ոչխարի կաշվից: Երբ գինին լցվում էր առաջին անգամ, տիկերը ճկուն և առաձգական էին: Դրանք հեշտորեն ձգվում էին և չէին վնասվում,

երբ գինին տարածվում էր: Սակայն տարիների ընթացքում Մերձավոր Արևելքի օդը չորացնում էր գինու տիկը՝ դարձնելով կարծր ու հեշտությամբ վնասվող: Եթե դրա միջի գինին թափվեր և նոր գինի լցվեր, այդ տիկը չէր դիմանա ո՛չ նոր գինու ծանրությանը, ո՛չ էլ խմորմանը, քանի որ այն հեշտորեն կճաքեր կամ կպատռվեր: Այդ խնդիրը լուծելու համար հին տիկերը մի քանի օրով ջրի մեջ էին դնում, իսկ հետո դրանց վրա ձիթապտղի յուղ էին քսում: Դա վերականգնում էր տիկի ճկունությունը և առաձգականությունը:

Սա պատկերում է այն, ինչ տեղի է ունենում մեզ հետ, քանի որ մենք հոգևոր նոր գինու տիկ ենք: Մենք կանչված ենք՝ լինելու Աստծո ներկայությունը կրողները: Այն մթնոլորտը, որում ապրում ենք, կարող է թուլացնել մեր զգայունությունն Աստծո ճանապարհների հանդեպ: Մենք երկնքում չենք. մենք ապրում ենք քայքայման ենթակա միջավայրում՝ այս աշխարհում: Այնպես որ, մեր միտքը պետք է նորոգվի: Որպեսզի մեր տիկերն առաձգական լինեն, որպեսզի դրանք մշտապես պատրաստ լինեն նոր գինու համար, մենք պետք է ընկղմվենք Աստծո Խոսքի մեջ: Եփեսացիների 5.26-ում Պողոսը գրում է. «Որ նրան (եկեղեցուն) սրբացնի (Հիսուսը)՝ մաքրելով ջրի ավազանով՝ Խոսքով»: Տիկի վրա ձիթապատղի յուղ քսելը կարելի է համեմատել աղոթքի մեջ Աստծուն փնտրելու հետ: Երբ մենք ժամանակ ենք անցկացնում Աստծո հետ՝ Նրա Խոսքի և աղոթքի մեջ, մեր միտքը նորոգվում է, և մեր ճանապարհներն ու վարքը դադարում են կարծր լինել:

Այնուամենայնիվ, հին տիկը նորացնելու համար նախ պետք է թափել հին գինին: Այսինքն, տիկը մնալու է առանց գինու՝ առանց Աստծո հայտնված ներկայության: Դա կարելի է անվանել ծոմ Աստծո հայտնված ներկայությունից, կամ, ինչպես մենք շարունակաբար ասում ենք, չորության ժամանակահատված: Ձեր կյանքի նման փուլերում դուք *փոփոխության* եք պատրաստվում:

Ինչո՞ւ է Աստված հեռացնում Իր շոշափելի ներկայությունը: Որպեսզի դուք հուսալքվե՞ք: Ո՛չ, թեև դա տեղի է ունենալու: Թե՞, որպեսզի «դարակում դնի» ձեզ, մինչև կրկին պետք գաք Իրեն: Ո՛չ: Նա հեռացնում է Իր ներկայությունը, որպեսզի դրդի ձեզ է՛լ ավելի ջանասիրաբար փնտրեք Իրեն: Աստծուն փնտրելը կրկին ճկուն և առաձգական

է դարձնում: Կարծր և ոչ ճկուն մարդիկ նրանք են, ովքեր դադարել են փնտրել Աստծուն: Նրանք կարծրանում են իրենց գործելակերպի մեջ և այն բանաձևերի մեջ, որոնք կազմել են նախկինում ունեցած իրական վերապրումներից:

Հովհաննես Մկրտչի հետևորդները հայտնվել էին նման վիճակում: Նրանք միացել էին Հովհաննեսին՝ տեսնելով, որ Տերը զորավոր ձևով գործում էր նրա միջոցով: Այնուամենայնիվ, փոխարենը շարունակեին գնալ դեպի երկնային մրցանակը, որն Աստծուն մտերմորեն ճանաչելն է, նրանք կարծրացել էին իրենց համոզմունքների և գործելակերպի մեջ:

Աստծո ամեն մի շարժման մեջ ծնվում է թարմ ուսմունք: Ուսմունքները և առողջ վարդապետությունները միջոցներ են, որոնք մոտեցնում են մեզ Աստծո սրտին: Այնուամենայնիվ, եթե մենք կենտրոնանանք առանձին ուսմունքների կամ վարդապետությունների վրա, դրանք, ի վերջո, կտանեն կրոնական գերության, օրինապաշտության կամ հերձվածության, իսկ, միգուցե, երեքն էլ միաժամանակ:

Դուք չեք կարող ճանաչել Աստծուն՝ հետևելով պաշտամունքի որևէ կարծրացած ձևի, այնինչ շատ քրիստոնյաներ անգիտակցաբար այդպես են վարվում: Նրանք հաստատում են իրենց համար պաշտամունքի ձևեր և մեթոդներ: Եվ երբ նրանց կյանքում վերջապես օրինակելի քրիստոնեական վարք է ձևավորվում, նրանք դադարում են *փնտրել* Աստծուն և սկսում են ապրել համաձայն այն սովորույթների և ավանդույթների, որոնք ձևավորել են: Այնուամենայնիվ, նրանք անբացատրելի դատարկություն են զգում իրենց ներսում, թեև համարում են, որ ապրում են ըստ ամբողջական Ավետարանի:

Երեմիա 29.12,13-ում գրված է.

> «Եվ դուք կկանչեք Ինձ և կգնաք ու աղոթք կանեք դեպի Ինձ,
> և Ես կլսեմ ձեզ: Եվ դուք Ինձ կորոնեք և կգտնեք, որովհետև
> Ինձ կխնդրեք ձեր ամբողջ սրտով»:

Աղոթքն ինքնին բավական չէ՝ Աստծուն գտնելու համար: Ովքեր հետևում են կրոնական սովորույթների, ճշտապահորեն աղոթում են, սա-

կայն Աստված ասում է, որ ձեր աղոթքներում դուք պետք է ջանասիրաբար փնտրեք *Իրեն:* Այս խոսքում Նա հստակ ցույց է տալիս, որ աղոթքի մեջ պետք է որոնում լինի, իսկ դրա համար պահանջվում է ավելին, քան պարզապես սովորույթին հետևելը: Դրա համար անհրաժեշտ է ջերմեռանդ ցանկություն և Նրա սիրտը ճանաչելու ձգտում: Ահա թե ինչու է Եբրայեցիների 11.6-ում Աստված ասում. «Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե Նա կա, և թե Իրեն խնդրողներին վարձահատույց կլինի»:

Այժմ կրկին կարդանք Հիսուսի խոսքերը.

> «Եվ ոչ ոք նոր գինին հին տիկերի մեջ չի լցնի: Ապա թե ոչ, նոր գինին տիկերը կպատռի, ինքն էլ կթափվի, տիկերն էլ կկորչեն: Այլ նոր գինին նոր տիկերի մեջ պետք է լցվի, և երկուսն էլ կպահվեն: Եվ ոչ ոք չկա, որ հինը խմի, շուտով նորը կամենա, որովհետև ասում է, թե «Հինն ավելի քաղցր է»» (Ղուկաս 5.37-39):

Նա, ով սովորել է հին գինուն, «շուտով» չի ցանկանա նորը: Բանալի բառն այս պնդման մեջ «շուտով» բառն է, քանի որ մենք մարդիկ ենք՝ մեր սովորություններով և գործելակերպերով: Աստված պետք է հեռացնի մեր հարմարավետության գոտիները՝ դատարկելով *հին գինին* և թույլ տալով, որ մենք պատրաստման անապատային ընթացք անցնենք, որպեսզի ծարավ ունենանք *նոր գինու* համար: Երբ դուք ծարավ լինեք և խմելու ոչինչ չունենաք, դուք չեք տրտնջա. «Ես չեմ ուզում այս նոր գինին: Ես ուզում եմ հինը»: Եթե փափագում եք Աստծո ներկայությանը և զորությանը, դուք կընդունեք Աստծո Հոգու նոր շարժումը ձեր կյանքում: Դուք կլինեք Դավթի նման, ով իր անապատային ընթացքի ժամանակ ասաց.

> «Ո՛վ Աստված, Դո՛ւ ես իմ Աստվածը.
> Առավոտյան Քեզ եմ ման գալիս:
> Հոգիս ծարավ է Քեզ համար.
> Մարմինս Քեզ է ցանկանում ցամաք և ծարավ երկրում,
> որտեղ ջուր չկա:

Այնպես սրբության տեղում նայեցի Քեզ,
որ Քո զորությունն ու փառքը տեսնեմ» (Սաղմոս 63.1,2):

Դավիթը ծարավ էր Աստծո զորությանը և ներկայությանը: Այդ պատճառով, երբ մտավ իր կոչման մեջ, նա ճկուն էր Տիրոջ ցանկությունների համար՝ ի տարբերություն Սավուղ թագավորի, ով ամեն ինչ անում էր իր ուզած ձևով, ոչ թե՝ Աստծո:

Եվս մեկ անապատ

Ինչպես ավելի վաղ պատմում էի այս գլխում, երիտասարդական հովվի ծառայությունն իմ առաջին ուսուցչական ծառայությունն էր: Հեռուստատեսությամբ հեռարձակվող հավաքույթները մեծ հաջողություն ունեցան: Մենք նույնպես հեռարձակում էինք կարճ ավետարանչական հոլովակներ մի ռադիոկայանով, որը երկրորդ ամենահայտնի կայանն էր մեր տարածաշրջանում: Ամեն ինչ հրաշալի էր:

Այնուամենայնիվ, մեկ օր, երբ աղոթում էի, Աստծո Հոգին ասաց, որ մեր կյանքում փոփոխություն է սպասվում. «Քեզ կհեռացնեն երիտասարդական ծառայության հովվի պաշտոնից, - ասաց Նա, - և Ես կուղարկեմ քեզ եկեղեցիներ և համաժողովների Ամերիկայի բոլոր քաղաքներում՝ արևելյան ափից մինչև արևմտյան ափը և Կանադայի սահմանից մինչև Մեքսիկայի սահմանը, դեպի Ալյասկա և Հավայան կղզիներ...»:

Ես պատմեցի Լիզային այն, ինչ ասաց Աստծո Հոգին, և երկուսով սկսեցինք մտորել դրա շուրջ: Մենք չպատմեցինք այդ մասին ոչ ոքի՝ բացի մի ընկերոջից, որը հովիվ էր մեկ այլ նահանգում: Աստված ասաց, որ Ինքն էր անելու դա, և ես գիտեի, որ եթե իսկապես Նա էր ասել դա, կարիք չկար, որ օգնեի Նրան՝ դա իրագործելու համար:

Այնուամենայնիվ, անցավ ավելի քան մեկ տարի, բայց ոչինչ տեղի չունեցավ: Այդ սպասման ընթացքում ես ավելի ու ավելի մեծ դժվարությամբ էի մուտք գործում Աստծո ներկայության մեջ, մինչև որ դա սկսեց անհնարին թվալ: Ես աղոթում էի ավելի շատ, քան երբևէ աղոթել էի, սակայն ամեն ինչ անարդյունք էր թվում: Բացի այդ՝ իմ տեսիլքը երիտասարդական ծառայության համար մարում էր (հին գինին թափ-

վում էր): Որքան ավելի էի աղոթում, այնքան այն թուլանում էր: Արտաքուստ ոչինչ չէր փոխվում, բայց ներքուստ իմ ձգտումը նվազում էր:

Ես ժամեր շարունակ աղոթում էի մեր երիտասարդական ծառայություններից առաջ, և մի քանի անգամ նույնիսկ աղաչում էի Աստծուն, որ ուղարկեր մեկ այլ մարդու՝ քարոզելու համար: Ես գնում էի ծառայության դատարկության զգացումով, բայց Աստծո ներկայությունը ծածկոցի պես իջնում էր ինձ վրա՝ մինչ ես ծառայում էի: Երբ ավարտում էի և տան ճանապարհին էի, Նրա ներկայությունը կրկին վերցվում էր ևս մեկ շաբաթով:

Ի լրումն այդ ամենի, մեր կյանքում սկսվել էին արտաքին և ներքին նեղություններ, ինչպիսիք երբեք չէինք ունեցել: Ես հարցնում էի ինձ՝ արդյո՞ք խնդիրն իմ մեջ է: Խոստովանում էի ամեն մի մեղք, որը, իմ հիշելով, գործել էի, բայց չէի զգում ոչ մի թեթևություն իմ չորությունից:

Մեկ անգամ, երբ փորձում էի հասկանալ, թե ինչ մեղք էի գործել, Տերն ասաց. «Դու անապատում չես այն պատճառով, որ մեղանչել ես: Ես պատրաստում եմ քեզ գալիք փոփոխության համար»:

Նա ձևավորում էր ինձանում այն բնավորությունը, որն անհրաժեշտ էր, որպեսզի ընդունեի Նրա կանչն իմ ծառայության հաջորդ փուլի համար: Կարդացե՛ք Եսայի 43.18,19-ը.

> «Առաջիններին մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտաբերեք: Ահա Ես նոր բան եմ անում. հիմա կհայտնվի. մի՞թե չեք իմանա: Նաև մի ճանապարհ եմ շինելու անապատում, ամայի տեղերում էլ՝ գետեր»:

Ավելի ուշ այս գրքում կպատմեմ, թե ինչպես ժամանակին Տերը հրաշքով հայտնեց այդ «գալիք փոփոխության» մանրամասները: Ամբողջ այդ ընթացքում՝ իմ անապատի ամենածանր օրերին, Տերը պատրաստվում էր ծնունդ տալ մեր ծառայությանը, որն ազդեցություն էր թողնելու Ամերիկայի, իսկ հետագայում՝ բազմաթիվ ազգերի վրա:

Իմ ընկե՛ր, Աստված կդատարկի ձեր *հին* գինին, որպեսզի, երբ գա *նորը* (իսկ *նոր* գինու հետ փորձություններ են գալիս), դուք չցանկանաք վերադառնալ *հնին:*

6

ԵՐԿՆԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԸ

«Որոշ մարդիկ վերադառնում են իրենց անցյալը և քրքրում են բոլոր նեղությունները, որոնք երբևէ ունեցել են, իսկ հետո նայում են ապագային և ակնկալում են, որ ունենալու են ավելի շատ նեղություններ, և այդպես էլ օրորվելով ու տատանվելով ապրում են իրենց ամբողջ կյանքը»:

– Դ. Լ. Մուդի

«Ո՛չ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ես չեմ հասել, բայց կենտրոնանում եմ մեկ բանի վրա. մոռանալով անցյալը և ակնկալելով այն, ինչ առջևում է՝ ես ջանասիրաբար ձգտում եմ հասնել այս ընթացքի ավարտին և ստանալ այն երկնային մրցանակը, որի համար Աստված՝ Հիսուս Քրիստոսով, կանչում է մեզ»:

– Փիլիպեցիների 3.13,14, (NLT)

Պողոս առաքյալը գրեց Նոր կտակարանի նամակների երկու երրորդը և հիմնադրեց բազմաթիվ եկեղեցիներ: Նրա ծառայությունը տարածվեց աշխարհով մեկ, սակայն կյանքի վերջում նա ասաց. *«Ես դեռ չեմ հասել»:* Նա գոհ չէր, և չէր էլ լինի, մինչև որ չավարտեր իր ընթացքը և չստանար երկնային մրցանակը:

Որպեսզի ավարտենք մեր ընթացքը և ստանանք մեր մրցանակը, առաջինը, որ պետք է վստահ լինենք մեր սրտում այն է, որ մենք դեռ չենք հասել դրան:

Մենք կատարյալ չենք դարձել. մենք պետք է շարունակենք փոխվել ու աճել:

Մովսեսը նույնպես ուշագրավ կոչում ուներ. նա առաջնորդեց երեք միլիոն մարդուց բաղկացած մի ամբողջ ազգի և եզակի մասնակցություն ունեցավ Հին կտակարանի մի շարք նշանների և հրաշքների: Այնուամենայնիվ, Աստված ասաց, որ Մովսեսն ամենահեզ (ամենաուսանելի) մարդն էր ամբողջ երկրի վրա: Նա չէր համարում, որ ինքը հասել էր, այլ ջանասիրաբար ձգտում էր ավարտել իր ընթացքը և ստանալ երկնային մրցանակը: Որպեսզի փոխվենք և աճ ունենանք, մենք պետք է ուսանելի լինենք:

Երկրորդը՝ որպեսզի ավարտենք մեր ընթացքն Աստծո համար, մենք պետք է մոռանանք *«ետևի բաները» (հաղթանակները և պարտությունները):* Կրկին, Եսայի 43.18,19-ում Աստված ասում է.

«Բայց մոռացե՛ք այդ ամենը.

Դա ոչինչ է՝ այն բանի համեմատ, ինչ Ես պատրաստվում եմ անել:

Որովհետև Ես մի նոր բան եմ անելու:
Տեսե՛ք, Ես արդեն սկսել եմ: Մի՞թե չեք տեսնում դա:
Ես ճանապարհ կպատրաստեմ անապատով:
Ես գետեր կստեղծեմ չոր և ամայի վայրում» (NLT):

Եթե մենք շարունակ մտածենք անցյալի ձախողումների, մերժվածության և մեղքերի մասին, դա թույլ չի տա մեզ առաջ գնալ Քրիստոսի մեջ: Այնուամենայնիվ, մեր անցյալի *հաղթանակները* նույնպես կարող են ետ պահել մեզ: Եթե մենք անձնապաստան և ինքնավստահ դառնանք և թույլ տանք, որ անցյալի ձեռքբերումները դառնան մեր հենարանը, մենք բաց կթողնենք այն, ինչ Աստված պատրաստել է ներկայի համար: Աստված հենց սա է ասում Եսայի 43-րդ գլխում: Այն, ինչ եղել է անցյալում, նույնպես Նրանից էր, բայց որպեսզի առաջ շարժվենք և իրագործենք Նրա ծրագրերը, մենք պետք է պատրաստ լինենք հրաժարվել այն բանից, թե ինչպես էր Աստված գործում մեր միջոցով անցյալում: Հակառակ դեպքում, մեզ վտանգ է սպառնում. մենք կարող ենք հին տիկ դառնալ:

Պողոսը նույնպես շեշտեց այս ճշմարտությունը:

«Երբ որ երեխա էի, երեխայի պես էի խոսում, երեխայի պես էի մտածում, երեխայի պես էի համարում: Բայց երբ որ մարդ եղա, այն երեխայության բաները խափանեցի: Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, բայց այն ժամանակ՝ դեմ առ դեմ: Հիմա փոքրիշատե եմ տեղյակ, բայց այն ժամանակ այնպես կգիտենամ, ինչպես գիտեցված եմ» (Ա Կորնթացիների 13.11,12):

Երեխան սխալ չէ. նա պարզապես հասուն չէ: Երբ ես հինգ տարեկան էի, իմ ամբողջ աշխարհը բաղկացած էր խաղալիք մեքենաներից և կոնստրուկտորներից: Այբուբենն անգիր կրկնելը մեծ ձեռքբերում էր համարվում: Ես նայում էի կյանքին գունավոր ակնոցով, քանի որ այնքան հասուն չէի, որ կարողանայի ընկալել դրա ավելի բարդ և ընդարձակ ոլորտները:

Երբ տասնութ տարեկան դարձա, խաղալիք մեքենաները և կոնստրուկտորներն անցյալում էին: Այժմ, տարիներ շարունակ հասունանալուց հետո, ես այլևս չէի նայում կյանքին գունավոր ակնոցով: Իմ հասկացողության մակարդակը և կարողություններն ավելացել էին: Երբ տասնութ տարեկանը վարվում է հինգ տարեկանի պես, դա նորմալ չէ: Մեծանալով՝ մենք մոռանում ենք նախկին մանկական վարքը և պատկերացումները, որոնք այլևս օգտակար և գործածական չեն՝

Ինչպե՞ս անցնել անապատը

6 Ինչ պետք չէ անել

Հիմնվելով այն բանի վրա, ինչ Աստվածաշունչը պատմում է մեզ իսրայելցիների տխրալի փորձառության մասին՝ կան բաներ, որոնք մենք չպետք է անենք անապատում՝ այդ անջրդի վայրում, որտեղ մենք ժամանակավորապես ենք գտնվում: Իրականում, այդ անընդունելի արարքների կամ մեղքերի ցուցակը վերաբերում է քրիստոնեական կյանքի ամեն փուլին, սակայն դրանց գայթակղությունը, հավանաբար, ավելի մեծ է, երբ մենք պայքարում ենք անապատում: Ահա նրանց գործած ամենածանր արարքների առնվազն մասնակի ցուցակը.

1. Չար բաներ ցանկանալը: Երբեմն, երբ զրկանքներ ենք կրում, մենք կարող ենք մտածել, որ սխալ արարքները կօգնեն, որ ավելի լավ և երջանիկ զգանք մեզ:
2. Կուռքերի ձգտելը: Սա նշանակում է՝ ձգտել մեր ցանկություններին, երբ մենք գիտենք, որ դրանք հակառակ են Աստծո Խոսքին, նաև՝ երբ նվիրում ենք մեր սերն ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի ավելի, քան Հիսուսին:
3. Սեռական գայթակղությանը և անբարոյությանը տեղի տալը:
4. Տիրոջը փորձելը:

մեր կարիքները հոգալու և մեր ցանկություններն իրագործելու համար:

Նմանապես, աճելով աստվածային իրողությունների մեջ և անցնելով կյանքի փուլերով՝ մենք պետք է թողնենք նախկին ոչ հասուն մտածելակերպը և վարքը: Պողոսն ասում է, որ ներկայումս մենք աղոտ տեսնում ենք Աստծո ճանապարհները և փառքը, բայց որքան ավելի ձգտենք երկնային մրցանակին, այնքան ավելի հստակ կսկսենք տեսնել, մինչև այն պահը, երբ կտեսնենք Աստծուն երես առ երես, այսինքն՝

5. Տրտնջալը, տրտնջալը, տրտնջալը:

Կորնթոսի հավատացյալներին ուղղված իր առաջին նամակում Պողոսը նշում է, որ մենք կարող ենք շատ բան սովորել կյանքի մասին անապատում գտնվող մեր նախնիներից:

> «Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, ես չեմ ուզում, որ մոռանաք մեր նախնիների մասին, որոնք անապատում էին վաղ անցյալում... Աստված չհավանեց նրանցից շատերին, և նրանց մարմինները ցրվեցին անապատում: Այս բաները տեղի ունեցան՝ որպես զգուշացում մեզ, որպեսզի մենք չար բաներ չցանկանանք, ինչպես որ նրանք ցանկացան» (Ա Կորնթացիների 10.1,5,6, NLT):

Իսրայելցիները թանկ վճարեցին. այնպես որ, եկեք սովորենք նրանց օրինակից:

Իմ ընկե՛ր, անապատում դուք կարող եք գտնել Աստծո ճանապարհները և նույնիսկ՝ Նրա սիրտը, բայց պետք է հաստատակամ լինեք ձեր սրտում և վստահաբար ասեք. «Աստվա՛ծ, ես հավատում եմ, որ Դու բարի ես, և որ Դու սիրում ես ինձ, նույնիսկ երբ չեմ զգում Քո բարությունը և սերը»:

կճանաչենք Նրան այնպես, ինչպես Նա է ճանաչում մեզ:

Ո՞րն է այն երկնային մրցանակը, որի մասին խոսում է Պողոսը: Նա պատասխանեց այս հարցին նախորդ խոսքերից մեկում: Փիլիպեցիների 3.10-ում գրված է. «Որ ճանաչեմ Նրան և Նրա հարության զորությունը և Նրա չարչարանքին մասնակից լինելը՝ Նրա մահվանը կերպարանակից լինելով»: Աստծո երկնային մրցանակը՝ Նրա Որդի Հիսուս Քրիստոսի պատկերին կերպարանվելն է և Նրան ճանաչելը այնպես, ինչպես որ Նա է ճանաչում մեզ: Քանի դեռ չենք հասել այս նպատակին, չպետք է բավարարվենք: Այնպես որ, մենք երբեք չպետք է դադարենք փնտրել Աստծո սիրտը:

Երրորդը՝ որպեսզի հասնենք երկնային մրցանակին, մենք պետք է «հետևենք նպատակին (կամ՝ ջանասիրաբար ձգտենք նպատակին)»: Սա նշանակում է, որ մենք բախվելու ենք հակառակության կամ ճնշման: Գոյություն ունի ընդդիմություն Տիրոջը ճանաչելուն:

Սատանայի համար մեծագույն սպառնալիքը Հիսուս Քրիստոսի պատկերով կերպարանված մարդն է, և խավարի ուժերը պայքարում են դրա դեմ ավելի շատ, քան ցանկացած այլ բանի: Երբ հավատացյալները կերպարանվում են Քրիստոսի պատկերով, նրանք այլևս չեն ապրում իրենց համար, այլ՝ Նրա համար, Ով ապրում է իրենց մեջ: Այդ հավատացյալները սկսում են արտահայտել իրենց կյանքը Քրիստոսում ավելի առատ և ազդեցիկ կերպով: Ահա թե ինչու Պողոսն ասաց, որ Նրան ճանաչելու համար մենք պետք է լինենք Նրա չարչարանքների մասնակիցը: Այն մարմնի չարչարանքը, որը նա նկատի ունի, մարդկային «ես»-ի մահն է, որին կհետևի հարության կյանքը: Պետրոսը գրում է.

> «Արդ Քրիստոս, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց: Որ այլևս ոչ թե մարդկանց ցանկությունների պես, այլ Աստծո կամքի պես ապրեք մարմնում մնացած ժամանակը» (Ա Պետրոս 4.1,2):

Եթե մարմնով չարչարվենք, մենք այլևս չենք առաջնորդվի մեր ճանապարհներով և կենտրոնացած չենք լինի դրանց վրա, այսինքն՝ չենք ձգտի այս աշխարհի մեղսալի նպատակներին: Մեզանում կգործի

Քրիստոսի բնավորությունը: Սա է այն նշանակետը, որին մենք պետք է հարվածենք:

Չարչարվել Քրիստոսի հետ

Որո՞նք են Քրիստոսի չարչարանքները: Շատերի մոտ թյուրըմբռնում կա այս մասին, քանի որ որոշ կրոնական ուսմունքներ խեղաթյուրել են այս աստվածաշնչյան հասկացությունը: Չարչարանքը *չի նշանակում* մահանալ ինչ-որ հիվանդությունից կամ չունենալ գումար՝ հաշիվները փակելու համար: Այն *չի նշանակում* շաբաթներ շարունակ ոչինչ չուտել, որպեսզի Աստված զգացված լինի ձեր զոհով: Չարչարանքը զոհ չէ, այլ՝ հնազանդություն: Եբրայեցիների հեղինակը հստակ ցույց է տալիս, թե որոնք են Քրիստոսի չարչարանքները.

> «Նա, որ Իր մարմնի օրերում աղոթք և աղաչանք՝ սաստիկ աղաղակով և արտասուքով, մատուցում էր Նրան, որ կարող էր ազատել Նրան մահից, և լսվեց Իր բարեպաշտության համար: Թեև Որդի էր, այն չարչարանքներից հնազանդությունը սովորեց» (Եբրայեցիների 5.7,8):

Հիսուսը հնազանդությունը չէր բերել այս երկիր. Նա ստիպված էր սովորել այն: Նա սովորեց՝ հնազանդվելով Իր Հորը այն ժամանակ, երբ չհնազանդվելն ավելի հեշտ էր: Նա չէր ձգտում հաճեցնել մարդկանց: Նա գիտեր, որ արդյունքում մարդիկ մեծ օգուտ կստանային Իր հնազանդությունից: Պետրոսը ցույց տվեց, որ ճշմարիտ չարչարանքը նշանակում է ապրել համաձայն Աստծո կամքի, ոչ թե մարդկային ցանկությունների (Ա Պետրոս 4.2):

«Քրիստոսի չարչարանքները» արտահայտությունը նշանակում է գնալ Աստծո ճանապարհով այն դեպքում, երբ մեր միտքը, զգացմունքները և ֆիզիկական զգայարանները դրդում են մեզ հեշտասիրության, փոխզիջման և հաճույքների: Հաճախ մենք գտնվում ենք նման պայքարի մեջ, երբ Աստված պատվիրում է *մեզ* գնալ այլ ճանապարհով, իսկ մեր ընկերները, ընտանիքի անդամները, աշխատակիցները

և մյուսները ցանկանում են, որ մենք գնանք այլ ճանապարհով: Դժբախտաբար, թվում է՝ այս հակառակությունը սովորաբար գալիս է այն մարդկանցից, որոնք ամենից մոտն են մեզ: Այս իրողության դասական օրինակներից մեկն այն է, որ Պետրոսն անհամաձայնություն հայտնեց Հիսուսի մահվան և թաղման վերաբերյալ:

> «Այնուհետև Հիսուսը աշակերտներին հայտնեց, որ պետք է Նրան Երուսաղեմ գնալ և ծերերից և քահանայապետերից և դպիրներից շատ չարչարանքով չարչարվել, սպանվել և երրորդ օրը հարություն առնել: Եվ Պետրոսը Նրան մի կողմ տանելով սկսեց հանդիմանել և ասել. «Քա՛վ լիցի Քեզ, Տե՛ր, այդ չլինի Քեզ»: Եվ նա դարձավ և Պետրոսին ասաց. «Հետի՛ս գնա, սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ, որովհետև դու միտք չես անում Աստծո, այլ՝ մարդկանց բաները»» (Մատթեոս 16.21-23):

Հիսուսը հայտնեց Իր աշակերտներին, որ Աստծուն հնազանդվելու համար պետք է գնար Երուսաղեմ, չարչարվեր, սպանվեր և երրորդ օրը հարություն առներ: Ակնհայտ է, որ Պետրոսը չէր լսել Հիսուսի խոսքերը հարության վերաբերյալ, հակառակ դեպքում, նա այդքան չէր մտահոգվի Հիսուսի հայտարարությամբ Իր մոտալուտ մահվան մասին:

Կարծում եմ՝ կարելի է հասկանալ, թե ինչ էր մտածում Պետրոսը.

> *«Սպասի՛ր, Դու Մեսիան ես (քիչ առաջ դա հայտնվել էր նրան), և Դու պետք է վերականգնես ու հաստատես Իսրայելի թագավորությունը: Ես թողել եմ իմ գործը, իմ կնոջը և ընտանիքին՝ Քեզ հետևելու համար: Ես կորցրել եմ ընկերներիս՝ Քեզ հետևելու պատճառով: Ես շատ ժամանակ եմ ներդրել այս գործի մեջ: Ես վատ անուն եմ ձեռք բերել: Ժողովարանների առաջնորդները մտածում են, որ Դու խելագար ես. թերթերը և ամսագրերը մշտապես հոդվածներ են գրում այն մասին, թե որքան հակասական ես Դու: Դու ամենաթեժ թեման ես սոցիալական ցանցերում, և մարդկանց կարծիքների մեծ մասը դրական չէ: Դու*

հերետիկոս ես համարվում շատ ճանաչված աստվածաբանների և կրոնական առաջնորդների կողմից: Եվ Դու խոսում ես մահվան մասի՞ն: Իսկ ի՞նչ կլինի ինձ հետ: Ես այսքան ժամանակ եմ ներդրել՝ Քեզ հետևելու համար. ես ձեռնունայն կմնամ և չեմ ունենա ոչինչ՝ բացի վատ համբավից»:

Պետրոսն առանց մտածելու ասաց. «Ո՛չ, Տե՛ր, Դու չե՛ս կարող այդպես վարվել» (շրջասություն):

Հիսուսը ստիպված էր անմիջապես ցույց տալ, որ Պետրոսի մտքերը եսասիրական և աշխարհիկ էին: Նա չէր նայում Աստծո աչքերով: Սատանան («այս աշխարհի աստվածը», Բ Կորնթացիների 4.4) սովորեցրել է այս աշխարհին փնտրել սեփական շահը: Երկնքի թագավորության մեջ ամեն ինչ ճիշտ հակառակն է: Այնպես որ, Աստծո կամքը կատարելու համար մենք պետք է հակառակ գնանք մշակույթի հոսանքին, նույնիսկ եթե դա նշանակում է հակառակ գնալ որևէ «եղբոր կամ քրոջ՝ Տիրոջ մեջ», որի մտածելակերպը չափազանց աշխարհիկ է: Պետրոսը չար մարդ չէր, բայց այդ հարցում նրա միտքը կրում էր այս աշխարհի ազդեցությունը, ոչ թե Քրիստոսի: Նա հակառակվում էր այդ փոփոխությանը, քանի որ այլ կերպ էր պատկերացնում ամեն ինչ:

Այս իրողության ևս մեկ օրինակ էին Իսրայելի զավակների կողմից ուղարկված լրտեսները, որոնք գնացել էին Քանանի երկիրը հետախուզելու: Նրանք մեկ տարուց ավելի անապատում էին, և Աստված պատվիրեց Մովսեսին, որ մարդիկ ուղարկի Խոստման երկիր՝ ստանալու համար այնպիսի տեղեկություն, որը Նա ցանկանում էր, որ նրանք ունենային: Մովսեսն ընտրեց տասներկու առաջնորդների՝ ամեն ցեղից մեկ առաջնորդ: Նրանցից երկուսը Հեսուն և Քաղեբն էին:

Երբ լրտեսները վերադարձան երկիրը հետախուզելուց, իրար հակասող լուրեր բերեցին այն մասին, թե ինչ էին տեսել և ինչ էր անհրաժեշտ անել: Լրտեսներից տասն ասացին.

««Այն երկրի մեջ բնակվող ժողովուրդը զորավոր է, և քաղաքները պարսպավոր և խիստ մեծ են: Նաև այնտեղ Ենակի որդիներին տեսանք: Ամաղեկացիները բնակվում են այն երկրի հարավային կողմում, և Քետացիները և Հեբուսացիները և

Ամորհացիները բնակվում են սարերում, և Քանանացիները բնակվում են ծովի մոտ և Հորդանանի եզերքում... Մենք չենք կարող այն ժողովրդի վրա ելնել, որովհետև նրանք մեզնից զորավոր են»: Եվ իրենց լրտեսած երկրի վատ լուրը բերեցին Իսրայելի որդիների համար՝ ասելով. «Այն երկիրը, որի միջով անցանք՝ նրան լրտեսելու համար, իր բնակիչներին ուտող երկիր է, և նրա միջի ամբողջ ժողովուրդը, որ մենք տեսանք, երկայնահասակ մարդիկ են»» (Թվոց 13.29,30,32,33):

Քաղեբի և Հեսուի լուրն այլ էր.

«Եվ Քաղեբը լռեցրեց ժողովրդին Մովսեսի առջև և ասաց. «Աղե, ելնենք և ժառանգենք այն, որովհետև մենք անպատճառ կարող ենք տիրել նրան... Եթե Տերը մեզ հաճի, կտանի այն երկիրը և այն մեզ կտա, որ կաթ ու մեղր բխեցնող երկիր է: Միայն թե Տիրոջ դեմ մի՛ ապստամբեք և այն երկրի ժողովրդից մի՛ վախեցեք, որովհետև նրանք մեր կերակուրն են, նրանց պաշտպանությունը գնացել է իրենց վրայից, ու Տերը մեզ հետ է. նրանցից մի՛ վախեցեք»» (Թվոց 13.31, 14.8,9):

Տասներկու լրտեսները միասին էին գնացել երկիրը հետախուզելու: Նրանք տեսել էին նույն երկիրը, քաղաքները և մարդկանց: Ինչո՞ւ նրանցից տասն այլ լուր բերեցին, իսկ մյուս երկուսը՝ ճիշտ հակառակը: Խնդիրը նրանց ընկալման մեջ էր:

Աստված ասաց Քաղեբի և Հեսուի մասին, որ նրանք այլ հոգի ունեին, քանի որ լիովին հնազանդվեցին Իրեն (Թվոց 14.24): Այլ կերպ ասած՝ նրանք անցում էին կատարել մարդկային ցանկություններից դեպի Աստծո կամքը: Նրանք նայում էին Աստծո աչքերով, ոչ թե ամեն ինչ դիտարկում էին ինքնապահպանման տեսանկյունից: Սա օգնում է մեզ հասկանալ, թե ինչու տասը լրտեսները տեսան միևնույն բանը, բայց ոչ այնպես, ինչպես Հեսուն և Քաղեբը: Նրանք ավելի շատ մտահոգված էին իրենց հարմարավետությամբ, ապահովությամբ և ընտանիքներով, քան Աստծո ցանկություններով: Նրանք մտածում էին իրենց կյանքի մասին, ոչ թե Աստծո թագավորության: Նրանք չէին գիտակ-

ցում, որ Աստված երբեք չէր թողնի իրենց և հաջողություն կտար Իր բերած բոլոր ճանապարհներում: Այս սխալ մտածելակերպը հատուկ էր նաև մնացած ժողովրդին, քանի որ նրանք ասացին.

> «Եվ տրտնջացին Իսրայելի բոլոր որդիները Մովսեսի և Ահարոնի դեմ, և ամբողջ ժողովքն ասաց նրանց. «Երանի՜ թե Եգիպտոսի երկրում մեռած լինեինք, կամ երանի՜ թե այս անապատի մեջ մեռած լինեինք: Եվ ինչո՞ւ համար Տերը մեզ այս երկիրը բերեց, որ սրով ընկնենք, և մեր կանայք ու մեր որդիները հափշտակվեն: Լավ չէ՞ մեզ համար, որ Եգիպտոս դառնանք»» (Թվոց 14.2,3):

Իսրայելի զավակները հիշում էին Եգիպտոսի «հին լավ օրերը», երբ իրենց փորը կուշտ էր, և իրենց կյանքում ինչ-որ չափով կայունություն կար: Թեև նրանք ստրուկներ էին եղել Եգիպտոսում, այն, ինչին բախվում էին, ստրկությունից ավելի ծանր էր թվում: Բոլորը հակառակվում էին այն փոփոխությանը, որն անհրաժեշտ էր իրենց: Նրանք սկսել էին ապահով զգալ իրենց անապատում, քանի որ արդեն ծանոթ էին դրան, թեև նրանց քոչվոր կյանքը և սննդակարգը հեռու էր կատարելությունից: Արդյունքում նրանք այդպես էլ չտեսան Խոստման երկիրը և այդպես էլ չկատարեցին Աստծո կամքը:

Այնուամենայնիվ, Հեսուն և Քաղեբը պետք է *շարունակեին առաջ գնալ:* Այն հակառակությունը, որին նրանք բախվեցին, եկավ իրենց «եղբայրներից», որոնք ուզում էին լիովին լռեցնել իրենց. «Բայց ամբողջ ժողովուրդը սկսեց խոսել Հեսուին և Քաղեբին քարկոծելու մասին» (Թվոց 14.10, NLT): Այն մարդիկ, որոնք հակառակվում էին Հեսուին և Քաղեբին, չնորոգված միտք ունեին և դեռ մտածում ու տեսնում էին ամեն ինչ այս աշխարհի պես: Նրանք համառորեն կառչել էին իրենց ճանապարհներից... և անապատային մտածելակերպից:

Նման Հեսուին և Քաղեբին՝ Պողոս առաքյալն ասաց, որ ինքը պետք է մոռանար այն բաները, որոնք մնացել էին ետևում, և *ջանասիրաբար ձգտեր երկնային մրցանակին* (Փիլիպեցիների 3.14):

Կրկի՛ն կարդացեք Եսայի 43.18,19-ը. այս ցուցումներն, անկասկած, պետք է խրախուսեն մեզ.

«Բայց մոռացե՛ք այդ ամենը.
Դա ոչինչ է այն բանի համեմատ, ինչ Ես պատրաստվում եմ անել:
Որովհետև Ես մի նոր բան եմ անելու:
Տեսե՛ք, Ես արդեն սկսել եմ: Մի՞թե չեք տեսնում դա:
Ես ճանապարհ կպատրաստեմ անապատով:
Ես գետեր կստեղծեմ չոր և ամայի վայրում» (NLT):

Ցավոք, այսօր էլ շատերը գերադասում են մնալ իրենց «ապահով» ստրկության մեջ, փոխարենը ջանասիրաբար ձգտեն ազատությանը՝ կատարելով Աստծո կամքը: Նրանք ավելի շատ վախենում են իրենց առջևում գտնվող փոփոխություններից, քան ծանոթ, բայց ճնշող ներկայից: Կան նաև այնպիսի մարդիկ, որոնք գոհանում են այն ամենով, ինչ Աստված արդեն արել է իրենց կյանքում, և չեն կամենում նոր մարտահրավերներ ընդունել: Այո՛, Աստված մեծ բաներ է արել նրանց միջոցով, բայց նրանք կանգ են առել իրենց անցյալի հաջողությունների վրա:

Աստծո կամքին հնազանդվելը կյանք և ազատություն է պարգևում, և այն միակ միջոցն է՝ ճշմարիտ բավականություն ունենալու համար: Այնուամենայնիվ երկնային մրցանակին ջանասիրաբար ձգտելը կարող է անհնարին թվալ ձեր ներկա հանգամանքներում: Աստված ասաց Եսայի մարգարեի միջոցով, որ Նա անելու է նոր բան, բայց դա ի հայտ է գալու անապատում: Այլ կերպ ասած, երբ մենք հետևենք Աստծո Հոգուն՝ ցանկանալով կատարել այն, ինչ Նա է կամենում, մենք կհայտնվենք անհնարին և չոր թվացող իրավիճակներում: Սակայն մենք գիտենք՝ այն, ինչ անհնարին է մարդկանց համար, հնարավոր է Աստծո համար (տե՛ս Ղուկ. 18.27): Ձեր այսօրվա անապատից հետո կան հաղթանակներ, բավականություն և լիարժեք կյանք:

Մի՛ եղեք այն տասը լրտեսների և ժողովրդի նման, որոնք չկամեցան ընդունել Աստծո ցանկությունները և ընդդիմացան այն փոփոխությանը, որը կազատեր իրենց անապատի զրկանքներից: Փոխարենը, շարունակեք վստահաբար առա՛ջ գնալ դեպի ձեզ խոստացված երկիրը՝ Աստծո երկնային մրցանակը, որը պատրաստված է ձե՛զ համար:

7

ԱՍՏԾՈ ԳԵՐԱԶԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Դժվարությունը հասարակ գործիք չէ: Այն Աստծո ամենաարդյունավետ գործիքն է մեր հոգևոր կյանքի առաջխաղացման համար: Այն հանգամանքները և իրադարձությունները, որոնք դիտարկում ենք որպես հետընթաց, հաճախ սկիզբ են դնում բուռն հոգևոր աճի փուլերի: Հենց որ սկսում ենք հասկանալ սա և ընդունել որպես հոգևոր իրողություն, մենք կարողանում ենք ավելի հեշտորեն դիմանալ դժվարությանը»:

– Չարլզ Սթենլի

«Անապատի մեջ կանչողի ձայնը.
«Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը
և ուղի՛ղ արեք ամայության մեջ շավիղը մեր Աստծո համար»»:

– Եսայի 40.3

Որքան էլ զարմանալի թվա, անապատն այն վայրն է, որտեղ Աստված գերազանց ճանապարհ է տեղորոշել: Հենց այստեղ է պատրաստվում Նրա ճանապարհը՝ Նրա շավիղը դեպի բարձր և վեհ կյանքը, որով քայլող մարդը կարող է ապրել և մտածել այնպես, ինչպես Նա:

Ամբողջ պատմության ընթացքում քչերն են գնացել այս ճանապարհով: Այնուամենայնիվ, այժմ Աստված պատրաստում է շատերին այս ընթացքի համար: Այս մասին գրված է Եսայի 35.6,8-ում.

> «Որովհետև անապատում ջրեր են բխելու, և ամայի տեղում՝ առուներ... Եվ այնտեղ պողոտա և ճանապարհ է լինելու, և նրան Սուրբ ճանապարհ է ասվելու»:

Աստծո ճանապարհին անապատում չունի հիշվող անվանում, օրինակ՝ «Ի-95» կամ «66-րդ ճանապարհ»: Այն պարզապես կոչվում է *սրբություն:*

Սրբության սահմանումներից մեկը «մաքուր լինելու վիճակն» է: Հիսուսն ասում է. «Աստված օրհնում է նրանց, որոնց սրտերը մաքուր են, քանի որ նրանք կտեսնեն Աստծուն» (Մատթեոս 5.8, NLT): Հիսուսը չի վերադառնալու անսուրբ և անմաքուր եկեղեցու համար. Նա գալու է այնպիսի եկեղեցու հետևից, որը չունի ոչ մի արատ և կնճիռ:

Մի քանի տասնամյակ առաջ, երբ դեռ երիտասարդ էի և անում էի իմ առաջին քայլերը ծառայության մեջ, Տերն աղոթքի ժամանակ

ցույց տվեց, որ Նա մաքրելու է իմ կյանքը: Ես այնքա՜ն ոգեշնչվեցի, որ ասացի Լիզային. «Աստված հեռացնելու է ամեն անմաքրություն ինձնից», և սկսեցի թվարկել բոլոր անցանկալի բաները, որոնք Նա հեռացնելու էր (միգուցե Լիզան էլ ավելացրեց մի քանիսը, որոնք ես բաց էի թողել իմ ցուցակից):

Հաջորդ երեք ամսում ոչինչ տեղի չունեցավ: Իրականում, ամեն ինչ իմ կյանքում է՛լ ավելի վատթարացավ, և ես է՛լ ավելի մաքրվելու կարիք ունեի: Ես գնացի Տիրոջ մոտ և հարցրի. «Ինչո՞ւ են իմ վատ սովորություններն ավելի վատանում՝ փոխարենը հեռանան»:

> «Որդի՛ս, - պատասխանեց Նա, - Ես ասացի, որ *Ես* եմ մաքրելու քեզ: Դու փորձում էիր անել դա քո ուժերով: Այժմ Ես կանեմ դա *Իմ* ձևով»:

Ես նույնիսկ գաղափար չունեի, որ սկսվելու էր իմ առաջին անապատային ընթացքը, և որ այն տևելու էր տասնութ ամիս:

Նրա ճանապարհները մեր ճանապարհները չեն

Իմ հոգևոր կյանքի սկզբնական շրջանում ես ծանոթացա Թի էլ Օսբորնի ծառայության հետ: Դոկտոր Օսբորնը հոյակապ ծառայող և հեղինակ էր: Նա և կինը՝ Դեյզին, ղեկավարում էին զորավոր ավետարանչական, հրաշքների և բժշկության ծառայություն, որը մի քանի տասնամյակ շարունակ գործում էր աշխարհով մեկ: Նրանց ծառայությունը փրկության է բերել տասնյակ միլիոնավոր մարդկանց:

Այնպես որ, կարող եք պատկերացնել, թե որքան ոգեշնչված էի ես՝ հանդիպելով Դոկտոր Օսբորնին, երբ նա եկավ Դալլաս՝ քարոզելու մեր եկեղեցում: Ավելին՝ քանի որ իմ աշխատանքը մեր եկեղեցու հյուր-քարոզիչներին ընդունելն էր, ես անձամբ ծանոթացա նրա հետ: Թի էլը զարմանալի անձնավորություն էր: Երբ ես նրա հետ էի, կարծես Հիսուսի հետ լինեի:

Թի էլը մի քանի անգամ եկավ մեր եկեղեցի, և մենք շատ մտերմացանք: Նա նվիրեց ինձ բոլոր գրքերը, որոնք ուսումնասիրում էր երիտասարդ տարիքում, երբ պատրաստվում էր իր ծառայությանը: Բացի

այդ, երկու անգամ նա նվիրեց ինձ իր հագուստներից շատերը (մենք նույն չափսն էինք կրում): Այդ ժամանակ Լիզան և ես չունեինք գումար հագուստ գնելու համար. այնպես որ, երկու անգամ արված այդ նվերները մեծ օգնություն էին ինձ համար: Այդ այցելություններից հետո նա և Դեյզին դարձան ինչպես հայր և մայր Լիզայի և ինձ համար:

Տարիներ առաջ, երբ դեռ աշխատում էի մի ամերիկյան ընկերությունում, ես ներկա էի մի ծառայության, որտեղ քարոզում էր Թի էլը, և Սուրբ Հոգին շշնջաց ինձ. *«Մեկ օր դու ծառայելու ես նրան: Դու աշխատելու ես Դոկտոր Թի էլ Օսբորնի համար»:* Ես մտածեցի, որ այդ ամենը հաստատում էր, որ ես լինելու էի նրա թիմում, և ապագայում նմանատիպ ավետարանչական ծառայություն էի սկսելու:

Այնուամենայնիվ, ոչինչ տեղի չէր ունենում. ես դեռ անապատում էի: Օսբորնների ծառայության գլխամասային գրասենյակը Տալսայում էր, բայց նրանք ապրում էին Օռլանդո քաղաքում: Ժամանակն անցնում էր, և ես իմ ծառայությունը սկսելու ուժգին մղում էի զգում՝ այն աստիճան, որ որոշեցի տեղափոխվել Օռլանդո, որպեսզի ավելի մոտ լինեի Օսբորններին: Իմ նպատակը երկակի էր: Առաջինը՝ Թի էլը կտեսներ, որ ես այլևս չէի ծառայում ոչ մի եկեղեցում: Նա բացարձակ ազնվության տեր մարդ էր: Ես գիտեի, որ նա երբեք աշխատանքի չէր վերցնի ինձ՝ հեռացնելով մեր եկեղեցուց: Երկրորդը՝ քանի որ Լիզան և ես կապրեինք Օռլանդոյում, հեշտորեն կկարողանայինք միանալ նրանց ծառայությանը: Հենց որ մենք տեղափոխվեինք Ֆլորիդա նահանգում գտնվող այդ քաղաքը, ես հասանելի կդառնայի նրա համար:

Իհարկե, ես գիտեմ՝ դա մի փոքր չափազանցություն էր իմ կողմից: Այնուամենայնիվ, ես պատրաստ էի «օգնել» Աստծուն, որպեսզի Նա ուղղորդեր ինձ դեպի իմ ճշմարիտ կոչումը:

Ես խնդրեցի իմ հովվին, որ հանդիպի ինձ հետ, որպեսզի տեղեկացնեմ աշխատանքից դուրս գալու և Օռլանդո տեղափոխվելու համար: Սակայն մեր հանդիպման նախորդ երեկոյան երեք հովիվ, երեք տարբեր քաղաքներից, զանգահարեցին ինձ: Ամեն մեկը, իմանալով, թե ինչ էի պատրաստվում անել հաջորդ առավոտյան, հարցրին ինձ ճիշտ նույն բանը. «Լիզան համաձա՞յն է քեզ հետ»:

Լիզան համաձայն չէր: Մի քանի անգամ նա ասել էր ինձ. «Ձո՛ն, ես

կինազանդվեմ քո առաջնորդությանը, բայց չեմ կարող ասել քեզ, որ սրտանց զգում եմ, որ ճիշտ ես վարվում»: Ես անտեսում էի նրա խոսքերը: Մտածում էի. *«Լիզան պարզապես չի հասկանում, և քանի որ ես տան գլուխն եմ, նա պետք է հնազանդվի իմ առաջնորդությանը»:* Որքա՜ն անմիտ և ոչ հասուն միտք էր դա:

Երբ երրորդ հովիվը զանգահարեց ինձ ուշ երեկոյան և հարցրեց միևնույն բանը, ինչ-որ բան իմ ներսում կոտրվեց: Իմ աչքերը բացվեցին, և ես հասկացա, որ փորձում էի օգնել Աստծուն իրագործելու Իր ծրագիրը, փոխարենը թույլ տայի, որ Ինքն աներ դա:

Հաջորդ օրը Լիզան և ես հանդիպեցինք իմ հովվին և նրա կնոջը: Ես պատմեցի նրանց թե ինչու էի խնդրել հանդիպել ինձ հետ, և որ ես մտափոխվել էի նախորդ երեկոյան ստացած երեք զանգերից հետո: Նրանք շատ սիրալիր էին մեր հանդեպ և ասացին, որ ցանկանում են, որ մենք մնանք իրենց հետ: Ես կարող էի շարունակել իմ ծառայությունը:

Ես զգացի, որ ասես մի բեռ ընկավ իմ ուսերից, և այժմ ես պատրաստ էի, որ Աստված Ինքը գործեր մեզ համար: Նույնիսկ գաղափար չունեի, որ իմ մաքրման ընթացքը դեռ չէր ավարտվել: Կար մաքրման ևս մեկ ալիք, որը գալու էր ինձ վրա հենց այդ օրը:

Մեր հովվի և նրա կնոջ հետ հանդիպումից ընդամենը վեց ժամ անց, երբ ես տանն էի և պատրաստվում էի գնալ բասկետբոլ խաղալու մեր եկեղեցու աշխատակիցների հետ, հեռախոսը զանգեց. Թի էլ Օսբորնն էր: Ես լիովին ցնցված էի:

Իննսուն րոպե տևող հեռախոսազրույցի ընթացքում նա առաջարկեց Լիզային և ինձ աշխատանք իր ծառայության մեջ: Մենք պետք է օգնեինք Դեյզիին և նրան, ինչպես նաև ճանապարհորդեինք նրանց հետ աշխարհով մեկ: Մենք նույնպես մի եկեղեցի էինք հիմնելու Տալսայում, որը պետք է այլ եկեղեցիների հիմնադրման նմուշ դառնար: Նպատակն էր՝ սկսել նմանատիպ եկեղեցիներ աշխարհով մեկ՝ այն վայրերում, որոնցում նրանք անցկացնում էին իրենց մեծածավալ ավետարանչական հավաքույթները:

Այդ երկար հեռախոսազրույցի ընթացքում ես շարունակ մտածում էի. *«Հա՛յր, ես գիտեի, որ Դու կգործես, բայց զարմացած եմ, թե որքա՜ն արագ դա տեղի ունեցավ: Դո՛ւ արեցիր դա»:* Դժվար է նկարագրել այն

զարմանքը և ոգևորությունը, որը ես զգում էի, երբ հեռախոսով խոսում էի Թի էլ Օսբորնի հետ: Ես համոզված էի, որ դա այն ելքն էր իմ անապատից, որին սպասում էի: Ես այնքա՜ն երջանիկ էի, որ ինձ թվաց, թե կարող եմ ցատկել և գլխով հարվածել մեր բնակարանի առաստաղին: Խոսափողը դնելուց հետո տանից դուրս եկա՝ Աստծուց գոհանալու համար, բայց հոգումս արգելքի և վարանման պես մի բան զգացի: Իմ ներսի խորքում ասես տհաճ և տանջալի զգացում լիներ:

Ես մտածեցի. *«Ո՛չ, Աստվա՛ծ, ո՛չ, ո՛չ, ո՛չ: Դու չե՛ս կարող այդպես վարվել: Դու վաղուց ես խոստացել, որ մեկ օր ես աշխատելու եմ Թի էլ Օսբորնի համար: Դու չե՛ս կարող արգելել սա»:*

Արգելքի զգացումը չէր հեռանում: Երեք օր շարունակ ես փորձում էի անել՝ ինչ կարող էի, որպեսզի հեռացնեի այն աղոթքի միջոցով: Ես փորձում էի ազատվել այդ անհանգստություն պատճառող զգացումից: Ես աղաղակում էի. «Աստվա՛ծ, տո՛ւր ինձ ուրախություն այս հարցում»: Լիզան նույնպես զգում էր այդ արգելքը, թեև նա էլ էր շատ ցանկանում աշխատել Օսբորնների մոտ:

Ի վերջո, ես որոշում կայացրի չհավատալ, որ այդ վարանումը կարող էր Աստծուց լինել (ինչը ևս մեկ՝ ոչ հասուն և վտանգավոր քայլ էր իմ կողմից): Այնպես որ, Լիզան և ես ինքնաթիռով ուղևորվեցինք Օկլահոմա նահանգ՝ հարցազրույցի, և թվում էր՝ ամեն ինչ ի մի էր գալիս: Թի էլը և Դեյզին պաշտոնապես առաջարկեցին մեզ այդ աշխատանքը և Սուրբ ծննդյան երեկոյին ծանոթացրին իրենց ամբողջ թիմի հետ:

Մենք վերադարձանք Դալլաս, և ես հրաժարվեցի եկեղեցու իմ աշխատանքից: Բայց արգելքի զգացումը չէր հեռանում: Ես ժամեր էի անցկացնում աղոթքի մեջ, բայց միևնույն է՝ անհանգիստ էի: Շարունակ փորձում էի հեռացնել այդ անհարմարավետ զգացումը՝ ավելի երկար աղոթելով, սակայն ոչինչ չէր փոխվում:

Ի վերջո, Լիզային ասացի.

- Չգիտեմ, թե ինչ է կատարվում, բայց ինչ-որ բան ճիշտ չէ:

Նա համաձայնեց.

- Ես կարող եմ ասել նույնը:

Ես զանգահարեցի Թի էլ Օսբորնին և պատմեցի իմ զգացողության մասին: Նա ասաց.

- Եկեք միասին հանդիպենք և խոսենք այս մասին:

Մենք ինքնաթիռով ուղևորվեցինք Տալսա, և երկու ժամ տևող հանդիպումից հետո Թի էլն ասաց.

- Մենք առաջարկեցինք ձեզ այս աշխատանքը, քանի որ սրտանց սիրում ենք ձեզ, և գիտենք, որ դուք նույնպես սիրում եք մեզ: Բայց մենք մտածում ենք, որ միգուցե դա Աստծուց չէ:

- Ես նույնպես չեմ հասկանում դա, - ասացի, - բայց կարծում եմ՝ դուք ճիշտ եք:

Չէի կարողանում հավատալ, որ այդ բառերը դուրս եկան իմ բերանից: Պահանջվեց իմ ամբողջ ինքնատիրապետումը, որ ասեի դա: Թի էլ Օսբորնի հետ աշխատելն իմ կյանքի երազանքն էր:

Այդ տարիներին ես դուրս էի գալիս տանից վաղ առավոտյան և մեկից երկու ժամ աղոթում էի: Բայց իմ հերոսի՝ Թի էլ Օսբորնի հետ կապված հիասթափությանը հաջորդող երկու շաբաթվա ընթացքում ես հազիվ էի աղոթում, երբ առավոտյան տանից դուրս էի գալիս: Թվում էր՝ ես միայն կարող էի լաց լինել: Ես կարող էի միայն վերհիշել այն, ինչ տեղի էր ունեցել վերջին մի քանի ամիսներին՝ չհավատալով այդ ամենին: Իմ տրտմությունն աննկարագրելի էր: Ես ասես սգայի իմ սիրելիներից մեկի մահը: Երկու շաբաթ այդպիսի վիճակում լինելուց հետո ես մի վայրում էի, որտեղ ոչ ոք չէր կարող լսել ինձ, և ես պարզապես բղավեցի այնքա՛ն բարձր, որքան կարող էի.

- *Ինչո՞ւ:* Ինչո՞ւ Դու այնպես արեցիր, որ ես թողնեի դա: Վեց տարի առաջ Դու խոսեցիր ինձ հետ՝ ասելով, որ ես կաշխատեմ նրա համար: *Ինչո՞ւ:*

Ես երբեք չեմ մոռանա այն, ինչ Տերն ասաց ինձ. «Որովհետև Ես ուզում էի տեսնել՝ դու ծառայում էիր Ի՞նձ, թե՞ այդ երազանքին»:

Ես ապշեցի:

Նա շարունակեց. «Ահա թե ինչու Ես պատվիրեցի Աբրահամին զոհասեղանի վրա դնել Իսահակին: Ես ուզում էի տեսնել՝ արդյո՞ք նա ավելի քիչ էր սիրում Ինձ, քան այն խոստացված օրհնությունը, որը տվեցի նրան: Դա ցույց էր տալու՝ արդյո՞ք նա ծառայում էր այդ երազանքին, արդյո՞ք նա ծառայում էր Ինձ՝ այդ երազանքը ստանալու համար, թե՞ ծառայում էր Ինձ և վստահում էր Իմ ազնվությանը՝ հա-

վատալով, որ կիրականացնեի այդ երազանքը»:

Նրա խոսքերը պատասխանեցին բոլոր հարցերին, որոնց հետ ես պայքարում էի վերջին երկու շաբաթվա ընթացքում: Եվ առաջին անգամ, ավելի քան տասնութ ամսվա ընթացքում, ուրախությունը պոռթկաց իմ հոգում: Իմ կյանքն ասես կրկին բացվեց և հասկացա, թե որքան օրհնված էի այդ պահին: Ես ամուսնացած էի գեղեցիկ կնոջ հետ, ունեի հրաշալի փոքրիկ որդի: Ես կրկին սիրահարվեցի իմ կնոջը և իմ փոքրիկ որդուն: Ես մտածում էի, որ մենք ապրում ենք նորակառույց բնակարանում, որից ընդամենը երեսուն քայլ հեռու մի գեղեցիկ

Ինչպե՞ս անցնել անապատը

#7 Զգուշորե՛ն ընտրեք ձեր ընկերներին

Միգուցե սա չպետք է զարմացնի մեզ, բայց հաճախ մեր ամենասուր քննադատները և ամենախիստ հակառակորդներն այն մարդիկ են, որոնց համարել ենք մեր թիմակիցները: Հաճախ հալածանքը գալիս է այն մարդուց, որին դուք ձեր ընկերն եք համարել:

Անապատում կարող է իրական հալածանք սկսվել, և մենք պետք է գիտակցենք, որ կարող ենք սպասել հալածանքի, եթե հետևում ենք Քրիստոսին: Պողոս առաքյալը գրում է. «Եվ ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթեոս 3.12): Հալածանքը մեր մաքրման ընթացքի մասն է: Իսկ ո՞վ կարող է լինել հալածողի դերում: Հալածել կարող են ինքնակոչ խաբեբաները, որոնք, հավատացյալ ձևանալով, թափանցել են Աստծո ժողովրդի մեջ, սակայն, իրականում, սրտանց չեն սիրում Աստծուն: Ահա թե ինչու է Պողոսը գրում Հանեսի և Համրեսի մասին, որոնք հակառակվում էին Մովսեսին: Այդ մարդիկ օտարականներ չէին. նրանք Տիրոջ ժողովրդից էին:

լողավազան կար, և գրեթե ամեն օր երկինքը պայծառ ու արևոտ էր: Ես չէի նկատում այդ ամենը, քանի որ լիովին կլանված էի ծառայության ճնշմամբ՝ այն ամենով, ինչը, իմ կարծիքով, ես պետք է անեի, որպեսզի հաճեցնեի Աստծուն:

Այժմ, ետ նայելով, ես հասկանում եմ հետևյալը. Աստված ասել էր, որ ես աշխատելու էի Թի էլ Օսբորնի համար, և իսկապես ունեցել էի այդ արտոնությունը: Ես շատ ու շատ անգամներ ծառայել էի նրան, երբ նա հյուրընկալվել էր Դալլասում գտնվող մեր եկեղեցում:

Այնուամենայնիվ, ես արդեն աշխատանք չունեի: Ես խոնարհաբար

Պողոսը պատմում էր որոշ հալածանքների և վտանգների մասին, որոնց ինքը բախվել էր՝ գրելով, որ նեղություններ էր կրել նաև «սուտ եղբայրներից» (Բ Կորնթացիների 11.26):

Անապատում շատ օգտակար է, եթե ձեր կողքին կան մարդիկ, որոնք սիրում են ձեզ, հոգում են ձեր մասին և հայտնում են Աստծո կամքը: Ձեզ պետք չեն քննադատներ և այնպիսի մարդիկ, ովքեր դրդում են ձեզ անհնազանդ լինել Տիրոջը, ինչպես Հոբի կինը և ընկերները: Եվ ձեզ պետք չեն սուտ մարգարեներ, որոնք շողոքորթում են ձեզ, երբ դուք աստվածային շտկման կարիք ունեք: Ձեզ պետք են մարդիկ, որոնք սիրում են ձեզ և հայտնում են Աստծո իմաստությունը:

Այնուամենայնիվ, զգո՛ւյշ եղեք, երբ ինչ-որ մեկը սկսում է քննադատել կամ նույնիսկ մեղադրել ձեզ՝ ասելով, որ դուք եք մեղավոր անապատում հայտնվելու համար: Միգուցե այդ մարդն իրականում ձեր ընկերը չէ: Սուրբ Հոգին կհանդիմանի մեզ մեղքի մեջ, և հաճախ Նա կօգտագործի այլ մարդկանց, որպեսզի օգնի տեսնել մեր սխալմունքը և ապաշխարել: Սակայն շարունակական մեղադրանքները, որոնցում նույնիսկ հույսի նշույլ չկա, թշնամուց են: Զգո՛ւյշ եղեք:

վերադարձա եկեղեցի և հարցրի, թե արդյո՞ք կարող եմ ետ ստանալ իմ աշխատանքը: Հիշում եմ, որ նայեցի ընկերոջս, որը հովվի օգնականներից էր, և ասացի. «Ես այնքա՛ն փոքր եմ զգում ինձ, որ կարծում եմ՝ կարող եմ անցնել դռան տակով»: Հենց այդպես էլ ասացի: Ես պատմել էի բոլորին, որ աշխատելու էի Թի էլի և Դեյզիի մոտ: Մեր հովիվը նույնիսկ հայտարարել էր այդ մասին բեմից, սակայն դա տեղի չունեցավ:

Եկեղեցին ողորմածաբար մասնակի դրույքով աշխատանք առաջարկեց ինձ: Ես ծառայեցի այնտեղ ևս ութ ամիս, ինչից հետո սկսվեց իմ կոչման հաջորդ փուլը, որի համար Աստված պատրաստում էր ինձ: Ինձ աշխատանք առաջարկեցին Ամերիկայի ամենաարագ աճող եկեղեցիներից մեկում: Դա տեղի ունեցավ հրաշքով: Լիզան և ես գիտեինք, որ դա Աստծուց բացված դուռ էր: Այդ պահին իմ հոգում նոր կյանք և տեսիլք կար, քանի որ ես նոր գինով լի տիկ էի՝ պատրաստված այդ նոր աշխատանքի համար:

Մաքրման ճանապարհը

Դարեր շարունակ՝ սկսած այն պահից, երբ Հիսուսը հեռացավ այս երկրից, Նրա հետևորդները փորձել են սրբության հասնել իրենց ջանքերով: Իրականում, նման անարդյունք փորձերից ծնվել են ամբողջ եկեղեցական հարանվանություններ: Սակայն մենք ընդամենը ստրկացրել ենք մեզ օրինապաշտությանը, քանի որ սրբությունը ծնվում է Աստծո շնորհքի աշխատանքի արդյունքում, ոչ թե մարմնի արտաքին սահմանափակման:

Աստված շնորհք է տալիս խոնարհներին, ոչ թե հպարտներին: Հպարտ մարդը կարծում է, թե ինքը կարող է հասնել սրբության՝ առանց Աստծո օգնության, հետևելով գրված օրենքների, կանոնների և դրույթների: Խոնարհ մարդը գիտի, որ դա անիմաստ է, և ապավինում է Տիրոջ շնորհքին (զորությանը): Սրբությունն առաջանում է Աստծո հետ մտերիմ շփումից, քանի որ միայն նման շփման միջոցով մարդը կարող է զորություն ստանալ, որպեսզի պահի իր սրտի վրա գրված օրենքները:

Շատերը փորձել են հասնել սրբության՝ հնազանդվելով Նոր կտա-

կարանի տառին, կամ էլ ոչ սուրբգրային համոզմունքների, և ցավալիորեն ձախողվել են: Ինչպես որ հրեաներն էին ապարդյուն փորձում փրկություն ստանալ՝ պահելով օրենքի տառը, այնպես էլ մենք անկարող ենք սուրբ լինել՝ հետևելով կանոնների: Շատերը սահմանափակել են իրենց օրինապաշտական գաղափարներով՝ ապրելով ըստ որոշակի վարքագծերի կամ գործերի: Նրանք օգտագործել են արտաքին սահմանափակումներ՝ փորձելով հասնել ներքին սրբության:

Այնուամենայնիվ, Աստված չի փնտրում արտաքին սրբություն. Նա ցանկանում է, որ փոխվի ձեր սիրտը, քանի որ մաքուր սրտից կբխի մաքուր վարք: Մատթեոսի 23.26-ում Հիսուսն ասաց. «Առաջ մաքրիր բաժակի և սկավառակի մեջը, որ նրանց դուրսն էլ մաքուր լինի»:

Եթե ձեր սիրտը մաքուր լինի, դուք չեք ցանկանա անել այնպիսի բաներ, որոնք անպատվություն կբերեն Հիսուսի անվանը: Դուք հեռու կմնաք պոռնոգրաֆիկ էջերից ինտերնետում և ճչացող հագուստ չեք կրի: Միգուցե ինչ-որ տղամարդ կամ կին պարծենա, որ ինքը երբեք չի ամուսնալուծվել, բայց իր սրտում նա լցված է կրքով իր աշխատակիցներից մեկի հանդեպ կամ պարբերաբար պոռնոգրաֆիկ կայքեր է դիտում: Մի՞թե դա սրբություն է:

Եթե ձեր սիրտը մաքուր լինի, համակարգիչը և հեռախոսը չեն դրդի ձեզ ոչ կառուցողական նյութեր որոնել: Տեխնիկական սարքերն ինքնին անմաքուր չեն դարձնում ձեզ: Ձեզ այդ քայլին դրդում է այն, ինչ ձեր սրտում է: Եթե ձեր սիրտը մաքուր լինի, դուք կցանկանաք միայն այնպիսի բաներ, որոնք Աստված է ցանկանում:

Անապատն այն հալոցներից մեկն է, որոնք Աստված օգտագործում է, որպեսզի մաքրի մեր դրդապատճառները և շարժառիթները: Աստված պատրաստում է մեր սրտերը՝ նախքան Իր եկեղեցու համար վերադառնալը: Աստված բարձրացնում է այնպիսի սերունդ, որը կհայտնի Իր փառքը, ոչ թե իրենը, այսինքն՝ այնպիսի մարդկանց, որոնք և՛ ստեղծված են Իր պատկերով, և՛ վարվում են՝ ըստ Իր բնավորության.

> «Բայց մի մեծ տան մեջ ոչ միայն ոսկեղեն և արծաթեղեն անոթներ կան, այլև փայտե և հողե էլ: Կան, որ պատվի համար են, և կան, որ անարգության համար են: Եթե մեկն իր անձը մաքրի այդպիսիներից (մեղքից կամ անօրինությունից), նա պատվա-

կան անոթ կլինի՝ սրբված և իր Տիրոջն օգտակար, ամեն բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմոթ. 2.20,21):

Ուշադրություն դարձրեք, որ կան երկու տեսակի անոթներ՝ պատվական և անարգ: «Անարգանք» բառը հունարենում *«ատիմիա»* բառն է, որը նշանակում է «անպատվություն, նախատինք, ամոթ, անարգանք»: «Պատիվ» բառը հունարենում *«տիմե»* բառն է, որը նշանակում է «թանկարժեք»: Աստված ասում է. «Եթե հանես պատվականն անարգից, Իմ բերանի պես կլինես» (Երեմիա 15.19): Պատվականը հեռացվում է անարգից մանրակրկիտ մաքրման կամ անմաքրությունները հեռացնելու միջոցով:

Մաղաքիան հինկտակարանյան մարգարե էր, որը մի շարք մարգարեություններ արեց Նոր կտակարանի ժամանակների մասին: Հասկանալի է, որ նա չուներ նորկտակարանյան բառապաշար: Այդ պատճառով օգտագործեց «ղևտացի» և «քահանա» բառերը՝ նկարագրելով այն, ինչ Սուրբ Հոգին ցույց էր տալիս և ասում էր իրեն Նոր կտակարանի քրիստոնյաների մասին:

Մաղաքիան կանխասեց, որ Տերը *գալու էր* Իր տաճար (Իր եկեղեցի) մինչև Իր տաճարի համար *վերադառնալը,* և Նա գալու էր, որպեսզի մաքրեր այն: Նա գրում է.

«Եվ Նա նստելու է իբրև արծաթ հալեցնող և մաքրող, և մաքրելու է Ղևիի որդիներին և զտելու է նրանց ոսկու և արծաթի պես, և նրանք կլինեն արդարությամբ ընծա մատուցողներ Տիրոջ համար» (Մաղաքիա 3.3):

Ղևտացիները «թագավորական քահանայության» (Ա Պետր. 2.9)՝ եկեղեցում գտնվող Քրիստոսի հետևորդների խորհուրդն են: Քանի որ Աստված համեմատում է այս քահանաների մաքրումը ոսկու և արծաթի մաքրման ընթացքի հետ, օգտակար կլինի հասկանալ, թե ինչ առանձնահատկություններ ունեն ոսկին և արծաթը, և ինչպես են դրանք մաքրվում: Ես կխոսեմ միայն ոսկու մասին, քանի որ այս երկու մետաղների մաքրումը կատարվում է նմանատիպ կերպով:

Ոսկին ունի գեղեցիկ դեղին գույն և թույլ մետաղական փայլ: Այն

կարելի է գտնել բազմաթիվ վայրերում, բայց մշտապես՝ փոքր քանակությամբ, և հազվադեպ՝ մաքուր վիճակում: Մաքրվելուց հետո ոսկին փափուկ է, դյուրաթեք է և ազատ է ժանգից և կողմնակի նյութերից: Խառնվելով այլ մետաղների հետ (պղինձ, երկաթ, նիկել)՝ ոսկին դառնում է ավելի կարծր, պակաս դյուրաթեք և ավելի ենթակա ժանգոտման: Նման խառնուրդը կոչվում է համաձուլվածք: Որքան բարձր է օտար մետաղի տոկոսային չափը, այնքան ոսկին ավելի կարծր է, և որքան այն ցածր է, այնքան ոսկին փափուկ և դյուրաթեք է:

Զուգահեռն անմիջապես երևում է. մաքուր սիրտն Աստծո առջև նման է մաքուր ոսկու: Մաքուր սիրտը փափուկ, մեղմ և դյուրաթեք է: Ահա թե ինչու է Սուրբ Հոգին ասում.

> «Այսօր, երբ լսեք Նրա ձայնը,
> Մի՛ խստացրեք ձեր սրտերը,
> Ինչպես Իսրայելը, երբ նրանք ապստամբեցին,
> Երբ նրանք փորձեցին Ինձ անապատում...
> Դուք պետք է զգուշացնեք մեկդ մյուսին ամեն օր, քանի դեռ «այսօր» է, որպեսզի ձեզնից ոչ ոք չխաբվի մեղքով և չխստանա...» (Եբրայեցիների 3.7,8,13, NLT):

Մեղքն այն ավելացված նյութն է, որը վերածում է մեր *մաքուր* ոսկին համաձուլվածքի՝ խստացնելով մեր սրտերը: Չունենալով սրտի փափկություն՝ մենք կորցնում ենք մեր զգայունությունը և չենք կարողանում լսել Տիրոջ ձայնը:

Դժբախտաբար, այսօր չափազանց շատ մարդիկ են այսպիսի վիճակում. նրանք ունեն աստվածապաշտության կերպարանք, բայց ոչ՝ զգայուն սիրտ, որը վառվում է Հիսուսի համար: Աստծո հանդեպ կրակոտ սերը փոխարինվել է սառը եսասիրությամբ, որը ձգտում է միայն սեփական հաճույքին, հարմարավետությանը և շահին: Համարելով, որ աստվածապաշտությունը անձնական շահ ձեռք բերելու միջոց է (տե՛ս Ա Տիմոթ. 6.5), նրանք միայն ձգտում են Աստծո խոստումներից բխող շահին՝ անգիտակցաբար կամ հարմարավետ կերպով բացառելով Խոստացողին: Նման խաբված վիճակում գտնվող մարդիկ վա-

յելում են այս աշխարհը՝ ակնկալելով, որ կստանան նաև Երկինքը: Աստված չի ցանկանում նման դիրքորոշում.

> «Մաքուր և ճշմարիտ կրոնն Աստծո և Հոր առջև՝ նշանակում է... թույլ չտալ, որ աշխարհը պղծի ձեզ» (Հակոբոս 1.27, NLT):

Հիսուսը վերադառնալու է այնպիսի եկեղեցու ետևից, որը սուրբ է և չունի որևէ արատ, բիծ կամ անմաքրություն (տե՛ս Եփես. 5.27)՝ Իր մարմնի ետևից, որը բաղկացած է այս աշխարհի ճանապարհներով չապականված մարդկանցից:

Ոսկու առանձնահատկություններից ևս մեկը՝ չժանգոտվելն է: Թեև մյուս մետաղները խամրում են մթնոլորտային պայմաններից, մաքուր ոսկին չի կրում նման ազդեցություն: Արույրը (պղնձի և ցինկի դեղին համաձուլվածք) նման է ոսկուն, սակայն այլ բնույթ ունի: Այն հեշտորեն ժանգոտվում է: Այն արտաքնապես նման է ոսկուն, սակայն չունի ոսկու հատկանիշները: Եկեղեցում կան արույրե անոթներ, որոնք արտաքնապես նման են ոսկուն, բայց ոսկի չեն: Միայն մաքրող կրակը ցույց կտա տարբերությունն այս երկուսի միջև: Մաղաքիան գրում է, թե ինչ է տեղի ունենում մաքրումից հետո.

> «Այդ ժամանակ դուք կրկին կտեսնեք տարբերությունն արդարի և անօրենի միջև, նրանց միջև, ովքեր ծառայում են Աստծուն, և ովքեր չեն ծառայում Նրան» (Մաղաքիա 3.18, NLT):

Վերադառնանք ոսկու մաքրմանը: Օտար նյութերի բարձր քանակը ոսկու մեջ՝ այն դարձնում է ոչ միայն կարծր, այլև ենթակա ժանգոտման և քայքայման: Այն ավելի հեշտորեն է կրում այս աշխարհի մթնոլորտի ազդեցությունը:

Այսօր այս աշխարհի ճանապարհները թափանցել են եկեղեցի: Այս աշխարհի մշակույթը խառնվել է մեզ հետ, և մենք արատավորվել ենք դրանով: Ամերիկայում եկեղեցու արժեքներն արատավորված են աշխարհիկությամբ: Շատերն անզգա են դարձել և չեն հասկանում, որ մաքրման կարիք ունեն:

Մաղաքիա 3.3-ը ցույց է տալիս, որ Հիսուսը մաքրելու է Իր եկեղե-

ցին այս աշխարհի ազդեցությունից՝ ինչպես արծաթ և ոսկի մաքրողը: Այդ մաքրման ընթացքում ոսկին աղում են և խառնում ֆլյուս կոչվող լուծիչի հետ: Այս երկու նյութերը դրվում են հալոցի մեջ և հալեցվում են ուժգին կրակով: Օտար ձուլվածքները կամ խառնուրդները միանում են ֆլյուսին և բարձրանում են մակերեսի վրա: Ոսկին (որն ավելի ծանր է) մնում է ներքևում: Խառնուրդները կամ խարամը (ինչպիսիք են պղինձը, երկաթը և ցինկը՝ ֆլյուսի հետ միասին) հեռացվում են:

Այժմ ուշադրությամբ կարդանք, թե ինչպես է մաքրում Աստված.

> «Ես կդարձնեմ Իմ ձեռքը դեպի քեզ և կմաքրեմ քո կղկղանքը (կամ՝ խարամը) ինչպես թե բորակով, և կհեռացնեմ քո ամբողջ անագը (կամ՝ խառնուրդները): Եվ ետ կբերեմ քո դատավորներին (առաջնորդներին), ինչպես որ առաջ էր, և քո խորհրդականներին (հավատացյալներին), ինչպես որ սկզբում: Այնուհետև քեզ կասեն «Արդարության քաղաք, հավատարիմ ավան»» (Եսայի 1.25,26):

Ի՞նչ տեսակի կրակ է Աստված օգտագործելու՝ մեզ մաքրելու համար: Պատասխանը հետևյալ հատվածում է.

> «Որ նրանով կուրախանաք, թեև հիմա, ինչպես որ հարկը պահանջում է, մի քիչ տրտմած եք կերպ-կերպ փորձանքների մեջ, որ ձեր հավատքի փորձառությունն ավելի պատվական գտնվի, քան կորստյան ոսկին, որ կրակով է փորձվում՝ գովության, պատվի և փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունում» (Ա Պետրոս 1.6,7):

Աստծո մաքրման կրակը *նեղությունները* և *փորձություններն* են, որոնք, իհարկե, գլխավոր գործիքներն են անապատում: Դրանց շիկացած տաքությունը բաժանում է մեր անմաքրությունները մեզանում գտնվող Աստծո բնավորությունից: Սա տեսականորեն առաջնորդում է մեզ դեպի սրբությունը (շուտով կբացատրեմ, թե ինչու եմ օգտագործում «տեսականորեն» բառը):

Ոսկու ևս մեկ հատկանիշը՝ ամենամաքուր վիճակում իր թափան-

ցիկությունն է (որի սահմանումն է՝ այն, ինչի միջով կարելի է տեսնել այնպես, ինչպես ապակու միջով): «Եվ քաղաքի հրապարակը՝ մաքուր ոսկի՝ ինչպես թափանցիկ ապակի» (Հայտնություն 21.21): Մաքրվելով կրակե փորձություններով՝ դուք թափանցիկ եք դառնում: Թափանցիկ անոթը փառք է բերում ոչ թե իրեն, այլ՝ իր պարունակությանը: Այն չի առաջացնում խոչընդոտներ և գրեթե աննկատ է:

Հենց որ մենք մաքրվենք, այս աշխարհը կրկին կտեսնի Հիսուսին: Երբ մենք դառնանք թափանցիկ, այսինքն՝ լինենք այնպիսի մարդիկ, որոնք խոսում են ճշմարտությունը, ամբարտավան չեն, պահում են իրենց խոսքը, ազնիվ են և թաքցնելու ոչինչ չունեն, այս աշխարհի մարդիկ կնկատեն դա:

Եսայի մարգարեի գրքում մենք ավելի հստակ ենք տեսնում սա.

> «Ես մաքրել եմ քեզ, բայց ոչ այնպես, ինչպես արծաթն է մաքրվում: Փոխարենը, Ես մաքրել եմ քեզ չարչարանքի հալոցում: Ես կփրկեմ քեզ հանուն Ինձ, այո՛, հանուն Ինձ: Ես թույլ չեմ տա, որ Իմ համբավն արատավորվի, և Ես չեմ կիսի Իմ փառքը կուռքերի հետ» (Եսայի 48.10,11, NLT):

Կրակե հալոցը տառապանք է, ոչ թե նյութական կրակը, որով մաքրվում է արծաթը (կամ ոսկին), և սա բացատրում է, թե ինչու է Նա ասում՝ *«բայց ոչ այնպես, ինչպես արծաթը»:* Մեր փորձություններն այն սաստիկ կրակն են, որն առանձնացնում է թանկարժեքն անարգից:

Աստված չի հեռացնում մեզանում գտնվող անարգ բաները մեր կամքին հակառակ: Ահա թե ինչու է Պողոսը գրում Բ Տիմոթեոս 2.21-ում, որ այն մարդը, ով ցանկանում է մաքուր լինել, «մաքրում է իր անձը»: Եթե դուք ցանկանում եք արդարացումներ անել՝ թույլ տալով, որ ձեր բնավորության արատները ետ պահեն ձեզ, Աստված չի հարկադրի ձեզ թողնել դրանք: Այդ չարչարանքի ընթացքն անօգուտ կլինի (և հենց այս պատճառով է, որ վերևում ես օգտագործեցի «տեսականորեն» բառը): Մաքրման գործընթացը սրբության ճանապարհին՝ մշտական է, շարունակական է և հաճախ ցավոտ է: Այնուամենայնիվ, ես ընդունում եմ այն՝ հասկանալով, թե ինչ պտուղ է այն տալու:

Եբրայեցիների թղթի հեղինակը պնդում է. «Հետևե՛ք... սրբության,

որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (12.14): Հիսուսն ասում է. «Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որ նրանք Աստծուն կտեսնեն» (Մատթեոս 5.8): Դավիթը, ով սրտանց ձգտում էր Աստծուն, աղաղակում է. «Ո՞վ է իմանում իր սխալմունքները. ծածուկ սխալմունքներիցս էլ սո՛ւրբ արա ինձ» (Սաղմոս 19.12):

Թող որ սա լինի մեր աղաղակը: Եթե մենք խնդրենք Աստծուն մաքրել մեր սրտերը, Նա կհեռացնի այն անմաքրությունները, որոնք թաքնված են մեզնից: Աստված գիտի մեր սրտի մտքերը և դրդապատճառները, նույնիսկ եթե մենք տեղյակ չենք դրանց մասին:

Ես հորդորում եմ, որ սովորեք ճանաչել և ընդունել հոգևոր անապատի ժամանակաշրջանը: Երբ կրակոտ փորձությունները գալիս են, մի՛ բարկացեք և մի՛ մեղադրեք մարդկանց, այլ նայե՛ք այդ փորձությունների նպատակին: Քննե՛ք ձեր սիրտը և թույլ տվեք Աստծուն հեռացնել անարգը թանկարժեքից: Նա պատվիրում է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ» (Ա Պետրոս 1.16):

Հիշեք՝ մաքրման ընթացքը զորացնում է այն, ինչն արդեն իսկ բարի է, և հեռացնում է այն, ինչը տկարացնում կամ ապականում է: Ընդունե՛ք Նրա մաքրման ընթացքը, որպեսզի դառնաք պատվի անոթ, որը կարող է հրաշալի և թափանցիկ կերպով ցույց տալ Նրա փառքը:

8

ԼԱ՛Վ ԿԱՌՈՒՑԵՔ

«Ոչ մի տեղ աստղերն այնքան վառ չեն փայլում, որքան բևեռային երկնքում: Ոչ մի ջուր այնքան քաղցրահամ չէ, որքան անապատի ավազներից բխող ջուրը: Եվ ոչ մի հավատք այնքան թանկ չէ, որքան այն հավատքը, որն ապրում և հաղթում է դժվարությունների մեջ: Փորձված հավատքը փորձառություն է բերում: Դուք երբեք չէիք հավատա, որ տկար եք, եթե ստիպված չլինեիք անցնել դժվարություններով: Եվ դուք երբեք չէիք ճանաչի Աստծո զորությունը, եթե չունենայիք Նրա զորության կարիքը՝ ձեզ դրանցով անցկացնելու համար»:

– Չարլզ Սփերջեն

«Որովհետև մարմնավոր լինողները մարմնի բաներն են մտածում, իսկ հոգևոր լինողները՝ Հոգու բաները»:

– Հռոմեացիների 8.5

Աստծո ծառայողը՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, կայանում է շնորհիվ բնավորության, ոչ թե օծության: Իսկ բնավորության ձևավորումը կամ մաքրումը տեղի է ունենում անապատում, երբ ճնշումներ են գալիս, հիասթափություններ են առաջանում, և երազանքներն անհասանելի են թվում:

Ես հիշում եմ այնպիսի ժամանակ անապատում, երբ պայքարում էի՝ հաղթահարելու համար ինձանում բարձրացող բարկությունը: Առաջին գլխում կարճ անդրադարձա դրան: Ես հարցրի Աստծուն. «Ինչո՞ւ եմ բարկացած բոլորի վրա: Ի՞նչը պետք է կապեմ իմ կյանքում կամ հեռացնեմ իմ կյանքից»:

Նա պատասխանեց. «Որդի՛ս, դու չես կարող կապել կամ հեռացնել քո մարմինը. դու պետք է խաչես այն»:

Առավել հուսահատված ես հարցրի. «Իսկ որտեղի՞ց է այս բարկությունը: Ես երբեք նման բան չեմ զգացել, նույնիսկ՝ մինչև փրկվելը»:

«Այն եղել է քեզանում տարիներ շարունակ, - պատասխանեց Նա, - բայց այն անտեսանելի է, ինչպես որ քո ոսկե մատանու միջի անմաքրությունները: Դրանք անտեսանելի են մնալու, քանի դեռ չես հալեցրել հալոցի մեջ, բայց երբ հալեցնես այն, այդ անմաքրությունները դուրս կգան մակերես: Ես ցույց տվեցի քո բարկությունը՝ բերելով քեզ այս տառապանքների հալոցի մեջ:

Ես չգիտեի, թե ինչպես կիրառել այն, ինչ Աստված ասաց ինձ. այնպես որ, Նա է՛լ ավելի մանրամասնեց.

- Դու կարող ես մեղադրել քո կնոջը, քո աշխատակիցներին, քո

ընկերներին, այն ճնշումը, որը գալիս է նորածին երեխա ունենալու պատճառով, և քո հանգամանքները: Եթե այդպես վարվես, այդ բարկությունը կմնա, և երբ կրակը թուլանա, այն կրկին կվերադառնա քո մեջ, և կարիք կլինի վերսկսել ամբողջ այս ընթացքը: Բայց դու կարող ես ապաշխարել՝ աղոթելով. «Աստվա՛ծ, ես զղջում եմ. հեռացրո՛ւ ինձնից այս բարկությունը»: Եթե այդպես վարվես, Ես կվերցնեմ Իմ մեծ շերեփը և կհեռացնեմ այն քեզնից»:

Ես հենց այդպես էլ վարվեցի: Երբ կրակե անապատի ճնշումը բացահայտեց իմ բարկությունը, ես խոստովանեցի իմ մեղքը, ապաշխարեցի և խնդրեցի Աստծուն վերցնել այն:

Ահա ևս մեկ պատճառ, թե ինչու է անապատն անչափ արժեքավոր: Թեև այն կարող է շատ խիստ լինել, բայց, ի վերջո, մեծ ուրախություն է պարգևում մեզ:

> «Որ նրանով կուրախանաք, թեև հիմա, ինչպես որ հարկը պահանջում է, մի քիչ տրտմած եք կերպ-կերպ փորձանքների մեջ, որ ձեր հավատքի փորձառությունն ավելի պատվական գտնվի, քան կորստյան ոսկին, որ կրակով է փորձվում՝ գովության, պատվի և փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունում» (Ա Պետրոս 1.6,7):

Անապատն այն վայրն է, որտեղ մենք մաքրվում ենք, և որտեղ ձևավորվում է մեր բնավորությունը: Հենց այս տառապանքի և հալածանքի հալոցում է կայանում ճշմարտապես աստվածապաշտ մարդը: Հռոմեացիների 5.3,4-ում գրված է. «Նույնպես, մենք կարող ենք ցնծալ, երբ բախվում ենք խնդիրների և փորձությունների, քանի որ մենք գիտենք, որ դրանք օգնում են մեզ համբերություն ձևավորել: Իսկ համբերությունը ձևավորում է հաստատուն բնավորություն» (NLT):

Աստված հավանում էր Դավթին, քանի որ նա Իր սրտի համեմատ մարդ էր. նա ձգտում էր Աստծո սրտին, ոչ թե որևէ երկրային թագավորության: Սավուղ թագավորն այդպես էլ չանցավ անապատով, որը կմաքրեր նրան, և նրա ներսում անմաքրություն և անապահովություն կար: Դավիթը մաքրվեց անապատում, և Աստված նույնիսկ գործածեց Սավուղին՝ նրան այդտեղ ուղարկելու համար:

Աստծո ճանապարհները կարող են առեղծվածային լինել, բայց Նրա ծրագրերը միշտ բարի են:

Երազանքը հետաձգվո՞ւմ է

Այնուամենայնիվ, մաքրումը կարող է ցավոտ լինել: Ես չեմ ստի. անապատը նման չէ Դիսնեյլենդ գնալուն: Չարչարանքը չարչարանք է, և երբեմն այն հարվածում է մեզ շատ ցավոտ ձևերով:

Միգուցե Աստված ցույց է տվել ձեզ տեսիլքներ կամ երազներ ձեր կոչման մասին: Միգուցե Նա խոսել է ձեզ հետ այն ծրագրերի մասին, որոնք որոշել է ձեզ համար: Սակայն անապատում հաճախ թվում է, թե որքան ավելի եք փնտրում Տիրոջը և հնազանդվում Նրա Խոսքին, այնքան ավելի եք հեռանում այն երազանքից, որը Նա դրել է ձեր սրտում:

Մտածե՛ք Հովսեփի մասին. նա երազ էր տեսել, ըստ որի ինքն առաջնորդ էր լինելու, և նույնիսկ իր եղբայրներն ու ընտանիքն էին հնազանդվելու իր իշխանությանը: Ի՞նչ կատարվեց դրանից հետո: Այն մարդիկ, որոնք պետք է պաշտպանեին նրան՝ նրա ավագ եղբայրները, փոսը նետեցին նրան և կարճ ժամանակ անց վաճառեցին ստրկության օտար երկրում: Կարո՞ղ եք պատկերացնել նրա շփոթմունքը, հուսահատությունը և ցավը:

Ես գրեթե համոզված եմ՝ նա մտածում էր, որ Աստված գերբնականորեն միջամտելու էր և կարճ ժամանակ անց ազատելու էր իրեն: Այդ հույսն ի վերջո մարելու էր, քանի որ նրա ստրկությունը չտևեց մի քանի ամիս կամ մի քանի տարի, այլ՝ տասը տարուց ավելի: Դա երկար ժամանակ է: Ամբողջ այդ ընթացքում նա գիտեր, որ իրեն ցավ պատճառողներն ապրում էին ազատության մեջ և վայելում էին կյանքն իրենց մեծահարուստ հոր տանը:

Ի՞նչ էր անում Հովսեփը: Ինչպիսի՞ն էր նրա արձագանքն իր անապատային շրջանում: Նա պահում էր իր հավատքը, ծառայում էր և չէր մոռանում Աստծո խոստումը: Նա հավատարիմ էր, իմաստուն էր, աշխատասեր էր և, որպես արդյունք, հասավ օրհնության և հաջողության:

Այնուամենայնիվ, նրա պայմանները ևս մեկ անգամ հանկարծակի փոխվեցին և շատ ավելի վատթարացան: Նրա ղեկավարի կինը ցան-

կությամբ լի հայացքներ էր ուղղում նրա վրա: Նա ուզում էր գայթակղեցնել նրան՝ շնության դրդելով, ոչ թե մեկ կամ երկու անգամ, այլ շատ անգամներ: Նույնիսկ այդ դեպքում Հովսեփը հնազանդվեց Աստծուն՝ ամեն անգամ հեռանալով սեռական անբարոյությունից: Ի վերջո, այդ կինն այնքան կպչուն դարձավ, որ Հովսեփը բառացիորեն ստիպված էր փախչել նրա ձանկերից: Արհամարհանքի արժանանալուց հետո նա մեղադրեց Հովսեփին այն բանի մեջ, ինչը վերջինս չէր արել: Նրան անարդարացի կերպով «դատապարտեցին» և բանտարկեցին (սովորաբար օտարերկրացի ստրուկը, որը թագավորի պաշտոնյայի կնոջը բռնաբարելու փորձ էր արել, երբեք ցերեկային լույս չէր տեսնում):

Բանտում գտնվող մարդը մտածելու շատ ժամանակ ունի: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի մտքերի հետ էր Հովսեփը ստիպված պայքարել. *«Ես ամբողջ կյանքում հավատարմորեն ծառայել եմ Աստծուն և ի՞նչ եմ ստացել: Ես առանց մեղավորության հայտնվեցի այս բանտում, որտեղ էլ փտելու եմ: Իմ կյանքն ավարտվա՛ծ է: Իմ չար եղբայրներն ազատ են և, ամենայն հավանականությամբ, լիառատ կյանք են վայելում: Ի՞նչ սխալ եմ գործել: Ես միայն պատմեցի եղբայրներիս այն երազը, որը, ինչպես կարծում էի, Աստված էր տվել ինձ, և ահա թե ինչ կատարվեց: Ի՞նչ օգուտ, որ ես ծառայեցի Աստծուն: Թվում է՝ որքան ավելի եմ հնազանդվում Նրան, այնքան ավելի է կյանքս վատթարանում»:*

Ո՞վ կարող էր մեղադրել Հովսեփին նման մտքերի համար: Դրանք լիովին տրամաբանական են թվում, այնպես չէ՞:

Եվ մեկ օր բանտում Հովսեփը բախվեց իր մեծագույն անապատային փորձությանը: Աստված բերեց նրա մոտ երկու մարդու՝ մատռվակի և հացթուխի, որոնցից ամեն մեկը երազ էր տեսել: Նրանք խիստ շփոթվել էին իրենց երազների պատճառով և ցանկանում էին իմանալ դրանց մեկնությունը: Եթե Հովսեփը կորցրած լիներ իր հավատքն Աստծո և Նրա խոստման հանդեպ, նա եսակենտրոն կդառնար և չէր ծառայի նրանց: Նա կարող էր ասել. «Դուք երազնե՞ր եք տեսել անցած գիշեր: Մեկ անգամ ես էլ երազ տեսա: Ես նույնպես մտածեցի, որ այդ երազն Աստծուց էր: Բայց գիտեք, երազները չեն կատարվում: Երազներն անօգուտ են, դատարկ և մոլորեցնող: Կարո՞ղ եք հանգիստ թողնել ինձ»:

Եթե Հովսեփն այդպես վարվեր, նա կարող էր մնալ իր անա-

պատում ավելի երկար, նույնիսկ՝ մինչև կյանքի ավարտը: Նա բաց կթողներ ազատություն ստանալու հնարավորությունը (հետագայում մատռվակը պատմեց թագավորին, որ Հովսեփը կարող էր երազներ մեկնել, ինչի արդյունքում ազատվեց բանտից և առաջխաղացում ունեցավ): Եթե նա սկսեր խղճալ ինքն իրեն, այդպես էլ կմահանար բանտում: Նա դառնացած, կասկածամիտ և հուսալքված մարդ կդառնար և ամեն կերպ կասեր մարդկանց. «Աստված հավատարիմ չէ. Նա չի պահում Իր խոստումները»:

Սակայն Հովսեփն այդպես չվարվեց: Նա վանեց իրենից այն մտքերը և տրամաբանությունը, որոնք ընդդիմանում էին Աստծուց ստացած խոստմանը, և որոշեց ծառայել մատռվակին և հացթուխին: Նա հետևողականորեն հնազանդվեց Աստծուն: Եվ ի՞նչ տեղի ունեցավ: Եկավ այն օրը, երբ նա ազատ արձակվեց և առաջխաղացում ունեցավ՝ դառնալով փարավոնի տեղակալը:

Հովսեփի առաջնորդ դառնալուց ինը տարի անց խիստ սովի պատճառով նրա եղբայրները Եգիպտոս եկան և կանգնեցին նրա առջև: Հովսեփը չփորձեց վրեժ լուծել նրանցից, ինչպես շատերը կանեին: Նրանում ձևավորվել էր Աստծո թագավորության ճշմարիտ առաջնորդի բնավորությունը: Նա բարություն ցուցաբերեց իր հանդեպ չարությամբ վարվողներին: Նա դառնացած մարդ չէր. նա լցված էր հավատքով, սիրով և ներմամբ այն մարդկանց հանդեպ, որոնք դավաճանել էին իրեն: Սաղմոսերգուն գրում է Հովսեփի մասին.

> «Նա [Աստված] մարդ ուղարկեց նրանց առջևից՝ Հովսեփին, ով վաճառվեց որպես ստրուկ: Նրանք ցավեցրին նրա ոտքերը կապանքներով. նա դրվեց երկաթի մեջ: Մինչև այն ժամանակը, երբ *Նրա Խոսքը* կատարվեց, Տիրոջ Խոսքը փորձեց նրան» (Սաղմոս 105.17-19, NKJV):

Միայն Աստված գիտեր, թե երբ էր իրականանալու այն խոստումը, որն Ինքը տվել էր Հովսեփին (ավելի քան քսան տարի անց՝ նրա երազից հետո): Անապատը ձևավորեց նրանում այնպիսի բնավորություն, որի շնորհիվ նա ճիշտ կկառուցեր իր կյանքը, ընտանիքը և այն ամենը, ինչ ինքը ղեկավարելու էր: Նրա հաջողության բանա-

լին Տիրոջ հանդեպ ունեցած ակնածանքն ու երկյուղն էին: Անկախ իր հանգամանքներից՝ Հովսեփը քարոզում էր Աստծո Խոսքը, վարվում էր ըստ Աստծո Խոսքի և հնազանդվում էր Աստծո Խոսքին:

Իսկ ինչպիսի՞ն եք դուք: Ինչպես արդեն նշեցի, միգուցե Աստված տվել է ձեզ երազներ և տեսիլքներ այն մասին, թե ինչի համար է կանչել ձեզ: Միգուցե Նա խոսել է ձեզ հետ այն ծրագրերի մասին, որոնք Նա որոշել է ձեզ համար: Բայց, ինչպես և Հովսեփը, դուք անապատում եք, և թվում է՝ որքան ավելի եք փնտրում Տիրոջը և հնազանդվում Նրա Խոսքին, այնքան ավելի եք հեռանում այն երազանքից, որը Նա դրել է ձեր սրտում:

Միգուցե դուք տեսել եք, որ այլ մարդիկ, նույնիսկ նրանք, ովքեր թշնամաբար են վերաբերվել ձեզ, առաջխաղացում են ունեցել ծառայության մեջ (կամ՝ կյանքի ցանկացած բնագավառում), մինչ դուք կարծես շարունակում եք հեռանալ այն երազանքից, որը ստացել եք Աստծուց: Միգուցե դուք անում եք այն, ինչ գիտեք, բայց ձեր երազանքը չի կատարվում:

Միգուցե ձեր շուրջը կան մարդիկ, որոնք մարմնավոր են և չեն փնտրում Տիրոջը, բայց նրանք առաջխաղացում են ունենում, և կարծես թե բարգավաճում են: Նրանք ստանում են բոլոր ֆինանսական և հասարակական «օրհնությունները»: Միգուցե նրանց առաջընթացը պայմանավորված է շողոքորթությամբ և շահարկումներով: Միգուցե նրանք հաջողության են հասնում, քանի որ անազնիվ են վարվում և խաբում են մարդկանց, սակայն, միևնույն է, թվում է՝ նրանք «օրհնված» են, իսկ դուք նման եք Հովսեփին՝ շղթայված փարավոնի բանտում:

Ինչպե՞ս եք վարվում այդ դեպքում: Դուք տրտնջո՞ւմ եք: Աստված ասում է հետևյալը.

> «Ձեր խոսքերը ծանր են Ինձ դեմ, - ասում է Տերը: - Բայց դուք ասում եք. «Մենք ի՞նչ ենք խոսում Քեզ դեմ»: Դուք ասում եք. «Դատարկ է Աստծուն ծառայելը, և ի՞նչ օգուտ, որ մենք Նրա պահպանությունները պահել ենք և սգով վարվեցինք Զորաց Տիրոջ առջև: Եվ հիմա մենք երանում ենք գոռոզներին, և բարեշեն էլ են անօրինություն անողները, մինչև անգամ Աստծուն էլ փորձում են և պրծնում»» (Մաղաքիա 3.13-15):

Ի՞նչ էին ասում այդ տրտնջացողները: Նրանք ասում էին. «Ի՞նչ

օգուտ, որ մենք հնազանդվեցինք Աստծուն, քանի որ մեր կյանքում ոչինչ չի փոխվում: Իսկ անօրենները՝ մարմնավոր և խաբեբա մարդիկ, առաջխաղացում են ունենում, օրհնվում են և բարգավաճում» (սա «Բիվերի շրջասությունն» է): Աստված անվանում է նրանց ասածը սարսափելի կամ ծանր խոսքեր և համարում է, որ դրանք ուղղված են Իր դեմ: Ավելի պարզ ասած՝ դա տրտունջ և բողոք է:

Տրտունջը թույլ չտվեց Իսրայելի զավակներին մուտք գործել Խոստման երկիր: Ինչո՞ւ է տրտունջը վիրավորական Աստծո համար, և ինչո՞ւ այն այդքան խիստ դատաստանի արժանացավ: Այն անուղղակիորեն ասում է Աստծուն. «Ինձ դուր չի գալիս այն, ինչ Դու անում ես իմ կյանքում, և եթե ես լինեի Քո փոխարեն, այլ կերպ կվարվեի»: Դա Աստծո հանդեպ ակնածանքի իսպառ բացակայություն է:

Աստված պարզում է, թե ով է ձգտում Իրեն, իսկ ով՝ Իր տված օրհնություններին: Առաջինները նպատակաուղղված են. վերջինները տրտնջում են, որ, իրենց կարծիքով, ամեն ինչ ճիշտ չէ: *Իրական* օրհնություններն այն չեն, ինչ ոմանք օրհնություն են *անվանում:* Որոշ օրհնություններ կարող են մնայուն չլինել, եթե ձեր դիրքորոշումը (սիրտը) ճիշտ չէ: Դիմելով եսասիրական դրդապատճառներ ունեցող մարդկանց, որոնք տրտնջում են, Տերն ասում է, թե ինչպես է վարվելու թե՛ իրենց, թե՛ իրենց օրհնությունների հետ:

> «Լսե՛ք, դո՛ւք, քահանանե՛ր [տրտնջացող հավատացյալներ], այս պատվերը ձե՛զ համար է: Լսե՛ք Ինձ և որոշե՛ք պատվել Իմ Անունը, - ասում է երկնքի զորքերի Տերը, - այլապես Ես սարսափելի անեծք կբերեմ ձեր դեմ: Ես կանիծեմ նույնիսկ այն օրհնությունները, որոնք դուք ստանում եք: Այո՛, Ես արդեն անիծել եմ դրանք, քանի որ դուք լրջորեն չեք վերաբերվել Իմ զգուշացմանը» (Մաղաքիա 2.1,2, NLT):

Մեր վարձատրությունը կամ ժառանգությունը՝ ունեցվածքը կամ դիրքը չեն. մեր ժառանգությունը՝ Ինքը Տերն է:

Եզեկիել 44.28-ում գրված է. «Եվ սա նրանց համար ժառանգություն լինի. Ես եմ նրանց ժառանգությունը... Ես եմ նրանց կալվածքը»: Շատ քրիստոնյաներ այսօր հեռացրել են իրենց հայացքը *ճշմարիտ* ժառան-

գությունից և փոխարենը կենտրոնացել են ունեցվածք կամ դիրք ստանալու վրա, միգուցե նույնիսկ լավ բաների, որոնք տրված են Աստծուց: Բայց նրանք նման են այնպիսի որդու, որն ավելի հետաքրքրված է իր հորից ինչ-որ բան ստանալու մեջ, քան նրա հետ շփվելու: Ես չորս որդի ունեմ և սիրով եմ նվերներ տալիս նրանց: Այնուամենայնիվ, եթե նրանք շփվեին ինձ հետ միայն ինձնից ինչ-որ բան ստանալու համար, դա ցավ կպատճառեր իմ սրտին: Մաղաքիան շարունակում է.

> «Այն ժամանակ խոսեցին Տիրոջից վախեցողներն իրար հետ, և Տերը ականջ դրեց ու լսեց, և հիշատակի գիրք գրվեց Նրա առջև Տիրոջից վախեցողների համար և Նրա անունը պատվական համարողների համար» (Մաղաքիա 3.16):

Այս մարդիկ ապրում էին նույն անապատային պայմաններում, ինչ «տրտնջացողները», սակայն նրանց առաջնահերթությունը դիրք, ճանաչում կամ ինչ որ բան ստանալը չէր: Նրանք փնտրում էին Տիրոջ սիրտը: Նման մարդկանց մեջ վառվում է Նրան ճանաչելու ցանկությունը: Դուք կարող եք զրուցել նրանց հետ հասարակությանը կամ աշխատանքին վերաբերող թեմաներով, բայց նրանց սիրտը վառվում է, երբ նրանց հետ խոսում եք Տիրոջ և Նրա Խոսքի մասին:

Այսպիսի մարդկանց մասին Ղուկասը գրում է. «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբ որ ճանապարհին մեզ հետ խոսում էր, և ինչպես գրքերը բաց էր անում մեզ համար» (Ղուկաս 24.32): Նրանք ձգտում են Հոգու իրողություններին և ասում են. «Ես միայն ցանկանում եմ ճանաչել Աստծուն. ես ցանկանում եմ հաճելի լինել Նրան. ես քաղց ու ծարավ եմ զգում Աստծո Խոսքի հանդեպ. ես ցանկանում եմ ուրախացնել Նրան, քանի որ Նա իմ ուրախության աղբյուրն է»: Սա է ամենակարևորը նրանց համար: Նրանց առաջին սերը Հիսուսն է, ոչ թե դիրքը, կարգավիճակը կամ ունեցվածքը:

Նրանց վարքը չի փոխվում, անկախ այն բանից՝ նրանք անապատո՞ւմ են, թե՞ քարոզում են միլիոնավոր մարդկանց:

> «Որովհետև մենք Աստծո գործակիցներն ենք. դուք Աստծո դաշտն եք, դուք Աստծո շինությունն եք: Համաձայն Աստծո

> շնորհքի, որը տրվեց ինձ, ինչպես իմաստուն ճարտարապետ՝ ես դրեցի հիմքը, և մեկ ուրիշը կառուցում է դրա վրա: Բայց թող ամեն մեկն ուշադրություն դարձնի, թե ինչպես է կառուցում դրա վրա» (Ա Կորնթացիների 3.9,10, NKJV):

Մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք, թե ինչպես ենք կառուցում մեր կյանքը: Աստվածաշնչում տուն կառուցելը խորհրդանշում է այն, թե ինչպես ենք կառուցում մեր կյանքը և ծառայում Աստծո թագավորությանը: Մենք պատկանում ենք Աստծուն, քանի որ մենք Նրա շինությունն ենք.

> «...Քրիստոս Հիսուսին, որ հավատարիմ է Իրեն Հաստատողին, ինչպես Մովսեսն էլ՝ Նրա բոլոր տան մեջ: Որովհետև Նա ավելի փառքի արժան եղավ, քան Մովսեսը, որքան որ տնից ավելի պատիվ ունի այն շինողը: Որովհետև ամեն տուն մեկից է շինվում, բայց Նա, որ ամենն արեց, Աստված է» (Եբրայեցիների 3.1-4):

Ուշադրություն դարձրեք, թե ով է կառուցում տունը. Տերը: Այն չի կառուցվում մեր ուժերով: Տիրոջ կառուցածը մնայուն է. մեր կառուցածը՝ ոչ: «Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում այն շինողները» (Սաղմոս 127.1): Այն, ինչ մարդը կառուցում է առանց Աստծո՝ կյանքը, տունը, նույնիսկ՝ ծառայությունը, մնայուն չի լինի:

Ծննդոց 11.4-ում գրված է մի օրինակ այս մասին. «Եվ ասացին. «Եկեք մեզ համար մի քաղաք շինենք և մի աշտարակ, և նրա գլուխը մինչև երկինքը լինի, և մեզ համար անուն ստանանք»»:

Ո՞րն էր Բաբելոնի աշտարակը կառուցողների դրդապատճառը: Նրանք ցանկանում էին հասնել իրենց շահադիտական նպատակներին, կանգնեցնել իրենց շինությունը՝ իրենց փառքի համար: Նրանք ցանկանում էին լինել Աստծո պես, բայց լիովին անկախ Նրանից: Նրանց նախաձեռնությունը կատարում էր իրենց ցանկությունները և կամքը, ոչ թե Աստծունը: Աստծուց առանձին կառուցելը երբեք արդյունք չի տա, քանի որ՝ որքան էլ ազնիվ լինեն մեր դրդապատճառները, առանց Աստծո՝ դա դատարկ զբաղմունք է: Ահա թե ինչու է մեզ տրվել հետևյալ զգուշացումը.

«Բայց թող ամեն մեկն ուշադրություն դարձնի, թե ինչպես է կառուցում դրա վրա... Եթե ինչ-որ մեկը կառուցի այդ հիմքի վրա (որը Քրիստոս Հիսուսն է) ոսկով, արծաթով, թանկարժեք քարերով, փայտով, հարդով, ծղոտով, ամեն մեկի գործը հայտնի կդառնա, որովհետև այն Օրը («ո՞վ կարող է դիմանալ Նրա գալու օրվան») կհայտնի դա, քանի որ դա կհայտնվի կրակով, և կրակը կփորձի ամեն մեկի գործը, թե ինչ տեսակի է այն» (Ա Կորնթացիների 3.10-13, NKJV):

Ոսկին, արծաթը և թանկարժեք քարերը խորհրդանշում են Աստծո կամքով կառուցելը: Փայտը, հարդը և ծղոտը խորհրդանշում են կառուցման մեր մեթոդները՝ համաձայն այս աշխարհի օրինակի: Մի՞թե այս խոսքերը նկարագրում են միայն դատաստանը Երկնքում: Ո՛չ: Այս խոսքերն այն մասին են, որ երբ Նա գա Իր տաճարը (Մաղաքիա 3.16-4.1 և Ա Կորնթացիների 3.16,17), կգա որպես կրակ, որը կա՛մ *կսպառի* փայտը, հարդը և ծղոտը, կա՛մ *կմաքրի* ոսկին և արծաթը: Ահա թե ինչու է Նա շարունակում. «Եթե մեկի գործն այրվի, նա կորուստ կկրի, բայց ինքը կփրկվի, սակայն իբրև թե կրակի միջով» (խս. 15, NKJV):

Եթե դուք կառուցեք ձեր կյանքը, գործը կամ ծառայությունը ձեր պատրաստած աղյուսներով, օրինակ՝ ձեր անհատականության ուժով կամ աշխարհիկ մեթոդներով... եթե կառուցեք՝ վախի միջոցով շահարկելով կամ վերահսկելով մարդկանց... եթե հաջողության հասնեք՝ շողոքորթության կամ այլ մարդկանց ձեռքբերումների հաշվին... եթե կառուցելու ընթացքում քանդեք այլ մարդկանց գործը՝ քննադատության կամ բամբասանքի միջոցով... այն ամենը, ինչին դուք կհասնեք այդպիսի մեթոդներով, կայրվի և կկորչի:

Շատերը դիմում են խաբեության և նույնիսկ բացահայտ ստում են, որպեսզի առաջխաղացում ապահովեն իրենց համար: Սա նույնպես այրվելու է: «Ոչ ոք իր անձը չխաբի: Եթե ձեզնից մեկը կարծում է, թե իմաստուն է այս աշխարհում, թող նա հիմար լինի, որ իմաստուն լինի: Որովհետև այս աշխարհի իմաստությունը հիմարություն է Աստծո առջև» (Ա Կորնթացիների 3.18,19):

Ցանկացած բնագավառ ձեր կյանքում, որում ձեր դրդապատճառը շահադիտական է, Աստծո համար փայտ է, հարդ և ծղոտ: Անկախ այն

բանից, թե առաջին հայացքից որքան է դա օգնում մարդկանց, որքանով է դա արվում Տիրոջ անունով կամ՝ որքան ժամանակ է զոհաբերվել դրա համար, այդ ամենն այրվելու է:

Այս աշխարհի իմաստությունը եսակենտրոն է. «Բայց եթե դառը նախանձ և հակառակություն ունեք ձեր սրտերում... Այս իմաստությունը վերևից իջած չէ, այլ՝ երկրային, շնչավոր և դիվական» (Հակոբոս 3.14,15): Նախանձը ծնում է մրցակցություն և կասկածամտություն: Մեր դիրքը պահպանելու համար մենք կարող ենք դիմել խարդավանքների, որոնց պատճառով կարող ենք կորցնել մեր ընկերներին, մեր ազնվությունը և ամենակարևորը՝ մեր հարաբերություններն Աստծո հետ: Նույնիսկ հովիվները և ծառայողները կարող են դրդված լինելով՝ պահպանել իրենց դիրքը, տիտղոսը կամ աշխատավարձը և անտեսեն իրենց մտերմությունն Աստծո հետ:

Իսկ Աստծուն անկեղծորեն փնտրող մարդկանց կարող է թվալ, թե որքան ավելի են փնտրում Նրան, այնքան ավելի են հեռանում Նրանից: Նրանք հուսահատորեն աղաղակում են. «Աստվա՛ծ, որքան ավելի եմ փնտրում Քեզ, այնքան ավելի եմ իջնում՝ բարձրանալու փոխարեն»: Իսկ Աստված պատասխանում է. «Ավելի՛ խորացրու քո հարաբերություններն Ինձ հետ»:

> «Նա, ով Ինձ մոտ է գալիս և Իմ Խոսքերը լսում և դրանք անում է, ցույց տամ ձեզ, թե ում նման է: Նման է մի տուն շինող մարդու, որ փորեց և խորացրեց և հիմքը ժայռի վրա դրեց...» (Ղուկաս 6.47,48):

Երբ մեր ընտանիքն ապրում էր Դալլասում, ես հետևում էի, թե ինչպես էին շինարարները երկնաքերեր կառուցում: Սկզբում գործը գրեթե առաջ չէր գնում, քանի որ ամիսներ շարունակ նրանք միայն քանդում էին ընդերքը և փորում էին՝ հիմք դնելու համար: Որքան մեծ էր շենքը, այնքան խորն էր այդ փոսը, և այնքան ընդարձակ էր շենքի հիմքը: Գետնի վրայից թվում էր, թե շինարարները դանդաղ էին աշխատում և գրեթե առաջընթաց չունեին: Բայց հանկարծ այդ բարձրահարկ շենքը սկսում էր արագորեն կառուցվել: Կառուցումն ասես տեղի ունենար մեկ օրում՝ նախապատրաստական աշխատանքների համեմատ:

Այդ *վերընթաց կառուցումը* ոչինչ էր՝ *վարընթաց պատրաստության* համեմատ:

Ես հավատում եմ, որ շատերը Քրիստոսի մարմնում գտնվում են վարընթաց պատրաստության փուլում, հնարավոր է՝ հատկապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչները: Ես փա՛ռք եմ տալիս Աստծուն դրա համար: Միգուցե նրանք կանչված են ծառայող դառնալու համար կամ այլ երազանք ունեն Տիրոջից, սակայն ներկայումս նրանք չեն զբաղեցնում կարևոր ծառայողական դիրքեր: Ամեն ինչ շատ արագ չի կատարվում, բայց համոզված եմ, որ նրանք մանրակրկիտ պատրաստություն են անցնում անապատում՝ Աստծո հսկողությամբ: Նրանց կյանքում դրվում է հիմքը՝ ձևավորվում է Քրիստոսի բնավորությունը, որը տարիներ շարունակ կհաստատի նրանց, ովքեր մեծ ավյունով կծառայեն Քրիստոսին և Նրա թագավորությանը:

Նրանք, ովքեր անապատում չեն, կարծես արագորեն բարձրանում են՝ քաղաքական ճանապարհներով կամ այլ կերպերով ապահովելով իրենց առաջխաղացումը: Անապատում բնակվողներին կարող է թվալ, թե իրենք լճացման մեջ են: Միգուցե նրանք նույնիսկ գայթակղություն ունենան ընտրելու արագ և հեշտ ճանապարհ՝ այդ վիճակից դուրս գալու համար: Այնուամենայնիվ, հասկանալով, որ այդ ճանապարհը մնայուն բնավորության պտուղ չի տալու և դրդելու է փոխզիջման ենթարկել այն բնավորությունը, որն իրենք արդեն իսկ ձեռք են բերել, նրանք որոշում են, որ ռիսկը չափազանց մեծ է: Սպասելով Աստծուն՝ նրանք թույլ են տալիս Ճարտարապետին հաստատուն հիմք դնել Ժայռի վրա:

Ներկայումս կան հովիվներ, որոնք ջանասիրաբար փնտրում են Աստծուն, բայց կրկին, թվում է՝ տեղի է ունենում շատ քիչ բան կամ գրեթե ոչինչ. նրանք չորության վայրում և փուլում են: Նրանք հետևում են, թե ինչպես են մյուսները հաջողությամբ գովազդում իրենց և իրենց ծառայությունները՝ օգտագործելով աշխարհիկ մարկետինգային մեթոդներ և ստեղծելով երջանկության ու հաջողության պատրանք սոցիալական ցանցերում: Այնուամենայնիվ, Աստված թույլ չի տա, որ անապատն անցնող մարդիկ կառուցեն այդ մեթոդներով, քանի որ Նա հաստատուն և մնայուն հիմք է պատրաստում նրանց համար:

Կան նաև մարդիկ, որոնց Աստված դեռ հստակ ցույց չի տվել որևէ

Ինչպե՞ս անցնել անապատը

#8 Հեսուն ճիշտ հասկացավ

Եթե անապատը նախատեսված է մեր օգտի համար, ինչպե՞ս ստանանք բարին անապատում և խուսափենք չարից:

Հեսուն այնպիսի մարդու օրինակ է, որի սիրտն ուղիղ էր անապատում լինելու ընթացքում: Երբ Մովսեսը բարձրացավ Սինա սարը, Հեսուն մնաց սարի ստորոտում: Նա ցանկանում էր հնարավորինս մոտ լինել Տիրոջ ներկայությանը: Երբ Մովսեսը հանդիպում էր Աստծուն խորանում, Հեսուն կրկին այնտեղ էր, որպեսզի մոտ լիներ Տիրոջ ներկայությանը: Նույնիսկ երբ Մովսեսն ավարտում էր Տիրոջ հետ խոսելը, Հեսուն մնում էր Ժողովքի խորանում (տե՛ս Ելից 33.11):

Հեսուի գրքում տեսնում ենք, որ մեղքի հինգ բնագավառները, որոնցից իսրայելցիների ավագ սերունդն այդպես էլ չկարողացավ ազատվել, նույն կերպով չդրսևորվեցին անապատում գտնվող երկրորդ (Հեսուի) սերնդի մեջ: Դա տեղի ունեցավ միայն մեկ անգամ՝ Աքար անունով մարդու կյանքում, սակայն առաջնորդները և ժողովուրդն անմիջապես փնտրեցին Աստծուն, որպեսզի լուծեին այդ խնդիրը: Երկրորդ սերունդը ճիշտ վարվեց, քանի որ նրանք տեսել էին նախորդ սերնդի ձախողումները՝ այն, թե ինչպես իրենց ծնողները մահացան անապատում՝ այդպես էլ չստանալով Աստծո խոստումը:

Հեսուն և նրա սերունդը կենտրոնացան Արարչի վրա և մտան Խոստման երկիր: Նրանք հաստատուն կերպով պահեցին Աստծո Խոսքը և չտրվեցին հուսահատությանը: Նրանք հրաժարվեցին տրտնջալուց և պատրաստակամորեն հավատացին Աստծուն:

դիրք կամ վայր, այլ միայն երազանք է տվել: Նրանք մտածում են, թե ինչպես է այն կատարվելու, և թվում է՝ այն է՛լ ավելի է հեռանում իրենցից:

Այս չոր անապատային փուլում Աստված առանձնացնում է նրանց, ովքեր պատրաստ են հնազանդությամբ սպասել Իրեն, և առանձնացնում է նրանցից, ովքեր պատրաստ են կառուցել խաբեությամբ, շահարկումներով և հաշվենկատորեն ապահովելով սեփական առաջխաղացումը: Ճշմարիտ և Աստծուց որոշված առաջխաղացումը, այսինքն՝ ելքն անապատից, կստանան այն մարդիկ, որոնք սպասում են, որ Աստված գա Իր տաճարը: Գրված է.

> «Երբ որ պատշաճ ժամանակ ունենամ (կամ՝ ընտրեմ), ուղիղ կդատեմ Ես... Որովհետև բարձրանալը ո՛չ արևելքից է, և ո՛չ արևմուտքից, և ո՛չ անապատից: Բայց Աստված է դատավոր. սրան խոնարհեցնում է և նրան բարձրացնում» (Սաղմոս 75.2-7):

Մարմնական բնության անարդյունավետությունը

Ճշմարտությունն այն մասին, որ մարմինն ու Հոգին մշտական պայքարի մեջ են, վերաբերում է կյանքի բոլոր բնագավառներին, ոչ թե միայն ծառայությանը: Հիշեք, որ մարմինը, այսինքն՝ մարմնական բնությունը, երբեք չի կարող ծնունդ տալ Աստծո խոստումներին: Եթե մարմինը ծնունդ տա ինչ-որ բանի, դուք խնդիրներ կունենաք, քանի որ մարմինն էլ ստիպված կլինի պահպանել դա: Եթե Հոգին ծնունդ տա ինչ-որ բանի, Աստված կմատակարարի դրա համար:

Մարմնավոր ծառայությունը սովորաբար հանգեցնում է շահարկման և վերահսկողության մթնոլորտի: Առաջնորդները վարվում են հարկադրանքով կամ ազդում են մարդկանց զգացմունքների վրա՝ արդյունքներ ստանալու համար: Եթե դուք նրանց հետևորդներից մեկն եք, հանկարծ պատասխանատու եք դառնում *նրանց* հաջողության կամ ձախողման համար՝ կախված այն բանից, թե ինչպես եք արձագանքում նրանց ցուցումներին: Մարդիկ գտնվում են բազմաթիվ ճնշումների, օրինապաշտության, տիրապետման և շահարկումների մթնոլորտում:

Թեև ես հիմնականում խոսում եմ ծառայողական հարցերի մասին,

ուզում եմ շեշտադրել, որ սա *չի* վերաբերում միայն հոգևոր ծառայությանը: Ես նկատի ունեմ *ցանկացած բան*, ինչը ստեղծվում է մարմնի կամ մարմնական բնության ուժերով: Սա կարող է վերաբերել մեր կոչմանը գործարարության և կրթության մեջ, առողջապահության, կառավարման և ռազմական ոլորտներում, պրոֆեսիոնալ սպորտում և բազմաթիվ այլ բնագավառներում, որոնցում Աստված կանչում է Իր ժողովրդին՝ ծառայելու համար:

Մյուս կողմից, Հոգուց ծնվածը հասկանում է, որ ինքը դեր չի խաղացել իր կազմավորման մեջ և, այդ պատճառով, գիտակցում է, որ անկարող է պահպանել ինքն իրեն կամ ապահովել իր աճը: Աստված Ինքն է պատասխանատու այն բանի համար, ինչ Ինքը ստեղծել և կառուցել է:

Երբ ծնվեց Իսահակը, Իսմայելի դիրքն արդեն հաստատված էր (տե՛ս Ծննդ. 16-21 գլուխներ): Համաձայն իմ փորձառության՝ Իսմայելը մշտապես փորձում է հաստատվել, մինչև որ կծնվի երազանքն Իսահակի մասին: Դուք պետք է հակառակվեք այն գայթակղությանը, որ ծնունդ տաք Աստծուց ստացած խոստմանը ձեր ուժերով: Հիշե՛ք այս խոսքը. «Դո՛ւրս արա այս աղախնին և իր որդուն, որովհետև այս աղախնի որդին իմ որդի Իսահակի հետ ժառանգ չպիտի լինի» (Ծննդոց 21.10):

Գալիս է այն օրը, երբ Տերն ասելու է Իր ժողովրդին. «Դե՛ն նետեք ձեր ջանքերը, որոնք ծնունդ տվեցին Իսմայելին, որովհետև մարմնական բնությունից ծնվածը ժառանգություն չի ունենա խոստումից ծնվածի հետ»: Թեև այն, ինչ ստեղծվել է մեր ուժերով, արդյունավետ է թվում, Աստված ասելու է. «Դե՛ն նետեք այդ ամենը», որպեսզի ոչ մի մարմին չփառավորվի Նրա ներկայության մեջ:

Երբ հայտնվի Աստծո դատաստանը, ձեր կյանքի այն մասը, որը կառուցված է եղել ձեր կարողությամբ, չի դիմանա մաքրող կրակին: Եթե ձեր բոլոր ջանքերն այս կյանքում ուղղված են եղել ինքնապահպանմանը և ձեր առաջխաղացմանը, այդ ամենը կայրվի, բայց դուք կփրկվեք՝ «այնպես, ինչպես թե կրակով» (Ա Կորնթացիների 3.15):

Կմնան միայն այն գործերը, որոնք ընդունվում են համաձայն խոստման և հղանում ու ծնվում են Աստծո Հոգու և շնորհքի միջոցով:

9

ԱՆԱՊԱՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄ

«Տերը ստանում է Իր լավագույն զինվորներին տառապանքների բարձունքներից»:

– Չարլզ Սփերջեն

«Եվ երեխան աճում էր և զորանում էր հոգով, և անապատներում էր մինչև այն օրը, որ նա երևաց Իսրայելին»:

– Ղուկաս 1.80

Տարիներ առաջ ես բախվեցի մի խնդրի, որը ցույց է տալիս, որ մենք՝ Քրիստոսի հետևորդներս, պետք է ժամանակ հատկացնենք պատրաստության համար, որպեսզի զորանանք և ամրապնդենք մեր հավատքը: Հավատում եք, թե ոչ, դա տեղի ունեցավ ոչ թե չոր, անբերրի անապատում, այլ՝ մարզասրահներում:

Ես երեսունհինգ տարեկան էի և քարոզում էի Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքի եկեղեցիներից մեկում: Իմ սրտից բխող ուղերձն ավարտելուց հետո գրեթե ուշագնաց եղա բեմի վրա: Ես հասկացա, որ լավ առողջական վիճակում չէի և պետք է աշխատեի ինձ վրա, եթե ցանկանում էի հավատարմորեն շարունակել իմ ծառայությունը:

Տուն վերադարձա Ջորջիայից և պատմեցի Լիզային տեղի ունեցածի մասին: Դրանից հետո ես հայտարարեցի.

- Ես մարզասրա՛հ եմ գնալու:

Ի զարման ինձ՝ նա պատասխանեց.

- Փա՛ռք Աստծուն: Ես աղոթում էի, որ դու մարզասրահ գնայիր:

Իսկապես հրաշալի է ունենալ այնպիսի կին, ով գիտի, թե ինչպես աղոթի իր ամուսնու համար:

Այդ ժամանակ մենք ապրում էինք Ֆլորիդայում, և մեր փողոցում՝ մեր տնից երկու տուն հեռավորության վրա, ապրում էր Կիպ անունով մի ըմբիշ, որն Ըմբշամարտի համաշխարհային ֆեդերացիայի անդամ էր: Մեր ընտանիքները մտերմացան, քանի որ մեր երեխաները մոտավորապես միևնույն տարիքի էին: Նա հաճախ էր առաջարկել մարզասրահ տանել և մարզել ինձ, բայց ես միշտ ասում էի. «Ո՛չ, ես շատ

զբաղված եմ, ժամանակ չունեմ»: Ես զբաղված էի, բայց նաև մի փոքր վախենում էի. ո՞վ կուզեր մարզվել պրոֆեսիոնալ ըմբիշի հետ:

Կիպը մարմնեղ էր՝ 190 սանտիմետր հասակով, 108 կիլոգրամ քաշով և ընդամենը վեց տոկոս մարմնի ճարպով: Նրա կրծքավանդակը կատարյալ V-աձև տեսք ուներ, իսկ որովայնի վրա արտահայտիչ երևում էին չորս զույգ մկանները: Նա, մեր երեխաները և ես հաճախ էինք բասկետբոլ կամ փողոցային հոկեյ խաղում: Երբ ես բախվում էի նրան, նա նույնիսկ չէր հրում ինձ, բայց ես մեկուկեսից երկու մետր հետ էի ցատկում:

Ատլանտա կատարած այդ ճանապարհորդությունից հետո ես այցելեցի նրան և ասացի.

- Կի՛պ, ես պետք է մարզասրահ գնամ: Դու ասում էիր, որ կարող ես մարզել ինձ. դու դեռ պատրա՞ստ ես:

Նա արագ պատասխանեց.

- Իհա՛րկե, ես կտանեմ քեզ մարզասրահ:

Ես պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեի նրա սադիստական ժպիտին: Ես նույնիսկ գաղափար չունեի, թե ինչ էր ինձ սպասում:

Հաջորդ առավոտ երկուսով մարզասրահ գնացինք: Ես անմիջապես հասկացա, որ այդտեղ հաճախում էին միայն լուրջ մարզիկներ: Մթնոլորտը լիցքավորված էր տեստոստերոնով, իսկ մարմնի հոտը գրեթե անտանելի էր: Առաջին դասերից մեկը, որը սովորեցի մարզասրահում առաջին օրը, այն էր, որ մկանները չեն մեծանում՝ ծանրաձողի վրա փոքր ծանրություն դնելով և այն քսան-երեսուն անգամ բարձրացնելով: Ծանրաձողի վրա պետք է մեծ ծանրություն դնել, որը հնարավոր է բարձրացնել ամենաշատը երեք կամ չորս անգամ:

Հենց այդ երրորդ կամ չորրորդ հրման ժամանակ է, որ ձեր մկանների մեջ փոփոխություն է սկսվում: Այդ ժամանակ է, որ ամեն ինչ ձեր մեջ ասում է. «Ես այլևս չե՛մ կարող բարձրացնել դա», բայց երբ ձեր նստարանի շուրջը հավաքված բոլոր տղաները գոչում են. «Հրի՛ր, հրի՛ր, բարձրացրո՛ւ», ինչ-որ բան ձեր ներսում դրդում է ձեզ լարել բոլոր ուժերը և բարձրացնել այդ ծանրությունը չորրորդ կամ հինգերորդ անգամ: Որպես բարդ գործընթացի պարզ բացատրություն՝ մկանները հենց այդպես են աճում:

Պետք է ամաչելով ասեմ, որ առաջին օրը, պառկած դիրքից ես կարողացա բարձրացնել ընդամենը 40 կիլոգրամ: Համոզված եմ՝

Կիպը գիտեր, որ իր հարևանը պետք է դեռ երկար ճանապարհ անցներ: Մի քանի շաբաթ մարզասրահ հաճախելուց հետո ես կարողացա բարձրացնել 45 կիլոգրամ: Եվս մի քանի շաբաթ անց ես արդեն բարձրացնում էի 50 կիլոգրամ: Որոշ ժամանակ անց հասա 55 կիլոգրամի: Հասնելով 60 կիլոգրամի՝ ես այնքա՛ն հպարտ էի, որ կարող էի ստանդարտ երեսուն կիլոգրամանոց մեկական սկավառակ դնել ծանրաձողի ամեն մի կողմից: Ես այլևս չէի ամաչում վարժություններ կատարելիս:

Մի փոքր ուշ այս մասին կպատմեմ ավելին, բայց իմ ուժերը դանդաղորեն ավելացնելու ընթացքը շատ նման է այն բանին, ինչ տեղի է ունենում, երբ Տերը տանում է մեզ Իր «անապատային մարզասրահը» և օգնում է զարգացնել մեր հոգևոր մկանները:

Հենց անապատում է մեր հոգին զորություն ստանում, քանի որ անապատը միայն անջրդի վայր չէ, որտեղ մենք աղաղակում ենք. «Աստվա՛ծ, որտե՞ղ ես», այլ՝ մեծ փորձությունների և գայթակղությունների վայր: Բարի լուրն այն է, որ թեև անապատում մեծ դժվարություններ կան, մենք պետք է հիշենք, թե ով է խրախուսում մեզ, որ բարձրացնենք այդ ծանրությունները մեր հոգևոր մարզման ժամանակ.

> «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմեացիների 8.31):

Բացի այն, որ Նա մեր կողմն է և խրախուսում է մեզ, նույնպես անխախտ խոստում է տալիս.

> «Դուք կարող եք վստահել Աստծուն, Ով թույլ չի տա, որ գայթակղվեք ավելի, քան կարող եք դիմանալ» (Ա Կորնթացիների 10.13, NCV):

Այնպես որ, անկախ այն բանից, թե ինչ փորձության մեջ եք, և որքան դժգույն ու չոր անապատով եք անցնում՝ Աստված խոստանում է, որ մենք երբեք չենք բախվի այնպիսի գայթակղության, որը հաջողությամբ հաղթահարելու համար մեր ուժերը բավական չեն լինի: Իսկապես զարմանալի է, երբ մտածում եք այս մասին:

Երբ բախվում եք փորձությունների, երբեք մի՛ մոռացեք, թե ով եք

դուք: Դուք Աստծո սիրելի զավակն եք, և Հիսուսն ասում է ձեզ. «Ահա՛ իշխանություն տվեցի ձեզ... օձերի և կարիճների վրա և թշնամու ամբողջ զորության վրա, և ձեզ ոչինչ չի վնասի» (Ղուկաս 10.19): Համաձայն այս խոսքի՝ մենք հասկանում ենք, որ կարող ենք հաղթահարել թշնամու ցանկացած հարձակում: Հակառակ դեպքում, Աստված թույլ չէր տա այդ հարձակումը:

Այնուամենայնիվ, կա մի խնդիր, որին պետք է անդրադառնանք: Շատերն աճ չեն ապրում, որպեսզի կարողանան բախվել ավելի մեծ մարտահրավերների: Նրանք, այսպես ասած, խուսափում են մարզասրահից կամ տրտնջում ու բողոքում են, հենց որ հայտնվում են այդտեղ: Պողոսը նկարագրում է բոլորովին այլ վերաբերմունք: Նա գրում է.

> «Եվ ձեզ Աստծուց այդ շնորհք եղավ Քրիստոսի համար՝ ոչ միայն հավատալ Նրան, այլ Նրա համար չարչարվել էլ» (Փիլիպեցիների 1.29, NKJV):

Մի՞թե տարօրինակ չի թվում, երբ կարդում եք, որ ձեզ չարչարանք է «շնորհվել»: Ի՞նչ է դա իրականում նշանակում: Եթե ինչ-որ մեկն ասեր ինձ. «Քեզ ինչ-որ բան է շնորհվել», ես կսպասեի ինչ-որ օրհնության: Ես սպասումով կմտածեի. *«Հետաքրքիր է՝ ի՞նչ եմ ես ստանալու»:*

Ինչպե՞ս կարելի է համատեղել «շնորհք» և «չարչարվել» բառերը միևնույն նախադասության մեջ: Դա նույնն է, ինչ ասեք մեկին. «Դու շնորհք ես ստացել քո ծննդյան օրը, որ գնաս ատամնաբույժի մոտ՝ ատամնախոռոչի վիրահատության համար»: *«Իսկապե՞ս: Շնորհակալություն, բայց ես չեմ ուզում»:* Դա անիմաստ է թվում, քանի որ, ապրելով Միացյալ Նահանգների նման ժամանակակից երկրում, մենք ձգտում ենք հարմարավետ և հարաբերականորեն հեշտ կյանքի: Այնպես որ, գաղափարն այն մասին, որ մեզ չարչարանք է շնորհվել, կարող է շփոթեցնող լինել: Շատերը, բախվելով ցանկացած դժվարության, ասում են.

«Չեմ կարողանում հավատալ, որ սա կատարվում է ինձ հետ»:

«Ինչո՞ւ ես»:

«Ինչո՞ւ ես պետք է անցնեմ այս ամենով»:

«Տանել չեմ կարողանում այս վիճակը»:

«Ոչ ոք չի հասկանում, թե ինչով եմ ես անցնում»:

«Մի՞թե հնարավոր չէ ապրել սովորական կյանքով»:

«Աստվա՛ծ, խնդրո՛ւմ եմ, հեռացրո՛ւ սա»:

«Ինչո՞ւ պայքարել: Ավելի լավ է՝ հանձնվեմ...»:

Համոզված եմ, որ ժամանակ առ ժամանակ, յուրաքանչյուրս բախվելով նեղության՝ կա՛մ մտածել է, կա՛մ արտահայտվել է այսպես: Ցավալի է, բայց շատ հաճախ մենք պարզապես չենք հասկանում նեղությունների և տառապանքի (անապատի) նպատակը:

Այնուամենայնիվ, ինչպես միշտ, Աստված գիտի, թե ինչ է մեզ հարկավոր, և որքան ուժ է մեզ անհրաժեշտ, որպեսզի արդյունավետ լինենք Իր թագավորության համար: Ահա թե ինչու է Պողոսը հայտնում մեզ Աստծո խոստումն այն մասին, որ մեզ «շնորհվելու են» չարչարանքներ՝ մարտավարական նպատակով, որպեսզի մեր հավատքի մկանները զարգանան:

Գայթակղության դերը

Ինչպես արդեն նշեցի, մեր անապատային պատրաստության նպատակներից է՝ զարգացնել գայթակղությունը ճանաչելու և դրան հակառակվելու կարողությունը: Հիսուսը վերապրեց սա Իր ծառայության վաղ շրջանում, երբ Հայրը թույլ տվեց սատանային գայթակղեցնել Նրան անապատում: «Դրանից հետո Հիսուսը՝ լցված Սուրբ Հոգով, վերադարձավ Հորդանանից և Հոգուց տարվեց անապատ՝ գայթակղվելով քառասուն օր սատանայի կողմից» (Ղուկաս 4.1,2, NKJV):

Ես հատուկ օգտագործեցի «թույլ տալ» բառը, քանի որ Աստված ոչ մի դեպքում գայթակղության հեղինակը չէ. «Թող ոչ ոք չասի, երբ գայթակղվում է՝ ես գայթակղվում եմ Աստծուց, քանի որ Աստված չի կարող գայթակղվել չարիքով, ո՛չ էլ Ինքն է գայթակղեցնում որևէ մեկին» (Հակոբոս 1.13, NKJV):

Իրականում, ի՞նչ է տեղի ունենում մեզ հետ, երբ գայթակղվում ենք: Մենք գիտենք, որ սատանան դրդում է մեզ մեղանչել, որպեսզի

հեռացնի մեզ Աստծուն հնազանդվելու ուրախությունից և Նրա հետ շփումից: Եթե սատանան գայթակղեցնում է մեզ այդ նպատակով, ի՞նչ նպատակով է Աստված թույլ տալիս մեզ բախվել գայթակղության: Պետրոս առաքյալն առաջարկում է հետևյալ պատասխանը. «Արդ Քրիստոս, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվեք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց» (Ա Պետրոս 4.1):

Այլ կերպ ասած, գայթակղության միջոցով փորձվելու, մեղքը հաղթահարելու և անապատում այլ խնդիրների բախվելու նպատակն է, որ մենք զարգացնենք մեր հոգևոր մկանները և ավելի հասունանանք: Բանալին այս խոսքում «զինվել» բառն է:

Կարո՞ղ եք պատկերացնել, որ զինվորական վաշտն անզեն կռվի գնա: Առանց զինվորական ուղղաթիռների, տանկերի, հրացանների և ռազմամթերքի՝ ընդհանրապես առանց որևէ զենքի: Դա աղետ կլինի: Նույնպիսի աղետի է բախվում Քրիստոսի հետևորդը, եթե զինված կամ պատրաստված չէ չարչարանքների և փորձությունների համար:

Ավիաընկերության օդաչուները հնարավոր խնդիրների համար պատրաստված մարդկանց լավագույն օրինակն են: Վեց ամիսը մեկ, այն ավիաընկերությունը, որտեղ նրանք աշխատում են, ուղարկում է նրանց հերթական վերապատրաստման: Նրանք մարզվում են ինքնաթիռի սիմուլյատորի միջոցով՝ արձագանքելով տարատեսակ հնարավոր բացասական իրավիճակների: Նպատակն է, որ օդաչուն ավելի հմտորեն կարողանա վերահսկել արտակարգ իրավիճակները: Սովորաբար, երբ ինքնաթիռում ճգնաժամային իրավիճակ է ստեղծվում, ուղևորները, որոնք, անկասկած, *պատրաստված չեն,* պարզապես հակազդում են դրան, իսկ օդաչուն գործում է: Ինչո՞ւ: Քանի որ օդաչուն *պատրաստված է:*

Ահա թե ինչ է անում անապատը հնազանդ քրիստոնյայի կյանքում: Մենք բախվում ենք հակառակության, որի նպատակն է զինել և պատրաստել մեզ ապագա նվաճումների համար: Մենք պետք է հասկանանք, որ բախվելու ենք դժվարությունների, այսինքն՝ անապատի: Հիսուսն ասաց, որ այս աշխարհում նեղություններ կունենանք, բայց Նա կօգնի մեզ հաղթահարել դրանք: Եվ այդ ընթացքում մենք ավելի ուժեղ կդառնանք:

Մեծ հնարավորությունը

Մենք պետք է դիտարկենք անապատը որպես մեր հոգևոր մկանները զարգացնելու և մեր ուժերն ավելացնելու հնարավորություն, որպեսզի կարողանանք վերցնել այն ամենը, ինչ Տերը կամենում է տալ մեզ մեր կյանքի հաջորդ փուլում: Հակոբոս առաքյալը գրում է.

> «Թանկագի՛ն եղբայրներ և քույրեր, երբ բախվում եք ամեն տեսակի նեղությունների, համարեք դա հնարավորություն...» (Հակոբոս 1.2, NLT):

Մենք հասկանում ենք, թե ինչ է հնարավորությունը: Մենք՝ ամերիկացիներս, սիրում ենք գործարարների: Գործարարության մեջ հնարավորությունները թույլ են տալիս աճ ունենալ, հաջողության հասնել

Ինչպե՞ս անցնել անապատը

#9 Մի՛ ծնեք Իսմայելի

Երբ մենք հասկանում ենք, որ անապատում ենք, և կարծում ենք, որ չափից երկար ենք մնացել այդտեղ, մենք գայթակղվում ենք, որ պարզապես ինչ-որ բան ձեռնարկենք՝ մեր երազանքն իրագործելու համար: Ես անվանում եմ սա «ծնել Իսմայելի», ինչը տեղի է ունենում, երբ մենք փորձում ենք ինքներս իրագործել այն, ինչ Աստված խոստացել է մեզ: Իսմայելները հաճախ ծնվում են ի պատասխան որևէ հիմնավորված կարիքի, սակայն՝ մեր իսկ ուժերով:

Այս գաղափարը սկիզբ է առնում Աբրահամի և Սառայի պատմությունից, որոնց Աստված որդի խոստացավ: Նրանք սպասեցին տասնմեկ տարի: Աբրահամն արդեն 86 տարեկան էր, իսկ Սառան շատ ծեր էր՝ երեխա ունենալու համար: Այնպես որ, նրանք անցան պահուստային ծրագրի. Սառան առաջարկեց, որ Աբրահամը ստանար խոստացված երեխային իր աղախին Հագարի միջոցով:

և բարգավաճել: Հնարավորությունները թույլ են տալիս մեզ ընդլայնել մեր հորիզոնները: Եվ մենք պետք է դիտարկենք նեղությունները ճիշտ նույն կերպով, քանի որ Հակոբոսը շարունակում է. «Որովհետև դուք գիտեք, որ երբ ձեր հավատքը փորձվում է, ձեր համբերությունը (կամ՝ դիմացկունությունը) աճելու հնարավորություն է ունենում: Այնպես որ, թույլ տվեք, որ այն աճի, որովհետև երբ ձեր համբերությունը (կամ՝ դիմացկունությունը) լիովին կատարելագործվի, դուք լիարժեք և ամբողջական կլինեք և ոչ մի բանի կարիք չեք ունենա» (Հակոբոս 1.3,4, NLT):

Անապատում մեզ շնորհվում է հնարավորություն, որ *ավելացնենք* մեր համբերությունը կամ դիմացկունությունը: Ի՞նչ իմաստով է «դիմացկունություն» բառն ամենից հաճախ օգտագործվում այսօր: Այն հաճախակի օգտագործվում է դիմացկունությունը բարելավող մարզումների վերաբերյալ: Ավելացնելով մեր դիմացկունությունը՝ մենք ավելացնում

Դա շատ վատ գաղափար էր: Իսմայել ծնելու ցանկացած մոտեցում, նույնիսկ եթե այն դրական է թվում, վատ գաղափար է: Միշտ հիշե՛ք. դուք ստիպված կլինեք ձեր մարմնի զորությամբ պահպանել այն, ինչին ծնունդ եք տալիս ձեր մարմնով:

Իմ անապատային կյանների ընթացքում ես նույնպես փորձել եմ վարվել ըստ պահուստային ծրագրի: Ես գիտեի՝ Աստված խոստացել էր ինձ, որ համաշխարհային քարոզչական ծառայություն էի ունենալու, սակայն դա տեղի չէր ունենում, և ես «մնացել էի» տեղական եկեղեցու ծառայության մեջ: Մի քանի անգամ փորձեցի ինչ-որ բան ձեռնարկել և փախչել անապատից: Ես թանկ վճարեցի այդ փորձերի համար և այդպես էլ չհասա որևէ արդյունքի: Հենց որ դադարեցրի իմ փորձերը, Աստված Ինքը գործեց և փոխեց ամեն ինչ:

Ես հորդորում եմ ձեզ, մի՛ կրեք զուր տառապանքներ՝ ծնելով Իսմայելի: Թույլ տվեք, որ Աստված կատարի այն, ինչ խոստացել է ձեզ:

ենք ապագա մարտահրավերներն ընդունելու մեր *կարողությունը:*

Իմաստը հետևյալն է. ցանկացած փորձառության մեջ, որին մենք բախվում ենք, Աստված թույլ է տալիս դժվարություններ հատուկ նպատակով, և այդ նպատակը մեր *կարողությունն* ավելացնելն է: Աստված թույլ կտա (և կրկին, ես շեշտադրում եմ *«թույլ տալը»)* որևէ դժվարություն այսօր, որը նման է լինելու այն ճնշման մակարդակին, որին, ինչպես Նա գիտի, մենք բախվելու ենք վաղը (հիշեք ինքնաթիռի սիմուլյատորի օրինակը): Ահա թե ինչու է փորձությունը մշտապես թվում ավելին, քան մեր ներկա պատրաստվածության կամ պատասխանատվության մակարդակն է: Ըստ էության, Աստված օգտագործում է մեր ներկա դժվարությունները, որպեսզի զորացնի մեզ ավելի մեծ նվաճումների համար ապագայում:

Վերադառնանք իմ մարզումներին: Ինչպես արդեն նշեցի, Կիպն այնքան էր մարզել ինձ, որ ես կարող էի 60 կիլոգրամ բարձրացնել պառկած դիրքից: Թեև դա մեծ ձեռքբերում էր ինձ համար, բայց ես մտածում էի՝ արդյոք կարո՞ղ էի ավելին: Եթե համեմատենք իմ մարզումները հոգևոր պատրաստության և ուժի հետ, ի՞նչ կլիներ, եթե Տերն այնպիսի առաջադրանք պատրաստած լիներ ինձ համար, որի համար պահանջվեր բարձրացնել ավելի քան 60 կիլոգրամ:

Ես շարունակեցի մարզասրահ հաճախել: Որոշ ժամանակ անց հասա 90 կիլոգրամի, բայց չավելացրի այդ ծանրությունը հաջորդ երկու տարվա ընթացքում: Ես քարոզում էի մի համաժողովում Կալիֆոռնիայում, և այդ եկեղեցու մի քանի ծառայողներ հարցրին ինձ.

- Ձո՛ն, դու երբեք չե՞ս բարձրացրել 100 կիլոգրամ:

- Ո՛չ, ավելի քան հինգ տարի է՝ փորձում եմ անել դա, - մի փոքր հիասթափությամբ պատասխանեցի ես:

- Մենք կօգնենք քեզ, - ասացին նրանք: Եվ իհարկե, այդ օրը ես բարձրացրի 100 կիլոգրամ պառկած դիրքից: Ես այնքա՛ն էի ոգեշնչվել:

Դրանից հետո «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի ծառայողական թիմին միացավ նոր աշխատակից: Ես իմացա, որ նա ծանրամարտիկ էր եղել, և մենք սկսեցինք միասին մարզվել: Նրա օգնությամբ ես բարձրացրի 105 կիլոգրամ, և մեկ անգամ՝ նույնիսկ 110 կիլոգրամ: Բայց կարո՞ղ էի արդյոք անել ավելին:

Մեկ տարի անց ես քարոզում էի Դետրոյտ քաղաքի մի եկեղեցում: Կիրակնօրյա հավաքույթներից հետո այդ եկեղեցու հովիվն ասաց ինձ.

- Ձո՛ն, մեր եկեղեցու անդամներից մեկը համազգային համբավ ունեցող ծանրամարտի մարզիչ է: Վաղն առավոտյան ես պարապմունքի եմ նրա մոտ: Կցանկանա՞ս գալ ինձ հետ:

- Իհա՛րկե, - մեծ ոգեշնչմամբ պատասխանեցի ես:

Հաջորդ օրը մենք գնացինք: Ինձ գնահատելուց հետո, այդ մարզիչը հարցրեց.

- Ուրեմն, դու ամենաշատը 110 կիլոգրա՞մ ես բարձրացրել:

- Այո՛, բայց ես արել եմ դա միայն մեկ անգամ:

- Լավ, այսօր դու կբարձրացնես ավելին:

«Ի՞նչ»: Ես չասացի դա, բայց մտածեցի. *«Դու խելագարվե՛լ ես: Դա անհնա՛ր է»:* Բայց կարճատև խորհուրդներից և մարզումից հետո նա այնպես արեց, որ բարձրացրի 120 կիլոգրամ:

Ես խիստ ոգևորված էի: Ես և մեր թիմի աշխատակիցը, որը ծանրամարտիկ էր, վերադարձանք Կոլորադո, և այդ մարզիչը շարունակեց աշխատել մեզ հետ էլեկտրոնային նամակների միջոցով: Մենք ջանասիրաբար մարզվում էինք, և հաջորդ տարի ես կրկին այցելեցի Դետրոյտ քաղաքի այդ եկեղեցին: Այդ ժամանակ 42 տարեկան էի:

Այդ կիրակի ես քարոզեցի Սուրբ Հոգու զարմանալի հատկանիշների մասին: Երկուշաբթի մենք գնացինք նույն մարզասրահը: Այդ մարզիչն ասաց.

- Ձո՛ն, այս գիշեր ես երազ տեսա, որ դու պառկած դիրքից բարձրացրիր ավելի քան 140 կիլոգրամ:

- Աներևակայելի՜ է, - պատասխանեցի ես: Հավանաբար, ես մտածեցի. *«Շատ լավ, բայց ես նման երազ չեմ տեսել»:*

- Ձո՛ն, երեկ դու քարոզում էիր Սուրբ Հոգու զորության մասին: Նա տվեց ինձ այդ երազն այս գիշեր: Պառկի՛ր նստարանի վրա: Մենք կանե՛նք դա:

Այսպիսով, նախավարժանքից հետո սկավառակները դրվեցին ծանրաձողի վրա, և բարձր գոչյունով ես բարձրացրի 150 կիլոգրամ:

Ես այնքա՛ն ոգևորված էի, որ զանգահարեցի Լիզային Դետրոյտի օդանավակայանից և ասացի.

- Իմ տրամադրությունն այնքա՛ն բարձր է, որ թվում է, թե կարող եմ տուն հասնել առանց ինքնաթիռի:

Այն ժամանակ, երբ բարձրացրի 150 կիլոգրամը, ես հանգիստ մարզվում էի 100 կիլոգրամով: Որոշ մոտեցումների ժամանակ ես մինչև տասն անգամ բարձրացնում էի այդ ծանրությունը: Բայց հիշե՛ք, թե ինչից սկսեցի յոթ տարի առաջ: Ի՞նչ կկատարվեր ինձ հետ, եթե այն ժամանակ, երբ 35 տարեկան էի, Կիպը 100 կիլոգրամ ծանրություն դներ ծանրաձողի վրա՝ 40-ի փոխարեն: Միգուցե ես մահանայի: Ծանրաձողը կարող էր ընկնել ինձ վրա և կոտրել իմ կրծքավանդակը: Պահանջվեցին տարիներ տևող կանոնավոր պարապմունքներ՝ իմ ներկա ուժը ստանալու համար: Այն, ինչ արդեն սովորական ծանրություն էր համարվում, կկործաներ ինձ յոթ տարի առաջ:

Ահա թե ինչու մեր փորձությունները, որոնք հաճախ երկարատև են լինում, իրականում հոգևոր մարզումներ են, որոնք օգնում են պատրաստել մեզ է՛լ ավելի մեծ փորձությունների համար ապագայում: Երբ ավելի ուժեղ ենք դառնում Տիրոջ մեջ, մենք կարողանում ենք անել ավելին՝ Նրա թագավորությունը կառուցելու համար:

Ցավալին այն է, որ կլինեն մարդիկ, որոնք կկանգնեն Դատաստանի գահի առջև, և Հիսուսը, արցունքներն աչքերին, կասի նրանց. «Ես պատրաստել էի քեզ համար շատ ավելին, բայց դու չունեիր *կարողություն*, որ դիմանայիր այն դժվարություններին, որոնք գալու էին այդ ամենի հետ»: Սա հատկապես ողբերգական է, քանի որ, ինչպես մենք գիտենք, Աստված երբեք չի տա մեզ ավելին, քան, ինչպես Ինքը գիտի, մենք կարող ենք կրել: Նա դա խոստացե՛լ է մեզ:

Այնպես որ, եկեք օգտագործենք պատմությունն իմ մարզումների մասին՝ որպես այլաբանություն: Եթե դուք կարող եք բարձրացնել 60 կիլոգրամանոց հոգևոր հակառակություն, իսկ Աստված որոշել է այնպիսի ծրագիր կամ դիրք ձեզ համար, որը ստանձնելու դեպքում դուք պետք է *կարողանաք* բարձրացնել 80 կիլոգրամանոց հակառակություն, հալածանք, գայթակղություն և փորձություններ, Նա թույլ չի տա, որ դա տեղի ունենա, քանի որ դուք բավականաչափ ուժ չունեք դրա համար: Հնարավոր է, որ Նա թույլ տա 65 կիլոգրամանոց հակառակություն (հիշեք, որ Նա դրա *հեղինակը* չէ), որը կշարունակի փորձել ձեզ, բայց ուժասպառ չի անի:

Օրինակ, ենթադրենք, ինչ-որ մեկը բամբասում է և սուտ լուրեր է տարածում ձեր մասին: Փոխարենը հակառակվեք այդ հարձակմանը, պաշտպանեք ձեզ և ինքներդ սկսեք բամբասանքներ տարածել այդ մարդու մասին, դուք, հնազանդվելով Աստծո Խոսքին, որոշում եք կայացնում ոչինչ չասել և օրհնել: Դուք բարեհաջող անցնում եք 65 կիլոգրամանոց փորձությունը: Ժամանակն է անցնել հաջորդ մակարդակին՝ 70 կիլոգրամին: Եթե շարունակեք հնազանդվել Նրա Խոսքին հակառակությունների բախվելիս, ձեր մարզումն առաջ կգնա, մինչև որ հասնեք 80 կիլոգրամի մակարդակին: Այժմ դուք պատրաստ եք ավելի բարձր դիրքի համար, որն Աստված որոշել է ձեզ համար Իր թագավորության մեջ, և որն Իր ծրագիրն է ձեր կյանքի համար:

Այնուամենայնիվ, եթե դուք, իմանալով, որ բամբասում են ձեր մասին, վիրավորվեք և պատասխանեք մեղադրանքներով, պարզ է, թե ինչ կկատարվի: Տերը, արցունքներն աչքերին, կասի. «Ցավում եմ, բայց դու պետք է վերադառնաս 60 կիլոգրամանոց հակառակություններին»: Դուք դեռ «մարզասրահում» եք, սակայն չունեք առաջընթաց:

Մարզումը շարունակվում է նույն մակարդակի վրա: Հաջորդը՝ Նա թույլ է տալիս որևէ ֆինանսական խնդիր՝ ևս մեկ 65 կիլոգրամանոց փորձություն: Բայց Աստծո մատակարարումը փնտրելու փոխարեն, դուք անմիջապես ասում եք. «Խնդիր չկա: Մեր վարկային քարտը լիովին սպառված չէ», և Աստված հեռացնում է այդ հավելյալ ծանրությունը՝ ասելով. «Վերադարձի՛ր 60 կիլոգրամին»:

Ի վերջո, կգա այն ժամանակը, երբ Աստված կունենա ձեր կարիքը՝ Իր թագավորության մեջ որոշակի առաջադրանք կատարելու կամ որոշակի դիրք զբաղեցնելու համար, որը ենթադրում է 80 կիլոգրամանոց հակառակություն: Եթե դուք մշտապես ձախողել եք անապատային փորձությունները կամ ծանրություններ բարձրացնելը, Նա չի կարող առաջարկել ձեզ դա, քանի որ ձեր հոգևոր մկաններն այնքան զարգացած չեն, որ բարձրացնեք հակառակությունը տվյալ իրավիճակում կամ դիրքում: Նա պետք է գտնի մեկ այլ անձնավորության, որը կարող է կատարել այդ առաջադրանքը կամ զբաղեցնել այդ դիրքը:

Ավելի մեծ իշխանություն և զորություն

Ահա թե ինչու է անապատն անչափ կարևոր. *այն կառուցում է մեր ուժը:*

Անապատում Հովհաննես Մկրտիչը զորացավ իր հոգով:

Անապատում Հիսուսը զորացավ Իր Հոգով:

Նրանց հոգևոր մկանները զարգացան ոչ թե հեշտ ժամանակներում, այլ՝ երբ եկան փորձությունները, երբ փորձվեց նրանց հավատքը:

Հակոբոսը բարի լուր է հայտնում մեզ. երբ դուք անցնում եք որևէ փորձությամբ և անում եք դա Աստծո ուզած կերպով, դուք կազմ ու պատրաստ կլինեք, այսինքն՝ դուք զորություն կունենաք հաջորդ առաջադրանքի համար, որն Աստված հանձնարարելու է ձեզ.

> «Որովհետև դուք գիտեք, որ երբ ձեր հավատքը փորձվում է, ձեր համբերությունը (կամ՝ դիմացկունությունը) աճելու հնարավորություն է ունենում: Այնպես որ, թույլ տվեք, որ այն աճի, որովհետև երբ ձեր համբերությունը (կամ՝ դիմացկունությունը) լիովին կատարելագործվի, դուք լիարժեք և ամբողջական կլինեք և ոչ մի բանի կարիք չեք ունենա» (Հակոբոս 1.3,4, NLT):

Հակոբոսի՝ «Թույլ տվեք, որ այն աճի» հորդորի մեջ *«այն»* բառը մեր *կարողությունը* և *դիմացկունությունն* է: Հակոբոսը նույնպես ասում է մեզ, թե ինչ կարող ենք ակնկալել, եթե ճիշտ վարվենք անապատում. «Աստված օրհնում է նրանց, ովքեր համբերությամբ դիմանում են փորձությանը և գայթակղությանը: Դրանից հետո նրանք կստանան կյանքի թագը, որն Աստված խոստացել է նրանց, ովքեր սիրում են Իրեն» (Հակոբոս 1.12, NLT):

«Թագ» (կամ՝ պսակ) բառը նշանակում է իշխանություն, իսկ իշխանության հետ տրվում է նաև զորություն: Ինչպես որ Հիսուսն անապատ գնաց, որպեսզի փորձվեր սատանայից, և Իր հնազանդության ու հարատևման պատճառով դուրս եկավ անապատից՝ ավելի մեծ իշխանությամբ և զորությամբ (տե՛ս Ղուկ. 4.1,14), այնպես էլ մենք կարող ենք դուրս գալ մեր անապատային փուլերից ավելի մեծ իշխանությամբ և զորությամբ:

Չգիտեմ՝ ինչ եք դուք մտածում, բայց ես ուզում եմ վստահ լինել, որ իմ հոգևոր մկաններն ի զորու են դիմանալ այն ամենին, ինչ Տերը պատրաստել է ինձ համար:

Ինչ-որ մեկն ուզո՞ւմ է մարզվել:

10

ՋՈՒՐ՝ ԱՆԱՊԱՏՈՒՄ

«Եթե մենք չենք կարողանում հավատալ Աստծուն այն ժամանակ, երբ թվում է՝ հանգամանքները մեր դեմ են, նշանակում է՝ մենք ընդհանրապես չենք հավատում Նրան»:

– Չարլզ Սփերջեն

«Ամեն այդ ջրից խմողը դարձյալ կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ ես կտամ նրան, նա հավիտյան չի ծարավի: Այլ այն ջուրը, որ Ես կտամ նրան, ջրի աղբյուր կլինի նրանում, որ հավիտենական կյանքի համար կբխի»:

– Հովհաննես 4.13,14

Անձրևները սակավ են անապատում: Ձուր հայթայթելն անապատում դժվար է, և եթե այն հնարավոր է գտնել, ապա միայն ջրհորներից կամ աղբյուրներից: Անապատը ցամաք ու ծարավ երկիր է (տե՛ս Սաղմ. 63.1): Այնպես որ, Հիսուսն ուղղում է մեզ հետևյալ հրավերը:

> ««Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի: Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն ասում է, նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Սա ասաց... Հոգու համար...» (Հովհաննես 7.37-39):

Ես հիշում եմ մի քանի դեպք իմ անապատային փորձառություններից, երբ ինձ համար դժվար էր կենարար ջուր ստանալ աղոթքի մեջ: Մեկ անգամ, երբ այդպիսի վիճակում էի, ես վերցրի իմ վրանը և գնացի մեր քաղաքի այգիներից մեկը, որպեսզի մնայի այնտեղ ամբողջ գիշեր՝ մինչև հաջորդ առավոտ: Այդ գիշեր ես աղոթեցի, հետո կարդացի, հետո սկսեցի փառաբանության երգեր երգել: Անցավ գրեթե երեք ժամ, բայց ոչինչ տեղի չէր ունենում: Ես թարմություն չէի զգում. շուրջս բացարձակ չորություն էր: Խիստ հուսահատված՝ ի վերջո մտա իմ քնապարկի մեջ և փորձեցի քնել:

Այդ գիշեր բոլոր դևերն ասես խնջույք էին կազմակերպել. ես չէի կարողանում հանգիստ քնել: Շուռումուռ էի գալիս՝ մտածելով, թե ինչու Աստված չէր հայտնում ինձ Իր ներկայությունը: Հաջորդ առավոտյան դուրս եկա իմ վրանից և սկսեցի քայլել այգու արահետներով՝ Հոգով աղոթելով, բայց դեռ խիստ չորություն էի զգում: Այդպես անցավ ևս մեկուկես ժամ: Ի վերջո, վեր նայեցի ու ասացի. «Տե՛ր, կարծում եմ՝

ես անապատում եմ»: Մտածում էի. *«Ես կարող եմ տուն գնալ և չփնտրել Նրան, և դրանից ոչինչ չի փոխվի: Նա է բերել ինձ այս անջրդի վայրը, և ոչինչ չի փոխվի, քանի դեռ Նա չի հանել ինձ այստեղից»:*

Դա սխալ մտածելակերպ էր: Աստված չի անցկացնում մեզ անապատով, որպեսզի հուսահատության հասցնի և անգործության մատնի այնքան ժամանակ, մինչև որ Ինքը փոխի մեր վիճակը: Անապատը չպետք է դառնա ձախողման վայր. այն պետք է դառնա հաղթանակի վայր: Հանկարծ ես լսեցի մի մեղմ ու բարակ ձայն. *«Պայքարի՛ր»:* Այդ մեկ բառը կրակի և կյանքի կայծ էր, որն անհրաժեշտ էր ինձ: Ես անմիջապես ասացի. «Աստծո պարգև՛, բորբոքվի՛ր ինձանում: Կենդանի ջրերի գետե՛ր, հոսե՛ք: Իմ ներսում գտնվող ջրհո՛ր, բխի՛ր»: Ես հիշեցի մի պատմություն, որը տեղի ունեցավ Իսրայելցիների հետ անապատում.

> «Եվ այնտեղից եկան Ջրհորը. սա այն ջրհորն է, որի համար Տերն ասել էր Մովսեսին. «Ժողովրդին ժողովի՛ր, և Ես նրանց ջուր կտամ»: Այն ժամանակ Իսրայելն այս երգը երգեց. «Հո՛ր, բխի՛ր»» (Թվոց 21.16,17):

Որքան կրկնում էի այս բառերը Սուրբ գրքից, այնքան իմ աղոթքն ավելի եռանդուն էր դառնում, մինչև որ սկսեցի ետուառաջ քայլել այգու արահետներից մեկով՝ աղոթելով և խոսելով Աստծո Խոսքը մեծ զորությամբ և կրակով: Ես լիարժեք թարմություն վերապրեցի և ասես այլ մարդ դարձած լինեի: Նրա ներկայությունն ինձ հետ էր զորավոր կերպով: Մի քանի րոպե առաջ ես ծանրություն և թուլություն էի զգում, բայց այժմ պատրաստ էի պայքարի և կարող էի բախվել ցանկացած թշնամու՝ Տիրոջ Խոսքով:

Դա տևեց մոտավորապես քսանհինգ րոպե, բայց ինձ թվաց, թե ընդամենը հինգ րոպե էր անցել: Ես լցված էի թարմությամբ և պատրաստ էի գրավել ամբողջ աշխարհը:

Հիսուսն ասում է, որ կենդանի ջրերի գետերը կբխեն այն մարդու սրտից, ով գալիս է Իր մոտ և խմում է: Անապատում մենք չենք վերապրում Հոգու թափում (անձրև): Այդ չոր վայրում թարմություն բերող ջուրը պետք է հանել մեր սրտից՝ Աստծո աղբյուրից կամ ջրհորից:

Ուշադրություն դարձրեք. Հիսուսը նշում է (Հովհաննես 7.39), որ այն

աղբյուրը կամ ջրհորը, որի մասին Ինքը խոսում է, Տիրոջ Հոգին է, և որ հավատացյալի սրտից կբխեն գետեր (հոգևակի), ոչ թե գետ (եզակի):

Ի՞նչ կերպով է Տիրոջ Հոգին գետերի պես հոսում մեր սրտից: Եսայի մարգարեն բացատրում է Հոգու գործերի բնույթը. «Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին, իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին» (Եսայի 11.2):

Սուրբ Հոգին կոչվում է Իմաստության Հոգի, Հանճարի Հոգի, Խորհրդի Հոգի, Զորության Հոգի, Գիտության Հոգի և Տիրոջ երկյուղի Հոգի: Քանի որ Հիսուսն ասաց, որ Հոգին կլինի գետերի պես, նշանակում է՝ գոյություն ունի Իմաստության գետ, Հանճարի գետ, Խորհրդի գետ, Զորության գետ, Գիտության գետ և Տիրոջ երկյուղի գետ: Զարմանալի չէ, որ իմ սիրտը բռնկվեց կրակով իմ վրանի մոտ գտնվող այդ արահետի վրա:

Ահա ևս մի քանի ճշմարտություն, որոնք սատարում են այս գաղափարը.

- Առակաց 18.4-ում գրված է. «Խորը ջրեր են մարդու բերանի խոսքերը, բխող գետ է իմաստության աղբյուրը»:
- Առակաց 16.22-ում գրված է. «Կենաց աղբյուր է խոհեմությունը՝ իր ունեցողի համար»:
- Առակաց 20.5-ում գրված է. «Խորը ջրեր են մարդու սրտի խորհուրդը, բայց խելոք մարդը նրան կհանի»:

Այս ջրերը գտնվում են հավատացյալի սրտում, քանի որ այնտեղ է բնակվում Հոգին: Այնուամենայնիվ, միայն Տիրոջ ճանապարհները հասկացող մարդը կհանի այդ ջրերը ջրհորից: Բանալին այս խոսքում «հանել» բառն է: Կրկին, կարևոր է հիշել, որ թարմություն բերող ջրերն անապատում չեն գալիս Հոգու անձրևի միջոցով, այլ *հանվում* են սրտից:

- Առակաց 10.11-ում գրված է. «Կյանքի աղբյուր է արդարի բերանը»:
- Առակաց 15.23-ում գրված է. «Ուրախություն է մարդու համար իր բերանի հարմար պատասխանը»:

Եթե ես որոշեի հավաքել իմ վրանը և գնալ՝ մտածելով. «Ավելի

լավ է՝ տուն գնամ և դադարեմ փնտրել Աստծուն. Նա է բերել ինձ այս չոր վայրը, և ոչինչ չի փոխվի, եթե Նա դուրս չբերի ինձ այստեղից», ես կտանեի իմ ներսի ծանրությունն ինձ հետ: Բայց քանի որ ասացի այն, ինչ Աստված դրեց իմ սրտում, ես կարողացա ջուր հանել խորը ջրհորներից: Ես հասա փրկության ստորգետնյա ավազանին և սկսեցի թարմության ջուր հանել: Դա իրապես որ նման էր անապատում աղբյուրի սառնորակ ջուր խմելուն:

Շատերը հանձնվում են այս չորության ժամանակահատվածներում, բայց Աստված ասում է. «Շարունակի՛ր առաջ գնալ: Կանգ մի՛ առ»: Մեր ներսում պետք է լինի հաստատակամ և ուժգին ձգտում, որը թույլ չի տա մեզ հանձնվել այնքան ժամանակ, մինչև որ Նրա կամքը կատարվի:

Շատերը դադարում են աղոթել, երբ չորություն են զգում: Նրանք այլևս չեն աղոթում, քանի որ ջրհորներից այլևս ջուր չի գալիս, և ջուր ստանալը դժվար է թվում: Նրանք տկարանում են, այնինչ Աստված ցանկանում է, որ նրանք ավելացնեն իրենց ուժը այն պայքարների համար, որոնց բախվելու են ապագայում:

Որտեղի՞ց ենք մենք ուժեր գտնում՝ ջուր հանելու համար: Ուրախությունի՛ց: Եսայի 12.3-ում գրված է. «Եվ դուք ուրախությամբ ջուր կքաշեք փրկության աղբյուրներից»: Պատճառն այն է, որ «Տիրոջ ուրախությունը ձեր զորությունն է» (Նեեմիա 8.10): Ուրախությունը հոգևոր ուժ է, որը զորացնում է մեզ:

Ի՞նչ է Տիրոջ ուրախությունը: Տարիներ շարունակ ես մտածում էի, որ Տիրոջ ուրախությունը նշանակում է ունենալ այն ուրախությունը, որն ունի Աստված, բայց չէի կարողանում հասկանալ դա: Այնուամենայնիվ, Նա այլ բան է ասում: Դուք լսե՞լ եք «ուրախություն՝ կերակուր պատրաստելիս» արտահայտությունը: Կերակուր պատրաստելու մեջ, որպես այդպիսին, չկա ուրախություն: Մարդիկ նկատի ունեն, որ դուք ուրախություն եք զգում, երբ կերակուր եք պատրաստում: «Տիրոջ ուրախությունը» այն ուրախությունն է, որը մենք զգում ենք, երբ շփվում ենք Նրա հետ: Նա է ուրախություն պատճառում մեզ:

Այն, որ մենք չենք զգում Նրա ներկայությունն աղոթքի սենյակում, դեռ չի նշանակում, որ Նա մերժում է մեզ: Այնպես որ, մեր ուրախությունը հիմնված չէ մեր զգացմունքների վրա: Փոխարենը, այն հիմնված

է Աստծո Անձի և Նրա հետ հաղորդակցվելու արտոնության վրա: Մենք տեսնում ենք ավելի հեռուն, քան սուտն այն մասին, որ մենք մերժված ենք, և հասկանում ենք, որ Նա կանչում է մեզ... դեպի խորը ջրհորները:

Բացել խցանված ջրհորները

Մեկ անգամ Իսահակը՝ Աբրահամի հրաշքով ծնված որդին, հայտնվեց չորության փուլում.

> «Եվ երկրի մեջ սով եղավ՝ բացի այն առաջին սովից, որ Աբրահամի օրերում եղել էր... Եվ Տերը երևաց նրան և ասաց. «Եգիպտոս մի՛ իջիր. բնակվի՛ր այն երկրում, որ քեզ կասեմ: Պանդո՛ւխտ եղիր այս երկրի մեջ, և Ես քեզ հետ կլինեմ ու քեզ կօրհնեմ»» (Ծննդոց 26.1-3):

Աստված հատուկ պատվիրեց Իսահակին չփախչել Եգիպտոս, որտեղ կյանքը հարմարավետ էր, այլ մնալ այն վայրում, որն Ինքը որոշել էր նրա համար: Հաճախ, հայտնվելով չորության վայրում, մեր առաջին միտքն այսպիսին է. «Ես գնալու եմ այստեղից»: Եթե առավոտյան աղոթքի ժամանակ մենք չենք զգում Աստծո ներկայությունը, մեր միտքը սկսում է թափառել՝ մտածելով այն գործերի մասին, որոնք պետք է անենք ամբողջ օրվա ընթացքում: Մենք արագորեն ավարտում ենք մեր աղոթքը և անցնում մեր գործերի ցուցակին:

Եթե մենք չորություն ենք զգում այն եկեղեցում, որը հաճախում ենք, առանց նույնիսկ Աստծուն հարցնելու՝ մենք որոշում ենք. *«Ես գնալու եմ այնտեղ, որտեղ կա հոգևոր ոգեշնչում և տպավորիչ քարոզներ»:*

Կամ եթե չորություն ենք զգում մեր հասարակական կամ գործարար կյանքում, մենք մտածում ենք, որ արժե հեռանալ մեր քաղաքից՝ տեղափոխվելով աճող տնտեսություն ունեցող քաղաք: Մենք մտածում ենք. «Եթե այստեղ մնամ, ես կչորանամ, և Աստծո ծրագիրն այդպես էլ չի կատարվի իմ կյանքում»:

Կան այնքա՜ն շատ ամերիկացի քրիստոնյաներ, որոնք այսպես էլ մտածում են: Նրանք նետվում են մի սոցիալական ցանցից մյուսը, մի

զբաղմունքից մյուսը, մի եկեղեցուց մյուսը, մի քաղաքից մյուսը՝ փորձելով գտնել այնպիսի վայր, որտեղ չկա չորություն: Փոխանակ ջրհորներ փորեն և թույլ տան, որ Աստված գործածի իրենց՝ այդ անջրդի վայրում թարմացնող ջուր բերելու համար, նրանք «տեղափոխվում են Եգիպտոս»՝

Ինչպե՞ս անցնել անապատը

#10 Ուրախության գաղտնի դեղամիջոց

Երբ դուք անապատում եք, շատ հեշտ է կենտրոնանալ միայն ձեր հանգամանքների վրա: Ես ուզում եմ մի փոքրիկ գաղտնիք բացել ձեզ, որն իսկապես օգնել է ինձ գոյատևել և նույնիսկ ծաղկունք ապրել անապատային փուլերում: Ես անվանում եմ այն իմ Ուրախության գաղտնի դեղամիջոցը:

Երբ գրեթե կյանքում ոչինչ չի ոգևորում ինձ, երբ թվում է, թե ոչինչ տեղի չի ունենում, երբ ես շարունակ աղոթում եմ, բայց ոչ մի արդյունք չեմ տեսնում, սկսում եմ մտածել այն մասին, թե ինչ արեց Հիսուսը: Ես հիշում եմ, որ Նա բառացիորեն փրկեց ինձ դժոխքից, որտեղ կրակը երբեք չի դադարում, և ծծմբի հոտը երբեք չի անցնում: Չարչարանքներն այնտեղ երբեք չեն դադարում: Դժոխքը ստեղծվել է ոչ թե ինձ համար, այլ՝ սատանայի: Այնուամենայնիվ, սատանան խաբեց մարդկությանը և իր հետ միասին այնտեղ է տանում բոլորին: Չնայած դրան, Հիսուսը տվեց ինձ Իր կյանքը. իմ Արարիչը տվեց *Իր* կյանքը՝ *ինձ* այդ վայրից փրկելու համար:

Երբ ես սկսում եմ այսպես մտածել, երբ ուղղում եմ իմ հայացքը Նրան, երբ գոհությամբ եմ նայում կյանքին, երբ այն դիտարկում եմ հավիտենության տեսանկյունից, հանկարծ իմ իրավիճակն այլևս այդքան կարևոր չի թվում: Սա իմ Ուրախության գաղտնի դեղամիջոցն է. ես վերհիշում եմ այն ամենը, ինչի համար պետք է շնորհակալ լինեմ, և հայացքս ուղղում եմ Հիսուսին:

փնտրելով թեթևություն և հեշտ կյանք: Նրանք չեն հասկանում, որ այդ չոր փուլերից շատերում Աստված պատրաստվում է ծնունդ տալ այն տեսիլքին, որը Նա տվել է իրենց: Ես գիտեմ, որ միշտ չէ, որ այդպես է լինում, քանի որ երբեմն Աստված պատրաստում է մեզ նոր տեղ գնալու համար և թույլ է տալիս, որ հինը չորանա: Կարևորը Աստծո Հոգով առաջնորդվելն է: Եթե Նա ոչինչ չի ասում, մնացե՛ք և պայքարե՛ք:

Քանի որ Իսահակը հնազանդվեց Աստծուն և մնաց այն երկրում, որտեղ սով էր, տեղի ունեցավ հետևյալը.

> «Իսահակն այն երկրի մեջ ցանեց և այն տարի հարյուրի չափ արդյունք գտավ: Եվ Տերն օրհնեց նրան: Եվ մարդը բարձրացավ և քանի գնաց՝ մեծացավ, մինչև որ շա՜տ մեծացավ: Եվ ոչխարներ և արջառներ և շատ ծառաներ ունեցավ, և փղշտացիները նախանձեցին նրան: Եվ իր հայր Աբրահամի օրերում իր հոր ծառաների փորած բոլոր ջրհորները փղշտացիները գոցեցին և հողով լցրին... Եվ Իսահակը դարձյալ այն ջրհորները փորեց, որ իր հոր օրերում փորել էին, և որ փղշտացիները գոցել էին Աբրահամի մեռնելուց հետո: Եվ նրանց այնպիսի անուններ դրեց, ինչպիսի անուններ դրել էր իր հայրը» (Ծննդոց 26.12-15,18):

Իսահակը գտավ այն ջուրը, որի կարիքն ուներ իր ցանքերի համար, երբ կրկին փորեց իր հոր ջրհորները, որոնք փղշտացիները խցանել էին: Ինչպես և Իսահակի դեպքում, այն ջուրը, որը մեզ խիստ անհրաժեշտ է, որպեսզի Աստծո անապական սերմն աճի և հասունանա մեր սրտերում, հաճախ պետք է վերցվի խցանված ջրհորներից: Փղշտացիները պատկանում էին այս աշխարհին և դրա համակարգին: Հաճախ, երբ մենք չափազանց շատ ենք մոտենում այս աշխարհի համակարգին, չենք էլ հասկանում, թե ինչպես են մեր ջրհորները խցանվում: Անչափ կարևոր է բացել մեր ջրհորները, որպեսզի ստանանք մեզ անհրաժեշտ ոռոգումը:

Ես համոզված եմ, որ այս աշխարհի մշակութային արժեքների ներթափանցումը Քրիստոսի մարմնի մեջ «խցանել» է շատ ջրհորներ: Հնարավո՞ր է արդյոք, որ եկեղեցին, որը պետք է հոսող ջրի աղբյուր լինի, անջրդի վայր է դարձել, քանի որ թույլ է տվել թշնամուն հրապու-

րել իրեն՝ խցանելով իր ջրհորները:

Հարցն այն է, թե կարո՞ղ է արդյոք Աստված վերականգնել Իր եկեղեցին թարմ ջրով: Պատասխանն է՝ անշո՛ւշտ: Եսային հիասքանչ կերպով խոսում է այս մասին.

«Տերը շարունակ կառաջնորդի քեզ՝
տալով քեզ ջուր, երբ չորության մեջ լինես,
և վերականգնելով քո ուժը:
Դու կլինես ջրարբի պարտեզի պես՝
նման մշտահոս աղբյուրի:
Քո մարդկանցից ոմանք կվերակառուցեն քո քաղաքների
լքված ավերակները:
Այդ ժամանակ դու հայտնի կլինես՝ որպես պարիսպներ
վերակառուցող
և տներ վերականգնող» (Եսայի 58.11,12, NLT):

Իսահակը որոշեց չձգտել իր ցանկություններին և հաճույքներին և չգնաց այն երկիրը, որտեղ կյանքը հեշտ էր: Եթե մենք նույնպես չձգտենք մեր ցանկություններին և հաճույքներին, չապրենք միայն մեր ուզածով, այլ պատվենք Աստծուն, մենք նման կլինենք ջրարբի պարտեզի և կենդանի ջրի աղբյուրի, որի ջրերը չեն դադարում հոսել: Եթե վարվենք Աստծո ուզած կերպով, Նա մեր միջոցով կտա Իր կենդանի ջուրը չորացած ու ծարավ մարդկանց:

Աստված առաջնորդում է մեզ, որ բացենք բոլոր ջրհորները, որոնք այս աշխարհը խցանել է: Կրկին, դրա համար անհրաժեշտ է հաստատակամություն և միգուցե ավելի շատ ժամանակ, քան մի քանի ժամ, օր, շաբաթ, ամիս և նույնիսկ՝ տարի:

Ձերմեռանդության կորուստ

Կարծում եմ՝ ես հստակ ցույց տվեցի այս գրքում, որ անապատ կոչվող հասկացությունն այլաբանություն է, որը կարող է վերաբերել

բազմաթիվ հանգամանքների: Բոլոր այդ հանգամանքների ընդհանուր հայտարարն այն է, որ մենք ինչ-որ չափով զրկանք և չորություն ենք զգում: Հաճախ անապատի ազդակ կարող է լինել այնպիսի իրավիճակը, որում մեր կոչումը կատարելու և նույնիսկ Աստծո հետ հաղորդակցվելու խանդավառությունը և ձգտումը թուլանում են կամ իսպառ անհայտանում են:

Թույլ տվեք կարճ անդրադառնալ իմ երկրորդ խոշոր անապատային փորձառությանը, որի ժամանակ ես երիտասարդական ծառայության հովիվ էի:

Ֆլորիդայում գտնվող այդ եկեղեցում առաջին ինը ամիսները պարզապես աներևակայելի էին. ծառայությունն ընդարձակվում էր, և երիտասարդական թիմն աճում էր: Ես ոգեշնչված էի և լցված էի ուժերով ու ջերմեռանդությամբ: Բայց հանկարծ, պարզ երկնքում ճայթած ամպրոպի պես, ամեն ինչ ընդհատվեց, և իմ ջերմեռանդությունը և ձգտումը լիովին անհայտացան:

Ես աղոթում էի ավելի շատ, քան նախկինում երբևէ աղոթել էի, բայց թվում էր՝ ոչինչ տեղի չէր ունենում: Բացի այդ՝ այն տեսիլքը, որն ունեի երիտասարդական ծառայության համար, սկսում էր մարել (հին գինին թափվում էր): Որքան ավելի էի աղոթում, այնքան այդ տեսիլքն ավելի էր սպառվում: Արտաքուստ ոչինչ չէր փոխվել, բայց իմ ներսում ինչ-որ բան էր փոխվում:

Ի լրումն այդ ամենի, ամբողջ այդ ընթացքում մենք կրում էինք այնպիսի փորձություններ, ինչպիսիք մեր կյանքում երբեք չէին եղել: Ո՞րն էր ամենամեծ փորձությունը: Իմ անմիջական ղեկավարը գործ էր պատրաստում՝ ինձ աշխատանքից հեռացնելու համար: Նրա որդին մեր երիտասարդական ծառայության մեջ էր, և մի երեկո՝ երիտասարդական ծառայությունից հետո, նա մոտեցավ կնոջս և ասաց.

- Տիկի՛ն Լիզա, ինչպե՞ս ապրեմ համաձայն Զոնի քարոզների, եթե իմ ծնողներն անում են ..... տանը (կարիք չկա նշել այն, ինչ նա ասաց. ես միայն կասեմ, որ դա լավ բան չէր):

Լիզան ապշած էր, սակայն նա իմաստուն պատասխան տվեց.

- Հավատարի՛մ մնա Աստծո Խոսքին, և թո՛ւյլ տուր, որ Աստված աշխատի քո ծնողների հետ:

Սկսած այդ օրվանից, իմ ղեկավարը որոշեց զրկել ինձ հեղինակությունից և ազատվել ինձնից: Նա սկսեց աննկատ, բայց ծավալուն հարձակում իմ դեմ: Նա հաջողությամբ անհամաձայնություն ստեղծեց եկեղեցու ավագ հովվի և իմ միջև: Արդյունքում, տասնվեց շաբաթ շարունակ ես ոչ մի անգամ չհանդիպեցի իմ հովվին և չզրուցեցի նրա հետ:

Ամիսներ տևող խարդավանքներից հետո մեր ավագ հովիվը որոշեց հեռացնել ինձ աշխատանքից: Կիրակի առավոտյան նա հայտարարեց, որ երիտասարդական ծառայության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենալու: Հովվի երկու եղբայրներն ասացին, որ երկուշաբթի օրը ինձ հեռացնելու են աշխատանքից:

Աստված հրաշք գործեց, և մեր ավագ հովիվը մտափոխվեց: Ինչ-որ պահի՝ կիրակնօրյա հավաքույթից մինչև երկուշաբթի առավոտյան նշանակված մեր հանդիպումը, Աստված խոսեց նրա հետ: Երբ մենք հանդիպեցինք, նա ասաց.

- Ձո՛ն, Աստված է ուղարկել քեզ մեզ մոտ, և դու չես հեռանա այստեղից, մինչև Նա չասի, որ եկել է քո գնալու ժամանակը:

Այդ հանդիպումից վեց ամիս անց իմ ղեկավարի արարքները բացահայտվեցին, և նրան անմիջապես հեռացրին եկեղեցու ծառայողական թիմից: Նրա արարքները շատ ավելի ծանր էին, քան այն, ինչ մեզնից շատերը պատկերացնում էին:

Իմ կյանքի այդ փուլում ես բախվել էի ոչ միայն այս և այլ արտաքին պայքարների, այլև՝ բազմաթիվ ներքին պայքարների, որոնց նմանը իմ կյանքում չէր եղել: Կրկին, ես մտածեցի, որ միգուցե խնդիրն իմ մեջ էր, և սկսեցի խոստովանել ամեն մի մեղք, որը կարողացա հիշել, և որը կարող էի գործած լինել, բայց թե՛ հարձակումները, թե՛ չորությունը չէին դադարում:

Մեկ օր, երբ կրկին փորձում էի հասկանալ, թե իմ գործած մեղքերից որն էր այդ ամենի պատճառը, Տերն ասաց. «Դու չես հայտնվել այս անապատում մեղանչելու պատճառով: Ես պատրաստում եմ քեզ այն փոփոխության համար, որը գալիս է քո կյանքում»: Սա այն «նոր գինին» էր, որի մասին ես խոսում էի 5-րդ գլխում:

Այն բանից հետո, երբ արդեն մեկ տարի շարունակ անցնում էի այդ անապատով, Տերն առաջնորդեց ինձ կերակուրից ծոմ վերցնելու:

Մի քանի օր տևող ծոմից հետո իմ շուրթերից դուրս եկավ մի աղոթք, որը լսեցի իմ ականջներով՝ միայն բերանովս արտաբերելուց հետո: Այդ աղաղակը, որը դուրս եկավ իմ սրտից, շրջանցեց միտքս: Ես ջերմեռանդորեն բացականչում էի. «Տե՛ր, կարևոր չէ՝ ես կլինեմ անապատո՞ւմ, որտեղ ոչ ոք չկա, թե՞ կքարոզեմ միլիոնավոր մարդկանց. ես կանեմ նույնը երկու վայրերում էլ. ես կծգտեմ Քո սրտին»:

Հանկարծ իմ ներսում ասես լույս վառվեց, և ես հասկացա, թե ինչ էր Նա անում. «Աստվա՛ծ, Դու հենց սա էիր անում ինձանում, - ասացի ես: - Դու այնպիսին ես դարձրել ինձ, որ այժմ Դու ես իմ ժառանգությունը և առաջին սերը, ոչ թե իմ ծառայությունը կամ ցանկացած այլ բան: Եվ երբ փոփոխությունը գա, ես այն կուռք չեմ դարձնի: Ես չեմ թողնի Քեզ՝ իմ առաջին սիրուն, և չեմ սիրի ծառայությունը՝ Քեզ սիրելու փոխարեն: Իմ սիրտը կմնա ճիշտ դիրքում»:

Հանկարծ ես հիշեցի, թե ինչ ասաց Աստված Դավթի մասին.

> «Եվ նրան փոխելով՝ Դավթին նրանց համար թագավոր կանգնեցրեց, որ նրա համար էլ վկայություն տվեց և ասաց. «Հեսսեի որդի Դավթին գտա՝ Իմ սրտի պես մարդ, որ նա Իմ ամբողջ կամքը կանի»» (Գործք 13.22, NLT):

Թույլ տվեք կրկին նշել մի կարևոր փաստ. Սավուղ թագավորը երբեք չէր անցել անապատով: Սկզբում նա խոնարհ էր թվում. նա թաքնվել էր մարգարեից ճանապարհորդական իրերի մեջ, երբ իրեն թագավոր հռչակեցին: Այնուամենայնիվ, մի քանի հաջողություններից հետո նրա անմաքրություններն ի հայտ եկան: Նա հաղթեց խոշոր պատերազմում, բայց վարեց այն իր ուզած ձևով և անհնազանդ գտնվեց Աստծո հրամաններին: Ասես դա բավական չէր, նա արձան կառուցեց իր համար: Դա դեռ նրա բազմաթիվ անօրեն արարքների սկիզբն էր: Ի վերջո, նա կործանվեց այն անմաքրությունների պատճառով, որոնց դեմ այդպես էլ ոչինչ չձեռնարկեց:

Գոյություն ունի երկու իրողություն, որոնք կբացահայտեն, թե ինչ կա ձեր ներսում: Դրանցից մեկը մաքրող կրակն է, որի մասին արդեն խոսեցինք: Մյուսը հաջողությունն է: Տարբերությունն այն է, որ հաջողությունը բացահայտում է ձեր անմաքրությունները նրանց, ովքեր

գտնվում են ձեր շուրջը, այնինչ դուք դեռ կարող եք կուրորեն չտեսնել դրանք: Բազմաթիվ ծառայողներ իրենց կյանքի վաղ տարիներին թույլ չեն տալիս, որ մաքրող կրակը հեռացնի իրենց անմաքրությունները: Այնուամենայնիվ, ինչպես և Սավուղը, նրանք կանչվում են և որոշ ժամանակ անց զբաղեցնում ծառայողական պաշտոններ: Ցավոք, նրանք այդպես էլ չեն ստանում անհրաժեշտ պատրաստություն դրա համար: Եվ հաջողությունը, ի հայտ բերելով նրանց անմաքրությունները, ի վերջո կործանում է այն աշխատանքը, որի համար նրանք կանչված էին:

Սավուղը սիրում էր իր «ծառայությունը» այն աստիճան, որ սպանում էր մարդկանց՝ այն պահպանելու համար: Դավիթը չէր ձգտում գահին. նա ձգտում էր Աստծո սրտին: Իր անապատային փորձառության ընթացքում Դավիթը գտավ իր ուրախության ճշմարիտ աղբյուրը՝ Աստծուն: Երկու անգամ նա կարող էր սպանել Սավուղին՝ գահը զավթելու համար, և նրա կողքին գտնվող մարդիկ խրախուսում էին, որ նա այդպես վարվեր: Եթե Դավթի դրդապատճառները լինեին նույնը, ինչ Սավուղինը, նա սպանության կդիմեր, որպեսզի ստանար այն, ինչ Աստված խոստացել էր իրեն Սամուել մարգարեի միջոցով:

Կան տղամարդիկ և կանայք, որոնք պատրաստ են չարախոսել, բամբասել և ստել, որպեսզի ստանան այն, ինչ Աստված խոստացել է իրենց. մտածեք, թե որքան զավեշտալի է դա: Նրանք նման են Սավուղին. նրանք պատրաստ են գրեթե ամեն ինչի, որպեսզի ստանան կամ պահպանեն իրենց ժառանգությունը: Աստված փնտրում է Դավիթների, որոնց սիրտը ձգտում է Իրեն, ոչ թե դիրքի, ազդեցության, փողի կամ փառքի: Հին գինու տիկի վերամշակման արդյունքում Աստծո բնավորությունն ավելի խորն է արտահայտվում մեզանում: Աստծո բնավորությունն է, որ կարող է պահել Հոգու նոր գինու ճնշումը (Նրա օծությունը և ներկայությունը): Մեր բնավորությունը ձևավորվում է, երբ մենք փնտրում ենք Նրան, Ում ցանկանում ենք հետևել:

Դուք կարող եք հարցնել. «Որքա՞ն ժամանակ կպահանջվի դրա համար»:

Իմ պատասխանն այսպիսին է. դուք չպետք է մտահոգվեք այն բանով, թե որքան ժամանակ կպահանջվի դրա համար: Շարունակեք փորել, մինչև որ ջուրը հոսի: Կլինեն շատ դեպքեր, երբ պատասխանը

չի գա մեկ աղոթքի ընթացքում: Դուք ստիպված կլինեք շարունակել այն, ինչ սկսել եք, հաջորդ աղոթքի ժամանակ և միգուցե դրան հաջորդող բազմաթիվ աղոթքների ժամանակ:

Երբ ես ապրում էի Դալլասում և ծառայում էի որպես ավագ հովվի և նրա կնոջ օգնական, իմ մտերիմ ընկերներից մեկը, որը եկեղեցու աշխատակազմի ղեկավարն էր, և ես միասին աղոթում էինք գրեթե ամեն առավոտ: Մենք գալիս էինք մեր աղոթքի սենյակ առավոտյան ժամը 07:00-ից և հաճախ էինք զգում, որ Աստված ներկա էր և գործում էր մեզ համար: Բայց շատ անգամ, երբ մոտենում էր ժամը 08:30-ը (աշխատանքային օրվա սկիզբը), և մենք ստիպված էինք գնալ մեր գրասենյակ, մենք գրեթե հիասթափություն էինք զգում, քանի որ չկար ճեղքում... չկային թարմություն բերող ջրեր: Ձրհորները դեռ չէին բացվել:

Հաջորդ առավոտյան մենք մտնում էինք այդ սենյակ և շարունակում գրեթե նույն տեղից, որտեղ կանգ էինք առել: Երբեմն դա տևում էր երկու օր, այլ դեպքերում՝ երեք օր: Ես հիշում եմ՝ մեկ անգամ մի ամբողջ շաբաթ անցավ՝ առանց թարմություն բերող ջրերի: Այնուամենայնիվ, երբ ճեղքումը գալիս էր, մենք ստանում էինք զորություն և թարմություն:

Ճանապարհորդելով Ամերիկայով մեկ գտնվող եկեղեցիներով՝ ես հանդիպում եմ բազմաթիվ քրիստոնյաների, որոնք թույլ են տվել, որ իրենց ջրհորները խցանվեն, և հարմարավետ կերպով հաստատվել են այդ վիճակում: Տագնապալին այն է, որ ես զգում եմ՝ այդ վիճակում գտնվում է ոչ թե փոքրամասնությունը, այլ՝ մեծամասնությունը: Ի՞նչ տեղի կունենար, եթե այդ մարդիկ բորբոքեին այն երկնային պարգևը, որն իրենց ներսում է, և թույլ տային, որ այն ազատորեն գործեր: Կփոխվեին մարդիկ, ընտանիքներ, եկեղեցիներ. կփոխվեր Ամերիկան ամբողջությամբ:

Աստծո պարգևն անգործության է մատնված շատերի կյանքում: Բայց եթե նույնիսկ թվում է, թե ջրհորները խցանված են, Հոգին սպասում է:

Շարունակե՛ք փորել: Դուք կգտնեք թարմ ջուր անապատում:

11

ՊԱՏՐԱՍՏԵ՛Ք ՏԻՐՈՋ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Դժվարությունը մշտապես անսպասելի և անցանկալի է: Այն զավթիչ է և գող է, բայց Աստծո ձեռքերում դժվարությունը դառնում է այն գործիքը, որով հայտնվում է Նրա գերբնական զորությունը»:

– Չարլզ Սթենլի

«Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս»:

– Հովհաննես 5.19

Անապատն այն վայրն է, որտեղ պատրաստվում է Տիրոջ ճանապարհը, որտեղ ամեն սար ցածրանում է, և ամեն ձոր բարձրանում է: Այս քաջ հայտնի հատվածում Եսային շատ հստակ նկարագրում է այս իրողությունը.

«Անապատի մեջ կանչողի ձայնը.
«Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը
և ուղի՛ղ արեք ամայության մեջ շավիղը
մեր Աստծո համար:
Ամեն ձոր բարձրանա,
և ամեն սար ու բլուր ցածրանա,
և ծուռն ուղիղ դառնա, և
խորդուբորդ տեղերը՝ հարթահատակ:
Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը,
և ամեն մարմին միասին պիտի տեսնեն,
որովհետև Տիրոջ բերանն է խոսել»:

Մեկ ձայն ասում է՝ կանչի՛ր:
Եվ նա ասաց՝ ի՞նչ կանչեմ:
«Այս՝ թե ամեն մարմին խոտ է,
և նրա ամբողջ վայելչությունը՝

դաշտի ծաղկի պես:

Խոտը չորանում է, ծաղիկը՝ թառամում,

որովհետև Տիրոջ ոգին (կամ՝ շունչը) փչեց նրա վրա:

Իրավ ժողովուրդը խոտ է:

Խոտը կչորանա, ծաղիկը կթառամի,
բայց մեր Աստծո Խոսքը կմնա հավիտյան»» (Եսայի 40.3-8):

Ի՞նչ է սա նշանակում այն մարդկանց համար, ովքեր ներկայումս անապատում են:

Քրիստոսի մարմնում բոլորս ունենք պարտականություններ, որոնք Աստված որոշել է մեզ համար: Այնուամենայնիվ, նախքան Աստված թույլ կտա, որ կատարենք դրանք, մենք պետք է ստուգվենք և պատրաստվենք անապատում, որտեղ մեր մարմինը խաչվում է: Այնտեղ մենք նաև սովորում ենք սպասել Տիրոջը, լուռ մնալ, մինչև որ լսենք Նրա ձայնը և հասկանանք, թե ինչ է Նա անում, որպեսզի հնազանդորեն կատարենք Նրա կամքը:

Ցանկանում եմ պատմել ավելին իմ կյանքից, որպեսզի ցույց տամ, որ ճանապարհն անապատի միջով միշտ չէ, որ ուղիղ է՝ մեկնման կետից դեպի ժամանման կետը, այլ կարող է բաղկացած լինել որոշ շփոթեցնող զարտուղիներից և չծրագրված հանգստի կանգառներից:

1979 թվականին, «Փուրդյու» համալսարանում սովորելու ժամանակ, ես վերստին ծնվեցի մեր համալսարանի տղաների հանրակացարանում: Չորս ամիս անց լցվեցի Սուրբ Հոգով, և Աստված սկսեց խոսել ինձ հետ Իրեն ծառայելու մասին: Հավատացնում եմ ձեզ, որ ծառայությունը բոլորովին չէր մտնում իմ ծրագրերի մեջ. ես չէի ուզում որևէ առնչություն ունենալ դրա հետ: Բոլոր ծառայողները, որոնց ես ճանաչում էի իմ պատանեկության տարիներին, այնպիսի մարդիկ չէին, որոնց կցանկանայի նմանվել: Ես գիտեմ, որ դա կանխակալ կարծիք էր, բայց ինձ համար նրանք իրականությունից հեռու մարդիկ էին, որոնք ունեին տարօրինակ երեխաներ և ապրում էին խարխլված տներում: Իհարկե, հետագայում ես հասկացա, որ իմ պատկերացումները խեղաթյուրված էին, քանի որ կային բազմաթիվ խելամիտ ծառայողներ, որոնք ունեին հրաշալի երեխաներ և ապրում էին բարեկարգ

տներում: Երբ ես նորահավատ էի, կարծում էի, որ ծառայող լինելը նշանակում է ապրել ոչ լիարժեք կյանքով կամ գնալ Աֆրիկա, ապրել հյուղակում և չունենալ նույնիսկ մեկ զույգ կոշիկ:

Ես մեծացել եմ փոքրիկ քաղաքում, որի բնակչությունը բաղկացած էր 3.000 մարդուց: Միակ ծառայողները, որոնց ճանաչում էի, իմ կաթոլիկ քահանան էր (ինչը տարբերակ չէր ինձ համար, քանի որ նրանց չէր թույլատրվում ամուսնանալ) և մի փոքրիկ եկեղեցու հովիվ: Վերջինս երկու երեխա ուներ, որոնք իմ տարիքին էին և տարօրինակ էին, և երբ նրանց տուն էի գնում, ես ինչ-որ տհաճ հոտ էի զգում: Մեկ անգամ, երբ նրանց տանն էի, այդ տհաճ հոտն այնքա՛ն ուժգին էր, որ ես պահեցի շունչս՝ որքան կարողացա, մինչև որ ինչ-որ պատրվակ հորինեցի՝ այդտեղից գնալու համար: Այնպես որ, դուք կարող եք հասկանալ, թե ինչու ես չունեի մեծ հետաքրքրություն ծառայող դառնալու հանդեպ: Ես չէի ուզում քահանա լինել և ո՛չ էլ ունենալ տարօրինակ երեխաներ և ապրել գարշահոտ տան մեջ: Ես նույնպես չէի ուզում միսիոներ դառնալ, գնալ Աֆրիկա և ավարտել կյանքս ինչ-որ հյուղակում:

Այդ ժամանակ ես ծրագրում էի ավարտել «Փուրդյու» համալսարանի մեքենաշինական ֆակուլտետը, իսկ հետո ստանալ Կառավարման մագիստրոսի աստիճան «Հարվարդ»-ի համալսարանից: Դրանից հետո աշխատանքի կընդունվեի որևէ խոշոր ամերիկյան ընկերությունում, կհասնեի ղեկավարող պաշտոնի, շատ փող կվաստակեի և կաջակցեի իմ եկեղեցուն իմ զոհաբերություններով: Ես այդպես էի ծրագրում կյանքս և անտեսում էի Աստծո շշնջոցները ծառայության վերաբերյալ (այս ծրագրի մեջ ոչ մի վատ բան չկա. պարզապես Աստված այլ բան էր որոշել ինձ համար):

Չորս ամիս անց՝ կիրակի առավոտյան, ես եկեղեցում էի և լսում էի իմ հովվի քարոզը, երբ Աստծո Հոգին ավելի խիստ զգուշացրեց ինձ. «Ես կանչել եմ քեզ, որպեսզի քարոզես: Ո՞րն է քո պատասխանը»:

Այդ անգամ ես հստակ լսեցի Նրա ձայնը և պատասխանեցի. «Տե՛ր, նույնիսկ եթե ստիպված լինեմ ապրել Աֆրիկայում՝ առանց կոշիկների և հարդից պատրաստված հյուղակում, ես կքարոզեմ և կհնազանդվեմ Քեզ»: Աստված գիտի, թե ինչպես գրավի մեր ուշադրությունը: Նախորդ ամիսների ընթացքում, երբ Նրա մղումներն այդքան արտահայտիչ չէին,

ես արդեն իսկ հաշվում էի ծառայության գինը: Այժմ, լիովին գիտակցելով իմ որոշումը, ես պատրաստ էի հաճեցնել Նրան՝ անկախ այն գնից, որը պետք է վճարեի:

Տերը սկսեց պատրաստել ինձ: Իմ ներսի կրակը վառվում էր: Ես սկսեցի պատմել մեր հանրակացարանի տղաներին Հիսուսի մասին, և շատերը փրկվեցին: Մոտավորապես մեկուկես տարի անց ես Աստվածաշնչի ուսումնասիրության դասեր սկսեցի մեր հանրակացարանում, և այդ դասերին հաճախում էին ուսանողներ ամբողջ համալսարանից: Ամեն շաբաթ նոր մարդիկ էին ընդունում Քրիստոսին, բժշկվում էին և ազատություն ստանում:

Ես լիովին փոխեցի իմ առաջնահերթությունները: Քարոզելու ցանկությունն այնքան ուժգին էր դարձել ինձանում, որ ուզում էի թողնել «Փուրդյու» համալսարանը՝ չավարտելով մեքենաշինության ֆակուլտետի վերջին տարին, և Աստվածաշնչյան դպրոց գնալ: Իմ տրամաբանությունը հետևյալն էր. ինչո՞ւ էր պետք ուսումնասիրել մաթեմատիկա և ֆիզիկա, եթե ես կանչված էի քարոզելու, իսկ մարդիկ մահանում էին և դժոխք գնում: Հիսուսը շուտով վերադառնալու էր. այնպես որ, ես պետք է հնարավորինս շուտ գնայի հունձքի դաշտերը:

Մի երեկո, երբ կատարում էի իմ տնային աշխատանքները, որոնց արդեն ատելությամբ էի վերաբերվում, ես բարձրացրի գլուխս իմ դասագրքից և նայեցի դարակին դրված Աստվածաշնչին: Արդեն հոգնել էի իմ դասերից: Ես շպրտեցի իմ ջերմային դինամիկայի դասագիրքը պատին: Որոշում կայացրի, որ այլևս չէի սպասելու. ես թողնելու էի համալսարանը և ընդունվելու էի Աստվածաշնչյան դպրոց:

Զանգահարեցի այն մարդուն, ով աշակերտում էր ինձ. նա հետազոտող էր «Փուրդյու» համալսարանում և իմ մտերիմ ընկերն էր: Ես համարձակ հայտարարեցի.

- Դո՛ն, ես թողնելու եմ ուսումս և Աստվածաշնչյան դպրոց եմ ընդունվելու:

Նա իմաստուն ձևով պատասխանեց.

- Արի՛ զբոսանքի գնանք այսօր երեկոյան և աղոթենք դրա համար:

Մենք այդպես էլ արեցինք, և Աստված խոսեց ինձ հետ. «Իմ որոշած ժամանակին դու կծառայես... Ավարտի՛ր քո ուսումը»:

Որոշ ժամանակ անց իմ մտքում պայքար սկսվեց. ես մտածում էի՝ արդյո՞ք Տերը տարբեր երկրներ կուղարկեր փոքրիկ քաղաքում մեծացած մի տղայի: Եվ լսեցի Նրա ձայնը. «Ո՞վ է ծրագրել և որոշել այն ծառայությունը, որի համար դու կանչված ես, դո՞ւ, թե՞ Ես»:

«Դու», - պատասխանեցի ես:

«Չե՞ս կարծում, որ Ես ավելի շատ եմ մտահոգվում այդ ծառայության ծնունդով, քան դու»: Նրա պնդումը գրավեց իմ ուշադրությունը:

Այսպիսով, ես հանդարտվեցի և ավարտեցի մեքենաշինական ֆակուլտետը: Ավարտելուց անմիջապես հետո աշխատանքի ընդունվեցի «Ռոքվել ինտերնեյշնլ» ընկերությունում որպես ինժեներ-մեխանիկ ԱՄՆ ռազմածովային ուժերին պատկանող մի նախագծում: Ես տեղափոխվեցի այն քաղաքը, որտեղ պետք է աշխատեի, և հրաշալի եկեղեցի գտա: Մեկ տարի անց Լիզան և ես ամուսնացանք:

Ես միացել էի այդ եկեղեցուն, երբ դեռ ամուրի էի, և ծառայում էի այնտեղ, որտեղ ծառայողի կարիք կար: Դա շարունակվեց նաև մեր ամուսնությունից հետո: Ես կարգուկանոնի ծառայող էի, ընդգրկված էի բանտերի ծառայության մեջ, թենիս խաղալ էի սովորեցնում հովվի երեխաներին և օգնում էի շատ այլ հարցերում: Այդ եկեղեցին Աստվածաշնչյան դպրոց ուներ, և ես հաճախում էի երեկոյան դասերին:

Երկու տարի անց եկեղեցին աշխատանքի ընդունեց ինձ՝ որպես ավագ հովվի և նրա ընտանիքի օգնական: Ես ասացի հովվին և մյուս ծառայողներին, որ կարող էի աշխատել միայն մեկ տարի, քանի որ կանչված էի քարոզելու համար: Պարտականություններիս թվում էր լվանալ իմ հովվի և նրա կնոջ մեքենաները և լիցքավորել վառելիքով, փայլեցնել իմ հովվի կոշիկները, կատարել մանր առաջադրանքներ, դպրոցից տուն տանել նրանց երեխաներին, լողալ սովորեցնել նրանց երկու նախադպրոցական երեխաներին, ընդունել հյուր-քարոզիչներին և այլն: Ես մնացի այդ պաշտոնում չորս ու կես տարի՝ մեկ տարվա փոխարեն:

Արդեն յոթ տարի էր անցել այն պահից, երբ ընդունել էի Աստծո կանչը: Երբ համալսարանում էի, տեսնելով, թե ինչպես էին ուսանողները փրկվում, բժշկվում և ազատագրվում, ես կարծում էի, թե ինձ ընդամենը օրեր էին բաժանում լրիվ ժամանակվա ծառայությունից:

Ես նույնիսկ գաղափար չունեի այն ընթացքի մասին, որով Աստված տանում էր ինձ:

Այդ եկեղեցում ծառայելու ընթացքում ես երեք անգամ անհաջող կերպով փորձեցի անցնել լրիվ ժամանակվա ծառայության: Երբ ինքնաթիռով Դալլաս էի վերադառնում Ասիայից (դա երրորդ անգամն էր, որ ես փորձում էի տեսնել, թե արդյո՞ք դա էր այն վայրը, որն Աստված որոշել էր ինձ համար) և կարդում էի Հովհաննեսի Ավետարանը, ես հասա մի խոսքի, որն ասես դուրս թռավ էջից. «Աստված ուղարկեց մի մարդու՝ Հովհաննես Մկրտչին» (Հովհաննես 1.6, NLT): Ես լսեցի Աստծո ձայնը. «Դու ուզում ես ուղարկվել *Զոն Բիվերի՞ կողմից,* թե՞ *Իմ կողմից»:*

«Ես ուզում եմ ուղարկվել Քո՛ կողմից»:

Եվ Տերն ասաց. «Լավ է, որովհետև եթե ուղարկվես Զոն Բիվերի կողմից, դու կգնաս Զոնի իշխանությամբ, իսկ եթե ուղարկվես Իմ կողմից, դու կգնաս Իմ իշխանությամբ»:

Դրանից հետո ես հանդարտվեցի և կենտրոնացա այն վայրի վրա, որտեղ Աստված նշանակել էր ինձ: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց իմ անհանգստությունը վերադարձավ: Իմ անապատային պատրաստությունը դեռ չէր ավարտվել. այն դեռ ընթացքի մեջ էր:

Արդյո՞ք Աստված «դարակի մեջ էր դրել ինձ» այդ յոթ տարվա ընթացքում՝ սպասելով թափուր ծառայողական պաշտոնի: Ո՛չ, և հազար անգամ ո՛չ: Ես տարվել էի այդ անապատը, որպեսզի ինձանում աստվածապաշտ բնավորություն ձևավորվեր... որպեսզի *պատրաստվեր Նրա ճանապարհը:* Իմ բնավորությունը պետք է հասունանար, որպեսզի ես ճիշտ վարվեի այն ծառայության մեջ, որի համար կանչված էի: Հետագայում ես հասկացա, որ ամեն մի նոր հոգևոր մակարդակին նախորդում է պատրաստության ընթացք՝ այդ մակարդակի համար:

Մոռացե՛ք ձեր ուժերով ծառայելու մասին

Անկախ այն բանից, թե որքան լավն են մեր մտադրությունները, առանց Աստծո մասնակցության՝ մենք չենք կարող հավիտենական արժեք ունեցող որևէ բան անել, նույնիսկ՝ Հիսուսի անունով: Ինքը

Տերն ասաց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհաննես 5.19): Ինչպիսի՜ պնդում: Հիսուսը՝ Աստծո մարմնավորված և օծված Որդին, ասաց, որ *Ինքը* չէր կարող անել *ոչ մի* արժեքավոր բան՝ Իր նախաձեռնությամբ: Ես կբերեմ մի քանի օրինակ՝ ցույց տալու համար, թե ինչ նկատի ունեմ.

Հիսուսը սիրում էր Ղազարոսին և նրա երկու քույրերին՝ Մարթային և Մարիամին, որոնք ապրում էին Բեթանիայում: Սակայն Ղազարոսը խիստ հիվանդացավ, և տեղի ունեցավ հետևյալը.

> «Եվ նրա քույրերն ուղարկեցին Նրա մոտ և ասացին. «Տե՛ր, ահա նա, որին Դու սիրում ես, հիվանդացել է»: Հիսուսն էլ, երբ որ լսեց, ասաց. «Այն հիվանդությունը մեռնելու համար չէ, այլ՝ Աստծո փառքի համար, որ Աստծո Որդին նրանով փառավորվի»: Եվ Հիսուսը սիրում էր Մարթային և նրա քրոջը և Ղազարոսին: Եվ երբ որ լսեց, թե նա հիվանդ է, այն ժամանակ երկու օր մնաց այն տեղը, ուր որ էր» (Հովհաննես 11.3-6):

Թեև Հիսուսը Մեսիան էր, Նա մտերիմ ընկերներ ուներ: Նա սիրում էր Ղազարոսին և հաճույքով էր շփվում նրա ընտանիքի հետ: Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք, որ Հիսուսը երկու օր ոչինչ չարեց այն բանից հետո, երբ լսեց Իր ընկերոջ հիվանդության մասին: Ինչո՞ւ Նա անմիջապես Բեթանիա չգնաց: Պատճառն այն էր, որ Նա Աստծուց պատվեր չէր ստացել: Հիսուսը հնազանդ սպասում էր, մինչև որ գնալու պատվեր ստանար Աստծո Հոգուց: Երբ դա տեղի ունեցավ, Նա գնաց:

Մեկ անգամ Տերը ցույց տվեց ինձ, որ եթե Ղազարոսն իմ ընկերը լիներ, ես անմիջապես մեքենայով կգնայի նրա տուն և կդնեի ձեռքերս նրա վրա՝ առանց նույնիսկ մտածելու Հոգու առաջնորդությունը խնդրելու մասին: Դժբախտաբար, շատերս ենք այսպիսին: Մենք մտածում ենք, որ քանի որ Աստված միշտ մեզ հետ է, կարիք չկա, որ խնդրենք Նրա առաջնորդությունը նման իրավիճակներում: Սակայն մենք պետք է կանգ առնենք և զգայուն լինենք Աստծո Հոգու հանդեպ:

Աստված գիտի, թե ինչ է Ինքն ուզում, և եթե մենք սպասենք, մինչև որ ստանանք Նրա հրահանգները կամ իմանանք, թե ինչ կա Նրա սրտում ինչ-որ հարցի վերաբերյալ, Նա կասի մեզ, թե ինչ անենք:

Միգուցե մտածում ենք, որ նույնիսկ եթե մենք ձեռնադրենք մարդկանց՝ առանց Հոգու առաջնորդության, Աստված պարտավոր է նույն պահին բժշկել նրանց: Եթե այդպես է, մի՞թե չարժե գնալ բոլոր հիվանդանոցները և դատարկել:

Որոշ դեպքերում Աստվածաշունչն ասում է, որ Հիսուսը «բժշկեց բոլորին», բայց միշտ չէ, որ այդպես էր լինում: Օրինակ, ինչո՞ւ Հիսուսը չբժշկեց բոլոր հիվանդ, կույր, կաղ և անդամալույծ մարդկանց Բեթհեզդայի ավազանում, այլ՝ միայն մեկ մարդու, որը երեսունութ տարի անդամալույծ էր (տե՛ս Հովհ. 5-րդ գլուխ): Հնարավո՞ր է, որ Աստծո Հոգին չառաջնորդեց Նրան մյուսներին բժշկելու համար:

Որպես մեկ այլ օրինակ՝ գրված է ծնված օրից կաղ մի մարդու մասին, որին ամեն օր տանում էին տաճարի դարպասի մոտ: Անկասկած, Հիսուսն անցել էր նրա կողքով ամեն անգամ, երբ տաճար էր մտել: Ինչո՞ւ չէր բժշկել նրան: *Քանի որ Նրա Հայրը չէր կարգադրել Նրան բժշկել այդ մարդուն:*

Ավելի ուշ՝ այն բանից հետո, երբ Հիսուսը Երկինք համբարձվեց, Պետրոսը և Հովհաննեսը գնացին տաճար, և Հոգու առաջնորդությամբ բժշկեցին այդ մարդուն՝ արթնության սկիզբ տալով (տե՛ս Գործք 3-րդ գլուխ):

Երբ Հիսուսը ծառայում էր, չուներ որևէ հստակ բանաձև. Նա թքում էր մի քանիսի վրա, ձեռնադրում էր մյուսներին, իսկ ոմանց պարզապես խոսք էր ասում: Մեկ անգամ Նա ցեխից գնդիկներ պատրաստեց և քսեց մի մարդու աչքերին: Կային մարդիկ, որոնց Նա ուղարկում էր քահանաների մոտ, և այսպես շարունակ: Նման ուշագրավ բազմազանության պատճառն այն է, որ Հիսուսը միայն անում էր այն, ինչ տեսնում էր Իր Հորն անելիս: Աստված գիտեր ճիշտ ժամանակն ամեն իրավիճակի համար և այն ձևը, որով ամեն մեկը կարող էր բժշկություն ստանալ:

Աստված հենց սա է կամենում Իր բոլոր ծառաների համար... դարձնել մեզ այնպիսին, որ մենք անենք միայն այն, ինչ որ տեսնենք Հիսուսին անելիս, և վարվենք Նրա առաջնորդությամբ, ոչ թե կատա-

րենք այն, ինչ մտածում կամ ցանկանում ենք: Հիսուսն ասում է Հովհաննես 20.21-ում. «Ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում»: Հիսուսը ոչինչ չարեց՝ առանց Իր Հոր առաջնորդության: Մենք պետք է նույն կերպով հետևենք Հիսուսի օրինակին: Մենք պետք է ապրենք Նրա նման՝ առաջնորդվելով Սուրբ Հոգով և վարվելով միայն՝ ըստ Նրա առաջնորդության: Դրա համար անհրաժեշտ է, որ մեր մարմինը հնազանդվի Աստծո Հոգուն՝ Քրիստոսի Հոգուն: Եվ ամենաբարենպաստ միջավայրը, որտեղ մենք կարող ենք սովորել ապրել Հոգու առաջնորդությամբ, անապատն է: Այս դժվարություններով լի վայրում է պատրաստվում Տիրոջ ճանապարհը:

Քառասուն տարի տևող անապատային պատրաստությունից հետո Աստված Մովսեսին ասաց.

> ««Ուստի, ե՛կ, հիմա քեզ փարավոնի մոտ ուղարկեմ, և հանի՛ր Իմ ժողովրդին՝ Իսրայելի որդիներին, Եգիպտոսից»: Եվ Մովսեսն ասաց Աստծուն. «Ես ո՞վ եմ, որ փարավոնի մոտ գնամ և Իսրայելի որդիներին Եգիպտոսից հանեմ»: Եվ ասաց, թե. «Ես քեզ հետ կլինեմ»» (Ելից 3.10-12):

Այժմ համեմատենք սա այն բանի հետ, թե ինչ ասաց Աստված այն մարդկանց մասին, որ իրենք իրենց էին ուղարկել.

> «Ես այդ մարգարեներին չեմ ուղարկել, բայց իրենք վազ են տալիս, և Ես նրանց հետ չեմ խոսել, բայց իրենք մարգարեանում են... Ահա Ես այն սուտ երազներ մարգարեացողների դեմ եմ,- ասում է Տերը,- որ պատմում են նրանց և մոլորեցնում Իմ ժողովրդին իրենց ստություններով ու իրենց սնապարծությամբ, և Ես նրանց չեմ ուղարկել և նրանց չեմ պատվիրել, և մի շահ և օգուտ չունեն այս ժողովրդի համար,- ասում է Տերը» (Երեմիա 23.21,32):

Որքա՜ն խիստ է: Ոչ ոք չի ցանկանա նման ուղերձ ստանալ Տիրոջից:

Քառասուն տարեկանում, երբ Մովսեսն առաջին անգամ փորձեց

ազատել Իսրայելի զավակներին, նա անկարող էր օգնել կամ *օգուտ տալ* նրանց, քանի որ *Աստված չէր ուղարկել նրան:* Նույնիսկ ունենալով փայլուն կրթություն, առաջնորդական հմտություններ և իմաստություն, որոնք նա ստացել էր Եգիպտոսում, առանց Աստծո աջակցության և Նրա որոշած ժամանակի՝ Մովսեսը չկարողացավ կատարել այն, ինչի համար, *ինչպես ինքը գիտեր*, Աստված կանչել էր իրեն: Նրա անհաջող փորձի արդյունքում մահացավ եգիպտացի կեղեքիչներից միայն մեկը: Թեև նա ազնվագույն մտադրություններ ուներ, իր առաքելությունը կատարելու առաջին փորձն ավելի շատ վնաս հասցրեց, քան օգուտ տվեց: Քառասուն տարի տևող անապատային պատրաստությունից հետո ի հայտ եկավ նոր Մովսես, որը չէր անելու ոչինչ՝ Աստծո պատվերներից բացի: Այժմ, Աստծո որոշած ժամանակ, Մովսեսի առաջնորդության ներքո մի ամբողջ բանակ հայտնվեց Կարմիր ծովի տակ: Ահա տարբերությունը մեր ուժի և Աստծո զորության միջև. մեկ զինվորը՝ ամբողջ բանակի համեմատ:

Հովհաննես Մկրտիչը երեսուն տարի պատրաստվեց մի ծառայության համար, որը տևեց ընդամենը վեց ամիս, սակայն Հիսուսն ասաց, որ Հովհաննեսը ամենամեծ մարգարեն էր կնոջից ծնվածների մեջ:

Ուշագրավ է, որ Աստված վեց ամսում կարող է անել ավելին *Իր կողմից ուղարկված* տղամարդու կամ կնոջ միջոցով, քան ինչ-որ մեկը *իր ուժերով*, չնայած որ վաթսուն տարի շարունակ ջանասիրաբար գործում է:

Հենց այս մասին է խոսում Հիսուսը. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհաննես 5.19):

Կրկին կարդանք Եսայի մարգարեի խոսքերը.

«Անապատի մեջ կանչողի ձայնը.
«Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը
և ուղի՛ղ արեք ամայության մեջ շավիղը
մեր Աստծո համար:

Ամեն ձոր բարձրանա,
և ամեն սար ու բլուր ցածրանա,
և ծուռն ուղիղ դառնա, և
խորդուբորդ տեղերը՝ հարթահատակ:
Եվ պիտի հայտնվի Տիրոջ փառքը,
և ամեն մարմին միասին պիտի տեսնեն,
որովհետև Տիրոջ բերանն է խոսել»:

Մեկ ձայն ասում է՝ կանչի՛ր:
Եվ նա ասաց՝ ի՞նչ կանչեմ:
«Այս՝ թե ամեն մարմին խոտ է,
և նրա ամբողջ վայելչությունը՝
դաշտի ծաղկի պես:
Խոտը չորանում է, ծաղիկը՝ թառամում,
որովհետև Տիրոջ ոգին (կամ՝ շունչը) փչեց նրա վրա:
Իրավ ժողովուրդը խոտ է:
Խոտը կչորանա, ծաղիկը կթառամի,
բայց մեր Աստծո Խոսքը կմնա հավիտյան»» (Եսայի 40.3-8):

Աստված ասում է, որ անապատն այն վայրն է, որտեղ պատրաստվում է Տիրոջ ճանապարհը: Տիրոջ ճանապարհը մարդկային ուժը չէ: Նա ասում է, որ մարմնի հպարտությունը կցածրանա, խոնարհները (ովքեր սպասում են Տիրոջը) կբարձրանան, ծուռ (խորամանկ, ոչ ճիշտ և անազնիվ) տեղերը կուղղվեն, և խորդուբորդ (սիրուց զուրկ, կոպիտ և խիստ) տեղերը կհարթվեն:

Ուսանողական տարիներին, երբ նոր էի սկսել հետևել Հիսուսին, ես ստացել էի բազմաթիվ օրհնություններ և «հաջողության» էի հասել՝ ծառայելով մարդկանց, սակայն իմ կյանքում կային սարեր, որոնք պետք է ցածրանային, և ծուռ ու խորդուբորդ տեղեր, որոնք պետք է ուղիղ և հարթ դառնային: Աստված գիտեր, որ ես պետք է որոշ ժամա-

Ինչպե՞ս անցնել անապատը

#11 Ձեր ճամպրուկները հավաքած պահե՛ք

Թեև ես ոչ մի դեպքում չէի առաջարկի, որ այդպես վարվեք, երբ ձեր անապատային ընթացքը երկարում է և թվում է՝ երբեք չի ավարտվելու, միգուցե դուք որոշեք բացել ձեր ճամպրուկները և հաստատվել այդտեղ: Վստահե՛ք ինձ. երբ Աստված որոշի տեղափոխել ձեզ, Նա կարող է անել դա մեկ ակնթարթում: Հիշե՛ք Հովսեփի պատմությունը. թվում է՝ նա մնալու էր բանտում մինչև կյանքի ավարտը, սակայն առանց որևէ զգուշացման՝ մեկ օրում նա հասավ այն երազանքին, որն Աստված տվել էր իրեն: Այո՛, ճիշտ այդպես. ընդամենը մեկ օրում:

Իմ անապատներից մեկում թվում էր, որ ես մնալու էի հաջորդ քառասուն տարիների մեջ: Բայց հանկարծ Տերը խիստ անսպասելի ասաց, որ պետք է թողնեմ իմ ներկա ծառայությունը և շրջիկ քարոզիչ դառնամ: Այդ փոփոխությունն անմիջապես տեղի չունեցավ, բայց երբ տեղի ունեցավ, այն եկավ պտտահողմի պես: Եվ ես պատրաստ էի անցնել իմ կոչման նոր փուլին: Իմ ճամպրուկները հավաքած էին:

նակ անցկացնեի անապատում՝ իմ թերությունները շտկելու համար:

Ցանկացած անապատային փորձառության ժամանակ խիստ կարևոր է թույլ տալ, որ Աստված գործի մեր կյանքում այնպես, ինչպես Ինքն է կամենում: Երբ դեռ ծառայում էի իմ հովվին Դալլասում, մեկ օր Տերը խոսեց ինձ հետ. «Ձո՛ն, բաց մի՛ թող այն, ինչ Ես ցանկանում եմ կատարել քո մեջ այսօր՝ միայն սպասելով քո քարոզչական ծառայությանը, որը գալու է վաղը»: Անկեղծ ասած՝ ես այնքա՛ն էի ցանկանում քարոզել, որ իմ կյանքի այդ հատվածին վերաբերվում էի որպես վատնված ժամանակի:

Կարիք չկա, որ ընկնեք այս ծուղակը: Հասկացե՛ք, որ Աստված *ժա-*

մանակ չի վատնում: Նա օգտագործում *է ժամանակն արդյունավետ կերպով:* Հասկացեք՝ այն, թե որտեղ եք գտնվում հիմա, ձեր կոչման կարևոր մասն է: Այն ձեր պատրաստության վայրն է: Այն ճանապարհն է խոստումից դեպի առաջխաղացումը, այսինքն՝ խոստման իրականացումը: Թույլ տվեք, որ Նա անհանգստանա այն մասին, թե ինչպես այդ ամենը կստացվի և ի մի կգա... իսկ դուք պարզապես քայլեք Նրա հետ: Նա է Աստված՝ մեր Զորագլուխը և Կատարողը: Մենք պարզապես պետք է վստահենք Նրան և հնազանդվենք այն ամենին, ինչ Նա ցույց է տալիս մեզ *այսօր:*

Ամեն անգամ, երբ ես մտածում էի, որ հասկացել էի, թե ինչպես էր Նա հաստատելու ինձ քարոզչական ծառայության մեջ, Նա սիրով ասում էր. «Զո՛ն, դու գտել ես ևս մեկ ճանապարհ, որով դա տեղի չի ունենա»: Դա ճիշտ էր. Նա տվեց ինձ այդ ծառայությունը լիովին անսպասելի: Աստված դարձնում է մեզ գոհացող (ոչ թե ինքնագոհ), որպեսզի մենք լիարժեք ապրենք մեր ներկայով:

Արե՛ք ամեն ինչ Աստծո ուզած կերպով

Երբ Աստված տալիս է Իր իշխանությունը և զորությունը որևէ մարդու, որքան ավելի մեծ է շնորհված իշխանությունը, այնքան ավելի մեծ է դատաստանը Տիրոջ Հոգուն չհնազանդվելու համար: Աստված չդատեց Մովսեսին քառասուն տարեկանում, երբ նա վարվեց իր ուզած կերպով, քանի որ նրա կյանքում դեռևս չկային Աստծո իշխանությունը և զորությունը: Այնուամենայնիվ, հետագայում ամեն ինչ փոխվեց: Երբ Իսրայելը Սին անապատում էր, ժողովուրդը վիճեց Մովսեսի հետ և տրտնջաց այն վայրի պատճառով, որտեղ բերել էր իրենց: Նրանք ծարավ էին և ջուր էին ուզում: Եվ Աստված ասաց Մովսեսին, թե ինչ նա պետք է աներ.

> «Եվ Տերը խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. «Վերցրո՛ւ գավազանը և ժողովրդին ժողովի՛ր դու և քո եղբայր Ահարոնը և խոսե՛ք ապառաժին նրանց աչքերի առջև, և այն կտա իր ջուրը, և դու ապառաժից ջուր կհանես նրանց համար և կխմեցնես ժողովրդին և անասուններին» (Թվոց 20.7,8):

Աստված պատվիրեց Մովսեսին խոսել ապառաժին, որպեսզի այն ջուր տա: Բայց կարդացեք, թե ինչ արեց Մովսեսը.

> «Եվ Մովսեսն իր ձեռքը բարձրացրեց և գավազանով երկու անգամ ապառաժին զարկեց, և շատ ջուր դուրս ելավ, և ժողովուրդը և նրանց անասունները խմեցին: Եվ Տերը խոսեց Մովսեսի և Ահարոնի հետ. «Որովհետև Ինձ չհավատացիք՝ Ինձ Իսրայելի որդիների աչքերի առջև փառավորելու, նրա համար դուք այս ժողովրդին չեք տանի այն երկիրը, որ նրանց տվեցի»» (Թվոց 20.11,12):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված ջուր տվեց միլիոնավոր մարդկանց, որոնք նայում էին Մովսեսին: Զարմանալի՜ է: Ջուր՝ ապառաժից. ո՞վ է լսել նման զորավոր հրաշքի մասին քսանմեկերորդ դարում: Այսպիսով, թեև Մովսեսը չհնազանդվեց Աստծո հրահանգներին այն մասին, թե ինչպես դուրս բերի ջուրն ապառաժից, այդ աներևակայելի հրաշքը, միևնույն է, տեղի ունեցավ: Ջուրը նախատեսված էր ժողովրդի համար՝ ի պատասխան նրանց կարիքի: Մովսեսին պատժելու համար Աստված չզրկեց ժողովրդին ջրից: Այնուամենայնիվ, այդ արարքն անհետևանք չմնաց. Աստված թույլ չտվեց Մովսեսին առաջնորդել ժողովրդին դեպի Խոստման երկիր:

Սա փայլուն օրինակ է այն մասին, որ Աստծո գերբնական օծությունը նախատեսված է մարդկանց կարիքների, ոչ թե այդ պարգևն ունեցողին մեծարելու համար: Միգուցե Մովսեսը բարկացած էր ժողովրդի վրա և մի փոքր էլ բարկացած էր Աստծո վրա, քանի որ ստիպված էր հովվել նման անկարգ ժողովրդի: Մովսեսը հարվածեց ապառաժին, ինչպես որ նա արել էր Սին անապատում նախորդ անգամ (տե՛ս Ելից 17.1-7): Կամ, միգուցե, Մովսեսը սկսել էր ավելի թեթևորեն վերաբերվել իր առաջնորդելու կարողությանը. միգուցե նա կարծում էր, որ Աստված կպատվեր այն, ինչ ինքը ճիշտ կհամարեր: Նա կրկին վարվեց իր ուզած կերպով, սակայն հետևանքները զգալիորեն ծանր էին: Մովսեսն ապրում էր Աստծո զորությամբ և կարողությամբ. նրա ուժերի աղբյուրն իր կախվածությունն էր Աստծուց: Այն, որ Մովսեսն Աստծուց անկախ վարվեց ժողովրդի առջև, արագահաս դատաստանի պատճառ դարձավ:

Ահա թե ինչու է Հակոբոս 3.1-ում գրված. «Իմ եղբայրնե՛ր, թող ձեզնից շատերը չդառնան ուսուցիչներ՝ իմանալով, որ մենք ավելի խիստ դատաստան կընդունենք» (NKJV): Որքան ավելի է պատասխանատվությունը կամ փառքը, այնքան ավելի մեծ է դատաստանը:

Անապատը պատրաստում է մեզ, որ վարվենք Տիրոջ զորության և փառքի մեջ՝ առանց դատաստանի ենթարկվելու անհնազանդության պատճառով: Չոր անապատային փորձառության մեջ հպարտությունը ցածրանում է, իսկ խոնարհությունը՝ բարձրանում: Ճշմարտապես խոնարհ մարդն ապրում է այնպես, ինչպես Հիսուսը. նա աղաղակում է. «Ես չեմ անի ոչինչ, մինչև որ չտեսնեմ Աստծո Հոգուն անելիս: Ես ոչինչ եմ՝ իմ զորությամբ և կարողությամբ»:

Հնարավո՞ր է արդյոք, որ մեր օրերում Աստված չի հայտնում Իր փառքը և զորությունը շատերի միջոցով, քանի որ նա պաշտպանում է մեզ ավելի մեծ դատաստանից: Ես հավատում եմ, որ անապատում Նա առանձնացնում է մարմնավոր բնությունը հոգուց՝ դրդելով մեզ կանչել Իրեն և լսել Իրեն: Այդ դեպքում, երբ գա Նրա փառքի հայտնվելու ժամանակը, մենք պատիվ կբերենք Նրա անվանը՝ վարվելով միայն *Նրա ուզած կերպով:*

Լսե՛ք Հոգու ձայնը: Թո՛ւյլ տվեք Նրան ցույց տալ ձեզ, թե ինչպես է Նա ցանկանում, որ կատարեք այն գործը, որը պատրաստել է ձեզ համար: Տեսե՛ք և լսե՛ք, թե ինչ է Տերն անում և ասում.

> «Ես կբարձրանամ իմ դիտանոցը և կկանգնեմ իմ պահակակետում: Այդտեղ կսպասեմ, որ տեսնեմ, թե ինչ է Տերն ասում, և ինչպես Նա կպատասխանի իմ բողոքին: Եվ Տերն ասաց ինձ. «Գրի՛ր Իմ պատասխանը պարզ կերպով՝ տախտակների վրա, որպեսզի վազողը կարողանա ճշգրիտ ուղերձ տանել մյուսներին: Այս տեսիլքն ապագա ժամանակվա համար է: Այն նկարագրում է վերջը, և այն կկատարվի: Եթե թվա, թե հապաղում է, համբերատար սպասի՛ր, քանի որ այն անպայման կիրականանա: Այն չի՛ ուշանա: Նայի՛ր հպարտներին: Նրանք վստահում են իրենց, և նրանց կյանքն անազնիվ է: Բայց արդարները կապրեն Աստծո հանդեպ ունեցած իրենց հավատարմությամբ»» (Ամբակում 2.1-4, NLT):

Մարգարեն ասաց. «Ես կնայեմ, որ տեսնեմ, թե ինչ Տերը կասի ինձ»: Այն ձևերից մեկը, որոնցով Աստծո Հոգին խոսում է, տեսիլքն է: Հիսուսն ասաց, որ Ինքը միայն անում էր այն, ինչ *տեսնում էր* Հորն անելիս: Ամբակումն ասաց, որ ինքը գրի կառնի իր տեսածը և որոշված ժամանակին կվազի իր տեսածով: Նա շարունակեց՝ ասելով, որ հպարտ (գոռոզ) մարդն ուղիղ չէ (այսինքն՝ այդ մարդը չի սպասում Տիրոջ Խոսքին, այլ վազում է՝ չունենալով տեսիլք այն մասին, թե ինչ է Աստված ասում): Բայց արդարը կապրի իր հավատքով, ոչ թե այլ մարդու հավատքով:

Հավատքը գալիս է, երբ մենք լսում ենք այն, ինչ Աստված ասում է, իսկ հետո հնազանդվում ենք դրան: Ահա թե ինչու Աստված անապատ տարավ Իսրայելի զավակներին, «...որ սովորեցնի քեզ, որ մարդիկ չեն ապրում միայն հացով, այլ ապրում են ամեն մի խոսքով, որը *գալիս է* Տիրոջ բերանից» (Երկրորդ Օրինաց 8.3, NLT): Ուշադրություն դարձրեք, որ գրված է՝ «գալիս է», ոչ թե՝ «եկավ»:

Աստծո Խոսքը խրախուսում է մեզ. «Տեսե՛ք, որ չմերժեք Նրան, Ով խոսում է [ներկա ժամանակով]: Որովհետև եթե նրանք չխուսափեցին, որ մերժեցին Նրան, Ով խոսեց երկրի վրա, առավել ևս մենք չենք խուսափի, եթե շրջվենք Նրանից, Ով խոսում է Երկնքից» (Եբրայեցիների 12.25, NKJV): Եվ երբեք մի՛ մոռացեք, որ այն, ինչ Նա խոսում է, մշտապես համապատասխանելու է Աստվածաշնչին:

Այնուամենայնիվ, եթե դուք հատվածներ եք փնտրում Աստվածաշնչից, որպեսզի հաստատեք այն, ինչ դուք եք ցանկանում անել, դա Աստծո ճանապարհը չէ: Հիսուսը կարող էր ասել Ինքն Իրեն. «Ես օծված եմ՝ հիվանդներին բժշկելու համար. այնպես որ, անմիջապես կգնամ և կձեռնադրեմ Ղազարոսին, ինչպես որ արել եմ նախկինում»: Փոխարենը՝ Նա սպասեց, որ Աստծո Հոգին շարժվեր, և միայն դրանից հետո Ինքը նույնպես շարժվեց:

Անապատն այն վայրն է, որտեղ Աստված բերում է մեզ, որպեսզի սովորեցնի, որ Իր համար ինչ-որ բան անելու ցանկացած փորձ՝ առանց Իր առաջնորդության և կարողության, ապարդյուն է: Երբ մենք իրականում հասկանանք, որ մարմինը չի կարող անել հավիտենական արժեք ունեցող ոչ մի բան, մենք պատրաստ կլինենք կատարել այն

երազանքները և ծրագրերը, որոնք Նա վստահել է մեզ: Անապատը պատրաստության վայր է. այն խոստման իրականացման ընթացքն է: Եկեք հետևենք Հիսուսի օրինակին և առաջնորդվենք Հոգով, որպեսզի ամեն ինչ կատարենք *Աստծո* ուզած կերպով, ոչ թե՝ *մեր:*

12

ՀԱՂԹԱՆԱԿ ԱՆԱՊԱՏՈՒՄ

«Մեր բոլոր տրտմությունները, ինչպես և մենք, մահկանացու են: Չկան անմահ տրտմություններ՝ անմահ մարդկանց համար: Դրանք գալիս են, բայց օրհնյա՛լ լինի Աստված, դրանք նաև գնում են: Երկնքի թռչունների պես դրանք թռչում են մեր գլխավերևում, բայց չեն կարող բնակվել մեզանում: Մենք տառապում ենք այսօր, սակայն կցնծանք վաղը»:

– Չարլզ Սփերջեն

«Երբ մարդիկ չեն ընդունում աստվածային առաջնորդությունը, նրանք վայրենանում են: Բայց նա, ով հնազանդվում է օրենքին, ուրախ է»:

– Առակաց 29.18, NLT

Թեև մենք հայտնվում ենք անապատում, այն մեր վերջնական նպատակավայրը չէ: Ճիշտ վարվելու դեպքում, մենք կունենանք հաղթանակ անապատում և դուրս կգանք դրա սահմաններից:

Իմ անապատներից մեկում իմ ջերմեռանդությունը լիովին սպառվել էր: Ես երիտասարդական ծառայության հովիվ էի, և թվում էր՝ այդ անապատը չափից երկար էր: Ես արդեն սկսում էի կասկածել, որ այդ վիճակը երբևէ փոխվելու էր: Բայց մեկ օր՝ կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ սկսվեցին խնդիրներն իմ անմիջական ղեկավարի հետ, որը փորձում էր վարկաբեկել ինձ և հեռացնել աշխատանքից, Աստծո Հոգին ցույց տվեց, որ իմ կյանքում փոփոխություն է գալու: Այդ ժամանակ էր, որ Աստված հայտնեց ինձ, որ ես ուղարկվելու էի «եկեղեցիներ և համաժողովների Ամերիկայի բոլոր քաղաքներում՝ արևելյան ափից մինչև արևմտյան ափը և Կանադայի սահմանից մինչև Մեքսիկայի սահմանը, դեպի Ալյասկա և Հավայան կղզիներ...»:

Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցի, դա տեղի չունեցավ հաջորդ օրը և նույնիսկ՝ այդ շաբաթվա ընթացքում: Անցավ վեց ամիս՝ առանց որևէ հավելյալ հաստատման: Եվ հանկարծ մեկ օր իմ ավագ հովիվը եկավ մի հավաքույթի և ասաց, որ Տերը ցույց էր տվել իրեն, որ իր հովիվներից մեկը (իսկ մենք տասնմեկն էինք եկեղեցու աշխատակազմում) շուտով լրիվ զբաղվածությամբ շրջիկ քարոզիչ է դառնալու և այլևս չի ծառայելու եկեղեցում:

- Ձոն Բիվե՛ր, այդ հովիվը դո՛ւ ես, - ասաց նա:

Բայցևայնպես, ժամանակն անցնում էր (անցավ ևս վեց ամիս, եթե ճշգրիտ լինեմ), և ես դեռ անապատում էի: Եվ հանկարծ, ընդամենը երեք շաբաթվա ընթացքում, ես ստացա քարոզելու յոթ հրավեր տարբեր եկեղեցիներից: Այդ եկեղեցիներից մեկը ընդամենը մեկ ժամվա հեռավորության վրա էր Կանադայի սահմանից, մյուսը Ֆլորիդայի Հարավային ափում էր, երրորդը ընդամենը մեկ ժամվա հեռավորության վրա էր Խաղաղ Օվկիանոսից, իսկ չորրորդը Մեքսիկայի սահմանի մոտ էր: Ես գնացի իմ հովվի գրասենյակ և հարցրի, թե ինչ պետք է անեմ: Նա ծիծաղեց ու ասաց.

- Ձո՛ն, ես ասացի քեզ, որ Տերը ցույց է տվել դա ինձ: Երևում է, որ քո ժամանակն այստեղ ավարտվել է:

Շուտով (1990թ. հունվարին), մի ընծայման հավաքույթի ժամանակ, հովիվը ձեռնադրեց Լիզային և ինձ, և մինչև օրս մենք լրիվ զբաղվածությամբ շրջիկ քարոզիչներ ենք: Պետք է ասեմ, որ Աստծուն սպասելու արդյունքում մենք տեսել ենք *ավելի շատ* (ես չեմ կարող չափից ավելի շեշտել «ավելի շատ» արտահայտությունը) պտուղ, քան՝ եթե ինքներս սկսեինք ծառայել այն ժամանակ, երբ, իմ կարծիքով, ես արդեն պատրաստ էի:

Ես ցանկանում եմ տեսնել նույն արդյունքը ձեր կոչման մեջ: Սա է պատճառը, որ վաթսուն տարեկան մի մարդ, ով ի սրտե սիրում է Աստծո ժողովրդին, հնարավորինս անկեղծորեն պատմում է ձեզ իր մասին: Ես ցանկանում եմ, որ դուք բարեհաջող կատարեք ձեր կոչումը: Այնպես որ, մինչև ավարտելը, թույլ տվեք կիսվել ձեզ հետ մի շարք կարևոր ամփոփիչ մտքերով:

Ճիշտ մտադրություն և նպատակ

Մենք պետք է կենտրոնանանք Աստծո մտադրության վրա, ոչ թե այն հակառակությունների, որոնք փորձում են խոչընդոտել մեր առաջընթացը: Մենք պետք է ճիշտ տեսիլք ունենանք, եթե ուզում ենք հասնել ճիշտ նպատակի: Սարսափելի կլինի անցնել մի ամբողջ վազքուղի և սխալ եզրագիծ հատել: Ողբերգություն կլինի ուղղել զենքը սխալ թիրախի և խոցել այն:

Փարիսեցիները շատ նախանձավոր ու ջանասեր էին, բայց նրանց

դրդապատճառները շահադիտական էին: Նրանք չունեին ճիշտ տեսիլք, այդ պատճառով էլ չխոցեցին ճիշտ թիրախը:

Ո՞րն է Աստծո կոչումը և մտադրությունը մեզ՝ Իր ժողովրդի համար: Եփեսացիների 1.11-ում գրված է. «...նախասահմանված՝ համաձայն Նրա նպատակի, Ով գործում է ամեն բան ըստ Իր կամքի խորհրդի» (NKJV):

Շատերն անորոշություն են զգում՝ լսելով «նախասահմանված» կամ «նախասահմանություն» բառը: Այս գաղափարը հասկանալու համար դիտարկենք այս բառի նախածանցը և արմատը: «Նախ» նախածանցը պարզապես ենթադրում է այնպիսի բան, որն արվել է ինչ-որ բան սկսելուց առաջ: «Սահմանել» բառը վերաբերում է ավարտը որոշելուն: Այս երկուսը միասին նշանակում է «որոշել ավարտը մինչև սկիզբը»: Այսպիսով, Եփեսացիների 1.11-ը ցույց է տալիս, որ Աստված սահմանել է մարդկության նպատակը նախքան մեզ ստեղծելը:

Հռոմեացիների 8.28,29-ում գրված է.

> «Բայց գիտենք, որ Աստծուն սիրողներին բոլոր բաները գործակից են լինում դեպի բարին՝ նրանց, որ նախասահմանելով կանչված են: Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ»:

Աստծո նպատակը, որը Նա որոշել է մեզ համար ժամանակների սկզբից, այն է, որ մենք՝ Աստծուն սիրողներս, կերպարանակից լինենք Հիսուս Քրիստոսի պատկերին: Ցանկացած բան, որն արվում է մեր կյանքում և ծառայության մեջ, պետք է ունենա այս նպատակը կամ դիտավորությունը: Աստծո գլխավոր մտադրությունը ձեզ ստեղծելու համար այն չէ, որ դուք միանաք որևէ հաջողակ ծառայողական թիմի, միլիոնավոր դոլարներ նվիրաբերեք Աստծո թագավորությանը, հայտնի դերասան դառնաք կամ հաջողակ կարիերա կառուցեք: Նույնպես, Նրա գլխավոր մտադրությունը հիվանդներին բժշկելը, մարդասիրական առաքելություններ իրականացնելը, սեռական թրաֆիքինգի զոհերին փրկելը, մարդկանց կախվածություններից ազատելը և կորսվածներին Քրիստոսի համար շահելը չէ: Որքան էլ պատվավոր և աստվածահաճո

լինեն բոլոր այս ձգտումները, մենք պետք է գիտակցենք, որ եղել են շատերը, որոնք արել են այս ամենը, սակայն չեն հատել վերջնագիծը: Նրանք բարեհաջող չեն ավարտել իրենց ընթացքը, քանի որ նրանց ուշադրությունն ուղղված է եղել ծառայությանը, ոչ թե Աստծո սրտին կամ ծառայության իրական նպատակին:

Այժմ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին. «Ինչո՞ւ է Աստված նախասահմանել մեզ՝ կերպարանվելու Հիսուս Քրիստոսի պատկերին: Ո՞րն է Նրա նպատակը»: Պատասխանը պարզ է. քանի որ Նա սիրեց մեզ և ցանկացավ հաղորդակցվել մեզ հետ, որպեսզի «նոր եկող դարերում հավիտյան ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը՝ Քրիստոս Հիսուսի՝ մեզ վրա ցույց տված քաղցրությամբ» (Եփեսացիների 2.7):

Լիզան և ես Լեքսի անունով մի շուն ունենք: Այն հաճելի, աշխույժ և զվարճալի է, սակայն մեր շփումը նրա հետ սահմանափակ է: Երբեմն ինձ համար տհաճ է, որ ես չեմ կարողանում զրուցել նրա հետ: Սակայն մեր հարաբերությունները մեր որդիների հետ լիովին այլ են: Որքան ավելի էին նրանք մեծանում, այնքան ավելի զարմանալի էր դառնում մեր շփումը նրանց հետ: Նրանք այնքա՛ն մեծ ներդրում ունեցան մեր կյանքում: Ահա թե ինչու Աստված ստեղծեց մեզ: Նա չի ցանկանում ցածրորակ շփում, որը ես հանդուրժում եմ Լեքսիի հետ: Նա ցանկանում է ունենալ որդիներ և դուստրեր, որպեսզի սրտից սիրտ հաղորդակցվի նրանց հետ:

Սա էր Աստծո նպատակը հենց սկզբից: Երբ Տերը ստեղծեց մարդուն և դրեց Եդեմի պարտեզում, Նա զբոսնում և շփվում էր Ադամի հետ, քանի որ սիրում էր նրան: Ադամի ժառանգներից մեկը հասկացավ Աստծո մտադրությունը: Նրա մասին գրված է. «Ենովքն Աստծո հետ վարվեց և չէր գտնվում, որովհետև Աստված առավ նրան» (Ծննդոց 5.24): Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է, որ Ենովքը «...վկայվեց, որ հաճելի էր Աստծուն» (Եբրայեցիների 11.5): Ինչո՞ւ էր Ենովքը հաճելի Աստծուն: Արդյո՞ք պատճառը նրա ծառայությունն էր: Ո՛չ, այլ՝ որ նա մտերմորեն շփվում էր Նրա հետ:

Այն ամենը, ինչ Աստված արել է անցյալում, անում է հիմա և անելու է ապագայում, այս նպատակով է: Այնպես որ, անապատի նպա-

տակն է՝ ուղղորդել մեզ, որ կերպարանակից լինենք Հիսուս Քրիստոսի պատկերին:

Եթե մենք բաց թողնենք Աստծո նպատակը մեզ համար, մենք անզուսպ կդառնանք և հոգևորապես կհետադիմենք: Եթե մենք բաց թողնենք Աստծո նպատակը՝ որպես եկեղեցի, մենք կչորանանք և կսեղմվենք՝ վերածվելով այս աշխարհի սկզբունքներով առաջնորդվող հաստատության: Մենք շեշտադրում ենք արդյունքները՝ ավելի մեծ թվերը և շինությունները, ոչ թե Քրիստոսի պատկերով կերպարանված աշակերտներ պատրաստելը (տե՛ս Մատթ. 28.19):

Կրկին կարդանք Առակաց 29.18-ը. «Որտեղ չկա հայտնություն, ժողովուրդն անզուսպ կդառնա» (NKJV):

Աստված խոսում է այն մասին, որ երբ մենք հայտնություն ունենանք, այն թույլ չի տա մեզ բավարարվել ցածրակարգ կոչումով, որը չի ենթադրում Նրա պատկերին և նմանությանը կերպարանակից լինելը: Այն թույլ չի տա մեզ գոհունակություն զգալ, քանի դեռ մենք չենք կերպարանվել Նրա պատկերով և չենք նայում Նրան երես առ երես՝ տեսնելով Նրա հայտնված փառքը: Այն թույլ չի տա մեզ ընդունել ցանկացած բան՝ Նրա կատարյալ կամքից բացի: Այն թույլ չի տա մեզ անհոգ լինել և վարվել այս աշխարհի պես և մարմնական բնության ճանապարհներով:

Խոսելով տեսիլքի մասին՝ Հիսուսն ասաց. «Մարմնի ճրագն աչքն է. արդ, թե որ քո աչքը պարզ լինի, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Բայց, թե որ քո աչքը չար լինի, քո ամբողջ մարմինը խավար կլինի» (Մատթ. 6.22,23): Նա չէր խոսում մեր նյութական աչքի մասին, այլ՝ մեր սրտի աչքի կամ մեր ընկալման մասին:

Դուք կդառնաք այնպիսին, ինչպիսին որ ընկալում եք իրականությունը ձեր սրտում. «Քանի որ նա այնպիսին է, ինչպես որ մտածում է իր սրտում» (Առակաց 23.7, NKJV):

Այն, թե ինչպես եք դիտարկում ձեր հանգամանքները, որոշելու է, թե ինչպես եք անցնելու դրանցով: Տասներկու լրտեսները, որոնք հետախուզեցին Խոստման երկիրը, տեսան նույն բաները՝ նույն պարսպապատ քաղաքները, նույն հսկաներին և Քանանում բնակվող ազգերի նույն բանակները: Այնուամենայնիվ, նրանցից երկուսը՝ Հե-

սուն և Քաղեբը, տեսան այդ ամենը լիովին այլ կերպով: Այդ երկուսն ընկալեցին իրավիճակն այնպես, ինչպես որ Աստված էր տեսնում այն, իսկ մյուս տասն ընկալեցին Խոստման երկիրն ըստ իրենց փորձառության կամ կարողությունների: Քանի որ նրանց աչքերը չար էին, նրանց վարքը (կամ, Հիսուսի խոսքերով՝ «ամբողջ մարմինը») նույնպես վատն էր: Նրանք խոսեցին և վարվեցին հակառակ Աստծո կամքին, և Նա ասաց, որ նրանց բերած լուրը «չար» էր կամ «վատն» էր:

> «Ասա՛ նրանց. «Ես կենդանի եմ,- ասում է Տերը,- որ ինչպես դուք Իմ ականջների առջև խոսեցիք, այնպես էլ կանեմ ձեզ: Այս անապատի մեջ կընկնեն ձեր դիակները, և ձեր ամբողջ հաշվի համեմատ ձեզնից բոլոր համարվածները՝ քսան տարեկանից վեր եղողները, որ դուք Ինձ դեմ տրտնջացիք, բնավ չպիտի մտնեք այն երկիրը, որի համար երդում արի ձեզ նրանում բնակեցնելու՝ բացի Հեփոնեի որդի Քաղեբից և Նավեի որդի Հեսուից»» (Թվոց 14.28-30):

Ի՞նչը դրդեց տասը լրտեսներին չար լուր բերել, որի պատճառով նրանք այդպես էլ չստացան Աստծո խոստումը. նրանց ընկալումն իրենց տեսածի վերաբերյալ: Նրանք ունեին ոչ թե մարգարեական, այլ բնական տեսողություն, և նրանց բերած լուրը հիմնված էր իրենց տեսողության վրա:

Անապատը հաղթական կերպով անցնելու համար մենք պետք է ամեն ինչ տեսնենք այնպես, ինչպես Աստված է տեսնում: Երբ Աստված Խոստման երկիր ուղարկեց լրտեսներին, Իսրայելի զավակներն արդեն մեկ տարուց ավելի տրտնջում էին: Նրանց ընկալումն արդեն իսկ բացասական էր. նրանք չունեին հայտնություն և անզուսպ էին դարձել: Այնպես որ, երբ Աստված թույլ տվեց նրանց տեսնել կաթ ու մեղր բխող երկիրը, նրանք անտեսեցին բոլոր բարի բաները, որոնք կային այնտեղ: Փոխարենը՝ նրանք կենտրոնացան այդ երկրի հսկաների վրա:

Այն մարդիկ, որոնք տեսնում են միայն անապատը (և դրա հետ կապված դժվարությունները), կմահանան իրենց անապատում: Այն մարդիկ, որոնք հառում են իրենց հայացքը Խոստացողին և այն տեսիլ-

քին, որը Նա տվել է իրենց, կանցնեն անապատը՝ դառնալով սրբացված զինվորներ, որոնք պատրաստ են գրավել իրենց առջև գտնվող Խոստման երկիրը և ապրել դրանում՝ Աստծո փառքի համար:

> «Նրա համար չենք թուլանում (վիատվում կամ անզուսպ դառնում)... Որովհետև մեր այժմյան թեթև նեղությունը ամենագերազանց հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար, որ այս երևացող բաներին չենք մտիկ անում, այլ՝ աներևույթներին (ընկալելով ամեն ինչ Աստծո նման), որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ չերևացողները՝ հավիտենական» (Բ Կորնթացիների 4.16-18):

Անապատում անցկացրած ժամանակը և կրած չարչարանքները թեթև ու ակնթարթային դժվարություն են համարվում այն բանի համեմատ, ինչ մենք շահելու ենք: Իհարկե, երբ դուք անապատում եք, դժվար է թեթևորեն վերաբերվել այդ իրավիճակին, եթե դուք չունեք տեսիլք այն մասին, թե ինչ է սպասվում ձեզ անապատից դուրս գալուց հետո:

Երբ ես անցնում էի անապատով, այն ոչ մի դեպքում «մի ակնթարթ» չէր թվում: Երբեմն մտածում էի. *«Սա երբևէ կավարտվի՞: Այն, ինչ Աստված խոստացել է, կկատարվի՞»:* Այդպիսի պահերին ես պետք է արագորեն վանեի ինձնից նման մտքերը և խրախուսեի ինձ Տիրոջ մեջ: Ես հիշում էի այն մարգարեությունները, որոնք ստացել էի, և պատերազմում էի դրանցով (տե՛ս Ա Տիմոթ. 1.18): Այդ մարգարեությունները Աստծո տեսիլքն էին իմ կյանքի համար, և Նա հայտնում էր ինձ այդ տեսիլքն Իր Հոգով՝ Իր Խոսքի միջոցով:

Անապատում պատերազմի դաշտը մեր անձն է: Անձը բաղկացած է մտքից, զգացմունքներից և կամքից: *Կամքը* ձեր անձի այն մասն է, որը որոշում է՝ դուք ընտրելու եք Աստծո՞ ճանապարհը, թե՞ ձեր մարմնի, դուք ամեն ինչին նայելու եք Աստծո՞ ուզած կերպով, թե՞ նայելու եք ձեր նեղությանը անապատում: Պետրոսը գրում է. «Սիրելի՛ ընկերներ, ես զգուշացնում եմ ձեզ՝ որպես «ժամանակավոր բնակիչների և օտարականների», հեռու մնալ աշխարհիկ ցանկություններից, որոնք պատերազմում են ձեր անձերի դեմ» (Ա Պետրոս 2.11, NLT):

Որոշիչ գործոնն այն է, թե ինչին է ուղղված ձեր ուշադրությունը՝

Տիրո՞ջը, թե՞ ձեր անձին: Այն մարմնական ցանկությունները, որոնք պայքարում են ձեր մտքում և զգացմունքներում, ձգտելու են ձեր անձնական շահերին և հեռացնելու են ձեզ աստվածային տեսիլքից, քանի որ Աստծո ճանապարհը ոչ թե սեփական անձին հետևելն է, այլ՝ սեփական անձն *ուրանալը:*

Այն ավետարանը, որ քարոզվել և ընդունվել է շատերի կողմից մեր օրերում, դրդում է անհոգ մարմնական կյանքի: Այսօրվա տարածված ուղերձներից շատերը չեն խրախուսում մեզ խաչել մեր մարմինը: Դրանք խրախուսում են փայփայել մեր մարմինը ու կատարել դրա ցանկությունները, թեև իրականում այդ ցանկությունները հակառակ են մեր վերջնական նպատակին, որը Հիսուս Քրիստոսի պատկերին կերպարանակից լինելն է: Հաճախ այդ ուղերձների հիմնական նյութն է. «Ի՞նչ կարող է անել Աստված ինձ համար», ոչ թե. «Ի՞նչ է Նա ցանկանում ինձնից»: Հեշտասիրություն քարոզող ավետարանը չի շեշտադրում, որ հետևելով Քրիստոսին՝ մենք բախվելու ենք իրական չարչարանքների: Այն դրդել է շատերին ինքնաբավ կյանք վարել: Նման ավետարանը չի սպառազինում հավատացյալներին՝ Աստծո զինվորներ լինելու համար:

Պողոս առաքյալը խոսում է այս մասին՝ գրելով իր աշակերտ Տիմոթեոսին.

> «Իսկ դու նեղությունները կրիր՝ ինչպես Քրիստոս Հիսուսի բարի զինվոր: Ոչ մի զինվորություն անող այս աշխարհի գործերով չի զբաղվում, որպեսզի զորապետին հաճո լինի» (Բ Տիմոթեոս 2.3,4):

Հեշտասիրություն քարոզող ավետարանի պատճառով, երբ հանդիպում ենք հակառակության կամ նեղության, մենք փախուստի ճանապարհ ենք փնտրում, փոխարենը երես առ երես բախվենք այդ դժվարությանը և հաղթահարենք: Հեշտասիրություն քարոզող ավետարանը ծնում է ոչ թե երկնային կամ մարգարեական տեսիլք, այլ՝ եսակենտրոն տեսիլք:

Ինչպե՞ս անցնել անապատը

#12 Խնամքով նշումներ արե՛ք

Ես գրում եմ այս գիրքը հիսունհինը տարեկանում. ժամանակն այնքա՜ն արագ է անցնում: Ետ նայելով՝ հասկանում եմ, որ ես կտրուկ աՃ եմ ունեցել անապատներում լինելու ժամանակ, թեև այդ պահերին ինձ թվում էր, թե ետընթաց էի ապրում՝ առաջընթացի փոխարեն: Ահա թե ինչու է մեր հին ընկեր Հոբը գրում. «Ես առաջ եմ գնում... Նա այդտեղ չէ... Բայց Նա գիտի իմ ճանապարհը. Երբ Նա ավարտի ինձ փորձելը, ես դուրս կգամ ոսկու պես» (Հոբ 23.8,10, NKJV):

Կարող եմ համոզվածությամբ ասել, որ իմ գրքերի նյութերի 90 տոկոսը (իսկ ես արդեն քսան գիրք եմ գրել) ես սովորել եմ ոչ թե առատության ժամանակ, այլ՝ չորության, որն անցկացրել եմ անապատում: Այնպես որ, իմ խորհուրդը ձեզ. խնամքով նշումներ արե՛ք, երբ անապատում եք: Այն, ինչ դուք սովորեք այդ փուլերում, մեծ զորություն կտա մարդկանց (ինչպես և ձեզ՝ ապագայում): Եվ ով գիտի... միգուցե մեկ օր դուք գիրք գրեք ձեր փորձառությունների մասին:

Իմ ընկե՛ր, ցանկանում եմ մարգարեանալ ձեր կյանքում հենց հիմա: Լրջորեն ուշադրություն դարձրեք այն բանին, ինչ ասելու եմ: Աստծո կողմից որոշված ժամանակին Նա մի նշանակալի բան կկատարի ձեր կյանքում, ինչն ազդեցություն կթողնի շատերի վրա: Այսինքն, եթե դուք թույլ տաք Նրան իրագործել այն նպատակը, որի համար գտնվում եք անապատում: Շատերն են կրելու դրա ազդեցությունը, և դուք կցնծաք ամբողջ հավիտենության ընթացքում՝ տեսնելով ձեր հնազանդության պտուղը: Իմ ընկե՛ր, դուք դուրս կգաք ոսկու պես՝ փորձված, ուժեղ և հավատարիմ:

Պողոսը նույնպես գրում է.

«Ուստի, ո՛վ Ագրիպաս արքա, ես անհնազանդ չեղա այն երկնային տեսիլքին: Այլ՝ առաջ նրանց, որ Դամասկոսում և Երուսաղեմում էին, և ամբողջ Հրեաստանի երկրում, և հեթանոսներին պատմեցի ապաշխարել և դառնալ Աստծուն՝ ապաշխարության արժանի գործեր գործելով: Սրա համար հրեաները, ինձ տաճարում բռնելով, ուզում էին սպանել» (Գործք 26.19-21):

Այս աշխարհում կան շատ տեսիլքներ, բայց կա միայն մեկ «երկնային տեսիլք», որը Հոր կամքն է: Ուշադրություն դարձրեք, թե ինչ է ասում Պողոսը. «Մի քանիսը հրեաներից ձերբակալեցին ինձ՝ այս բաները քարոզելու համար, և փորձեցին սպանել»: Նա ձգտում էր երկնային տեսիլքին և բախվում էր մեծ հակառակության: Եթե նա հավատար հեշտասիրություն քարոզող ավետարանին, ինչպես որ շատերը քարոզում և հավատում են այսօր, այդպես էլ չէր իրականացնի այդ տեսիլքը: Նա նույնիսկ չէր հասնի Ագրիպաս թագավորի մոտ, քանի որ դրանից շատ ավելի վաղ նա կձգտեր լիովին խուսափել հակառակությունից, որին բախվում էր:

Երեմիան ևս մի մարդ էր Աստվածաշնչում, ով ձգտում էր երկնային տեսիլքին, և իր հնազանդության արդյունքում մեծ բանավոր և մտավոր հալածանք էր կրում: Մեկ օր նա հոգնեց դրանից և սկսեց մի փոքր տրտնջալ. «Ինչո՞ւ համար հաջող է ամբարիշտների ճանապարհը, հանգիստ են բոլոր նենգություն գործողները» (Երեմիա 12.1):

Աստված կարեկցանքով չպատասխանեց նրան: Նա ասաց. «Եթե դու հետևակների հետ վազեցիր, և նրանք քեզ հոգնեցրին, ապա ինչպե՞ս պիտի մրցեիր ձիերի հետ» (Երեմիա 12.5): Այլ կերպ ասած՝ «Երեմիա՛, եթե դու հոգնում ես սատանայի հետևակից, ի՞նչ ես անելու, երբ բախվես նրա հեծելազորին»:

Պատերազմը բաղկացած է մարտերից

Մենք պետք է հիշենք, որ չկան մեծ հաղթանակներ՝ առանց մեծ մարտերի: Երեմիայի իրավիճակը շարունակ վատթարանում էր: Բանավոր վիրավորանքներին ավելացավ բանտարկությունը, իսկ որոշ ժամանակ անց նրան իջեցրին փոսը՝ թողնելով, որ մահանար այնտեղ: Այնուամենայնիվ, Աստված ազատեց նրան իր բոլոր նեղություններից և հալածանքներից:

Այսօր Քրիստոսի մարմնի մեծ մասն առնչվում է մտավոր հարձակումների հետ, ոչ թե ֆիզիկական հալածանքների, որոնց բախվում էր Պողոսը: Ինչպե՞ս մենք կվարվենք, եթե հակառակության ձևը փոխվի: Մեր այսօրվա նեղությունները պետք է զորացնեն մեզ, որպեսզի ապագայում դիմանանք ավելի մեծ մարտերի:

Անապատը զինվորական ճամբար է՝ ապագա մարտերի համար: Ինչպես որ զինվորական ճամբար ենք ուղարկում նորակոչիկ զինվորներին՝ պատերազմի պատրաստվելու համար, այնպես էլ Աստված անապատ է ուղարկում Իր հավաքագրած զինվորներին, որպեսզի պատրաստի նրանց՝ կատարելու իրենց կոչումն Իր թագավորության կառուցման մեջ: Մեծագույն խոչընդոտները, որոնք զինվորները պետք է հաղթահարեն այդ ճամբարում, իրենց վախերը, տկարությունները և վհատությունն են: Նմանապես, մեծագույն մարտերը, որոնց մենք բախվում ենք անապատում, տեղի են ունենում մեր ներսում:

Մեծագույն խոչընդոտներից մեկը, որոնց մենք բախվում ենք, վհատությունն է: Մեկ անգամ, երբ աղոթում էի, Տերը հարցրեց ինձ, թե ո՞րն է համարձակության հականիշը:

«Իհա՛րկե, վախը», - պատասխանեցի ես:

«Վհատությունը», - շշնջաց Նա:

Ես երբեք չէի մտածել այս բառի վերաբերյալ այդ լույսի ներքո: Եվ անմիջապես հասկացա, որ Աստծո Խոսքում Հեսուին ութ անգամ ասված «զորացի՛ր և քա՛ջ եղիր» խոսքերը նաև հորդոր էին չվհատվելու համար (տե՛ս Թվոց 13.20, Երկր. Օր. 31.6,7,23, Հեսու 1.6,7,9,18): Տերը գիտեր, որ դա լինելու էր նրա լրջագույն մարտահրավերներից մեկը: Վհատությունը գալիս է անապատներում և մարտերի ժա-

մանակ, երբ մենք կենտրոնանում ենք մեզ վրա, ոչ թե՝ Աստծո և մեր առաքելության:

Թշնամու նպատակն է՝ ուղղել ձեր ուշադրությունը ձեզ վրա. նա փորձեց այս մարտավարությունը Հիսուսի դեմ անապատում: Հիսուսը քաղցած էր, քանի որ քառասուն օր ոչինչ չէր կերել, և սատանան ասաց նրան. «Եթե Աստծո Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց լինեն...» (Մատթեոս 4.1-11): Գայթակղությունը հետևյալն էր. օգտագործել Աստծո զորությունն Աստծո մատակարարման ծրագրից անջատ՝ մարմնի ցանկությունները կատարելու համար: Մենք պետք է հիշենք, որ երբ Աստված որևէ պարգև է տալիս, մարդը նաև ստանում է լուրջ պատասխանատվություն. նա չպետք է սխալ գործածի այն, այլ՝ տնտեսի այնպես, ինչպես Աստված է կամենում: Աստված անպայման հոգալու էր Հիսուսի կարիքները, բայց այնպես, ինչպես Ինքն էր նախատեսել: Երբ սատանան գնաց, հրեշտակները եկան և ծառայեցին Հիսուսին:

Կրկին տեսնենք, թե ինչ է Հիսուսն ասում Իր ծառայության վերաբերյալ.

> «Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում»» (Հովհաննես 5.19):

Ուշադրություն դարձրեք «տեսնել» բառին: Հիսուսը ոչինչ չէր անում՝ առանց Աստծո կամքի:

Չորության ժամանակներում մեր գայթակղություններից մեկը մեր ուզած կերպով վարվելն է, ոչ թե Աստծո կամքին սպասելը: Օրինակ, դա կարող է նշանակել օգտագործել Աստծո զորությունը՝ որոշված ժամանակից շուտ Աստծուց ինչ-որ բան ստանալու համար: Կարո՞ղ եք պատկերացնել, որ մարտի դաշտում որևէ զինվոր չկռվի համաձայն իր սպայի հրամանների: Դա կարող է ծանր հետևանքներ ունենալ թե՛ զինվորի, թե՛ նրա զինակիցների համար: Զինվորական ճամբարում և իր ամբողջ մարզման ընթացքում զինվորը սովորում է հնազանդվել հրամաններին, որպեսզի անմտորեն վնաս չհասցնի իրեն և յուրայիններին մարտի ժամանակ:

Կարևոր է, որ չմոռանանք այն, ինչ Երկինքը հայտնել է մեզ: Կլինեն պահեր, երբ մենք կմտածենք. *«Ես պետք է պատասխան ստանամ հե՛նց հիմա»,* կամ՝ *«Ես պետք է քայլ անեմ հե՛նց հիմա. եթե ես ոչինչ չանեմ, ամեն ինչ կկործանվի»:* Եթե թվում է, թե Աստված ոչինչ չի ասում ձեզ, չի նշանակում, որ Նա չի *խոսում* ձեզ հետ: Ես նկատի ունեմ, որ Աստված լրջորեն ներգրավված է մեր կյանքում՝ բազում ձևերով: Այդ դեպքում, այն ուղերձը, որը Նա «փոխանցում» է ձեզ, հետևյալն է. «Կարիք չկա, որ որևէ բան անես հիմա»: Նման իրավիճակներում մենք պետք է *սպասենք* Տիրոջը և չփորձենք ինքներս փոփոխություն առաջացնել.

> «Սպասի՛ր Տիրոջը, թող սիրտդ պինդ և զորավոր լինի, և սպասի՛ր Տիրոջը» (Սաղմոս 27.14):

Եթե մենք կենտրոնանանք մեր կարիքների վրա, ոչ թե՝ Նրա վրա, վիատությունը և ծանրությունը կհաստատվեն մեր սրտում: Մենք չենք կարող թույլ տալ մեզ շեղվել՝ կենտրոնանալով մեր «թեթև նեղության» վրա: Փոխարենը, մենք պետք է ուղղենք մեր հայացքն այն հավիտենական փառքի մեծությանը, որը գործվում է մեզ համար այդ նեղության մեջ (տե՛ս Բ Կորնթ. 4.17):

Սա է մեր առջև դրված ուրախությունը, և սա պետք է դառնա մեր տեսիլքը:

Մեր առջև դրված ուրախությունը

> «Բոլորովին ուրախություն համարե՛ք, եղբայրնե՛րս, երբ որ կերպ-կերպ փորձանքների մեջ ընկնեք՝ գիտենալով, որ ձեր հավատքի փորձառությունը համբերություն է գործում: Իսկ համբերությունը թող կատարյալ գործ ունենա, որ կատարյալ և ամբողջ լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (Հակոբոս 1.2-4):

Ուրախությունը հոգևոր ուժ է, որը թույլ է տալիս մեզ դիմանալ դժվարություններին և փորձություններին: Ուշադրություն դարձրեք, որ գրված է. «Բոլորովին ուրախություն համարե՛ք», ոչ թե՝ «Համարե՛ք սա մասամբ՝ ուրախություն, իսկ մասամբ՝ տրտմություն»: Մեր սրտում չպետք է ուրախության և տրտմության խառնուրդ լինի: Մտածե՛ք այս մասին հետևյալ կերպով: Պատկերացրեք, որ ունեք մի շղթա, որի ինն-սունինը օղակները բաղկացած են ուրախությունից, և միայն մեկը՝ տրտմությունից: Այդ շղթայի ամրությունը կորոշվի այդ մեկ օղակով: Շղթան պետք է բաղկացած լինի ուրախության հարյուր օղակից և տրտմության ոչ մի օղակից, որպեսզի դուք ունենաք այն զորությունը, որն անհրաժեշտ է ձեր իրավիճակում:

Մենք գիտենք, որ հեշտ է «բոլորովին ուրախություն համարել» այն իրավիճակները, որոնցում ամեն ինչ հրաշալի է: Բայց այս հատվածում նման բան գրված չէ: Մենք պետք է «բոլորովին ուրախություն համարենք» փորձությունների ժամանակը՝ անապատը, հալածանքը, նեղությունը, դժվարությունները և ցանկացած տեսակի հակառակություն: Աստված ասում է սա, քանի որ Նա գիտի, որ «Տիրոջ ուրախությունը ձեր զորությունն է» (Նեեմիա 8.10): Նրա հետ մտերիմ հարաբերություններ ունենալու ուրախությունն է, որ զորացնում է մեզ:

Իմ կինը և իմ ընտանիքը՝ որդիներս, հարսներս և թոռներս, ուրախություն են պատճառում ինձ: Երբ հեռու եմ լինում տանից, ես նայում եմ նրանց լուսանկարներին, և դա ամեն անգամ ուրախություն է պատճառում իմ սրտին: Դա նույնպես ուժ է տալիս ինձ:

Նեեմիան խոսում էր հենց այս մասին: Ժողովուրդն անցնում էր դժվարին փուլով, և Նեեմիան բացականչեց. «Մի՛ տրտմեք ձեր դժվարության պատճառով. ուղղե՛ք ձեր հայացքը Տիրոջը: Քանի որ երբ մոտենաք Նրան, ուրախությունը կլցնի ձեր սիրտը, և դուք կզորանաք» (իմ շրջասությունը):

Փառաբանությունը մշտապես կուղղի ձեր ուշադրությունը Տիրոջ վրա: Նեղությունների մեջ հեշտ է մոռանալ Աստծո կարողության մասին՝ այն ճնշման պատճառով, որը մենք զգում ենք: Դավիթը գրեց իր սաղմոսների մեծ մասը, երբ նեղությունների մեջ էր: Փառք տալով Աստծուն՝ նա կարողացավ ուժեղ մնալ խիստ անբարեն-

պաստ հանգամանքներում:

Եսայի 61.3-ում Աստված ասում է, որ Նա տալիս է մեզ «փառք... մոխրի տեղ, ուրախության յուղ՝ սուգի տեղ, գոհության պատմուճան՝ հանգած սրտի տեղ»:

Հիշում եմ մի դեպք, երբ խիստ չորություն էի զգում, և ես նորովի հասկացա այս խոսքը: Ես մենակ էի տանը, և ինձ վրա ծանրություն եկավ: Վերցրի Աստվածաշունչս, բայց հազիվ էի կարողանում կարդալ: Ես սկսեցի աղոթել, և ամեն ինչ ավելի վատացավ: Իմ ներսում լսեցի Աստծո Հոգուն. «Միացրո՛ւ քո փառաբանության լսասկավառակներից մեկը»: Ես գնացի այն սենյակը, որտեղ տեղադրված էր մեր ձայնային նվագարկիչը, միացրի փառաբանության երաժշտությունը և սկսեցի երգել: Պետք էր ավելին, և ես *փորձեցի* պարել Տիրոջ առջև: Ես այնպիսի՜ ծանրություն էի զգում իմ սրտում, որ ասես պարեի հեղուկ արճճի մեջ. ես իրական պայքարի մեջ էի:

Երբ երգերն ավարտվեցին, ես մղում զգացի, որ կրկին նվագարկեի այդ լսասկավառակը: Երկրորդ անգամ ես ուշադրություն դարձրի իմ երգած բառերին: Հանկարծ մի ակնթարթ իմ սրտում տեսա Հիսուսին՝ գահի վրա, և Նրա մեծ սերը: Իմ սիրտը լցվեց ուրախությամբ, և ես սկսեցի պարել՝ լիովին անկաշկանդ: Ես նկատեցի, որ իմ հայացքը հեռացավ ինձնից և ուղղվեց Հիսուսի մեծությանը: Հաջորդ երեսուն րոպեների ընթացքում ես երգում էի, պարում էի և վայրենու պես վազում էի մեր փոքրիկ տնով մեկ: Ծանրությունը հեռացավ, և ես լցվեցի կյանքով ու զորությամբ, որոնք չկային ընդամենը երեսուն րոպե առաջ:

Փառաբանության ընթացքում իմ ուշադրությունը կրկին ուղղվեց Նրան: Ես վերապրեցի այն, ինչի մասին գրում է Եսային. «Դուք ուրախությամբ ջուր կքաշեք փրկության աղբյուրներից» (Եսայի 12.3): Տիրոջ ուրախության միջոցով ես սկսեցի զորություն քաշել փրկության ջրհորներից:

Փառաբանությունն օգնում է մեզ պահել մեր հայացքը մեր առջև դրված ուրախության վրա, ոչ թե՝ մեզ շրջապատող հանգամանքների:

«Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք՝
մեզ շրջապատած, դե՛ն գցենք ամեն ծանրություն և մեզ

դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը: Մտիկ տանք հավատքի Զորագլխին և Կատարողին՝ Հիսուսին, որ Իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ, և ամոթն արհամարհելով՝ Աստծո աթոռի աջ կողմը նստեց: Ուրեմն, մտածե՛ք Նրա վրա, որ Իր դեմ եղած այսպիսի հակառակություն քաշեց մեղավորներից, որ դուք ձեր անձերով չհոգնեք՝ թուլացած: Տակավին մինչև արյուն թափելու չափ պատերազմելով հակառակ չեք կանգնած մեղքին» (Եբրայեցիների 12.1-4):

Հիսուսը կրեց մեծագույն նեղությունը, որի նմանը ոչ ոք երբեք *չի կրել* և *չի կրելու*՝ պահելով Իր հայացքն Իր առջև դրված ուրախության վրա, որը խաչելությանը հաջորդող հարությունն էր: Նրա ուրախությունն այն փառքն էր, որը հետևելու էր Իր հնազանդությունից բխող չարչարանքներին և, ի վերջո, բերելու էր բազմաթիվ որդիների և դուստրերի Իր թագավորության մեջ, որոնց թվում եք նաև դուք և ես:

Ահա թե ինչպես ենք մենք քայլում Նրա հետքերով: Անձն ուրանալուց և մարմինը խաչելուց հետո մեզ սպասում է *հարության կյանքը:* Մարմնով չարչարվելուն հետևում է մեզ այնքան անհրաժեշտ հասունությունը, որի շնորհիվ մենք ավելի մտերիմ ենք դառնում Հիսուսի հետ: Անապատի դժվարություններին հետևում է ավելի մեծ փառք: Պողոսը գրում է. «Որովհետև այնպես եմ դատում, որ այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղդատվելու այն գալու փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի» (Հռոմեացիների 8.18):

Աստծո փառքը կհայտնվի եկեղեցում մինչև Նրա վերադարձը: Նրա փառքն այնքա՜ն մեծ կլինի, որ այն փրկության կբերի ամբողջ քաղաքներ և պետություններ: Այս աշխարհը երբեք չի տեսել Նրա զորության նման դրսևորում, որը կհայտնվի Քրիստոսի այն հետևորդների միջոցով, որոնք թույլ են տվել Աստծուն մաքրել իրենց: Նրա Հոգու այս թափումը, որը կբերի մեծ հունձք, մարդկային աջակցության կարիք չի ունենա: Աստծո զորությունը և փառքը կաջակցեն դրան:

«Սիրելինե՛ր, օտար բան մի՛ համարեք այն բորբոքված նեղությունը, որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թե մի օտար բան

> է պատահում ձեզ: Այլ ուրախ եղեք, իբրև թե Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ Նրա փառքի հայտնության ժամանակում էլ ցնծալով ուրախանաք» (Ա Պետրոս 4.12,13):

Կրկին, ո՞րն է մեր առջև դրված ուրախությունը: Նրա փառքը, որը կհայտնվի այն մարդկանց կյանքում, որոնք չարչարանք են կրել՝ Քրիստոսին հնազանդվելու պատճառով: Ուշադրություն դարձրեք, որ ձեր չարչարվելու չափը հավասար է այն ուրախության չափին, որը դուք կվերապրեք, և մտապահեք, որ որքան մեծ է հակառակությունը, այնքան մեծ է փառքը:

Կորցրե՛ք ձեր կյանքը

Իմ ընկե՛ր, մի՛ դադարեք հետևել Աստծուն, երբ գալիս է հակառակությունը: Ես գիտեմ, որ Նա կառաջնորդի ձեզ դեպի դժվարին իրավիճակներ, քանի որ որքան մեծ է պայքարը, այնքան մեծ կլինի հաղթանակը և՛ Աստծո թագավորության համար, և՛ ձեզ համար: Բայց այդ պայքարների ընթացքում մշտապես հիշե՛ք այս հավաստիացումը.

> «Ձեզ ուրիշ փորձություն չի պատահել՝ բացի մարդկային փորձությունից, բայց Աստված հավատարիմ է, որ չի թողնի ձեզ ձեր կարողությունից վեր փորձվելու, այլ՝ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք համբերել» (Ա Կորնթացիների 10.13):

Անկախ այն բանից, թե ինչպիսին է թվում փորձությունը, դուք կարող եք անցնել այն հաջողությամբ և փառքով: Հակառակ դեպքում, չէիք բախվի այդ փորձությանը. Աստված դա թույլ չէր տա:

Եթե *սիրեք* ձեր կյանքը, դուք կհանձնվեք դժվարին պահերին: Դուք կդադարեք հետևել Նրան, և ձեր կյանքն անպտուղ կլինի:

Հայտնություն 12.11-ում գրված է. «Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով և իրենց վկայության խոսքով և չսիրեցին իրենց հոգին (կամ՝ կյանքը) մինչև մահ»:

Այն մարդիկ, որոնք սիրում են իրենց կյանքը, ավելի մտահոգված են իրենցով, քան Աստծո կամքով, իսկ Հիսուսն ասում է. «Ով որ իր անձն ուզենա ապրեցնել, կկորցնի նրան, և ով որ իր անձը կորցնի Ինձ համար, կգտնի նրան» (Մատթեոս 16.25):

Դուք կկարողանաք դիմանալ այն ամենին, ինչ առջևում է, միայն եթե կորցնեք ձեր կյանքը: Ես ուզում եմ հորդորել ձեզ, որ շարունակեք առաջ գնալ, «մինչև որ Հոգին թափվի մեզ վրա Երկնքից: Այդ ժամանակ անապատը կդառնա պտղաբեր դաշտ, և պտղաբեր դաշտն առատ հունձք կտա» (Եսայի 32.15, NLT):

Անապատն այն վայրը չէ, որտեղ պետք է վայր դնենք մեր զենքերը և հանձնվենք: Անապատում մենք պետք է ուժեղ, խիզախ և համարձակ լինենք, որպեսզի կատարենք Տիրոջ կամքը: Անապատն այն վայրն է, որտեղ մենք պետք է հաստատակամորեն հնազանդվենք Տիրոջը և հակառակվենք սատանային:

Եթե հիմա դուք անապատում եք, Աստված բերել է ձեզ այս վայրը, որպեսզի իմանաք, թե ինչ կա ձեր սրտում: Հաճախ այն, ինչը ես համարում էի սատանայի գայթակղությունները, իրականում իմ կյանքի ծածուկ բնագավառներն էին, որոնք պետք էր հնազանդեցնել Քրիստոսին:

Շարունակելով ձգտել երկնային մրցանակին՝ հիշե՛ք այս խոսքերը.

«Շնորհակալություն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում» (Բ Կորնթացիների 2.14):

«Ապա ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց՝ տառապա՞նք, թե՞ նեղություն, թե՞ հալածանք, թե՞ սով, թե՞ մերկություն, թե՞ վտանգ, թե՞ սուր... Բայց այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Հռոմեացիների 8.35,37):

«Բայց շնորհակալություն Աստծուն, որ տվեց մեզ հաղթությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Ա Կորնթացիների 15.57):

Մի՛ դադարեք հետևել Աստծուն: Մի՛ հանձնվեք: Պահե՛ք այն տեսիլքը, որը Նա տվել է ձեզ՝ անկախ այն բանից, թե ինչպիսին են թվում հանգամանքները:

Հովսեփի իրավիճակն անհույս էր թվում, երբ նրան գցեցին փոսը և հետագայում, արդեն օտար երկրում նրան բանտարկեցին: Թվում էր՝ նրա կյանքն ավարտվել էր: Ի՞նչ ապագա նա կարող էր ունենալ: Հիշե՛ք. «Մարդկանց կողմից անկարելի է, այլ ոչ թե Աստծո կողմից, որովհետև ամեն բան կարելի է Աստծո կողմից» (Մարկոս 10.27):

Նույնը վերաբերում է ձեզ: Որքան էլ դժվար լինի, հիշե՛ք. «Ամեն բան կարելի է (կամ՝ հնարավոր է) հավատացողին» (Մարկոս 9.22):

Պահե՛ք ձեր հայացքը ձեր առջև դրված ուրախության վրա, որը Նրա փառքն է՝ հայտնված ձեզանում: Դուք զորություն կունենաք, որ հաղթահարեք այն նեղությունները, որոնց բախվում եք: Շարունակե՛ք փնտրել Նրան ձեր ամբողջ սրտով և հավատացե՛ք, որ Նա խոսում է ձեզ հետ Իր Հոգով՝ Իր Խոսքի միջոցով: Եթե այդպես վարվեք, դուք կունենաք հաղթանակ անապատում:

«Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ
և անկեղծ կանգնեցնել
Իր առջև՝ անբիծ ցնծությամբ,
այն միակ իմաստուն Աստծուն
և մեր Փրկչին
փառք և մեծություն,
զորություն և իշխանություն
և՛ հիմա, և՛ բոլոր հավիտյաններում:
Ամե՛ն» (Հուդա 1.24,25):

ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ընթերցում եք այս գիրքն *«Անապատ»* դասընթացի հետ (ինչը հրաշալի գաղափար է), ես առաջարկում եմ, որ դիտեք ամեն շաբաթվա համար նախատեսված ուսումնական տեսանյութը և քննարկեք համապատասխան հարցերը ձեր փոքր խմբում: «Անապատ» դասընթացի ուսումնական տեսանյութերը կրկնում և ընդլայնում են այս գրքի գլխավոր գաղափարները. այնպես որ, հրաշալի կլինի, եթե բոլոր մասնակիցները և՛ դիտեն ուսումնական տեսանյութերը, և՛ կարդան այս գիրքը:

Այս ամենը ձե՛զ համար է:

Դաս 1

Կարդացե՛ք Գլուխ 1-ը

1. Ո՞րն է տարբերությունը Աստծո ամենագոյության և Նրա հայտնված ներկայության միջև: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք հասկանանք տարբերությունն այս երկու իրողությունների միջև:

2. Ինչո՞ւ է կարևոր հասկանալը, թե ինչ փուլում ենք գտնվում, և իմանանք՝ մենք անապատո՞ւմ ենք, թե՞ ոչ:

3. Ձեր կարծիքով, ինչո՞ւ է սատանան օգտագործում անապատը, որպեսզի գայթակղեցնի մեզ՝ դրդելով հոժարակամ մեղանչել կամ թողնել մեր հավատքը:

4. Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որ մենք երկարաձգենք մեր ժամանակն անապատում:

Դաս 2

Կարդացե՛ք Գլուխներ 2-ը և 3-ը

1. Անապատն ունի մի շարք նպատակներ: Այս դասում հիշատակված յոթ նպատակներից ո՞րն ամենաշատը տպավորվեց ձեր մեջ և ինչո՞ւ:

2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է անապատում Աստծուն հնազանդվելը հոգևոր աճ բերում:

3. Անապատը սեփական անձի բացահայտման ժամանակն է: Նշե՛ք որոշ բաներ, որոնք սովորել եք անապատում ձեր մասին և Աստծո հետ ձեր ընթացքի մասին:

4. Ինչպե՞ս եք դուք սովորել զորանալ Աստծով այս խոնարհեցնող ժամանակահատվածում:

Դաս 3

Կարդացե՛ք Գլուխ 4-ը

1. Խոստման և դրա իրականացման միջև մշտապես կա ընթացք: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է այս ընթացքը կարևոր:

2. Դուք հետևե՞լ եք այն աշխատանքին, որը խոստման ընթացքը կատարում է ձեր կյանքում:

3. Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Աստված խոստում տալիս՝ նախքան կանցնեք դրան պատրաստվելու ընթացքը:

4. Ինչո՞ւ է կարևոր, որ ձեր կյանքի համար Աստծուց ունենաք խոստում, ոչ թե պարզապես ձեր կողմից կազմված հնգամյա ծրագիր:

Դաս 4

Կարդացե՛ք Գլուխներ 5-ը և 6-ը

1. Ի՞նչ կերպով է Սավուղի և Դավթի կյանքերի համեմատությունն օգնում մեզ հասկանալ Աստծո անապատային մաքրման կարևորությունը:

2. Մաքրվելով՝ ոսկին ավելի դյուրաթեք է դառնում. իր հերթին, Աստծո մաքրման ընթացքը դարձնում է մեզ ավելի զգայուն Իր հանդեպ: Նկարագրեք, թե ինչ է նշանակում լինել ավելի զգայուն Աստծո հանդեպ:

3. Երբ Աստծո մաքրման ընթացքը բացահայտում է թաքնված մեղք կամ թուլություն, ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքը:

4. Ի՞նչ կերպով է այս մաքրման ընթացքն օգնում մեզ ավելի պարզորեն հայտնել Հիսուսին:

Դաս 5

Կարդացե՛ք Գլուխ 7-ը

1. Ինչո՞ւ է Աստված ատում տրտունջը: Ինչպիսի՞ տեղ ունի տրտունջը ձեր կյանքի ներկա փուլում:

2. Ո՞րն է տարբերությունը Մաղաքիայի գրքում տրտնջացող մարդկանց և Երեմիայի տրտունջի միջև: Ինչո՞ւ Աստված բարկացավ առաջին խմբի վրա, սակայն պատասխանեց Երեմիայի բողոքներին:

3. Դատաստանը՝ նշանակում է որոշում, ոչ թե դատապարտություն: Երբ դատաստանը սկսվում է Աստծո տանը, Նա որոշում է, թե ով է արժանի ծառայելու Իրեն: Ձեր

կարծիքով, ի՞նչն է Աստված հաշվի առնում՝ կայացնելով այս որոշումը:

4. Աստված փնտրում է այնպիսի անոթներ, որոնք հարմար են ծառայության համար: Ինչպե՞ս կնկարագրեք տարբերությունը կանչված և ընտրված լինելու միջև:

Դաս 6

Կարդացե՛ք Գլուխ 8-ը

1. Ո՞րն էր ձեր սկզբնական արձագանքը, երբ լսեցիք, որ չարչարանքը պարգև է: Ի՞նչ կերպով ձեր պատկերացումը փոխվեց այս դասի վերջում:

2. Աստված թույլ չի տա, որ դուք փորձվեք ավելի, քան կարող եք դիմանալ: Արդյո՞ք դա խրախուսում է ձեզ, և ինչպե՞ս:

3. Աստված չի թողնի, որ ձեր ուժը մնա միևնույն մակարդակի վրա: Համաձայն այս պնդման՝ ինչպիսի՞ն է Աստծո ծրագիրը ձեզ համար:

4. Գոյություն ունեն ճնշումներ, որոնց մենք բախվելու ենք ապագայում: Եվ ներկայումս Աստված թույլ է տալիս մեզ անցնել այնպիսի փորձություններով, որոնք նման են այդ ճնշումներին: Ի՞նչ է Աստված ասել ձեզ ձեր ապագայի մասին, և արդյո՞ք դա օգնում է ձեզ իմաստավորել այն ճնշումները, որոնք կրում եք՝ փորձվելով հիմա:

Դաս 7

Կարդացե՛ք Գլուխ 9-ը

1. Աստծուն հետևելը միշտ չէ, որ տրամաբանական է թվում: Ինչո՞ւ է դժվար վստահել Աստծուն, երբ Նա «խախտում է» մեր կողմից ընդունված գործելաոճերը:

2. Ի՞նչ եք դուք զգում, երբ Աստված չի գործում ձեր կողմից որոշված ժամանակ: Ի՞նչ ճնշումներ և գայթակղություններ եք զգում, երբ թվում է՝ Աստծո խոստումն ուշանում է:

3. Կարո՞ղ եք ասել, որ համոզվել եք հետևյալ ճշմարտության մեջ. *«Եթե մարմինը ծնունդ տա ինչ-որ բանի, մարմինն էլ ստիպված կլինի պահպանել դա»:* Ինչո՞վ է դա տարբերվում այն բաներից, որոնց Աստված է ծնունդ տալիս ձեր միջոցով:

4. Ի՞նչն է հավաստիացնում ձեզ, որ գնում եք Աստծո կողմից որոշված ճանապարհով:

Դաս 8

Կարդացե՛ք Գլուխ 10-ը

1. Անապատն այն վայրերից է, որոնցում Աստված հայտնում է Իրեն: Այդ դեպքում, ինչո՞ւ է Աստված նաև հեռու թվում, երբ մենք անապատում ենք:

2. Ի՞նչ է նշանակում առաջին հերթին ձգտել Աստծուն, ոչ թե Նրա օրհնություններին:

3. Ինչո՞ւ է վտանգավոր, երբ ձեր խոստումը կամ կոչումը դառնում է ավելի կարևոր ձեզ համար, քան Ինքը՝ Աստված:

4. Երբ դուք տեսնում եք, թե ինչպես է Աստված հայտնում Իրեն Աստվածաշնչի հերոսներին, որքանո՞վ է դա փոխում ձեր սպասումները ձեր անապատային ընթացքից:

Դաս 9

Կարդացե՛ք Գլուխ 11-ը

1. Ինչո՞ւ է կարևոր, որ զգուշանանք, թե որտեղից ենք մխիթարություն ստանում, հատկապես՝ հոգևոր չորության ժամանակ:

2. Ինչպե՞ս են ամրանում մեր հոգևոր արմատները, երբ ավելի ենք խորասուզվում աղոթքի և Սուրբ գրքի մեջ, հատկապես այն ժամանակ, երբ չենք ցանկանում անել դա:

3. Արդյո՞ք խրախուսական է իմանալը, որ մեծագույն հարձակումը ձեր հունձքի վրա գալիս է անմիջապես դրա հայտնվելուց առաջ:

4. Ինչո՞ւ է Աստծո հավատարմության շուրջ մտորելը վերափոխում ձեր ժամանակն անապատում:

Դաս 10

Կարդացե՛ք Գլուխ 12-ը

1. Ի՞նչ կերպով է անապատը պատրաստել ձեզ՝ ձեր կյանքի հաջորդ փուլն անցնելու համար:

2. Ինչո՞ւ է փոփոխությունը դժվարությամբ տրվում: Ո՞րն է հաճախ ձեր ամենամեծ խոչընդոտը՝ փոփոխությանը հարմարվելու համար:

3. Ի՞նչն ամենաշատը տպավորեց ձեզ գինու տիկերը թար-

մացնելու ընթացքի մեջ: Ինչո՞ւ հենց դա գրավեց ձեր ուշադրությունը:

4. Նորը վերցնելու համար մենք պետք է թողնենք հինը: Ի՞նչ դուք պետք է թողնեք, որպեսզի կարողանաք ընդունել նորը:

ՀԱՎԵԼՎԱԾ

Փրկություն՝ բոլորի համար

«Եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար»:

— Հռոմեացիների 10.9,10

Աստված ցանկանում է, որ դուք լիարժեք կյանք ունենաք: Նա ի սրտե մտահոգված է ձեզնով և ցանկանում է, որ դուք կատարեք Իր ծրագիրը ձեր կյանքի համար: Այնուամենայնիվ, կա միայն մեկ ճանապարհ դեպի ձեր նախասահմանությունը. դուք պետք է փրկություն ստանաք Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հիսուսի մահվան և հարության շնորհիվ Աստված ճանապարհ պատրաստեց, որպեսզի դուք մտնեք Իր թագավորությունը՝ որպես Իր սիրելի որդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա՝ ձրիաբար պարգևել է ձեզ հավիտենական և առատ կյանք: Փրկությունը Աստծո պարգևն է ձեզ. դուք չեք կարող որևէ բան անել, որ վաստակեք փրկությունը կամ արժանանաք դրան:

Այս թանկ պարգևը ստանալու համար, առաջին հերթին պետք է խոստովանեք ձեր Արարչից անկախ ապրելու մեղքը, քանի որ սա ձեր գործած բոլոր մեղքերի արմատն է: Ապաշխարությունը փրկություն ստանալու խիստ կարևոր պայման է: Պետրոսը հստակ նշեց սա Գործք առաքելոց գրքում այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկություն ստացավ. «Ուրեմն, զղջացե՛ք և ե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19): Աստվածաշունչը հայտնում է, որ մեզնից ամեն մեկը

ծնվել է որպես մեղքի ստրուկ: Այս ստրկությունը սկիզբ է առել Ադամի մեղքից, ով առաջինը գիտակցաբար անհնազանդ եղավ Աստծուն: Ապաշխարելով՝ դուք որոշում եք կայացնում այլևս չհնազանդվել ձեր անձին և սատանային, որը ստի հայրն է, այլ հնազանդվել ձեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ով տվել է Իր կյանքը ձեզ համար:

Դուք պետք է հանձնեք Հիսուսին ձեր կյանքի իշխանությունը: Հիսուսին որպես Տեր ընդունելը նշանակում է, որ դուք թույլ եք տալիս Նրան ղեկավարել ձեր ամբողջ կյանքը (հոգին, անձը և մարմինը) և այն ամենը, ինչը պատկանում է ձեզ. Նա բացարձակ իշխանություն է ստանում ձեր կյանքում: Այն պահին, երբ անեք սա, Աստված կազատի ձեզ խավարից և կտեղափոխի Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցում կկատարեք խավարից դեպի լույսը և կդառնաք Նրա զավակը:

Եթե ուզում եք փրկություն ստանալ Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

«Երկնային Աստվա՛ծ, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքերի համար: Շնորհակալություն, որ չես թողնում ինձ այս վիճակում, քանի որ ես հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատավճիռը խաչի վրա: Ես հավատում եմ, որ երրորդ օրը Նա հարություն առավ և այժմ նստած է Քո աջ կողմը՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ես ապաշխարում եմ Քեզնից անկախ լինելուց և հավիտյան հանձնում եմ իմ կյանքը Հիսուսի իշխանությանը:

Հիսո՛ւս, ես դավանում եմ, որ Դու իմ Տերն ու Փրկիչն ես: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգով և դարձրո՛ւ ինձ Աստծո զավակ: Ես ուրանում եմ խավարի գործերը, որոնց մի ժամանակ հարում էի, և այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար: Քո շնորհքով ես կապրեմ Քեզ համար, քանի որ Դու զոհել ես կյանքդ ինձ համար, որ ես հավիտյան ապրեմ:

Շնորհակալություն, Տե՛ր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքե-

ռում է, և համաձայն Քո Խոսքի՝ ես երբեք չեմ ամաչի, Հիսուսի անունով: Ամե՛ն»:

Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ, որ պատմեք այս հրաշալի լուրը որևէ հավատացյալի: Նույնպես կարևոր է, որ միանաք որևէ տեղական եկեղեցու, որը հավատում է Աստվածաշնչին, և հաղորդակցվեք այն մարդկանց հետ, ովքեր կխրախուսեն ձեզ հավատքի մեջ: Կարող եք կապ հաստատել մեր ծառայության հետ (այցելե՛ք MessengerInternational.org), և մենք կօգնենք ձեզ եկեղեցի գտնել այնտեղ, որտեղ ապրում եք:

Դուք հենց նոր ոտք դրեցիք ամենազարմանալի ճանապարհին: Մաղթում եմ ձեզ առատ հայտնություններ, շնորհք և ընկերություն Աստծո հետ ձեր կյանքում:

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

Կյանք, որը նշանակություն ունի այսօր և հավիտյան

Կյանքն այս երկրի վրա՝ ընդամենը գոլորշի է, սակայն շատերն այնպես են ապրում, ասես դրանից հետո ոչինչ չի լինելու: Բայց այն, թե ինչպես ենք ապրում այս կյանքը, կորոշի, թե ինչպես ենք անցկացնելու հավիտենությունը: Սուրբ գիրքը հայտնում է, որ կան վարձատրության տարբեր աստիճաններ հավատացյալների համար. ոմանց ձեռքբերումներն ամբողջությամբ կայրվեն դատաստանի ժամանակ, իսկ մյուսներին կշնորհվի Քրիստոսի հետ թագավորելու արտոնությունը:

Զոն Բիվերը, համաձայն Բ Կորնթացիների 5.9-ի սկզբունքների, հիշեցնում է, որ բոլոր հավատացյալները կկանգնեն Քրիստոսի առջև, որպեսզի ընդունեն այն, ինչին արժանացել են կյանքի ընթացքում: Մեզնից շատերը ցնցված կլինեն՝ իմանալով, որ մեր ժամանակի մեծ մասը ծախսվել է այնպիսի բաների վրա, որոնք չեն արժանանալու հավիտենական վարձատրության:

Այդ դեպքում, ինչպե՞ս կարող ենք արդյունավետ կյանք ունենալ: «Հավիտենությամբ շարժվողները» գիրքը կսովորեցնի բացահայտել ձեր կոչումը և բազմապատկել այն, ինչ Աստված տվել է ձեզ: Նայելով կյանքին հավիտենության տեսանկյունից՝ դուք զորություն կստանաք, որպեսզի գործեք մնայուն նպատակների համար:

Հասանելի է CloudLibrary.org կայքում

ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Ապրել վիրավորանքի մահացու թակարդից ազատ

«Սատանայի խայծը» գիրքը բացահայտում է ամենախորամանկ ծուղակներից մեկը, որ թշնամին օգտագործում է հավատացյալներին Աստծո կամքից հեռացնելու համար: Շատերը գտնվում են այս ծուղակի մեջ և նույնիսկ չեն գիտակցում դա:

Մի՛ խաբվեք: Քրիստոսն ասաց. «Անկարելի է, որ գայթակղություններ չգան» (Ղուկաս 17.1): Դուք չեք կարող այնպես անել, որ ձեզ երբևէ չվիրավորեն, բայց դո՛ւք պետք է որոշեք, թե ինչպես պատասխանեք վիրավորանքին: Եթե ճիշտ վերաբերվեք վիրավորանքին, ապա դառնանալու փոխարեն՝ կդառնաք ավելի ուժեղ: Միայն ա՛յս դեպքում ոչինչ չի կարող խոչընդոտել Աստծո հետ ունեցած ձեր շփմանը:

Այս ուղերձի միջոցով Ջոն Բիվերը կզորացնի ձեզ, որպեսզի մնաք Աստծո կամքի մեջ և ազատվեք կասկածամտությունից և թերահավատությունից: Դուք կարող եք ազատվել զոհ լինելու մտածելակերպից և ապրել առանց դառնության և առանց հիասթափության բեռի: Երբ հայտնաբերեք, որ կա Աստծուն հնազանդվելու ավելի բարձր մակարդակ, ձեր կյանքը կլցվի ներելու կարողությամբ, հաշտությամբ և հարատև ուրախությամբ:

Հասանելի է CloudLibrary.org կայքում

ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

Ինչո՞ւ բարին առանց աստծո բավական չէ

Եթե ինչ-որ բան բարի է, դա պետք է որ Աստծուց լինի, այնպես չէ՞

Մեր օրերում «բարի» և «Աստված» բառերը կարծես հոմանիշներ են դարձել: Մենք հավատում ենք, որ այն, ինչն ընդհանուր առմամբ բարի է համարվում, պետք է որ համապատասխանի Աստծո կամքին: Առատաձեռնությունը, խոնարհությունը և արդարությունը բարի են: Եսասիրությունը, ամբարտավանությունը և դաժանությունը չար են: Թվում է՝ այս տարբերակումը շատ հասարակ է:

Բայց մի՞թե ամեն ինչ այդքան պարզ է: Եթե բարին այդ աստիճան ակնհայտ է, ինչո՞ւ է Աստվածաշունչն ասում, որ մեզ զանազանություն է հարկավոր այն ճանաչելու համար:

«Բարի՞, թե՞ Աստված» գիրքը հերթական ուղերձը չէ՝ խնդիրներն անձամբ լուծելու մասին: Այս գիրքը պարզապես չի առաջարկի փոխել ձեր վարքը, այլ կանի ավելին. այն կտա ձեզ կարողություն՝ հաղորդակցվելու Աստծո հետ այնպիսի մակարդակի վրա, որը կփոխի ձեր կյանքի ամեն բնագավառը:

Հասանելի է CloudLibrary.org կայքում

ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Կործանի՛ր այն, ինչը խլում է քո ուժը

Ինչպես Սուպերհերոսը, ով կարող է ցատկել ամեն արգելքի վրայով և հաղթել բոլոր թշնամիներին, Քրիստոսի հետևորդները նույնպես կյանքի դժվարությունները հաղթահարելու գերբնական կարողություն ունեն: Այնուամենայնիվ, և՛ Սուպերհերոսը, և՛ մենք մի խնդիր ունենք. գոյություն ունի կրիպտոնաքար, որը խլում է մեր ուժերը:

Իհարկե, Սուպերհերոսը և կրիպտոնաքարը հորինված են, բայց հոգևոր կրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը պատասխանում է այն հարցին, թե ինչու են մեզնից շատերն անկարող վերապրել այն աստվածային զորությունը, որն ակնհայտորեն դրսևորվում էր առաջին դարի քրիստոնյաների կյանքում:

«Կործանել կրիպտոնաքարը» գրքում Ջոն Բիվերը ցույց է տալիս, թե ինչ է կրիպտոնաքարը, ինչու է այն խլում մարդկանց ուժերը մեր եկեղեցիներում, և ինչպես ազատվել դրա կապանքներից:

«Կործանել կրիպտոնաքարը» գիրքը հոգևոր թմրեցուցիչ չէ՝ նախատեսված թուլասիրտների համար: Այս լուրջ ճշմարտությունը նախատեսված է Քրիստոսի այն հետևորդների համար, որոնք ցանկանում են անցնել անձի վերափոխման դժվարին, բայց պտղաբեր ընթացքը:

Հասանելի է CloudLibrary.org կայքում

«Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության նպատակն է՝ օգնել անհատներին, ընտանիքներին, եկեղեցիներին և ազգերին գիտակցել և վերապրել Աստծո Խոսքի վերափոխող զորությունը: Շնորհիվ այս գիտակցման՝ կփոխվեն թե՛ մարդիկ, թե՛ ամբողջ բնակավայրեր, և հասարակությունը գործուն կերպով կպայքարի այս աշխարհը կեղեքող անարդարության դեմ:

CLOUD LIBRARY

CloudLibrary.org կայքը առցանց հարթակ է, որը թույլ է տալիս ամբողջ աշխարհի հովիվներին և առաջնորդներին ստանալ անվճար թվայնացված ուսումնական նյութեր՝ իրենց լեզուներով:

Այցելե՛ք **CloudLibrary.org** կայքը և օգտվե՛ք Ջոն և Լիզա Բիվերների մի շարք այլ նյութերից ավելի քան **100 լեզուներով:**

էլեկտրոնային գրքեր, աուդիո և վիդեո ուսուցումներ, աուդիո գրքեր, Աստվածաշնչեր...

Ցանկանում եք ավելի՞ն:
Տեսածրե՛ք պատկերակը. CloudLibrary.org

CLOUD LIBRARY

ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ
ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Այս գիրքը, որը ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով գիրքը և օգտագործելով *օժանդակ* ուսումնական նյութերը, որոնք կարող եք գտնել գրքին կից DVD սկավառակում կամ ներբեռնել CloudLibrary.org կայքից՝ դուք լիովին կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Շնորհիվ այս դասընթացի՝ ձեր քրիստոնեական ընթացքը կզորանա, և դուք կկարողանաք ավելին անել Աստծո համար:

«Աստվա՛ծ, որտե՞ղ ես» ուսումնական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից: Դուք կարող եք բեռնել բոլորը ձեր անձնական սարքերի վրա.

- *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* գիրք
  Այս դասընթացի միակ տպագրված մասը: Գիրքը նույնպես առկա է DVD սկավառակում՝ էլեկտրոնային ձևաչափով:
- *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* DVD սկավառակ
  Կից սկավառակը պարունակում է այս դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակը ձեր տնային DVD նվագարկիչով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետի, համակարգչի և սմարթֆոնի մեջ:
- *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* աուդիո գիրք
  «Աստվա՛ծ, որտե՞ղ ես» գրքի բոլոր բաժինները՝ ընթերցված հայերենով, MP3 ձևաչափով:
- *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* վիդեո դասեր
  Բոլոր 11 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:
  Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է այլ գրքեր և նյութեր, ներառյալ «Բարի՞, թե՞ Աստված» և «Հավիտենությամբ շարժվողները» էլեկտրոնային գրքերը:

Դուք կարող եք տարատեսակ ուսումնական նյութեր, էլեկտրոնային գրքեր և Աստվածաշնչեր անվճար ներբեռնել **CloudLibrary.org** կայքում:

ԱՅՍ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈԼՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ ՆՎԵՐ ԵՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ

Ազատորեն կրկնօրինակե՛ք այս DVD սկավառակը, պատճենե՛ք դրանում առկա նյութերը, ուղարկե՛ք ձեր ընկերներին էլեկտրոնային փոստով, պատճենե՛ք տեքստը և տեղադրե՛ք «Word» ֆայլերի մեջ, տրամադրե՛ք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնե՛ք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել: Տարածե՛ք այս նյութերն ամենուր, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

Հավելյալ տեղեկություն *«Աստվա՛ծ, որտե՞ղ ես»* հավաքածուի նյութերի մասին.

Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի նյութերը սովորական վիդեո նվագարկիչով: Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:

Դուք կարող եք բեռնել և նվագարկել MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ:

Դուք կարող եք բեռնել MP3 ձևաչափի ֆայլերը ձեր աուդիո նվագարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:

Դուք կարող եք բեռնել էլեկտրոնային գրքերը ձեր հեռախոսի, պլանշետի կամ համակարգչի մեջ՝ հեշտորեն կարդալու, տպելու կամ կրկնօրինակելու համար: Կարող եք նաև պատճենել հատվածներ տեքստից ձեր անձնական ֆայլերի մեջ:

Հավելյալ ուսումնական նյութերը բազմաթիվ լեզուներով հասանելի են հետևյալ կայքում.

CloudLibrary.org

ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ

ՀԱՎԱՔԱԾՈՒ ՍԿԱՎԱՌԱԿ

Միայն
համակարգչի համար

Դիտե՛ք տեսանյութեր և
ներբեռնե՛ք ավելին հետևյալ կայքից.

CloudLibrary.org

ՋՈՆ ԲԻՎԵՐ

MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org

DVD ROM

Դուք կարող եք դիտել և ներբեռնել այս դասընթացը, ինչպես նաև Ջոն և Լիզա Բիվերների բազմաթիվ այլ ուսմունքներ՝ այցելելով «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության անվճար ինտերնետային կայքը.

CloudLibrary.org

Դուք կարող եք դիտել և ներբեռնել լրացուցիչ նյութեր բազմաթիվ լեզուներով YouTube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերից:

ԴՈՒՔ ՄՈՌԱՑՎԱ՞Ծ ԵՔ ԶԳՈՒՄ ՁԵԶ ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ՓՈՒԼՈՒՄ՝ ՄՏԱԾԵԼՈՎ. «ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ»

Միգուցե անցյալում Աստված խոսում էր ձեզ հետ, բայց այժմ Նա լռում է: Միգուցե անցյալում դուք առաջ էիք շարժվում հավատքի մեջ, բայց այժմ չեք գտնում Նրա ներկայությունը: Բարի գալո՛ւստ անապատ՝ այն վայրը, որը Աստծուց խոստում ստանալու և դա իրականացնելու միջև է:

Այնուամենայնիվ, կա մի բարի լուր. անապատը պարզապես ամայի և աննպատակ վայր չէ: Աստված օգտագործում է անապատը, որպեսզի պատրաստի և սպառազինի ձեզ ձեր կոչման համար, այն դեպքում, եթե դուք ճիշտ անցնեք այն: Հակառակ ընդունված կարծիքին, դուք չեք անցնում ձեր կյանքի այս փուլը՝ պարզապես սպասելով Աստծուն: Դուք պետք է կատարեք ձեր բաժին աշխատանքը, որպեսզի անցնեք այն, և ձեր աշխատանքը շատ մեծ է: Եթե դուք չեք ցանկանում ժամանակ վատնել՝ շարունակ նույն տեղում դոփելով, կարևոր է իմանալ, թե ինչ է անապատը:

Այս բացահայտումներով լի գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը կրթում է ձեզ՝ օգտագործելով կարևոր աստվածաշնչյան հայտնություններ և խորիմաստ պատմություններ, որոնք կօգնեն անցնել ձեր կյանքի ամայի և դժվարին փուլերը և ստանալ այն ամենը, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար:

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ և հանրաճանաչ հեղինակ է, ով համարձակ և առանց փոխզիջման քարոզում է Աստծո Խոսքը: Ջոնը և կինը՝ Լիզան, հիմնադրել են «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է՝ պատրաստել Քրիստոսի հետևորդների, որոնք փոխզիջման չեն գնում և վերափոխում են այս աշխարհը: Երբ նա տանն է՝ Կոլորադոյում, նա սեղանի քարտային խաղեր է խաղում իր որդիների հետ կամ փորձում է համոզել Լիզային գոլֆ խաղալ իր հետ:

Cloud Library

Անվճար ներբեռնումների և տեսանյութեր դիտելու համար այցելեք CloudLibrary.org կայքը:

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է Հեղինակից և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ Չէ

Ցանկանում եք ավել՞ն: Տեսնեք պատկերասրահը:

CLOUD LIBRARY